ISSN1829-0051

ՆՈՐԱՎԱՆՔ
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

21-րդ ԴԱՐ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՈՒԹ ՆՅՈՒԹԸ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՐԵՆԴԸ

ՎԻԼՍՈՆՅԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՆ

4
2008

21-րդ ԴԱՐ

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՆԴԵՍ

4 (22)

ԵՐԵՎԱՆ

2008

21-ՐԴ ԴԱՐ

տեղեկատվական-վերլուծական հանդես

Լույս է տեսնում 2003 թվականից **4 (22), 2008**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Գագիկ Հարությունյան (համակարգող)
Գեորգի Դերլուգյան
Մուշեղ Լալայան
Սերգեյ Գրինյաև
Սպարտակ Սեյրանյան
Տիգրան Սարգսյան

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Գագիկ Հարությունյան (գլխավոր խմբագիր)
Սևակ Սարուխանյան (գլխ. խմբագրի տեղակալ)
Հարություն Մարության (գլխ. խմբագրի տեղակալ)
Թամարա Վարդանյան
Սարգիս Հարությունյան
Սուրեն Մովսիսյան
Խոնարհիկ Քարաուղլանյան (պատասխանատու քարտուղար)
Լուսինե Բաղրամյան (տեխնիկական խմբագիր)

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ
Гагик Арутюнян (координатор)
Георгий Дерлугьян
Тигран Саркисян
Мушег Лалаян
Сергей Гриняев
Спартак Сейранян

РЕДАКЦИЯ
Гагик Арутюнян (главный редактор)
Севак Саруханян (заместитель гл. редактора)
Арутюн Марутян (заместитель гл. редактора)
Саргис Арутюнян
Сурен Мовсисян
Тамара Варданян
Хонарик Карауглaнян (ответственный секретарь)
Лусине Баграмян (технический редактор)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կարեն Կարապետյան
Հայաստանի դերը Հարավային Կովկասի տարածաշրջանի էներգետիկ անվտանգության ապահովման գործում 3

Սուրեն Մովսիսյան
Միջնորդի ընտրությունը հակամարտող կողմերի համատեքստում 31

Սերգեյ Գրինյաև, Ալեքսանդր Ֆոմին
Համաշխարհային տնտեսության մութ նյութը 43

Վարդան Աթոյան, Կարեն Բաբաջանյան
Պետության բրենդը և դրա ձևավորման անհրաժեշտությունը Հայաստանի Հանրապետությունում 71

Արինա Իկիլիկյան, Արմեն Քինակցյան
Տեղեկատվական հոսքերի ազդեցությունը երիտասարդության վրա 80

Լևոն Շիրինյան
Վիլսոնյան նախագիծը և Թուրքիան 97

Արա Պապյան
Հակաթուրքական միասնական ճակատ ստեղծելու դիվանագիտական ջանքերը և հայերի մասնակցությունն այդ պայքարին 113

Հարություն Մարության
Գերմանիայի ֆինանսական փոխհատուցումները հրեությանը. ձևավորումը, գործընթացը, ներկա վիճակը 135

Լիլիթ Մովսիսյան
Ադրբեջաներենի այբուբենի պատմության ուրվագծեր 156

Հուշագիր հեղինակին 167

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Կարեն Կարապետյան

Էներգետիկ ռեսուրսներով ապահովվածության և էներգետիկ անվտանգության ապահովման հիմնախնդիրը համաշխարհային մարտահրավերներից է: Հոդվածում քննարկվում են այդ մարտահրավերին դիմակայելու Հայաստանի ներուժը և տարածաշրջանում ազատական էներգետիկ շուկա ստեղծելու հնարավորություններն ու հեռանկարները: Հոդվածը պարունակում է տնտեսական և արտադրությունը բնութագրող ցուցանիշներ:

Այդ համատեքստում ուսումնասիրվել է Հայաստանի Հանրապետության էներգետիկ համակարգի արդի իրավիճակը, ինչպես նաև ոլորտում կատարված բարեփոխումներն ու դրանց արդյունքները: Էլեկտրաէներգիայի պահանջարկի կանխատեսումները և Հայաստանում արտադրող հզորությունների առկայությունը թույլ են տալիս մեր հանրապետությունը դիտարկել որպես տարածաշրջանային էներգետիկ շուկայի առանցքային մասնակից:

Էներգետիկայի ոլորտն այն առանցքային բնագավառներից է, որի հիմնախնդիրները քննարկվում են համաշխարհային տնտեսության զարգացման ինչպես ընթացիկ, այնպես էլ հեռանկարային համատեքստում: Քաղաքակրթության ճանապարհին հայտնված ներկայիս համընդհանուր մարտահրավերները պահանջում են, որպեսզի համակողմանիորեն լուծվի էներգառեսուրսների պահանջարկի ապահովման և այդ ռեսուրսների անխափան ու արդյունավետ մատակարարումների կայուն ընթացակարգերի (սխեմաների) զարգացման հիմնախնդիրը: Նշված խնդրի լուծումը, ըստ էության, լուրջ ավանդ կդառնա երկրի (կամ տարածաշրջանի) էներգետիկ անվտանգության ապահովման գործում, թույլ կտա նվազեցնել վառելիքաէներգետիկ ռեսուրսների գներից և գնային տատանումներից կախվածությունը, կլիմայական փոփոխություններից առաջացող ռիսկերը, ինչպես նաև ապահովել տնտեսական զարգացման կայունությունը, լուծել նոր աշխատատեղերի ստեղծման ու շրջակա միջավայրի պաշտպանության հիմնախնդիրը:

Հայաստանի տնտեսական զարգացման ռազմավարության հիմքում ներկայումս դրված են գործարարության ու արտադրության դիվերսիֆիկացման, մարդկային կապիտալի և նորարարությունների զարգացման մեջ ներդրումների ընդգրկման սկզբունքները: Սակայն միաժամանակ հասկանալի է, որ Հայաստանի Հանրապետության կառավարությանը, որը հռչակել է շուկայական բարեփոխումների երկրորդ սերնդի իրականացման փուլ մտնելու մասին իր վճռականությունը, շատ դժվար կլինի իրագործել սոցիալ-տնտեսական քաղաքականություն՝ առանց երկրի էներգետիկ համակարգի արդյունավետ և անխափան աշխատանքի:

Հայաստանի Հանրապետությունում էներգետիկ համակարգի բարեփոխումները կատարվեցին բավական արմատական ձևով և նման լայնածավալ միջոցառումների իրագործման համար զգալիորեն կարճ ժամանակահատվածում: Միջազգային կազմակերպությունների գնահատմամբ (Համաշխարհային բանկ, Արժույթի միջազգային հիմնադրամ, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ և այլն)՝ Հայաստանը Հարավային Կովկասի երկրների շարքում իրավացիորեն առաջին տեղն է զբաղեցնում էներգետիկ ոլորտում իրականացված բարեփոխումների խորության ցուցանիշով *(Աղյուսակ 1),* որոնք ուղղված են ազատական էներգետիկ շուկայի ստեղծմանը: Նման բարձր գնահատականի արժանանալու հիմքում ընկած են այն իրողությունները, համաձայն որոնց՝ հանրապետության էներգետիկ շուկայում ապահովվում են վերջնական սպառողների շահերը, ստեղծված են տնտեսական գործունեության իրականացման հավասար, ոչ խտրական պայմաններ, պաշտպանվում են օտարերկրյա ներդրողների շահերը:

Ամբողջ աշխարհում շեշտակիորեն աճում է էներգետիկ ռեսուրսների պահանջարկը, որը կապված է այդ ռեսուրսների սպառման ծավալների ավելացման հետ: Այդ միտումներն առկա են նաև Հայաստանում, որի աշխարհագրական դիրքը բավական բարդ է, սակայն միևնույն ժամանակ՝ հետաքրքիր և գրավիչ տարածաշրջանային համագործակցության համար: Հարավային Կովկասի ու հարևանությամբ գտնվող Թուրքիայի և Իրանի տարածաշրջանը գտնվում է խոշոր միջազգային նավթային և այլ էներգակիրների մատակարարման ծրագրերի խաչմերուկում: Տարածաշրջանի մի շարք երկրներում ածխաջրածինների սեփական զգալի պաշարների առկայությունը, ինչպես նաև էներգառեսուրսների սպառման խոշորագույն շուկաներին և տնտեսապես արագ զարգացող կենտրոններին մոտ գտնվելը տվյալ տարածաշրջանը գրավիչ է դարձնում նաև միջազգային կապիտալի ներհոսքի համար:

Աղյուսակ 1

Որոշ երկրներում ենթակառուցվածքների զարգացման ցուցիչները 2004թ. [1, p. 10]

Երկիրը	Էլեկտրա-էներգիա	Երկաթուղի	Ճանապարհներ	Հեռահաղորդակ-ցություն	Ջրամատակարա-րում և ջրահեռա-ցում	Բոլոր ենթակա-ռուցվածքները
Ալբանիա	3-↑	2	2	3+	1	2
Հայաստան	3+	2	2+	2+	2	2+
Ադրբեջան	2+	2+	2+	2-↑↑	2	2
Բելառուս	1	1	2	2	1	1+
Բոսնիա-Հերցեգովինա	3	3	2	3+	1	2+
Բուլղարիա	4-↑	3	2+	3+↑	3	3↑
Խորվաթիա	3	3-↑	3-	3+	3+	3↑
Չեխիայի Հանրապետություն	3+	3	2+	4	4	3+
Էստոնիա	3	4+	2+	4	4	3+
Մակեդոնիա	2+	2	2+	2	2	2
Վրաստան	3	3	2	2+	2	2+
Հունգարիա	4	3+	3+	4	4	4-
Ղազախստան	3+↑	3-	2	2+	2↑	2+
Ղրղըզստան	2+	1	1	3↑	1	2-↑
Լատվիա	3+↑	3+	2+	3	3+	3
Լիտվա	3+↑	2+	2+	3+	3+	3-
Մոլդովա	3	2	2	2+	2	2
Լեհաստան	3+	4	3	4	3+	3+
Ռումինիա	3+↑	4	3	3	3+↑	3+↑
Ռուսաստան	3	3-↑	2+	3	2+	3-↑
Սերբիա և Չեռնոգորիա	2+	2+	2+	2	2	2
Սլովակիա	4	3-	2+	3+	2+	3-
Սլովենիա	3	3	3	3	4	3
Տաջիկստան	2-↑↑	1	1	2+	1	1+
Թուրքմենստան	1	1	1	1	1	1
Ուկրաինա	3+	2	2	2+	2-	2
Ուզբեկստան	2	3-	1	2	2-	2-

Ծանոթագրություն: Գնահատման ցուցանիշները տրված են 1-ից 4+ բալային սանդղակով, որտեղ 1-ը գործնականում համապատասխանում է կենտրոնացված պլանային տնտեսությունից որևէ հեռացման իսպառ բացակայությանը, իսկ 4+ նշանակում է շուկայական տնտեսության ստանդարտների ձեռքբերում, որոնք բնորոշ են արդյունաբերական զարգացած երկրներին: Բոլոր ենթակառուցվածքներին վերաբերող ցուցիչը (7-րդ սյունակ) հաշվարկված է որպես 2-ից 6-րդ սյունակներում ներկայացված տնտեսության հինգ ոլորտների միջինացված ցուցանիշ:

↑ կամ ↓ սլաքները ցույց են տալիս ճյուղային համապատասխան ցուցիչի փոփոխությունը նախորդ տարվա ցուցիչի նկատմամբ: Մեկ սլաքը ցույց է տալիս բալի փոփոխությունը մեկ աստիճանով (օրինակ՝ 4-ից 4+), երկու սլաքները՝ երկու աստիճանով: Վերև ուղղված սլաքը նշանակում է բալի բարձրացում, ներքև ուղղվածը՝ նվազում:

Ուշադրության կենտրոնում պետք է պահել այն հարցը, թե ինչ տեղ կարող է զբաղեցնել Հայաստանը Հարավային Կովկասի էներգետիկ քարտեզի վրա: Ի՞նչն է Հայաստանի համար ուղենիշ լինելու էներգետիկ ռեսուրսների համար մղվող համընդհանուր մրցակցության մեջ, որտեղ ավելի ակտիվորեն են ընդգրկվում այն երկրների կազմակերպությունները, որոնք չունեն տնտեսական զարգացմանն անհրաժեշտ բավարար ածխաջրածնային պաշարներ: Մյուս կարևոր հարցն է, թե որ գործոնները, ցուցանիշները պետք է դրված լինեն տարածաշրջանի էներգետիկ անվտանգության ապահովման հիմքում [2]:

Նշված հարցերի պատասխանները գտնելու դեպքում միայն կարող ենք մշակել Հայաստանի համար արդյունավետ էներգետիկ անվտանգության քաղաքականություն: Այդ քաղաքականության հիմնական ուղղվածությունը, մեր կարծիքով, պետք է լինի էներգետիկայի ոլորտում արտահանման որակապես նոր քաղաքականության իրականացումը:

Ժամանակակից աշխարհում էներգետիկան տնտեսական առաջընթացի կարևորագույն շարժիչ ուժն է և ուղղակիորեն ազդում է երկրագնդի միլիարդավոր բնակիչների բարեկեցության վրա: Կարևորագույն մարտահրավերներից մեկը ներկայումս երկրների ազգային անվտանգության ապահովումն է, որի բաղադրիչներից է նաև էներգետիկ անվտանգությունը:

Գոյություն ունեն էներգետիկ անվտանգության բազմաթիվ գործոններ, սակայն այդ հասկացության միասնական, ամբողջ աշխարհում ընդունված սահմանումը դեռևս չի տրված: Ընդ որում՝ տարբեր երկրների միջև տարաձայնություններն այս հարցի շուրջ խորանում են, քանի որ էներգիա արտադրող և էներգիա սպառող երկրները տարբեր տեսանկյուններից են մոտենում էներգետիկ անվտանգության հիմնախնդիրներին: Հաշվի առնելով համաշխարհային էներգետիկ անվտանգության խնդրի արդիականությունը՝ այն քննարկման հիմնական թեմա դարձավ 2006թ. Սանկտ Պետերբուրգում տեղի ունեցած «Մեծ ութնյակի» գագաթաժողովի ընթացքում:

Շատ հաճախ էներգետիկ անվտանգությունը նույնացվում է առանձին երկրի էներգետիկ անկախության հետ: Նման մոտեցումը հանգեցրեց այնպիսի իրավիճակի, երբ ռեսուրսների համար մրցապայքարն աշխարհում թեժանում է և բազմաթիվ հակամարտությունների պատճառ դառնում: Թեև էներգետիկ անվտանգության բնագավառում առաջացող բազմաթիվ վտանգները (որոնք վաղուց արդեն համամարդկային բնույթ են կրում) պետք է ռեսուրսների տիրապետման համար մրցակցող երկրներին ստիպեին, որպեսզի դրանք ձեռնամուխ լինեն համաշխարհային էներգետիկ անվտանգության հայեցակարգի մշակմանը:

Վերջին տարիներին էներգակիրների նկատմամբ համաշխարհային պահանջարկն ավելի արագ տեմպերով է աճում, քան էներգիայի առաջարկը: Էներգետիկայի ոլորտի վերաբերյալ արվող կանխատեսումների մեծ մասում նշվում

է էներգակիրների նկատմամբ համաշխարհային պահանջարկի աճի մասին, որը պայմանավորված է առաջին հերթին զարգացող տնտեսությունների արագընթաց աճի տեմպերով: Էներգակիրների նկատմամբ պահանջարկը կաճի նաև արդյունաբերական երկրներում, թեև այն կունենա փոքր-ինչ ցածր տեմպեր: Օրինակ, Միջազգային էներգետիկ գործակալության (ՄԷԳ) տվյալներով կանխատեսվում է, որ 2030թ. էներգակիրների նկատմամբ համախառն պահանջարկն աշխարհում կաճի ավելի քան 50%-ով: Նավթի համաշխարհային պահանջարկը, նույն աղբյուրի գնահատմամբ, կարող է 2025թ. աճել օրական 35 մլն բարելով (այդ դեպքում հավելաճը կկազմի 42%), գազի նկատմամբ պահանջարկը կաճի տարեկան 1,7 տրիլիոն $մ^3$ (հավելաճը՝ 60%) [3]:

Միևնույն ժամանակ, էներգիայի առաջարկն աշխարհի մակարդակով դանդաղում է: Դա պայմանավորված է արտադրության ծավալների մեծացմամբ, ինչպես նաև տարեցտարի դժվարամատչ դարձող էներգառեսուրսների շահագործման համար օգտագործվող տեխնոլոգիաների բարդությամբ ու թանկությամբ:

Առաջարկի և պահանջարկի անհամապատասխանության արդյունքում վառելիքաէներգետիկ ռեսուրսների գները վերջին տարիներին աճում են արագ տեմպերով: Էներգակիրների աճող և անկայուն գները զգալի վտանգ են ներկայացնում ինչպես համաշխարհային տնտեսության, այնպես էլ առանձին երկրների տնտեսությունների համար:

Մասնավորապես, նավթի գներն աճեցին կտրուկ ձևով՝ դրանով իսկ իրական վտանգ ներկայացնելով, նախ՝ զարգացած տնտեսությունների աճի տեմպերի համար, երկրորդ՝ նավթի ներմուծումից կախվածության մեջ գտնվող զարգացող տնտեսություններում ֆինանսական ճգնաժամի տեսանկյունից: Նավթի ապագա գների վերաբերյալ անորոշ կանխատեսումներն էլ ավելի են խճճում իրավիճակը, քանի որ նավթի գների երկարաժամկետ կանխատեսումները համարվում են էներգետիկայի ծրագրերում ներդրումներ իրականացնելու մասին որոշում ընդունելու հիմնական տարրը[1]: Հայտնի է, որ էներգետիկայի ոլորտում իրականացվող ծրագրերին բնորոշ են երկարատև իրացման ցիկլ և կապիտալի չափազանց դանդաղ շրջանառություն:

Բացի այդ, խորանում են տարածաշրջանային էներգետիկ անհամամասնությունները, ավելանում է այնպիսի երկրների և խոշոր տարածաշրջանների

[1] Սակայն 2008թ. վերջին համաշխարհային տնտեսության զարգացումները որոշակի «ճշգրտումներ» մտցրին նավթի շուկայում. եթե 2008թ. հուլիսի 11-ին մեկ բարել նավթն (բրենտ) արժեր $147,7, ապա 2008թ. նոյեմբերի 2-ին՝ $66,72: Նավթի գների նման կտրուկ աճը Ե.Գայդարի և Ա.Չուբայսի կարծիքով պայմանավորված էր համաշխարհային շուկայում նավթի՝ որպես ապրանքի, ֆինանսական ռեսուրսի վերածմամբ [4, с. 15-17]: Բավական է նշել, որ եթե Նյու Յորքի ապրանքային բորսայում կնքված նավթի առևտրի ֆյուչերսների 1990-1998թթ. միջին տարեկան մեծությունը կազմել է շուրջ 20 մլն պայմանագիր, ապա այդ մեծությունը 2005թ. կազմել է 60 մլն, 2006թ.՝ 70 մլն, 2007թ.՝ 122 մլն պայմանագիր: Այսինքն՝ արհեստականորեն ստեղծվել էր մի «փուչիկ», որը պայթեց 2008թ. ամռանը:

թիվը, որոնց զարգացման հիմքում դրված են ոչ թե սեփական, այլ ներկրվող էներգառեսուրսները: Եթե 1990թ. նմանատիպ երկրներն արտադրում էին համաշխարհային ՀՆԱ 87%-ը, ապա XXI դարի սկզբին՝ 90%-ը: Ընդ որում՝ էներգիայի ներմուծումից զգալի կախվածության մեջ են առավել արագ տեմպերով զարգացող խոշորագույն երկրները, ինչպիսիք են Չինաստանը, Հնդկաստանը և այլն [5]: Այս երկրները դեռևս չեն կարողանում ապահովել սեփական կարիքների համար անհրաժեշտ էներգակիրների երաշխավորված ներմուծում:

Միևնույն ժամանակ, ածխաջրածնային հումքի մեծածավալ արդյունահանման պատճառով որոշակի տարածաշրջաններում ավելի ու ավելի է սրվում սոցիալական և քաղաքական անկայունությունը:

Եվս մեկ հիմնախնդիր է էներգետիկ աղքատությունը: ՕՊԵԿ-ի տվյալներով՝ ներկայումս շուրջ 2 մլրդ մարդ ապրում են «էներգետիկ սովի» պայմաններում, և էներգետիկ աղքատության դեմ պայքարը դասվում է ամենաարդիականների շարքին: Ի հավելումն, էկոլոգիական հիմնախնդիրները, ահաբեկչությունը, կլիմայի փոփոխությունը և, ամենակարևորը, ռեսուրսների սահմանափակությունը մարտահրավեր են նետում էներգետիկ անվտանգությանը:

Ակնհայտ է, որ անհրաժեշտ է ստեղծել համաշխարհային այնպիսի էներգետիկ համակարգ, որը թույլ կտա նվազագույնի հասցնել առաջացող վտանգները: Համաշխարհային էներգետիկ անվտանգության ապահովման համար անհրաժեշտ է, որպեսզի համաշխարհային հանրությունն անցնի համատեղ գործողությունների: Վտանգներին դիմակայելու համար պետք է մշակել և հետևողականորեն իրականացնել համաձայնեցված էներգետիկ քաղաքականություն՝ հատկապես այդ քաղաքականության ռազմավարական ուղղություններով:

Այդ քաղաքականության ուղղություններից մեկն է էներգիայի խնայողական և էկոլոգիապես ճիշտ օգտագործումը: Զարգացած երկրների կողմից ընդունված էներգասպառման արդյունավետության բարձրացման միջոցառումների արդյունքում 30 տարվա ընթացքում (1973-2002թթ.) ՏՀԶԿ երկրներ նավթի զուտ ներմուծումը նվազեց 14%-ով, իսկ ՀՆԱ մեկ դոլարի արտադրությանը բաժին ընկնող նավթի քանակը կրկնակի կրճատվեց [3]:

Մեկ այլ ուղղություն պետք է լինի տնտեսապես արդյունավետ էներգառեսուրսների առաջարկի ավելացումը: Աշխարհում դեռևս գոյություն ունեն բավականաչափ վառելիքաէներգետիկ ռեսուրսներ, որպեսզի տեսանելի ապագայում ապահովվի մարդկության պահանջարկը: Հիմնական խնդիրը ոչ այնքան էներգակիրների ֆիզիկական պակասուրդն է, որքան այդ ներուժի իրացման համար համատեղ ջանքերի անհրաժեշտությունը:

Խիստ կարևոր է ապահովել էներգախնայողության համար իրականացվող ներդրումները: ՄԷԳ գնահատմամբ՝ արդյունավետ, ցնցումներին դիմակայող համաշխարհային էներգամատակարարման համակարգի ստեղծման

համար 2004-2030թթ. կպահանջվեն շուրջ $17 տրիլիոնի ներդրումային ռեսուրսներ: Ներդրումների իրականացման ուղղություններն են՝ ռեսուրսային բազայի ընդլայնումը, էներգակիրների արդյունահանումը, դրանց տեղափոխման և պահեստավորման համար անհրաժեշտ նոր ենթակառուցվածքների ստեղծումը կամ գոյություն ունեցողների վերականգնումը, առաջնային տեխնոլոգիաների ներդրումը վերականգնվող ու այլընտրանքային էներգիայի աղբյուրների ավելի լայն օգտագործման համար, ինչպես նաև ատոմային էներգիայի արտադրության անվտանգ տեխնոլոգիաների զարգացումը և այլն:

Կայուն, անխափան էներգամատակարարման համակարգ ունենալու, նավթի կամ գազի մատակարարումից կախվածությունը նվազեցնելու, ինչպես նաև տարածաշրջանային տարբերությունները մեղմելու համար անհրաժեշտ է դիվերսիֆիկացնել օգտագործվող էներգիայի տեսակները:

Նշենք, որ էներգետիկ անվտանգության հիմքում ընկած են երկու հիմնարար սկզբունք: Առաջին՝ անհրաժեշտ է օգտագործել հնարավորին չափ քիչ էներգիա՝ միևնույն ժամանակ ապահովելով պահանջարկը և նվազեցնելով էներգետիկ կորուստները: Երկրորդ՝ անհրաժեշտ է ամբողջ աշխարհում ապահովել էներգիայի բոլոր աղբյուրների հասանելիությունը, ներառյալ ածուխը, նավթը և գազը՝ մինչև արդյունահանվող վառելիքի դարաշրջանի ավարտը, որը մոտենում է մեծ արագությամբ:

էներգետիկ անվտանգությունը ենթադրում է նաև էներգակիրների անխափան մատակարարում երկրի ամբողջ բնակչության համար մատչելի գներով: Սակայն էներգետիկ անվտանգությունը պետք է դիտարկել որպես անցումային ռազմավարություն, որը թույլ կտա ձեռք բերել էներգետիկ անկախություն:

Էներգետիկ անվտանգությունը բազմակողմանի հասկացություն է, որը վերաբերում է ոչ միայն էներգետիկ համակարգում, այլ նաև ամբողջ տնտեսությունում տեղի ունեցող գործընթացներին[1]:

Տնտեսական անվտանգությունը տնտեսության բարվոք վիճակը բնութագրող հիմնական ցուցանիշն է, որը պայմանավորված է տնտեսության բոլոր բաղադրիչների վիճակով՝ երկրում կամ տարածաշրջանում սոցիալական, բնապահպանական, պաշտպանական, իրավական, էներգետիկ, տեղեկատվական և այլ ոլորտներում տեղի ունեցող գործընթացներով:

Ներկայումս տնտեսությունը գտնվում է զարգացման այնպիսի մակարդակում, երբ էներգետիկ ոլորտը տնտեսության մյուս ոլորտների վրա ունեցած իր ազդեցությամբ համարվում է առանցքային: Այդ պատճառով էլ էներգետիկ գործոնի ներդրումը տնտեսական անվտանգության մեջ որոշիչ է և էներգետիկ

---

[1] Էներգետիկ անվտանգության հիմնախնդիրների և Հարավային Կովկասի տարածաշրջանի երկրներում էներգետիկ անվտանգության բավարար մակարդակի ապահովման հեռանկարների մասին տե՛ս *Կարապետյան Կ.*, Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության հեռանկարները, Եր., Էդիթ Պրինտ, 2008թ. [6]:

անվտանգության ապահովումը դառնում է տնտեսության բոլոր ոլորտների բնականոն գործունեության առաջնային խնդիրներից մեկը:

Տնտեսական անվտանգությունը բնութագրում է տնտեսության այնպիսի վիճակը, երբ երաշխավորվում է անձի, հասարակության, պետության շահերի պաշտպանությունը, ինչպես նաև քաղաքականության սոցիալական ուղղվածությունը, անգամ ներքին և արտաքին գործընթացների անբարենպաստ զարգացման պայմաններում [7]:

Էներգետիկ անվտանգությունը կարող ենք բնորոշել որպես էներգետիկ համակարգերի տեխնիկական անվտանգության որակ: Միևնույն ժամանակ, էներգետիկ անվտանգության վերջնական նպատակը, ըստ սահմանման, անձի, հասարակության և պետության երաշխավորված պաշտպանությունն է վառելիքաէներգետիկ ռեսուրսների պակասուրդից, այսինքն՝ այն ավելի լայն իմաստ ունի, քան էներգահամակարգի հուսալիության ապահովումը, և հանդես է գալիս որպես տնտեսական, քաղաքական և փիլիսոփայական կատեգորիա (նկատի ունենք անգլերեն *security* հասկացությունը):

Ներկայումս տնտեսագիտական գրականության մեջ օգտագործվում են էներգետիկ անվտանգության ստորև բերվող երեք հիմնական սահմանումները, որոնք, մեր կարծիքով, լրացնում են միմյանց [7, 8].

1. էներգետիկ անվտանգությունը վստահությունն է, որ առկա կլինի տվյալ տնտեսական պայմաններում պահանջվող քանակությամբ և որակով էներգիա,
2. էներգետիկ անվտանգությունը անձի, հասարակության և պետության կենսականորեն կարևոր «էներգետիկ շահերի» պաշտպանվածության վիճակն է ներքին ու արտաքին սպառնալիքներից,
3. էներգետիկ անվտանգությունը երկրի (տարածաշրջանի), նրա քաղաքացիների, հասարակության, պետության և տնտեսության՝ նորմալ պայմաններում ու արտակարգ իրավիճակներում պաշտպանվածության վիճակն է ընդունելի որակի տնտեսապես հասանելի վառելիքաէներգետիկ ռեսուրսների պակասուրդի, ինչպես նաև վառելիքի և էներգիայի կայուն մատակարարման սպառնալիքից:

Զգտելով համընդհանուր էներգետիկ անվտանգության՝ միջազգային հանրությունը առաջին հերթին պետք է նպատակաուղղվի զարգացնել միջազգային էներգետիկ շուկայի ենթակառուցվածքը: Էներգետիկ շուկաների զարգացման վերջնական նպատակը պետք է դառնա միասնական էներգետիկ տարածքի ձևավորումը, որտեղ գործում են միասնական կանոններ:

Այժմ էլ էներգառեսուրսների զգալի մասը մատակարարվում է՝ հատելով երկրների սահմանները: Ապագայում այս միտումը կաճի: Կարելի է փաստել,

որ նավթի համաշխարհային շուկան արդեն գոյություն ունեցող ամենազարգացած շուկաներից մեկն է: Ներկայումս, միասնական էներգետիկ ենթակառուցվածքի ստեղծման ուղղությամբ, անհրաժեշտ է փուլ առ փուլ ձևավորել միջերկրային, տարածաշրջանային, մայրցամաքային և միջմայրցամաքային էներգետիկ միավորումներ, որոնք կաշխատեն միասնական տեխնոլոգիական ստանդարտներով և կառավարման կանոններով:

Ազգային պետությունների իշխանությունների դերն այն է, որպեսզի մշտական աջակցություն ցուցաբերվի էներգառեսուրսների միջազգային առևտրի իրականացման և ներդրումային գործունեության ոլորտներում՝ էներգակիրները արտադրության տարածքներից սպառողներին մատակարարելու համար բարենպաստ տեխնիկական, էկոլոգիական, քաղաքական և իրավական պայմաններ ստեղծելու միջոցով:

Էներգետիկ անվտանգության հիմնախնդիրներով մտահոգված մասնագետները պետք է կարողանան համաձայնություն ձեռք բերել համատեղ գործողությունների, կշռադատված մոտեցումների և միասնական ծրագրերի մշակման վերաբերյալ: Դա, անկասկած, հեշտ գործընթաց չէ և պահանջում է երկրների միջև երկխոսություն ու փոխադարձ բացություն: Սակայն էներգետիկ անվտանգության սպառնալիքների համընդհանուր բնույթը թույլ չի տալիս, որպեսզի էներգետիկ հիմնախնդիրներն արդյունավետ լուծվեն միայն առանձին երկրների ջանքերի շնորհիվ:

1. Հայաստանի էներգետիկ համակարգի արդի վիճակը

Հայաստանի Հանրապետությունում արդյունավետ և կայուն էներգետիկ համակարգի առկայությունն այդ ոլորտում իրականացված բարեփոխումների արդյունք է: Էներգետիկ համակարգի արդյունավետ կառավարման հիմնախնդիրը մշտապես ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում է եղել: Որպես հետևանք՝ այս ոլորտում բարեփոխումներն արմատական բնույթ են կրել, և ներկայիս էներգետիկ համակարգն առավել մրցունակն է նախկին համայնավարական երկրների շարքում: Մինչդեռ, 1992-1995թթ. տեղի ունեցավ աննախադեպ էներգետիկ ճգնաժամ, որն ուղեկցվեց Հայկական ատոմակայանի փակմամբ, սեփական էներգետիկ ռեսուրսների խիստ սահմանափակությամբ (վառելիքի շուրջ 90%-ը ներմուծվում է), ոչ բարենպաստ աշխարհաքաղաքական դիրքով, հիմնական ենթակառուցվածքների շրջափակմամբ: Այդ ամենը հանգեցրեց բազմաթիվ մակրոտնտեսական ցուցանիշների նվազմանը և ամբողջ տնտեսության կառուցվածքի խեղաթյուրմանը:

Պայմանավորված նրանով, որ գազի մատակարարման միակ ուղին անցնում է հարևան Վրաստանի տարածքով, երկրի գազամատակարարման համակարգը հայտնվեց կազմալուծման եզրին: Նույնն էր պատկերը նաև ջեր-

մա- և էլեկտրաէներգետիկայի ոլորտում: Համակարգի տեխնիկական վերազինման և ներդրումային ծրագրերի իրականացման համար հատկացվող միջոցները խիստ սահմանափակ էին և չէին բավարարում իրական պահանջարկը, ինչը չէր կարող չանդրադառնալ Հայաստանի էներգետիկ անվտանգության վրա: Այսպես, 1991-1994թթ. արդյունաբերական և առնտրային կազմակերպությունների էներգառեսուրսների սպառումն առանձին տարիների կրճատվեց 80%-ից մինչև 40%-ի:

Այս իրավիճակը ևս մեկ անգամ ապացուցեց, որ էներգետիկ անվտանգության լավ մշակված հայեցակարգն այլընտրանք չունի: Շատ կարևոր էր հասնել Հայաստանի էներգետիկ համակարգի կառուցվածքային բոլոր միավորների լավագույն համակցության և փոխլրացման՝ ներառյալ գազի հատվածը, որի արդյունավետ ու կայուն աշխատանքից է կախված երկրում էլեկտրական էներգիայի արտադրության շուրջ 40%-ը:

Էներգետիկ ճգնաժամի հաղթահարման ընտրված ուղղությունները (մասնավորապես՝ Հայկական ԱԷԿ-ի վերագործարկումը և գազի անխափան ու հուսալի մատակարարման ապահովումը) բռնեցին ժամանակի քննությունը: Էներգետիկ ճգնաժամից երկրի դուրսբերման խնդիրը լուծվեց դեռևս 1996թ., սակայն միայն այդ հանգամանքը բավարար չէր արմատական և հավակնոտ բարեփոխումների գործում լուրջ և երկարատև հաջողությունների հասնելու համար, որոնց վերջնական նպատակը Հայաստանում ազատական, մրցակցային էներգետիկ շուկայի ստեղծումն է: Սկսած 2005 թվականից՝ Հայաստանի մասնավոր և պետական էներգետիկ ընկերությունները սկսեցին գործել այդպիսի շուկայի պայմաններում, և ընկերությունների գործունեության հիմնական նպատակ դիտվեց շահութաբերության ապահովումը:

Էներգետիկ համակարգի նշված ռազմավարական ուղղությամբ ձեռք բերված հաջողությունները, միջուկային էներգետիկայի անվտանգության բարձրացման, էներգետիկ ենթակառուցվածքի վերականգնման ու արդիականացման, սակագնային քաղաքականության կատարելագործման, ինչպես նաև էներգետիկ ակտիվների լայնածավալ մասնավորեցման ուղղությամբ կատարված գործնական քայլերի հետ համատեղ, թույլ տվեցին վերջին տասը տարիների ընթացքում ապահովել էներգետիկ ամբողջ համակարգի ֆինանսատնտեսական և արտադրական ցուցանիշների կայուն աճ: Սկսած 2003 թվականից՝ երկրում նկատվում է ինչպես արտադրության, այնպես էլ էլեկտրաէներգիայի սպառման կայուն աճ, ինչն իր ներդրումն է ունենում ՀՀ համախառն ներքին արդյունքի աճի մեջ: *Գծապատկեր 1-ում* արտացոլված է ՀՀ-ում արտադրության և էլեկտրաէներգիայի սպառման ու ՀՀ էներգահամակարգից էլեկտրաէներգիայի արտահանման դինամիկան:

Գծապատկեր 1

ՀՀ-ում էլեկտրաէներգիայի արտադրության և սպառման աճի դինամիկան



Աղբյուրը՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն

Թեև ներկայումս էներգետիկ համակարգի ընկերությունների, օբյեկտների մեծ մասը մասնավորեցված է, այնուամենայնիվ, ապահովվում է էներգետիկ համակարգի տեխնոլոգիական միասնականությունը: Էներգետիկ համակարգի տեխնոլոգիական օղակներից յուրաքանչյուրի՝ գազի, ջերմա-, միջուկա-, հիդրոէներգետիկայի, ինչպես նաև մայրուղային, բաշխիչ ցանցերի, դիսպետչերական ծառայության գործունեությունը համակարգվում է և այդ հանգամանքը թույլ է տալիս պահպանել և ուժեղացնել երկրի էներգետիկ համակարգի ամբողջականությունը:

Էներգետիկայի ոլորտի ընկերությունների մասնավորեցման անհրաժեշտությունը պայմանավորված էր, առաջին հերթին, համակարգի անխափան գործունեության և արդիականացման համար անհրաժեշտ հսկայական ներդրումներով: Մասնավոր կապիտալի ներգրավումը թույլ տվեց կրճատել պետության ծախսերը էներգահամակարգում, ներդրումներ ներգրավել այդ ընկերություններում, բարձրացնել էլեկտրաէներգիայի մատակարարումների դիմաց վճարների հավաքագրման աստիճանը: Մյուս կողմից՝ պետությունն ակնկալում էր էներգահամակարգի ընկերությունների մասնավորեցումից զգալի մուտքեր ապահովել պետական բյուջեում:

Էներգետիկայի ընկերությունների մասնավորեցմանը նախորդեցին հետևյալ քայլերը.

- համաձայն ՀՀ կառավարության 08.05.1998թ. N280 որոշման՝ իրականացվեց էներգահամակարգի ընկերությունների հիմնական միջոցների վերագնահատման գործընթացը (մինչև 1998թ. դեկտեմբերի 1-ը), որից հետո նախաձեռնվեց էներգահամակարգի ռազմավարական նշանակություն ունեցող ընկերությունների աստիճանական մասնավորեցման գործընթացը,
- համաձայն ՀՀ կառավարության 20.07.1998թ. N450 որոշման՝ ՀՀ էներգահամակարգի մարզային էլեկտրացանցերը միաձուլման ճանապարհով վերակազմավորվեցին «Հարավային», «Հյուսիսային» և «Կենտրոնական» էլեկտրացանցեր ՊՓԲԸ-ները, որոնց մասնավորեցման գործընթացը սկսվեց 1999թ.: Էներգահամակարգի բաշխիչ ընկերությունների մասնավորեցման գործընթացը միջազգայնորեն ընդունված պրակտիկայի պահպանմամբ անցկացնելու, ճիշտ և հավասարակշռված կազմակերպելու, վրիպումներից և թերություններից խուսափելու նպատակով Համաշխարհային բանկի *SATAC-2* վարկի հաշվին հրավիրվեցին միջազգային խորհրդատվական կազմակերպություններ,
- ԱՄՆ ՄԶԳ կողմից տրամադրված օգնության շրջանակներում հրավիրվեցին փորձագետներ, որոնք խորհրդատվական ծառայություններ մատուցեցին ՋԷԿ-երի, «Սևան-Հրազդան կասկադ» և «Որոտանի ՀԷԿ-երի համակարգ» ՊՓԲ-ների մասնավորեցման ռազմավարության մշակման վերաբերյալ, իսկ «Հրազդան ՋԷԿ» ՊՓԲԸ-ի 5-րդ բլոկի մասնավորեցման ռազմավարությունը մշակվեց Եվրոպական բանկի փորձագետների մասնակցությամբ,
- «Հայգազարդ» ՊԿ-ը, «Հայտրանսգազ» և «Հայգազ» ՊՓԲԸ-ներն ընդգրկվեցին «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ կազմում:

Մասնավորեցման առաջին ծրագրերով (1994թ. և 1995թ.) սեփականաշնորհվեցին բոլոր «փոքր» ՀԷԿ-երը, որոնք, սակայն, երկրի մասշտաբով չեն ապահովում էլեկտրաէներգիայի արտադրության զգալի ծավալ: Հաջորդ փուլում մասնավորեցվեցին էլեկտրաէներգիայի բաշխիչ ընկերությունները, ինչպես նաև էներգիա արտադրող խոշոր ընկերությունները (Հրազդանի ՋԷԿ, Սևան-Հրազդան ՀԷԿ-երի կասկադ, Որոտանի ՀԷԿ-երի կասկադ)՝ ռազմավարական նշանակություն ունեցող ընկերությունների համար մշակված սկզբունքներին համապատասխան, և ոլորտի մի շարք նախագծային ինստիտուտները:

Վերոնշյալի համատեքստում հատուկ ուշադրության է արժանի «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ դերի ուսումնասիրությունը Հայաստանի տնտեսության մեջ և էներգետիկ համակարգում: «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերությունը ստեղծվել է 1997թ. սեպտեմբերի 9-ի N373 որոշմամբ, որպես հայ-

ռուսական համատեղ ձեռնարկություն: Ընկերությունը ստեղծվեց ՀՀ-ում բնական գազի օգտագործման ծավալներն ավելացնելու, գազատարների կառուցման և օգտագործման, հանրապետության տարածքով ռուսաստանյան բնական գազի տարանցման, էլեկտրաէներգիայի արտադրության և երրորդ երկրներ դրանց մատակարարման գործընթացն ապահովելու նպատակով: Այս քայլին նախորդել էր Մոսկվայում 1997թ. օգոստոսի 30-ին Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարության, Ռուսաստանի Դաշնության «Գազպրոմ» բաժնետիրական ընկերության և «Իտերա» *(«ITERA» International Energy, LLC)* ընկերության միջև կնքված՝ «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերություն ստեղծելու մասին հիմնադիր պայմանագրի ստորագրումը:

ՀՀ կառավարության մեկ այլ որոշմամբ (1998թ. սեպտեմբերի 18-ի N568) սահմանվեցին հայկական կողմի մասնակցության ձևն ու չափերը: Մասնավորապես, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20 և 24 հոդվածներին համապատասխան՝ վերակազմավորվեց «Հայգազարդ» պետական փակ բաժնետիրական ընկերությունը՝ «Հայգազ», «Հայտրանսգազ», «Երևանգազ», «Գազավտոտրանսպորտային», «Ստորգետնյա մետաղպաշտպանություն», «Տրանսգազշին», «Հայգազշին», «Արմավիրգազմեքենա», «Նյութատեխնիկական մատակարարում և կոմպլեկտավորում», «Շինանյութերի արտադրություն և շինարարական աշխատանքներ» և «Գազկապշին» պետական փակ բաժնետիրական ընկերությունների միացման միջոցով: Նոր ստեղծված ընկերության բաժնետոմսերի տնօրինման լիազորությունները վերապահվեցին ՀՀ էներգետիկայի նախարարությանը: Որոշվեց նաև՝

ա) «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական հիմնադրամի իրեն պատկանող մասի (45%) տնօրինման լիազորությունները վերապահել «Հայգազարդ» պետական փակ բաժնետիրական ընկերությանը,

բ) ապահովել «Հայգազարդ» պետական փակ բաժնետիրական ընկերության կողմից $270 մլն արժեք ունեցող՝ Հայաստանի Հանրապետության գազատրանսպորտային համակարգի ներդրումը «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության մեջ՝ վերջինիս կանոնադրական հիմնադրամն ավելացնելու համար:

Վերջին ժամանակաշրջանում ընկերությունը զգալի հաջողություններ ունեցավ գործունեության բոլոր հիմնական ուղղություններում՝ Հայաստան բնական գազի մատակարարման և վաճառքի, գազամատակարարման ենթակառուցվածքի շահագործման ու վերանորոգման, խոշոր էներգետիկ ներդրումային ծրագրերի իրականացման գործում: Հայաստանում, մասնավորապես, վերջին ժամանակահատվածում բնական գազի ներմուծման և իրացման ծավալները կրկնապատկվել են *(Գծապատկեր 2):*

Գծապատկեր 2

Հայաստանի Հանրապետությունում բնական գազի ներմուծման և սպառման ծավալների աճի դինամիկան



Աղբյուրը՝ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ

1997-2007թթ. ընկերության գործունեության դրական արդյունքներից կարելի է առանձնացնել այն, որ՝

- գազի սպառողների փաստացի թիվն ավելացել է 5,1 անգամ
- գազամատակարարման ցանցը ընդլայնվել է 2,1 անգամ
- գազապաստարանում կուտակված գազի ծավալներն ավելացել են 2 անգամ
- ՀՀ պետական բյուջե կատարվող վճարումներն ավելացել են 11 անգամ
- սոցիալական ապահովագրության հիմնադրամ կատարվող վճարումների ծավալն ավելացել է 7,5 անգամ
- վնասով աշխատող ընկերությունից «ՀայՌուսգազարդ»-ը դարձել է շահութաբեր ընկերություն, որի շահույթը 2007թ. արդյունքներով կազմել է զրեթե $35 մլն:

Ընկերության տասնամյա գործունեության արդյունքները կարող ենք դրական գնահատել: Ներկայումս «ՀայՌուսգազարդ» ընկերությունը հանրապետության խոշորագույն ընկերությունների շարքում է, այն, մասնավորապես, առաջին տեղն է զբաղեցնում կանոնադրական կապիտալի, ակտիվների և հիմնական միջոցների մեծությամբ: Ընկերությունը ծրագրում է 2009թ. կանոնադրական կապիտալի չափն ավելացնել մինչև $1 մլրդ, իսկ շուկայական կապիտալացումը՝ $1,5-2 մլրդ:

«ՀայՌուսգազարդ» ընկերությունը հանրապետության 100 խոշոր հարկատուների շարքում 2008թ. առաջին կիսամյակի արդյունքներով զբաղեցնում է 2-րդ տեղը: 2008թ. առաջին կիսամյակում վճարված հարկերի ընդհանուր գումարը կազմել է 9413,7 մլն դրամ, ինչը 2007թ. նույն ժամանակահատվածի համեմատ 21%-ով քիչ է (2007թ. առաջին կիսամյակում ընկերության կողմից վճարված հարկերի ընդհանուր գումարը կազմել է 11953,8 մլն դրամ [9, էջ 88]:

Ընկերության ներդրումային ծրագրերը նույնպես ամենախոշորն են Հայաստանի Հանրապետությունում: 10 տարիների ընթացքում իրականացված գործունեության արդյունքում ներդրումների ընդհանուր ծավալը կազմել է $110 մլն-ից ավելի գումար, իսկ 2008-2010թթ. նախատեսվում է ՀՀ էներգետիկ համակարգում ներդնել ևս շուրջ $600 մլն:

Խոսելով ռազմավարական նպատակների մասին՝ նշենք, որ ընկերությունը ձգտում է դառնալ տարածաշրջանային նշանակության գազամատակարարման-էներգետիկական կազմակերպություն՝ ապահովելով էներգետիկ նախագծերին մասնակցությունն ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում: «ՀայՌուսգազարդ» ընկերությունը, տիրապետելով էլեկտրաէներգիայի արտադրության զգալի ակտիվների, նպատակ ունի դառնալ էլեկտրաէներգիայի շուկայի ակտիվ մասնակից:

2. Մակրոտնտեսական իրավիճակը

Հայաստանի Հանրապետությունում էներգետիկ ընկերությունների գործունեության դրական արդյունքները մեծ մասամբ պայմանավորված են գործարարության զարգացման նպատակաուղղված և մանրամասն մշակված ռազմավարությամբ, որը թույլ է տալիս ընկերություններին իրենց շահերի իրացման համար օգտագործել վերջին տարիներին տեղի ունեցող Հայաստանի արագընթաց տնտեսական աճը:

Վերջին տարիների ընթացքում Հայաստանում ձևավորված մակրոտնտեսական իրավիճակը հիմնականում գնահատվում է կայուն և կանխատեսելի: Սկսած 2002 թվականից՝ Հայաստանում գրանցվում է երկնիշ տնտեսական աճ: 2007թ. արդյունքներով ապահովվել է ՀՆԱ գրեթե 14%-անոց աճ, արդյունաբերությունում այն կազմել է 2,7%, արտահանման ծավալներն աճել են 21,2%-ով, տնտեսության իրական հատվածում ներդրումներն աճել են 58%-ով: Ընդ որում՝ տնտեսական աճն ապահովվել է ինֆլյացիայի ցածր մակարդակի պայմաններում: *Գծապատկեր 3-ում* ներկայացված է վերջին ժամանակաշրջանում ՀՀ տնտեսության զարգացման դինամիկան:

Ելնելով նավթի ու գազի միջազգային շուկաներում տեղի ունեցող զարգացումներից, վառելիքի գների տատանումներից և դրա հետևանքով գոյություն ունեցող լարված իրավիճակից՝ դժվար է կանխատեսել մոտ ապագայում

նավթի, նավթամթերքների և բնական գազի գների հետագա մակարդակը: Կարող ենք կանխատեսել, որ զարգացած պետություններում տեղի ունեցող տնտեսական անկման երևույթների հետ կապված՝ կնվազեն վառելիքի միջազգային առևտրի ծավալները, ինչն ամենայն հավանականությամբ կանդրադառնա նաև Հայաստանի տնտեսության զարգացման և հետագա տնտեսական աճի տեմպերի վրա: Համաշխարհային տնտեսությունում գոյություն ունեցող միտումների վերլուծության հիման վրա միջազգային վերլուծաբանները, այնուամենայնիվ, կանխատեսում են ՀՀ տնտեսության հետագա փոփոխություն՝ 2004-2007թթ. ՀՆԱ աճի միջին տարեկան 12%-անոց ցուցանիշի փոխարեն 2015-2020թթ. համար կանխատեսելով 6-7%-անոց աճ:

Գծապատկեր 3

Հայաստանի Հանրապետությունում ՀՆԱ աճի դինամիկան



Աղբյուրը՝ Արժույթի միջազգային հիմնադրամ

3. Ազատական դաշտ էներգետիկ ռեսուրսների առևտրի կազմակերպման համար

Էներգետիկ համակարգի բարեփոխման ընթացքում ՀՀ կառավարությունն իրականացրեց մի շարք կարևորագույն միջոցառումներ, որոնք նպատակաուղղված էին երկրում գրավիչ, ոչ խտրական ներդրումային միջավայրի ստեղծմանը: Օտարերկրյա կապիտալով ընկերությունները ներկայումս հնարավորություն ունեն առանց որևէ սահմանափակման[1] ներդրումներ իրա-

[1] Ի դեպ, բազմաթիվ են այն երկրները, որտեղ կիրառվում են այդպիսի սահմանափակումներ՝ հատկապես բնական ռեսուրսների օգտագործման հետ կապված արդյունաբերության ճյուղերում:

կանացնել ՀՀ տնտեսության ցանկացած ոլորտում: ՀՀ կառավարությունը խթանում է օտարերկրյա ներդրումները, արտասահմանյան և տեղական կապիտալով ընկերություններն օգտվում են հավասար իրավունքներից:

Ընդհանրական տեսքով ՀՀ էներգետիկ շուկայի «ուժեղ» ինստիտուցիոնալ կողմերից կարող ենք նշել հետևյալները՝ ազատական օրենսդրությունը, ներդրումների համար նպաստավոր իրավական դաշտը, ազատական առևտրային քաղաքականությունը, էլեկտրաէներգիայի համար սահմանված մրցակցային գները, էլեկտրաէներգիայի արտադրության նոր արդյունավետ հզորությունների կառուցման (շահագործման) պետական հստակ ծրագրի առկայությունը, այլընտրանքային և վերականգնվող էներգետիկայի (հողմային, հիդրո-, հիդրոթերմալ, արեգակնային) զարգացման համար ստեղծված խթանները:

Վերը նշվածին անհրաժեշտ է հավելել նաև մի շարք առավելություններ, որոնք բնորոշ են Հայաստանի զարգացած էներգետիկ ենթակառուցվածքին: Դրանք են՝

- էներգակիրների և էլեկտրակայանների ձևերի դիվերսիֆիկացումը
- բնական գազի ներմուծման ուղիների դիվերսիֆիկացումը
- ստորերկրյա գազապաստարանի առկայությունը
- լրացուցիչ (ավելցուկային) արտադրահզորությունների առկայությունը
- զարգացած ներքին համակարգ ձևավորող ցանցի առկայությունը
- էլեկտրահաղորդման միջհամակարգային գծերի զարգացած ցանցի առկայությունը,
- անձնակազմի որակավորման և մասնագիտացման բարձր աստիճանը:

Հայաստանի Հանրապետությունը տարածքային տեղաբաշխմամբ յուրատեսակ կապուղի է ածխաջրածնային ռեսուրսներով հարուստ Ռուսաստանի Դաշնության, Իրանի Իսլամական Հանրապետության և Կասպից ծովի երկրների միջև: Իսկ կայացած և արագ զարգացող գործընկերությունը համաշխարհային այնպիսի «հսկաների» հետ, ինչպիսիք են «Գազպրոմ» ԲԲԸ-ն, «Ինտեր ՌԱՕ» ընկերությունը, Ռուսաստանի ատոմային էներգետիկայի գործակալությունը (Ռուսէներգաատոմ), Հայաստանի համար ձևավորում է որակապես նոր պայմաններ և աննախադեպ հնարավորություններ է ստեղծում երկիրը տարածաշրջանային էներգետիկ շուկայում առանցքային դերակատարներից մեկը դարձնելու համար:

Ներկայումս կարող ենք փաստել, որ Հայաստանի Հանրապետությունը, չունենալով ածխաջրածինների սեփական պաշարներ և ելք դեպի ծով, տարածաշրջանի երկրներում տեղի ունեցող բարդ և ոչ միանշանակ քաղաքականտնտեսական գործընթացների ֆոնին ցուցադրում է երկրի էներգետիկ անվտանգության անհրաժեշտ մակարդակի պահպանման և էներգետիկ համա-

կարգի արագընթաց զարգացման ապահովման լավ օրինակ: Ոչ հեռավոր անցյալում էներգետիկական պակասուրդ ունեցող երկրից Հայաստանի վերափոխումը էներգետիկ ռեսուրսների ավելցուկ ունեցող երկրի՝ առաջին հերթին հնարավոր դարձավ ոլորտի վճռական և ժամանակին իրականացված բարեփոխումների, միջազգային կազմակերպությունների կողմից (Համաշխարհային բանկ, ՎԶԵԲ, *KfW* և այլն) էներգետիկ հատվածին տրամադրվող լայնածավալ օժանդակության, ինչպես նաև էներգետիկ համակարգի համար ճիշտ ռազմավարական գործընկերների ընտրության շնորհիվ:

4. Էլեկտրաէներգիայի նկատմամբ պահանջարկի կանխատեսումը

Հայաստանի Հանրապետությունում էներգետիկ պահանջարկի և սպառման վերաբերյալ վերջին ժամանակաշրջանում կատարված ուսումնասիրություններից, մեր կարծիքով, առավել ուշադրության են արժանի հետևյալները.

1. Էներգետիկ ոլորտի հեռանկարները մինչև 2020թ. (ֆրանսիական *SOFRECO* ընկերություն), որն իրականացվել է *TACIS INOGATE* «Մեծամորի ԱԷԿ-ի փակման պարագայում Հայաստանի գազամատակարարման անվտանգությունը» ծրագրի շրջանակներում 2003թ. մայիսին:
2. Կարճաժամկետ և երկարաժամկետ էներգետիկ պահանջարկի ու առաջարկի անկախ փորձագիտական գնահատում՝ Հայկական ԱԷԿ-ի փակման այլընտրանքային տարբերակների գնահատման նպատակով *(Carl Bro & MVV* ընկերություններ, *TACIS,* 2003թ.):
3. ԱԷՄԳ տեխնիկական համագործակցության ծրագրի շրջանակներում իրականացված՝ Հայաստանի էներգետիկ հատվածի և ատոմային էներգետիկայի պլանավորում *(Energy and Nuclear Power Planning),* 2004թ.:
4. «Էներգետիկ հատվածի զարգացման ռազմավարությունը Հայաստանի տնտեսական զարգացման համատեքստում» (ՀՀ կառավարության կողմից իրականացված ծրագիր, 2005թ. հունիս):
5. 2006թ. նվազագույն ծախսերով էներգիա արտադրող հզորությունների զարգացման ծրագիր մինչև 2025թ. ժամանակահատվածը *(The 2006 Least Cost Generation Plan (LCGP) up to 2025):*

Վերը նշված աշխատությունների վերլուծությունը թույլ է տալիս Հայաստանի Հանրապետությունում էլեկտրաէներգիայի պահանջարկի վերաբերյալ հետևյալ կանխատեսումներն անել.

1. Մեծամորի ԱԷԿ-ը պետք է շարունակի գործարկվել մինչև նախագծով նախատեսված 2-րդ էներգաբլոկի ծառայության ժամկետը՝ 2016թ.: Նոր ատոմային էներգաբլոկների շահագործման հարցը, մինչև նշված ժամանակահատվածի ավարտը, արդիական է մնում, և Հայաստանի էներգե-

տիկայի ոլորտի զարգացման միջնակային սցենարը ՀՀ կառավարության կողմից ներկայումս հայտարարված է որպես նախապատվելի ուղղություններից մեկը: Էներգիա արտադրող աղբյուրների դիվերսիֆիկացման սկզբունքը, ինչպես նաև ՀՀ էներգահամակարգում սպառման պիկերի ժամանակաշրջանում շուրջ 40%-ի ապահովումը ԱԷԿ-ում արտադրվող էլեկտրաէներգիայի հաշվին, թույլ է տալիս կանխատեսել, որ ԱԷԿ-ի դրվածքային հզորությունը պետք է կազմի շուրջ 1000-1200 մվտ, քանի որ 2025թ. սպասվելիք առավելագույն ծանրաբեռնվածությունը կարող է կազմել 2200 մվտ՝ չափավոր սցենարի դեպքում և 2600 մվտ՝ լավատեսական սցենարի դեպքում:

2. Էներգիա արտադրող հզորությունների արդիականացման տեսանկյունից (հին և անարդյունավետ հզորությունների փոխարինման ու նորերի շահագործման) առաջնային ուղղություններից մեկն է համարվում նոր ՋԷԿ-երի շահագործումը՝ Երևանի ՋԷԿ-ում (208 մվտ) և Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ էներգաբլոկում (440 մվտ) նորագույն գազի տուրբինային տեխնոլոգիաների կիրառմամբ:
3. Հիդրոէներգետիկ հզորությունները տեխնիկական պատճառներով չեն կարող համարվել արտադրող հզորությունների համալրման կայուն աղբյուր: Այդ պատճառով գոյություն ունեցող հիդրոէներգետիկ հզորությունների վերականգնումը և նորերի շինարարությունը (Մեղրի ՀԷԿ՝ 140 մվտ հզորությամբ, Լոռիբերդի ՀԷԿ՝ 68 մվտ հզորությամբ, Շնողի ՀԷԿ՝ 70 մվտ հզորությամբ) պետք է դիտարկել բացառապես սեփական, էկոլոգիապես մաքուր էներգիայի աղբյուրների առավելագույն զարգացման համատեքստում՝ արևային, հողմային և վերականգնվող էներգիայի այլ տեսակների հետ մեկտեղ:
4. Մինչև 2025թ. Հայաստանում կանխատեսվող էլեկտրաէներգիայի սպառման միջին տարեկան աճը կազմելու է 3,4% (համաձայն The 2006 *Least Cost Generation Plan* փաստաթղթի)՝ սկսած 5572 մլրդ կվտ/ժամ արտադրված էլեկտրաէներգիայից (հաշվի չառնելով սեփական կարիքների համար օգտագործվածը) և 1230 մվտ պիկային արժեքից, որը 2007թ.-ի ցուցանիշն է, մինչև տարեկան 7% (համաձայն ԱԷՄԳ *Energy and Nuclear Power Planning* փաստաթղթի): Այս դեպքում, բացի Երևանի ՋԷԿ-ի, Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ էներգաբլոկի և 1000 մվտ հզորությամբ նոր ատոմակայանի, մինչև 2022թ. անհրաժեշտ է շահագործման հանձնել լրացուցիչ 400 մվտ արդյունավետ ջերմային հզորություններ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2004-2007թթ. ՀՀ-ում էլեկտրաէներգիայի սպառման միջինացված տարեկան աճը կազմել է շուրջ 1%, առավել արժանահավատ են այն կանխատեսումները, որոնց հիմքում դրված է չափավոր աճի սցենարը՝ տարեկան 3,4%:

5. Հայաստանում էներգիա արտադրող հզորությունների զարգացման համար անհրաժեշտ ներդրումները (ներառյալ նոր ԱԷԿ-ի համար կատարվելիք ծախսերը) մինչև 2025թ. ընկած ժամանակահատվածում կկազմեն $2800 մլն:

Զարգացման լավատեսական տարբերակի դեպքում, երբ էլեկտրաէներգիայի կանխատեսվող պահանջարկի աճը կազմելու է տարեկան 4,4%, Հայաստանում էլեկտրաէներգիայի համախառն արտադրությունը 2010թ. 2007թ. նկատմամբ կարող է աճել ավելի քան 1,25 անգամ (մինչև 7465 մլն կվտ/ժամ), իսկ 2020թ. նույն ժամանակահատվածի նկատմամբ՝ գրեթե երկու անգամ (մինչև 10906 մլն կվտ/ժամ): Տնտեսության ավելի զուսպ տեմպերով զարգացման (էլեկտրաէներգիայի սպառման միջին տարեկան 3,4%-ով աճի) դեպքում ՀՀ-ում էլեկտրաէներգիայի արտադրության մակարդակը կկազմի համապատասխանաբար 7227 մլն կվտ/ժամ և 9289 մլն կվտ/ժամ:

Գծապատկեր 4-ում ներկայացված է Հայաստանի Հանրապետությունում էլեկտրաէներգիայի ներքին սպառման կանխատեսվող աճը:

Գծապատկեր 4

ՀՀ-ում էլեկտրաէներգիայի սպառման կանխատեսվող աճը



Աղբյուրը՝ PA Consulting

5. Հայաստանի Հանրապետությունում արտադրող հզորությունների ներդրման ծրագրերը

Հայաստանի էներգետիկ անվտանգության իրական պահանջներն արտացոլված են ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության գործողությունների ներկայիս ծրագրում, որը հիմնված է ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության դրույթների վրա [10]: Նախատեսվում է մինչև 2020թ. իրականացնել հետևյալ ծրագրերը.

1. նոր արտադրող հզորությունների ներդրման ոլորտում՝

- Հայկական ԱէԿ-ում նոր էներգաբլոկի շինարարությունն ավելի քան 1000 մվտ հզորությամբ,
- Հրազդանի ՋէԿ-ի 5-րդ էներգաբլոկի, որի հզորությունն ավելի քան 440 մվտ է, շինարարության ավարտը,
- Երևանի ՋէԿ-ում 208 մվտ հզորությամբ գազատուրբինային էներգետիկ սարքավորման շինարարությունը,
- մինչև 200 մվտ ընդհանուր հզորությամբ հողմային էլեկտրակայանների շինարարությունը,
- մինչև 1100 մվտ ընդհանուր հզորությամբ ՀէԿ-երի շինարարությունը, այդ թվում՝ ավելի քան 260 մվտ հզորությամբ «փոքր» ՀէԿ-երի շինարարությունը:

2. էլեկտրաէներգետիկայի ոլորտում՝

- նոր միջհամակարգային էլեկտրափոխանցման գծերի շինարարությունը՝ Իրան-Հայաստան 440 կվ-անոց երկգծային ուղին և 400 կվ-անոց Հայաստան-Վրաստան բարձրավոլտ գիծը,
- 220 կվ-անոց Գյումրի-2 բարձրավոլտ ենթակայանի վերակառուցումը,
- սպասարկման որակի բարձրացումը առևտրային և տեխնիկական կորուստները նվազեցնելու նպատակով:

Նախատեսված ծրագրերը հաջողությամբ իրականացնելու դեպքում միջնաժամկետ հեռանկարում Հայաստանի Հանրապետությունը, չնայած երկրում էներգետիկ ռեսուրսների նկատմամբ պահանջարկի աճին (ներառյալ՝ էլեկտրաէներգիայի նկատմամբ), կմնա էներգիայի արտադրության հզորությունների, այդ թվում նաև ջերմային հզորությունների զգալի հավելուրդ ունեցող երկիր: Ջերմաէներգետիկ ռեսուրսներն առավել մրցունակ են համարվում Հարավային Կովկասի տարածաշրջանում, և նախատեսվում է շոգետուրբինային ջերմային էլեկտրակայանների շահագործումից (որոնք աշխատում են գազով) անցնել շոգեգազային էլեկտրակայանների գործարկմանը, որոնց օգտակար գործողության գործակիցն ավելի բարձր է (ներկայումս մինչև 50%, իսկ հեռանկարում՝ մինչև 60% և ավելի):

Տարբեր գնահատականներով, հաշվի առնելով Իրանից Հայաստան մատակարարվող գազի դիմաց էլեկտրաէներգիայի արտահանման հանդիպական երկարաժամկետ պարտավորությունները, Հայաստանում մրցակցային հզորությունների ավելցուկը 2016թ. կկազմի ավելի քան 1500 մվտ, ինչը համապատասխանում է տարեկան շուրջ 10 մլրդ կվտ/ժամ էլեկտրաէներգիայի:

6. Էլեկտրաէներգիայի հեռանկարային պահանջարկը Հարավային Կովկասի տարածաշրջանի երկրներում

Հարավային Կովկասի և հարևան երկրների (Թուրքիայի և Իրանի) տարածաշրջանը ներկայումս գտնվում է խոշոր միջազգային, հիմնականում՝ նավթային և գազային էներգետիկ նախագծերի խաչմերուկում: Հարավային Կովկասում ստեղծված է նոր էներգետիկ հաղորդակցման հնարավորություն: Տարածաշրջանի բոլոր երկրներում էներգետիկ ռեսուրսների նկատմամբ պահանջարկն աճի կայուն միտումներ ունի, մասնավորապես՝ առաջիկա երկու տասնամյակներում կանխատեսվում է էլեկտրաէներգիայի և գազի նկատմամբ պահանջարկի աճ:

Էներգետիկ ինքնաբավության ապահովման համար, բացի սեփական էներգառեսուրսներով ապահովվածությունից, խիստ անհրաժեշտ է նաև էներգիայի սեփական արդյունավետ արտադրությունը: Այս տեսանկյունից, Հայաստանի հարևան երկրներում այսօր արդեն նկատվում է էներգիա արտադրող հզորությունների ընթացիկ, իսկ ապագայում՝ ավելի լուրջ հիմնախնդիր:

Օրինակ, վերջին տարիների ընթացքում Վրաստան էր ներմուծվում օգտագործվող էլեկտրաէներգիայի շուրջ 15%-ը՝ հիմնականում Ռուսաստանի Դաշնությունից և Հայաստանից: Նման իրավիճակի հիմնական պատճառը գոյություն ունեցող հիդրոէներգետիկ և ջերմային հզորությունների անբավարար տեխնիկական վիճակն էր: Ներկայումս Վրաստանում ընթացիկ սպառման տարեկան մակարդակը կազմում է 8,5 մլրդ կվտ/ժամ, սակայն այս երկրում նույնպես կանխատեսվում է էներգետիկ ռեսուրսների, այդ թվում՝ էլեկտրաէներգիայի սպառման աճ: Հաշվի առնելով նոր հզորությունների ներդրման կանխատեսումները՝ առաջիկա 3-5 տարիներին Վրաստանում կպահպանվի տարեկան շուրջ 500 մվտ-ի հասնող հզորությունների պակասուրդը:

Թուրքիայի էլեկտրաէներգիայի շուկան առավել արագ տեմպերով աճող շուկաներից է: 1995-2007թթ. ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի նկատմամբ պահանջարկն աճել է տարեկան 6,6% տեմպերով, և կանխատեսվում է, որ 2008-2015թթ. այն կլինի 8,5% մակարդակի: Սպասվում է նաև, որ էլեկտրաէներգիայի սպառումը Թուրքիայում, որը 2006թ. հասավ առավելագույն մակարդակին՝ 170 մլրդ կվտ/ժամ, մինչև 2020թ. կավելանա շուրջ չորս անգամ՝ հասնելով 499 մլրդ կվտ/ժամի: Սպառման նշված մակար-

դակն ապահովելու համար Թուրքիայում անհրաժեշտ է երեք անգամ ավելացնել էլեկտրակայանների դրվածքային հզորությունները՝ 2005թ. 38500 մվտ-ից մինչև 96000 մվտ 2020թ.: Այս թվերը զգալիորեն գերազանցում են Եվրամիության երկրների միջին ցուցանիշները և, հաշվի առնելով բնակչության մեկ շնչի հաշվով սպառման ցածր մակարդակը, վկայում են էներգետիկ ոլորտի շահութաբերության մասին:

Եվրահանձնաժողովի փորձագետների գնահատմամբ՝ Թուրքիայի էլեկտրաէներգետիկ ոլորտում կատարվող ներդրումները բավարար են միայն մինչև 2009թ. պահանջարկը բավարարելու համար: 2009 թվականից հետո Թուրքիան ստիպված կլինի ներմուծել էլեկտրաէներգիա, եթե չսկսվի անկախ էներգետիկ նախագծերում ներդրումների իրականացումը: Սկսած 2009 թվականից Թուրքիայի ազգային էլեկտրաէներգետիկ ցանցում անհրաժեշտ կլինի ավելացնել տարեկան առնվազն 4000 մվտ հզորություններ կամ, փողով հաշված, ներգրավել առնվազն $4 մլրդ-ի ներդրումներ: Թուրքիայի էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը հայտարարել է առաջիկա հինգ տարիների ընթացքում երկրի էներգետիկ ոլորտում $20 մլրդ-ի ներդրումներ կատարելու անհրաժեշտության մասին: Մինչև 2020թ. պահանջվում է շահագործման հանձնել 51000 մվտ նոր արտադրական հզորություններ, իսկ էլեկտրաէներգիայի սպասվող պահանջարկը նույն ժամանակահատվածում կպահանջի շուրջ $130 մլրդ-ի ներդրումների իրականացում:

Ինչ վերաբերում է Իրանի Իսլամական Հանրապետությանը, ապա ներկայումս էներգետիկ հզորությունների պակասուրդն այստեղ կազմում է 2500 մվտ, որն աճում է տարեցտարի, թեև կատարվում է լայնածավալ էներգետիկ շինարարություն:

Վերը շարադրվածը ևս մեկ անգամ վկայում է այն մասին, որ չնայած Հարավային Կովկասի տարածաշրջանի մի շարք երկրներում առկա են ածխաջրածնային ռեսուրսների զգալի սեփական պաշարներ, Վրաստանում, Թուրքիայում և Իրանի Իսլամական Հանրապետությունում նոր էլեկտրաէներգետիկ հզորությունների շահագործումը միջնաժամկետ հեռանկարում չի կարողանա ապահովել այդ երկրներում էլեկտրաէներգիայի կանխատեսվող պահանջարկի ծավալները: Այլ խոսքերով, Հայաստանի Հանրապետության համար տարածաշրջանի երկրները հեռանկարային էներգետիկ շուկա են, որտեղ գոյություն ունեն կայուն պահանջարկ և կանխատեսելի սպառում:

7. Հայաստանի էլեկտրաէներգետիկ արտահանման ներուժը

Ընթացիկ և հեռանկարային պահանջարկը բավարարող արտադրահզորությունների առկայությունը Հայաստանի Հանրապետության հիմնական առանձնահատկություններից է, իսկ տարածաշրջանային հավանական սպառողների աշխարհագրական մոտիկությունը՝ օբյեկտիվ փաստ: Հաշվի առնե-

լով այն հանգամանքը, որ տարածաշրջանի երկրներից Հայաստանում բնական գազի գինն ամենացածրն է, էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքն արդյունավետ հաշվեկշռված է, ինչպես նաև մի շարք այլ գործոններ, կարող ենք փաստել, որ տարածաշրջանում ավելի էժան ու տեխնիկապես հասանելի էլեկտրաէներգիայի աղբյուր ներկայումս չկա:

Գծապատկեր 5

Հայաստանի Հանրապետությունից էլեկտրաէներգիայի արտահանման հնարավոր ծավալները՝ միջհամակարգային էլեկտրահաղորդման գծերի թողունակության հաշվառմամբ, մլրդ կվտ/ժամ



Հաշվի առնելով տարեկան կտրվածքով էլեկտրաէներգիայի արտադրության հնարավոր ծավալները, Հայաստանում ներքին սպառման համար անհրաժեշտ էլեկտրաէներգիայի կանխատեսումները, հարևան երկրների հետ առկա միջհամակարգային էլեկտրահաղորդման գծերի թողունակությունը, 2010թ. սկսած՝ Հայաստանի էներգահամակարգից Վրաստանի, Թուրքիայի և Իրանի Իսլամական Հանրապետության էներգահամակարգեր էլեկտրաէներգիայի մատակարարման (ինչը հնարավոր կլինի նշված երկրների էներգահամակարգերի համատեղ՝ զուգահեռ աշխատանքի ապահովման դեպքում) գումարային ծավալները կարող են կազմել տարեկան շուրջ 6 մլրդ կվտ/ժամ[1] *(Գծապատկեր 5):*

Առանձնակի ուշադրության են արժանի «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ արտա-

[1] Այստեղ հաշվի է առնվում նաև Իրանից Հայաստան մատակարարվող գազի դիմաց Հայաստանից էլեկտրաէներգիայի մատակարարման վերաբերյալ երկարաժամկետ պարտավորությունների կատարումը:

հանման կարողությունները, քանի որ ներկայումս այս ընկերությունը համակողմանիորեն ներգրավված է էլեկտրաէներգետիկ համակարգում: Այսպիսի ներգրավվածությունը բխում է ընկերության ռազմավարական խնդիրներից և այն իրողության գիտակցումից, որ էլեկտրաէներգետիկան ընկերության համար մասնագիտացման լավ ոլորտ է, որը թույլ է տալիս ապահովել գործունեության զգալի հավաքական արդյունք: Անհրաժեշտ է հավելել նաև, որ «ՀայՌուսգազարդ» ընկերությունը տիրապետում է Հայաստանի գազաէներգետիկ խոշոր օբյեկտների և հնարավորություն ունի մանրել ֆինանսական ու նյութատեխնիկական այնպիսի ռեսուրսներով, որոնք հիմքեր են տալիս ենթադրել, որ «ՀայՌուսգազարդ»-ը կարող է կարճաժամկետ հեռանկարում դառնալ տարածաշրջանի էլեկտրաէներգիայի մատակարարման շուկայի առանցքային դերակատարներից մեկը:

8. Արտահանման քաղաքականության նոր որակը

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում վարվող արտահանման քաղաքականությունը պետք է նպատակաուղղված լինի հարևան երկրների հետ արտաքին տնտեսական փոխանակման ակտիվացման առանձնահատուկ և խիստ արդյունավետ հնարավորությունների ստեղծմանը, որոնց օգնությամբ հնարավոր է զգալիորեն բարձրացնել երկրի էներգետիկ անվտանգության մակարդակը:

Հայաստանը, ունենալով երկու գազատար, գազի ստորերկրյա պահուստավորման հզորություններ և մրցակցային արտադրական հզորությունների ավելցուկ, բոլոր հնարավորություններն ունի տարածաշրջանային ազատական էներգետիկ հարթակ դառնալու համար: Նշված հավակնոտ խնդրի լուծման համար Հայաստանի տնտեսությունում և, հատկապես, էներգետիկ ոլորտում մոտ ապագայում անհրաժեշտ կլինի իրականացնել մի շարք լայնածավալ ծրագրեր: Այդ ծրագրերում դրված նպատակներն ու խնդիրները կարող ենք ամփոփել հետևյալ դրույթների տեսքով՝

- Հայաստանի էներգետիկ անվտանգության մակարդակի բարձրացումը՝ արտահանման մրցակցային շուկայի ստեղծման միջոցով,
- անհրաժեշտ է մշակել և իրականացնել արտահանման ուղղվածություն ունեցող ու «ճկուն» գնային քաղաքականության վրա կառուցված էներգետիկ ծրագրերի աջակցության պետական քաղաքականություն,
- մշակել ռազմավարական գործընկերների («Գազպրոմ», «Ինտեր ՌԱՕ» ընկերություններ և այլն) փոխադարձաբար համաձայնեցված դիրքորոշումները տարածաշրջանային էներգետիկ համագործակցության ընդլայնման հեռանկարների վերաբերյալ, որտեղ պետք է ընդգրկված լինեն ոչ միայն Հայաստանի անմիջական հարևանները, այլ նաև այնպիսի երկրներ, ինչպիսիք են Իրաքը, Թուրքմենստանը և այլն:

Հայաստանը տարածաշրջանային էներգետիկ «հարթակ» դարձնելու ուղղությամբ վերը նշված նպատակների իրականացման համար հիմնական պայմաններն են՝

- արտաքին տնտեսական փոխանակման հետագա ազատականացումը,
- նորարարական նվաճումների, առաջադեմ տեխնիկական ստանդարտների, տնտեսության պետական կարգավորման ու կորպորատիվ կառավարման մեթոդների նկատմամբ մատչելիության ընդլայնումը,
- արտահանման քաղաքականության նոր որակի ապահովման ուղղությամբ իրական քայլերը:

Վերը նշված քայլերը լիարժեք իրականացնելու համար անհրաժեշտ է, որպեսզի Հարավային Կովկասի տարածաշրջանի բոլոր երկրները գիտակցեն էներգետիկ համագործակցության հեռանկարները և պատրաստ լինեն ընդունել ու պահպանել ընդհանուր իրավական ռեժիմները («խաղի կանոնները»), որոնք համապատասխանում են միջազգային նորմերին և ենթակա չեն կամայական, միակողմանի փոփոխման: Տարածաշրջանում ստեղծված էներգետիկ շուկայի ներկայիս իրավիճակը Հայաստանը դիտարկում է որպես դրական փաստարկ և մոտ ապագայում խոշոր էներգետիկ նախագծերում ընդգրկված լինելու իրական հնարավորություն, որտեղ հանրապետությունը առանցքային մասնակից դառնալու լուրջ շանսեր ունի:

Նոյեմբեր, 2008թ.

Աղբյուրներ և գրականություն

1. Transition report 2004. Infrastructure. European Bank for Reconstruction and Development, 2004.
2. *Կարապետյան Վ.,* Տարածաշրջանային համագործակցության և էներգետիկ անվտանգության հիմնախնդիրները Հարավային Կովկասում, Եր., Էդիթ Պրինտ, 2008:
3. Вопросы энергетической безопасности – позиция России, http://www.kcnti.ru/cgi-bin/sws/news.pl?action=view&id_entity=2&id=1157623297.
4. *Гайдар Е., Чубайс А.,* Экономические записки, М., Российская политическая энциклопедия, 2008г., 191 стр.
5. Обращение президента Индии к стране в преддверии 59-ой годовщины Дня независимости, 14 августа 2005г., Нью-Дели, http://www.indianembassy.ru/docs-htm/ru/ru_hp_win_official_direct_t066.htm.
6. Վ.Կարապետյան. Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության հեռանկարները, Եր., Էդիթ Պրինտ, 2008թ.:

7. *Бушуев В.В., Воропай Н.И., Мастепанов А.М., Шафраник Ю.К.* и др., Энергетическая безопасность России. Новосибирск, Наука, сибирская издательская фирма РАН, 1998.
8. *Благодатских В.Г., Богатырев Л.Л., Бушуев В.В., Воропай Н.И.* и др. Влияние энергетического фактора на экономическую безопасность регионов России, Екатеринбург, 1998.
9. "Business Class" ամսագիր, N 6 (10), օգոստոս 2008թ.:
10. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն, հավանության է արժանացել ՀՀ Նախագահին առընթեր ազգային անվտանգության խորհրդի 2007թ. հունվարի 26-ի նիստում: ՀՀ Նախագահի 2007թ. փետրվարի 7-ի ՆՀ-37-Ն հրամանագրի հավելված:

РОЛЬ АРМЕНИИ В ОБЕСПЕЧЕНИИ ЭНЕРГЕТИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ ЮЖНО-КАВКАЗСКОГО РЕГИОНА

Карен Карапетян

Резюме

Энергетика является сегодня одной из ключевых тем, обсуждаемых в контексте будущего мирового развития. Современные глобальные вызовы требуют решения комплексной задачи по развитию и поддержанию устойчивых схем в деле покрытия спроса на энергоресурсы и обеспечения непрерывных и эффективных энергетических поставок. Решение отмеченной задачи, по сути, станет серьезным вкладом в обеспечение энергетической безопасности стран, снижение риска повышения цен и ценовых колебаний на топливные ресурсы, снижение риска климатических изменений, а также в обеспечение экономического развития, создание рабочих мест и защиту окружающей среды.

Энергетическая отрасль Армении стала наиболее смело реформируемой отраслью экономики. Сегодня по оценке авторитетных международных организаций (Международный валютный фонд, Всемирный банк и др.) Армения по праву занимает лидирующее место среди стран Южного Кавказа по уровню и глубине реформ в энергетике, направленных на создание либерального энергетического рынка, в котором в настоящее время эффективно обеспечиваются защита интересов конечных потребителей, равные условия для осуществления экономической деятельности и защита иностранных инвесторов.

В основе стратегии экономического развития Армении лежат принципы диверсификации бизнеса и производства, инвестиций в человеческий капитал и инноваций. Однако реализовать отмеченную политику Правительства РА,

провозгласившего переход ко второй решающей фазе реформ в стране, будет крайне сложно без эффективной работы энергетической отрасли республики, являющейся, по сути, системообразующей отраслью экономики.

Во всем мире стремительно растет потребность в энергоресурсах, и эти глобальные тенденции не обошли Армению, расположенную в очень сложном и одновременно интересном регионе мира. Регион Южного Кавказа и соседних с ним стран (Турция и Иран) сегодня находится на пересечении крупных международных, в основном нефтегазовых энергетических проектов. Наличие в ряде стран региона собственных значительных запасов углеводородных ресурсов и близость региона к крупным рынкам потребления энергоресурсов и экономическим центрам, демонстрирующим высокие темпы промышленного роста и увеличения спроса на нефть и газ, трансформирует регион в крайне привлекательный для международного капитала.

Какое место может занимать Армения на энергетической карте региона? Что должно быть для Армении ориентиром в условиях глобальной конкуренции за ресурсы, в которую все более активно включаются компании из стран, не располагающих запасами углеводородного сырья, достаточными для обеспечения их экономического развития? Что должно лежать в основе региональной энергетической безопасности? Ответы на эти вопросы являются ключевыми для выработки эффективной политики Армении, нацеленной на достижение качественно новой экспортной политики в области энергетики.

ՄԻՋՆՈՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱԿԱՄԱՐՏՈՂ ԿՈՂՄԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Սուրեն Մովսիսյան

Վերջին ամիսներին ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդական առաքելությունը քննադատության է ենթարկվում ինչպես Հայաստանի, այնպես էլ Ադրբեջանի քաղաքագետների կողմից։ Հիմնական խնդիրն այն է, որ միջնորդների գործունեությունն անարդյունավետ է։ Հնչում են տարբեր առաջարկություններ միջնորդության ձևաչափը փոխելու, ներկա եռյակի միջնորդներին այս կամ այլ երկրի ներկայացուցչությամբ փոխարինելու մասին։ Հնչում են կարծիքներ, թե Թուրքիայի միջնորդության դեպքում անհրաժեշտ է ընդգրկել նաև Իրանի առաքելությունը՝ հաշվի առնելով Թուրքիայի կողմնակալ վերաբերմունքն այս հակամարտության հարցում։

Իսկ ինչպե՞ս են ընտրվում միջնորդները։ Ի՞նչ գործոններ են ազդում հակամարտող կողմերի՝ այս կամ այն միջնորդի ընտրության վրա։ Հոդվածում ուսումնասիրվում է միջնորդության գործընթացը տարբեր տեսանկյուններից՝ դիտարկելով այն գործոնները, որոնցով առաջնորդվում են միջնորդի ընտրության ժամանակ։ Հիմնական շեշտադրումն այն է, որ միջնորդի ընտրությունը պայմանավորված է ավելի շատ հակամարտող կողմերի առանձնահատկություններով, քան որևէ «այլ գործոնով»։

Միջազգային հակամարտությունների միջնորդության վերաբերյալ բազմաթիվ ուսումնասիրություններ կենտրոնացել են հակամարտությունների կարգավորման արդյունավետության վրա՝ ներկայացնելով միջնորդության և միջնորդների դրական արդյունքի հասնելուն ուղղված ռազմավարությունները և տեսակետները։ Տարբեր գիտնականներ անդրադարձել են նաև միջնորդության մի շարք առանձնահատկություններին։ Մեր նպատակն է ուսումնասիրել միջնորդության գործընթացը տարբեր տեսանկյուններից և քննարկել այն հիմնական գործոնները, որոնցով առաջնորդվում են հակամարտող կողմերը միջնորդի ընտրության ժամանակ։ Հիմնական թեզն այն է, որ միջնորդի ընտրությունը պայմանավորված է ավելի շատ հակամարտող կողմերի առանձնահատկություններով, քան որևէ «այլ գործոնով»։ Հոդվածում քննարկվում են արդյունավետ միջնորդի առանցքային հատկանիշները և նրա ընտրության գործընթացը։ Ավելի հստակ պատկերացում կազմելու նպատակով ներկայացվել են միջնորդությանը տրված տարբեր սահմանումներ, միջնորդի տեսակնե-

րի հակիրճ նկարագրությունը, ինչպես նաև այն հիմնական գործոնները, որոնք ազդում են հակամարտող կողմերի որոշումների վրա միջնորդի ընտրության ժամանակ:

Հակամարտող կողմերի բնույթը՝ որպես հիմնական գործոն, բնութագրվում է բազմաթիվ ազդակներով: Բերկովիչը և Հոուսթընն ուսումնասիրել և ընդգծել են «հակամարտող կողմերի քաղաքական համատեքստը, հզորությունը, հնարավորությունները, անցյալում ունեցած հարաբերությունները»՝ որպես նրանց բնույթի հիմնական բնորոշիչներ [1, p. 20-21]: Մեկ այլ քաղաքագետ՝ Կոհենը, վերլուծել է հակամարտող կողմերի մշակութային առանձնահատկությունները, որոնց նույնպես անդրադարձել ենք հոդվածում: Նկատի ունենալով այն, որ հակամարտող կողմերի ընկալումները՝ որպես նրանց առանձնահատկությունների մաս, նույնպես ընդգրկված են գործոնների շարքում և առնչվում են նրանց բնույթի հետ, հոդվածում բերված փաստերի միջոցով կքննարկվի նրանցից յուրաքանչյուրի ազդեցությունը միջնորդի ընտրության գործընթացի վրա:

Ի՞նչ ենք հասկանում «այլ գործոններ» ասելով: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այս գործոնների շարքում ընդգրկված են միջնորդի այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են իմիջը, հարգանքը, հնարավորությունները, ինչպես նաև անկողմնակալությունն ու չեզոքությունը, որոնք նույնպես քննարկում ենք հոդվածում:

Միջնորդության՝ որպես երրորդ կողմի միջամտության, գաղափարն օգտագործվել է դարեր շարունակ, տարբեր հակամարտությունների կարգավորման ժամանակ: Ժամանակակից գրականության մեջ հանդիպում են միջնորդության տարբեր ձևակերպումներ: Այն ներկայացվել է որպես «հակամարտության կառավարման ձև, որը պահանջում է անմիջականորեն հակամարտության մեջ չընդգրկված դրսի կամ երրորդ կողմի առկայություն» [2, p. 3]: Ջոֆ Բերիջն իր «Դիվանագիտություն. տեսություն և պրակտիկա» գրքում միջնորդությունը սահմանել է որպես «բանակցությունների հատուկ ձև, որը կոչված է նպաստելու հակամարտության կարգավորման գործընթացին» [3, p. 194]: Ըստ մեկ այլ վերլուծաբանի, միջնորդությունը «հակամարտության կարգավորման նպատակով երրորդ կողմի ներգրավումն է, որը պետք է ազդի կամ նպաստի խնդրի լուծմանը, այլ ոչ թե պարտադրանք թելադրի հակամարտող կողմերին» [4, p. 3]: Չնայած սահմանումների զանազանությանը, մի բան հստակ է. գոյություն ունեցող բոլոր ձևակերպումներում սահմանվում է, որ միջնորդության նպատակը հակամարտության կարգավորումն է: Այնուամենայնիվ, ելնելով մեր հոդվածի նպատակից՝ առավել նպատակահարմար է գործածել միջնորդության հետևյալ ձևակերպումը, համաձայն որի՝ միջնորդությունը «երրորդ կողմի միջամտություն է հակամարտության կարգավորման գործընթա-

ցին բանակցությունների միջոցով... ինչը պետք է ընդունելի լինի հակամարտող կողմերի համար» [5, p. 7]:

Միջազգային ասպարեզում լայն ազդեցություն ունեցող միջնորդներին հոդվածում դասակարգել ենք հետևյալ կերպ՝ անհատներ, կառավարություններ և կազմակերպություններ: Անհատ միջնորդները սովորաբար բարձրաստիճան անձինք են՝ նախկին նախագահներ կամ վարչապետեր, պետական այրեր և այլք: Երբ Չեսթր Քրոքերը ստանձնեց Անգոլայի և Նամիբիայի հակամարտության կարգավորման գործընթացին միջնորդելու պարտավորությունը, նա փաստորեն ընկալվեց որպես մեկը, ով մասնագիտացել է Հարավային Աֆրիկայի ոլորտում, բայց նա պաշտոնապես ներկայացնում էր ԱՄՆ կառավարությունը: Անհատ միջնորդ էր նաև Ջիմի Քարթերը 1990թ. Բոսնիայի հակամարտության կարգավորման գործընթացում: Ըստ Բերկովիչի և Շնեյդերի, անհատ միջնորդները «կարող են տարբերվել իրենց հնարավորությունների և ունակությունների աստիճանով, պահանջվող խնդիրը լուծելու կարողությամբ, գիտելիքներով, հմտություններով, փորձով և այլ հատկանիշներով» [6, p. 147]:

Չնայած միջազգային կազմակերպությունների միջնորդական գործունեության ակտիվացմանը, հիմնական կարևոր դերակատարները միջազգային միջնորդության ասպարեզում շարունակում են մնալ կառավարությունները: Միակողմանի միջնորդության, այսինքն՝ միջնորդությանը պետության մասնակցության օրինակ են Ալժիրը «Իրանական պատանդների ճգնաժամի» ժամանակ, Նորվեգիայի և ԱՄՆ կառավարությունների փորձերը իսրայելյան հակամարտության ժամանակ, Պակիստանի օրինակը ԱՄՆ - Չինաստան բանակցությունների ժամանակ և այլն: Անկախ այն բանից՝ միջնորդները գերտերություն են, թե երրորդ երկիր, նրանք ստանձնում են հակամարտությունը կարգավորելու միջնորդի դերը՝ համաշխարհային անվտանգության ապահովման նպատակով:

Միջազգային կազմակերպությունները, ինչպես նշեցինք, նույնպես ակտիվորեն ներգրավված են միջնորդության գործընթացում, մասնավորապես սառը պատերազմի ավարտից հետո: Այդպիսի միջազգային կազմակերպությունների շարքում են Միավորված Ազգերի Կազմակերպությունը, Արաբական պետությունների լիգան, Եվրոպայի Անվտանգության և Համագործակցության Կազմակերպությունը, Աֆրիկյան միության կազմակերպությունը, Քարթերի կենտրոնը և այլն: Ըստ Բերկովիչի և Շնեյդերի, կազմակերպությունները կարելի է բաժանել 3 կարգի՝ բազմակողմ, միջազգային և ոչ կառավարական [6, p. 148]: Դրանցից յուրաքանչյուրն ունի նշանակալի փորձ միջազգային հակամարտությունների միջնորդության բնագավառում:

Ինչպե՞ս են հակամարտող կողմերն ընտրում միջնորդին: Որո՞նք են, ըստ հակամարտող կողմերի, այն չափանիշները, որոնց համաձայն պետք է ընտր-

վեն միջնորդները: Միջազգային քաղաքականության ոլորտում քիչ ուշադրություն է դարձվել հակառակորդ կողմերի հարաբերությունների և միջնորդի ընտրության գործընթացի վերաբերյալ ուսումնասիրություններին: Ուսումնասիրությունների մեծ մասը նվիրված է հիմնականում միջնորդի վարքագծին և նրա ազդեցությանը միջնորդության արդյունքի վրա: Այնուամենայնիվ, միջնորդի ընտրությունն ամենակարևոր գործոնն է ողջ գործընթացում:

Չնայած միջնորդությունը միջազգային հակամարտություններին կամովին է, միջնորդների միջամտության ցանկությունը պայմանավորված է այլ հանգամանքներով ևս [1, p. 76; 7, p. 689]: Տարբեր անհատներ, երկրներ և կազմակերպություններ հետապնդում են միջնորդության տարբեր նպատակներ: Միջնորդության շարժառիթների շարքին են դասվում իրենց ուժի, ազդեցության և հեղինակության ընդլայնումը և այլն: Միջնորդությունը կարող է նաև պարտադրված լինել, այնպես, ինչպես անգոլա-նամիբիական հակամարտության դեպքում: Բերիջը նշում է, որ և՛ Անգոլան, և՛ Հարավային Աֆրիկան մերժեցին ԱՄՆ միջնորդության փորձը: Փաստորեն, շարունակում է նա, ամերիկացիները ներգրավվեցին միջնորդության գործընթացին՝ շարունակելով Ռեյգանի վարչակազմի քաղաքականությունը՝ ձեռք բերել վստահություն Անգոլայից կուբացիներին հեռացնելու համար և ընդհանրապես ընդգծել ԱՄՆ կարևոր դերը տարածաշրջանային հակամարտությունների կարգավորման գործում [8, p. 468]:

Հակամարտող կողմերը միջնորդներ են փնտրում՝ նրանց մեջ «լեգիտիմացնող գործիչներ» [4, p. 9] տեսնելով: Պրինցենն այս հարցին անդրադառնում է հետևյալ կերպ. «նրանցից ակնկալում են, որ ապացուցեն մի կողմի իրավացիությունը մյուս կողմին..., զիջման գնալու անհրաժեշտությունը..., լինեն վստահելի..., ճնշում գործադրեն մյուս կողմի վրա և զերծ մնան դա անելուց ինչ-որ մեկի նկատմամբ..., հստակեցնեն մի կողմի դիրքորոշումը մյուս կողմի համար, նույնիսկ եթե հակառակ կողմը դա անհրաժեշտ չի համարում: Այս ամենով հանդերձ՝ ակնկալվում է, որ նրանք լինեն չեզոք կամ անկողմնակալ[1], կամ, նվազագույնը, փորձեն ապահովել սպասվող և անհրաժեշտ արդյունքը» [4, p. 9]:

Ինչպես արդեն նշեցինք, կան միջնորդների հիմնական առանձնահատկություններ, որոնք ձևակերպվել և մեկնաբանվել են բազմաթիվ եղանակներով: Այդ առանձնահատկությունների թվում են անկողմնակալությունը, հաստատուն արժանիքները կամ հնարավորությունները, հարգանքը, իմիջը: Այնուամենայնիվ, ամենահակասական միջնորդի բնութագիրն անկողմնակա-

[1] Ըստ Բերկովիչի, «հակամարտող կողմերն ընդունում են միջնորդներին ոչ թե իրենց անկողմնակալության, այլ իրենց ազդեցության, կամ հակամարտող կողմերի շահերը պաշտպանելու, կամ ընդլայնելու ընդունակության պատճառով» [1, p. 12]:

լությունն է: Որոշ գիտնականներ, ինչպես, օրինակ, Յանգը, փաստում են, որ միջնորդը պետք է անկողմնակալ լինի: Երբ միջնորդը կողմնապահություն է դրսևորում կողմերից մեկի նկատմամբ, «նա կորցնում է իր՝ որպես ճշմարիտ երրորդ կողմ լինելու կարգավիճակը և ավելի ու ավելի է նմանվում հակառակորդ կողմերից մեկին կամ մյուսին՝ բոլոր գործնական նպատակներում» [9, p. 81]: Մյուս կողմից, Նորթեջը և Դոնելանը (1971թ.) նշում են երկու հիմնական պայման, որոնք կարևոր են միջնորդության ընդունման համար: Ըստ նրանց, միջնորդը պետք է լինի պրոֆեսիոնալ, հստակ պատկերացում ունենա հակամարտության բնույթի մասին, ինչպես նաև լինի պատրաստակամ և ընդունակ դրանում ներգրավվելու համար [10, p. 299]: Երկրորդ որոշիչ պայմանն այս դեպքում այն է, որ երկու հակամարտող կողմերն էլ պետք է ընդունեն միջնորդին: Արդյունքում՝ ընդունված լինելու գաղափարն այնքան կարևոր է, որքան միջնորդությունն ինքնին, քանի որ «քանի դեռ այս պայմանը չի բավարարվել, միջնորդությունը չի կարող նույնիսկ սկսել իր աշխատանքը» [10, p. 299]: Սկժելսբեկը և Ֆերմանը պնդում են, որ «նույնիսկ եթե հակամարտող կողմերն ընդունում են երրորդ կողմի միջնորդությունը, դա կարող է տեղի չունենալ մինչև որակավորված, բոլորի կողմից ընդունված միջնորդի անհրաժեշտություն չզգացվի» [1, p. 77]: Միջնորդի ընտրության գաղափարն ուղղակիորեն կապված է ընդունելի լինելու հասկացության հետ: Նկատի ունենալով այս փաստարկները, ինչպես նաև ստորև ներկայացվելիք գործնական օրինակները, միջնորդի անկողմնակալության հասկացությունը դառնում է նվազ կարևոր:

Այնուամենայնիվ, ինչպե՞ս են հակամարտող կողմերի առանձնահատկություններն ազդում միջնորդի ընտրության վրա: Միջնորդության անհրաժեշտությունը և պատճառը, ինչպես նաև միջնորդի ընտրությունը որոշում են հակամարտող կողմերը: Նրանց ընկալումը միջնորդների հնարավորությունների և հմտությունների վերաբերյալ ձևավորում են հնարավոր թեկնածուի ընտրությունը: Կաուֆմանը և Դունկանը պնդում են, որ կողմերի ակնկալիքը՝ հակամարտության կարգավորման վրա միջնորդի ազդեցության աստիճանից, կարող է ազդել միջնորդի ընտրության վրա [7, p. 691]: Բազմաթիվ գործոններ հաստատում են այս փաստը: Առաջինը միջնորդների անկողմնակալությունն է, որ ազդում է նրանց ընտրության վրա: Յանգը, ինչպես նշեցինք, անկողմնակալությունը համարում է միջնորդի ընդունված լինելու հիմնական հատկանիշը: Սակայն Զարթմանը և Թյուվալը (1985թ.) նշում են, որ կողմերից մեկի հետ մոտ հարաբերություններ ունենալը կարող է հանգեցնել նրանց միջև հաղորդակցման հաստատմանը, ինչը կդրդի նրանց համագործակցել այլ կողմի հետ [11, p. 36]: Այսպես եղավ Խորհրդային Միության դեպքում, որն ընդունվեց որպես միջնորդ Պակիստանի կողմից՝ չնայած նրանց թշնամական հարաբերություններին, հնդկա-պակիստանյան հակամարտության ժամանակ: Թեև երկու

երկրներն էլ Համագործակցության անդամ էին, Բրիտանիան մերժվեց, քանի որ Հնդկաստանը նրան Պակիստանի կողմնակից էր համարում: ԱՄՆ-ը, լինելով երկրեեռ աշխարհի հզոր պետություն, մոտ հարաբերություններ ունենալով երկու երկրների հետ, հակամարտության ընթացքում օգնությունը հետաձգելու արդյունքում մերժվեց նրանց կողմից: Մյուս կողմից՝ Հնդկաստանը մեղադրում էր ԱՄՆ-ին Պակիստանին զենք մատակարարելու մեջ, ինչն, ըստ նրանց, պատերազմի պատճառ հանդիսացավ: ՄԱԿ-ը նույնպես մերժվեց Պակիստանի կողմից՝ ելնելով այս կազմակերպությունում ԱՄՆ ունեցած ազդեցությունից: Խորհրդային Միությունը, լավ հարաբերությունների մեջ լինելով Հնդկաստանի հետ և ունենալով սեփական շահերը տարածաշրջանում, ընդունվեց անվերապահորեն: Ուսումնասիրելով հակամարտության զարգացումը և միջնորդության փորձը՝ Թորթնըը նշում է, որ «Հնդկաստանը դեռևս վայելում է ապահովված զգալու արտոնությունը, և Պակիստանը բավականաչափ շահագրգռված էր այն հնարավորություններով, որոնք առաջարկում էր Խորհրդային Միությունը» [5, p. 145]:

Փաստորեն, անկողմնակալությունը մեկն է այն գործոններից, որոնք ազդում են կողմերի՝ միջնորդ ընտրելու վրա: Անկողմնակալ միջնորդության օրինակ է Վատիկանի միջամտությունը Չիլի – Արգենտինա՝ Բեգլ ջրանցքի հետ կապված վեճին 1979թ.: Այս դեպքում երկու երկրներն էլ մերժել են ԱՄՆ միջամտությունը, որը հետապնդում էր սեփական շահերը, ինչը կխոչընդոտեր միջնորդության ընթացքին: Արդյունքում՝ Վատիկանն ընտրվեց որպես միանգամայն անկողմնապահ և չեզոք կողմ: Մարկ Լաուդին իր «Վատիկանի միջամտությունը Բեգլ ջրանցքի շուրջ հակամարտությանը. միջամտություն ճգնաժամին և շինարարության ֆորում» հոդվածում (2000թ.) հստակ նկարագրել է հակամարտության ժամանակագրությունը և առանձնահատկությունները: Նա նշում է, որ երկու երկրների արտգործնախարարները հանդիպեցին 1978թ. դեկտեմբերին Բուենոս Այրեսում, որպեսզի միջնորդ ընտրեին: Յուրաքանչյուր երկիր ներկայացրել էր հինգ թեկնածու առաջնահերթության կարգով: Երկու երկրներն էլ նշեցին ենթադրյալ միջնորդի նույնատիպ, բայց և միևնույն ժամանակ տարբեր չափանիշներ: Չիլիի կարծիքն այն էր, որ միջնորդը պետք է լիներ հզոր պետություն: Ըստ 1978թ. Չիլիի արտգործնախարար Հերման Կուբիլյոսի՝ «դա պետք է լիներ այնքան հզոր երկիր, որ այն առաջարկները, որ նա կաներ որպես միջնորդ, ուժ ներկայացնեին... Երբ մենք խոսում ենք ուժի մասին, ես նկատի ունեմ ազդեցության, բարոյական ուժը, քաղաքական ուժը, տնտեսական ուժը..., երբ լեգալ ավանդույթները և լեգալությունը կարևոր են և շատ թե քիչ հասկացված այն ձևով, ինչպես մենք ենք հասկանում այն: Եվ քանի որ մենք ունեինք մի շատ կարևոր իրավական նախադեպ hօգուտ մեզ, մենք զգացինք, որ ստիպված ենք ունենալ մի երկիր, որը ցանկանում է հասկանալ

այդ խնդրի լուծման կարևորությունը, մեկը, որ հարգում է միջազգային օրենքը» [12, p. 303]:

Սակայն Արգենտինայի թեկնածուները փոքր-ինչ տարբերվում էին: Արգենտինացիներն առաջնային տեղ էին հատկացնում թեկնածուի չեզոք լինելուն՝ նկատի ունենալով «հարցին ճիշտ կողմից անդրադառնալու ցանկությունը, առանց կենտրոնանալու Բրիտանական արբիտրալ գործընթացի արդյունքների վրա» [12, p. 303]: Արգենտինան նաև հաշվի էր առնում միջնորդի՝ հակամարտող երկու կողմերի քննարկմանը ներկայացված հատուկ տեսակետները մանրամասնելու կարողությունը: Ի մի բերելով քննարկման արդյունքները՝ Արգենտինան ներկայացրեց թեկնածուներին՝ Իսպանիայի թագավորին, ՄԱԿ-ը և նրա գլխավոր քարտուղարին, Մեծ Բրիտանիայի թագուհուն, Հենրի Քիսինջերին և Հռոմի պապին: Վերջնական ընտրությունը կանգ առավ Վատիկանի վրա, ինչն արդարացված էր: Վատիկանը աշխարհագրորեն և քաղաքականորեն շատ հեռու է Լատինական Ամերիկայից և ակնհայտորեն հետաքրքրվածություն չուներ հակամարտության մեջ: Լաուդին նշում է, որ «Կաթոլիկ եկեղեցու առաջնորդությունը դրան հաղորդեց այնպիսի բարոյական հեղինակություն, որն այս մեծաթիվ կաթոլիկ պետություններից որևէ մեկը հաշվի չառնել չէր կարող» [12, p. 304]:

Երկրորդ, փաստարկվում է, որ քաղաքական հիմքը ևս ազդեցություն ունի միջնորդի ընտրության վրա: Բերկովիչը և Հոսթընը (1996թ.) պնդում են, որ ոչ դեմոկրատական երկրները, դեմոկրատական երկրների համեմատ, ավելի են հակված ներառված լինել հակամարտության մեջ: Ըստ նրանց, ոչ դեմոկրատական երկրները կամ ռազմական վարչակարգերը սովորաբար ընդունում են միջամտությունը, երբ միջամտողները միևնույն վարչակարգն են ներկայացնում [1, p. 21]: Այս փաստարկի պարզ օրինակ է 1979թ. Ալժիրի[1] ընդունումը Իրանի կողմից Իրանական պատանդների ճգնաժամի ժամանակ: Ըստ Թյուվալի և Զարթմանի (1985թ.), ԱՄՆ-ը սկզբում ծրագրում էր օգտագործել Շվեյցարիան որպես չեզոք պետություն, որը նաև ներկայացնում էր ԱՄՆ կառավարությունը Թեհրանում: Այնուամենայնիվ, մանրակրկիտ քննարկումներից հետո ընտրվեց Ալժիրը, որովհետև այս երկիրը ներկայացնում էր Իրանի շահերը ԱՄՆ-ում ճգնաժամից հետո [5]: Մեկ այլ օրինակ է չին-ամերիկյան հարաբերությունների մեղմացումը 1970թ. սկզբին: Ջոֆ Բերիջը (1994թ.) իր «Խոսել թշնամու հետ» գրքում փաստում է, որ Միացյալ Նահանգների կառավարությունը նախապես ծրագրել էր առաջադրել Ռումինիային՝ մեկ այլ ոչ դեմոկրատական պետության, համարելով, որ Չինաստանը կհամաձայներ այդ ընտրությանը՝ որպես նույնատիպ քաղաքական վարչակարգ ունեցող պետու-

[1] Ալժիրը ոչ ժողովրդական պետություն է (տե՛ս Freedom House Report 2006 at http://www.freedomhouse.org/template.cfm?page=22&year=2006&country=6907).

թյուն [13, p. 16]: Այնուամենայնիվ, վերջնական ընտրությունը կանգ առավ կրկին ոչ դեմոկրատական պետություն հանդիսացող Պակիստանի վրա:

Երրորդ գործոնը, որն ազդում է միջնորդի ընտրության վրա, հակամարտող կողմերի հզորությունն է: Ուժեղ կողմերն ավելի ինքնավստահ են և հազիվ թե զիջումներ կատարեն: Նշանակում է՝ նրանք ուժեղ կլինեն միջնորդի ընտրության գործընթացում նույնպես: Այս փաստը հաստատում է Մարիեկե Քլեյբոռը: Նա պնդում է, որ նշված ուժային անհավասարությունը կուժեղացնի ավելի ուժեղ կողմի՝ միջնորդի մասին ունեցած կարծիքը որպես կայուն ճանապարհի վերջնական հաղթանակ ձեռք բերելու ուղղությամբ [14, p. 368]: Բացի այդ, ուժեղ պետությունը երբեք չի անի միջնորդություն կանչելու առաջին քայլը, որովհետև «խաղաղություն փնտրելը... թուլության նշան է» [3, p. 30]: Այնուհետև, հակամարտող կողմերի միջև նախկին հարաբերությունները ևս կարող են ազդել միջնորդի ընտրության վրա այն կտրվածքով, որ նրանք կարող են համաձայնության գալ կոնկրետ միջնորդի շուրջ, բայց նաև օգտագործել այլ աղբյուրներ ուղիղ բանակցությունների համար, ինչպես Եգիպտոս-Իսրայել հակամարտության ժամանակ, երբ ԱՄՆ-ը ստանձնեց առաջնորդողի դերը որպես միջնորդ և ընդունելություն գտավ երկուսի կողմից: Սակայն իսրայելական պաշտոնյաները մի քանի գաղտնի հանդիպում ունեցան Մարոկկոյի Հասան թագավորի, Հորդանանի Հուսեյն թագավորի հետ՝ Ժնևի կոնֆերանսից առաջ Եգիպտոսի նախագահ Սադաթի հետ հանդիպում կազմակերպելու համար: Նման բանի օրինակ կարելի է համարել 1977թ. Սադաթի անսպասելի այցը Երուսաղեմ, նույն Ժնևի կոնֆերանսից մի քանի ամիս առաջ, որովհետև ոչ ոք չէր կանխատեսում, թե դա տեղի կունենա: Քանդտը պնդում է, որ արդյունքում ԱՄՆ-ին, որը երեք ամիս շարունակ բանակցում էր և հանդես էր գալիս որպես ամենաակտիվ նախաձեռնություն ցուցաբերող, հատկացվեց հանդիսատեսի դերը [15, p. 136]: Մեկ այլ օրինակ է հայ-ադրբեջանական հակամարտությունը Լեռնային Ղարաբաղի հարցի շուրջ, որտեղ երկու կողմերն էլ համաձայնության եկան ԵԱՀԿ միջնորդության վերաբերյալ՝ օգտագործելով, սակայն, ուղիղ հաղորդակցման այլ աղբյուրներ՝ հրադադարի հասնելու նպատակով [16, p. 121]:

Հաջորդ գործոնը, որն ազդում է միջնորդի ընտրության վրա, հակամարտության բնույթն է: Միջազգային նշանակություն ունեցող հակամարտությունները (ինքնորոշում, անկախություն և անվտանգություն) սովորաբար ավելի անկայուն են, այդ պատճառով պահանջում են միջնորդի հատուկ տեսակ: Բերկովիչը և Շնեյդերը (2000թ.) նշում են, որ հակամարտության բնույթն ու հաջողության հավանականությունն են զգալի չափով որոշում միջնորդի այն տեսակը, որն ընտրում են կողմերը [6, p. 152]: Նման հակամարտությունների դեպքում կողմերը փնտրում են հեղինակավոր միջնորդ կազմակերպություն-

ներ՝ որպես «օրինական ագենտներ», ինչպիսիք են ՄԱԿ-ը կամ Եվրոպայի Անվտանգության և Համագործակցության Կազմակերպությունը: Դա տեղի ունեցավ Ղարաբաղյան հակամարտության, ինչպես նաև Հարավսլավիայում ծագած մի շարք հակամարտությունների ժամանակ[1]: Սակայն Ղարաբաղյան հակամարտությունը ցույց տվեց, որ միջնորդները կարող են կորցնել հեղինակությունը և մերժում ստանալ հակամարտող երկու կողմերից, նույնիսկ մինչ պաշտոնական միջնորդություն սկսելը: Բարսեղյանը և Կարանը պնդում են, որ ՄԱԿ պասիվ դերը հակամարտության կարգավորման գործում հիմնականում հետապնդում էր «քննողական» առաքելություն՝ հետազա զեկուցումների կազմման և քաղաքական պահանջների առաջադրման համար [17]: Տվյալ դեպքում ՄԱԿ Անվտանգության խորհրդի վճիռը Լեռնային Ղարաբաղի խնդրի վերաբերյալ պահանջում էր «բոլոր ուժերի անհապաղ դուրսբերում» Ադրբեջանի տարբեր տարածքներից, ինչն էլ մերժեց հայկական կողմը՝ այն որակելով որպես կողմնակի ազդեցություն իրենց վրա [18, p. 202]: Նույն հաջողությամբ Հայաստանի շրջափակման վերաբերյալ ՄԱԿ Անվտանգության խորհրդի 1993թ. հունվարի որոշումը մերժվեց Ադրբեջանի կողմից: Այս որոշումների արդյունքում, որոնք ընկալվեցին որպես կողմնակի ազդեցություն հակամարտող կողմերից մեկի, այնուհետև մյուսի վրա, ՄԱԿ-ը կորցրեց իր հեղինակությունը որպես միջնորդ:

Միջնորդի ընտրության վրա ազդող երկու այլ գործոններ են գաղափարախոսությունը և մշակութային նմանությունը: Միջնորդությունը՝ որպես հակամարտության կարգավորման մի մաս, ձևավորվում է արժեքներից, համոզմունքներից և հետաքրքրություններից: Միջնորդն ակնհայտ առավելություն կունենա, եթե հակամարտող կողմերը միևնույն գաղափարախոսական դաշտից լինեն: Ըստ Բերկովիչի և Շնեյդերի, «գաղափարախոսական դիրքն ապահովում է անվտանգության ցանցի մի ձև հակամարտության բոլոր մասնակիցների համար... երբ նրանք ունեն անվտանգության այդ ցանցը, ավելի հավանական է, որ նրանք ներգրավվեն կառուցողական երկխոսության մեջ» [6, p. 150]:

Մյուս գործոնը, որը կարող է ազդել միջնորդի ընտրության վրա, մշակույթն է: Ըստ Կոհենի, մշակույթի ամենաճշգրիտ բնութագրմամբ՝ այն իմաստային և արժեքային համակարգ է, որին մասնակցում է հասարակությունը՝ տեղեկացնելով իր կենսակերպի մասին և հնարավորություն տալով հասկանալ աշխարհը... սովորելու բարդ գործընթացի միջոցով... լեզվական, բանավոր, ծիսական և խորհրդանշական դյուրըմբռնելի հաղորդակցության և փոխազդեցության հնարավորություններ ընձեռելով [1, p. 109]:

[1] ԵԽ-ը և ՄԱԿ-ը որպես միջնորդ հանդես են եկել մի շարք հակամարտությունների կարգավորման գործընթացներում Հարավսլավիայի փլուզումից հետո [1, p. 176-182]:

Կոհենը փաստում է, որ տարբեր մշակութային հիմքեր ունեցող մարդկանց միջև հաղորդակցությունը կարող է շփոթության և սխալ եզրակացությունների տեղիք տալ, ինչպես տեղի ունեցավ ԱՄՆ նախագահ Նիքսոնի և Ճապոնիայի վարչապետ Սատոյի հանդիպման ժամանակ[1]: Նկատի ունենալով մշակութային գործոնը՝ ակնհայտ է դառնում, որ կողմերն ավելի շատ հակված են ընդունել այն միջնորդին, որն ունի նույն տիպի մշակութային հիմք: Ասվածի վառ օրինակ է ՄԱԿ՝ որպես միջնորդի ընդունումը Էլ Սալվադորում: Որպես չեզոք և հզոր կազմակերպություն՝ ՄԱԿ-ն ընդունվել էր որպես միջնորդ հակամարտության կարգավորման գործընթացին: Սակայն, ինչպես Քրոքերը, Հեմփսոնը և Աալն են փաստում, գոյություն ուներ մեկ այլ հանգամանք, որով էլ պայմանավորված էր ՄԱԿ ընտրությունը: ՄԱԿ գլխավոր քարտուղարը՝ Խավիեր Պերես դե Կուելյարը և իր ողջ «շքախումբը» ծագումով Կենտրոնական Ամերիկայից էին [19, p. 158]:

Ամփոփելով՝ նշենք, որ միջնորդի ընտրությունը հակամարտության կարգավորման ամենակարևոր ասպեկտներից է: Հակամարտող կողմերը միջնորդին համարում են «օրինական գործիչ» (լեգիտիմացնող ագենտ), որը խաղաղություն և արդարություն կբերի նրանց: Հիմնվելով այս համոզմունքի վրա՝ նրանք փորձում են ընտրել հարմար թեկնածու: Հիմնական փաստարկն այն է, որ «այլ գործոնները» չեն ազդում նրանց ընտրության վրա, քանի որ դրանք կապված են միջնորդի անձնական բնութագրի հետ: «Այլ գործոնները» նպատակ ունեն «հրապուրել» հակամարտող կողմերին, ապացուցել նրանց պատրաստակամությունը և համապատասխանությունը տվյալ հակամարտությանը: Մյուս կողմից, միջնորդներն ունեն տարբեր առանձնահատկություններ, հմտություններ ու միջոցներ: Նրանք հակամարտության կարգավորման գործընթացին են ներգրավվում տարբեր պատճառներով, շարժառիթներով և շահերով: Նրանք կարող են ներկայացնել տարբեր պետություններ, կազմակերպություններ կամ լինել փորձառու և ուժեղ անհատներ: Ինչպես վերը նշեցինք, միջնորդները կարող են լինել անկողմնապահ կամ հակված լինել դեպի կողմերից որևէ մեկը, ներկայացված լինել հզոր պետությունների կամ կազմակերպությունների կողմից, ունենալ հսկայական միջազգային հեղինակություն, բայց հակամարտող կողմերի բնույթով է պայմանավորված միջնորդի ընտրությունը: Հակամարտող կողմերը կարող են լինել ժողովրդավարական և ոչ ժողովրդավարական երկրներ, ռազմական վարչակարգեր: Նրանք կարող են «զգայուն լինել» ինքնիշխանության, ինքնորոշման և անկախության հարցերի հանդեպ, ունենալ մշակութային, կրոնական տարբերություններ: Նրանք կարող են կիսել կամ չկիսել միևնույն գաղափարախոսությունը կամ մասնակցել տարբեր դաշինքների: Ի վերջո, նրանք կարող են ունենալ տարբեր կարծիքներ միջազգային քաղաքականության խնդիրներին առնչվող տարբեր թեմաների

[1] «Ինձնից կախված ամեն ինչ կանեմ» արտահայտությունը ճապոներենից թարգմանաբար նշանակում է պարտավորությունից խուսափելու քաղաքավարի ճանապարհ, ինչը սխալ էր մեկնաբանվել ԱՄՆ նախագահ Նիքսոնի կողմից [1, p. 114]:

վերաբերյալ: Սակայն մի բան հստակ է. չնայած այս տարբերություններին, հակամարտող կողմերը համարվում են առաջին ատյանը, որտեղ կատարվում է միջնորդի ընտրությունը:

Սեպտեմբեր, 2008թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Bercovitch J.,* (ed.), Resolving International Conflicts (London: Lynne Rienner Publishers, Inc., 1996).
2. *Bercovitch J.,* “Focus on: International Mediation,” Journal of Peace Research 28, no.1 (1991).
3. *Berridge G. R.,* Diplomacy: Theory and Practice (3rd ed., Basingstoke: Palgrave Macmillan, 2005).
4. *Princen T.,* Intermediaries in International Conflicts (Princeton: Princeton University Press, 1992).
5. *Touval S. and W. Zartman* (eds), International Mediation in Theory and Practice (Boulder, Colorado; London: Westview Press with the Foreign Policy Institute, School of Advanced International Studies, Johns Hopkins University, 1985).
6. *Bercovitch J. and G.Schneider,* “Who Mediates? The Political Economy of International Conflict Management,” Journal of Peace Research 37 (2000).
7. *Kaufmann S. and G.Duncan,* “A Formal Framework for Mediator Mechanisms and Mediations,” The Journal of Conflict Resolution 36 (1992).
8. *Berridge G.R.,* “Diplomatic Procedure and the Angola/Namibia Accords,” International Affairs 65 (1989).
9. *Young O.R.,* The Intermediaries: Third Parties in International Crises (Princeton, New Jercey: Princeton University Press, 1967).
10. *Northedge F. and M. Donelan* (eds), International Disputes: The Political Aspects (London: Europa Publications, 1971).
11. *Zartman W. and S. Touval,* “International mediation: Conflict resolution and Power Politics,” Journal of Social Issues 41 (1985).
12. *Greenberg M., J. Barton, and M. McGuinness* (eds), Words over War: Mediation and Arbitration to Prevent Deadly Conflict (Carnegie Commission on Preventing Deadly Conflict. Lanham, Md.: Rowman and Littlefield, 2000).
13. *Berridge G.R.,* Talking to the Enemy (Basingstoke: The Macmillan Press, 1994).
14. *Kleiboer, M.*, “Understanding Success and Failures of International Mediation,” The Journal of Conflict Resolution 40 (1996).
15. *Quandt W.,* Camp David: Peace Making and Politics (Washington D.C: The Brooking Institutions, 1986).
16. *Wanis-St. John, A.,* “In Theory: Back-Channel Negotiation: International Bargaining in the Shadows,” Negotiation Journal 22 (2006).
17. *Barsegyan K. and Z. Karaev,* “Playing Cat-and-Mouse: Conflict and Third Party mediation in Post Soviet Space”, OJPCR: The Online Journal of Peace and Conflict Resolution, Issue 6.1 Fall: 192-209, 2004, http://www.trinstitute.org/ojpcr/6_1n-k.htm accessed May 4 2008.
18. United Nations, “UN Security Council Resolutions 822, 853, 874 and 884 on Nagorno-Karabakh”, respectively 30 April, 29 July, 14 October, 12 November 1993, http://

www.un.org/Docs/scres/1993/scres93.htm accessed May 10, 2008.
19. *Crocker C., F. O. Hampson, and P. R. Aal,* "Ready for Prime Time: The When, Who, and Why of International Mediation," Negotiation Journal 19 (2003).
20. Freedom House, "Country report: Algeria 2006", http://www.freedomhouse.org/template.cfm?page=22&year=2006&country=6907 accessed May 10, 2008.
21. Organization of Security and Cooperation in Europe, "Joint statement by OSCE Minsk Group Co-Chairs", 30 November 2006, http://www.osce.org/item/13668.html accessed December 24 2006.

ВЫБОР ПОСРЕДНИКА В КОНТЕКСТЕ КОНФЛИКТА СТОРОН

Сурен Мовсисян

Резюме

В последнее время посредническая миссия Минской группы ОБСЕ критикуется политологами Армении и Азербайджана. Основная проблема в том, что за все 15 лет посредничества Минская группа не достигла прогресса в урегулировании Нагорно-Карабахского конфликта. Замена формата Минской группы стала одной из важнейших тем в Азербайджане. А политологи Армении с опаской относятся к подключению Турции к посредническому процессу. Многие из них предлагают также вовлечение Ирана как стабилизирующего фактора, в случае если Турция будет включена в состав посреднической миссии по Нагорному Карабаху. А как происходит выбор того или иного посредника?

Особенности выбора посредника в международных конфликтах являются одним из главных аспектом всего процесса урегулирования конфликта. Некоторые факторы, которые влияют на процесс выбора посредника, рассчитаны только на привлечение внимания конфликтующих сторон. В то же самое время, посредники имеют свои особенности, а также разные причины и интересы вовлечения в процесс посредничества. К особенностям посредников относятся их навыки и ресурсы. Они могут представлять разные государства и организации или быть опытными и авторитетными личностями. Они также могут быть нейтральными, объективными или предвзятыми.

Конфликтующие стороны также имеют свои особенности. Это могут быть демократические и/или недемократические государства, авторитарные и военные режимы. Конфликтующие стороны могут по-разному относиться к понятиям самоопределения и независимости, иметь разные культурные, исторические и религиозные направления, а также разные взгляды на мировую политику. Но в конечном итоге, несмотря на все различия и особенности как посредника, так и конфликтующих сторон, выбор посредника стоит за конфликтующими сторонами.

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՈՒԹ ՆՅՈՒԹԸ

Սերգեյ Գրինյան, Ալեքսանդր Ֆոմին

Տիեզերաբանության և աստղաֆիզիկայի մեջ գոյություն ունի «մութ կամ փակ նյութի» հասկացությունը: Այդ բառակապակցությամբ ներկայացվում են աստղագիտական այն օբյեկտները, որոնք հասանելի չեն աստղագիտության ժամանակակից միջոցներով ուղղակի դիտարկման համար, բայց անուղղակիորեն դիտարկվում են զննվող օբյեկտների վրա տիեզերական ձգողականության գործած էֆեկտների միջոցով:

Կարծիք կա, թե Տիեզերքի զանգվածի մոտավորապես 30%-ը կազմված է մութ նյութից: Դրա գոյության մասին աստղագետները կռահում էին դեռ անցյալ դարավերջին, երբ սկսեցին ուսումնասիրել մեր և այլ գալակտիկաների պտույտը: Անտեսանելի նյութի բնույթը մինչև օրս էլ հանելուկ է մնում: Պարզ է միայն մի բան. այն կազմված է մասնիկներից, որոնք չափազանց թույլ են փոխգործակցում սովորական նյութի հետ:

Արդի համաշխարհային տնտեսության մեջ տիրող իրավիճակը նման է աստղաֆիզիկական հիմնախնդիրներին. այստեղ նույնպես առկա են «մութ» օբյեկտներ, որոնք աղավաղում են տնտեսական տարածքն ու էական ազդեցություն գործում համաշխարհային գործընթացների ընթացքի և ելքի վրա:

Սույն հոդվածում մենք կդիտարկենք նման մի քանի «մութ» օբյեկտներ, որոնք վերջին ժամանակներս ձեռք են բերել կամ մոտ ապագայում ձեռք կբերեն կարևոր նշանակություն:

Կատարված վերլուծության արդյունքների հիման վրա կփորձենք պատասխանել հետևյալ հարցին. հիմնարար ի՞նչ ուժեր ու շահեր են կանգնած համաշխարհային տնտեսության այդ «մութ» օբյեկտների հետևում:

1. Հեջ-ֆոնդեր

Տնտեսության առավել հայտնի մութ օբյեկտներն են այսպես կոչված հեջ-ֆոնդերը: «Հայտնի» բառը վերաբերում է այդ ֆոնդերի ձևին և ոչ թե դրանց բովանդակությանը, կառուցվածքին, ռազմավարությանը:

Թեև հեջ-ֆոնդերի մասին արդեն մի քանի տասնամյակ խոսում ու գրում են, ոչ ֆինանսիստ մասնագետների մեծամասնությունն այնքան էլ հստակ պատկերացում չունի դրանց գործունեության մասին: Որպես կանոն, հեջ-ֆոն-

դեր ասելով հասկանում են մասնավոր ներդրումային ֆոնդերը, որոնք վարձավճար են գանձում իրենց ծառայությունների դիմաց և սովորաբար բաց են սահմանափակ թվով որակյալ ներդրողների համար [1]:

«Հեջ-ֆոնդ» անվանումն առաջացել է ապահովագրման մեխանիզմից [2]: Փորձելով սահմանափակել հնարավոր կորուստներն իրենց հիմնական շուկաներում՝ ֆոնդերը հաճախ օգտվում են կարճ դիրքերի մեթոդից՝ վաճառելով արժեթղթեր, որոնք իրենք չունեն:

ԱՄՀ փորձագետների սահմանմամբ՝ հեջ-ֆոնդերը էկլեկտիկ ներդրումային պուլեր (միավորումներ) են, որոնք հաճախ կազմակերպվում են մասնավոր գործընկերությունների ձևով և ավելի հաճախ գրանցվում են օֆշորային գոտիներում («հարկային նավահանգիստներում»)՝ ելնելով հարկման և պետական կարգավորման ռեժիմի հետ կապված նկատառումներից [3]: Ըստ Վիկիպեդիայի՝ հեջ-ֆոնդը մասնավոր, նորմատիվ կարգավորմամբ չսահմանափակված ներդրումային ֆոնդ է, որը հասանելի չէ անձանց լայն շրջանակին և կառավարվում է ներդրումային պրոֆեսիոնալ կառավարչի կողմից [2]:

Հատուկ գրականության մեջ սովորաբար ներկայացվում է, որ հեջ-ֆոնդը սովորական մասնավոր ներդրումային գործընկերություն է, որը հիմնականում ներդրումներ է կատարում հրապարակայնորեն վաճառվող արժեթղթերում կամ ածանցյալ ֆինանսական գործիքներում [4]: Այլ ինստիտուցիոնալ ներդրողներից (բանկեր, կենսաթոշակային ֆոնդեր, ապահովագրական ընկերություններ և այլ ֆինանսական հաստատություններ, որոնք խոշոր ակտիվներ ունեն) հեջ-ֆոնդերի կարևոր տարբերությունն այն է, որ դրանցում կարգավորում գրեթե չկա [5]:

Ընդունված է համարել, որ առաջին հեջ-ֆոնդը ստեղծվել է 1949թ. ԱՄՆ-ում: Դա պատահական իրադարձություն չէր: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ հեջ-ֆոնդերի գործունեությունն սկսվեց 1944թ. բրետոնվուդյան համաձայնագրից 5 տարի անց և հետպատերազմյան Եվրոպային ֆինանսական օգնություն ցուցաբերելու՝ Մարշալի պլանի հայտարարումից գրեթե անմիջապես հետո:

Տեղեկանք. Բրետոնվուդյան համաձայնագիրը փաստորեն օրինականացրեց ԱՄՆ դոլարի՝ որպես միակ համաշխարհային արժույթի, կիրառումը: Դրանով ավարտվեց ամերիկյան արժույթի աստիճանական մոնոպոլացման բազմամյա գործընթացը՝ ի հաշիվ սկզբում ռուբլու, այնուհետև՝ գերմանական մարկի ու ֆրանսիական ֆրանկի և, վերջապես, անգլիական ֆունտ ստեռլինգի դուրսմղման: 1944թ. սկսած՝ միայն ԱՄՆ դոլարն իրավունք ուներ փոխանակվել ոսկով, իսկ այլ երկրների ազգային արժույթները պետք է «հարմարվեին» նրան:

Այս մոնոպոլացման բացասական հետևանքն իրեն երկար սպասել

չտվեց. ԱՄՆ-ում սկսվեց ապրանքներով ու ծառայություններով չապահովված դոլարի մասշտաբային տպագրությունը: Ինֆլյացիան կանխելու շուտափույթ միջոցառումներ էին անհրաժեշտ: Եվ դրանք շուտով մշակվեցին, արտաքին քաղաքական իրավիճակն իր հերթին նպաստում էր դրան:

1945թ. ավարտվեց Երկրորդ համաշխարհային պատերազմը: Եվրոպան ավերակների մեջ էր: Եվ ԱՄՆ-ը, իրեն հատուկ՝ մնացյալ ողջ աշխարհին անձնվիրաբար փրկելու մշտական պահանջմունքին համապատասխան, որոշեց «օգնել» նրան: Հանրահայտ Մարշալի ծրագրի համաձայն՝ Ամերիկան Եվրոպային տրամադրեց $12 մլրդ: Ընդ որում՝ ըստ մեծի մասի դա նույնիսկ պարտք էլ չէր. $12-ից 9 մլրդ-ը պարզապես նվեր էր: Զուգահեռաբար $2 մլրդ էլ «նվիրաբերվեց» Ճապոնիային: 1966թ. Ամերիկայից Եվրոպա դրամական ալիքը հասավ բարձրակետին՝ $54,6 մլրդ:

Ո՞րն էր այս չլսված առատաձեռնության իմաստը: Այն, որ ամերիկացիներն *իրենց ինֆլյացիան փաթաթում էին Եվրոպայի ու Ճապոնիայի վզին:*

Իրենց խնդիրներն ուրիշների վրա դնելու մեխանիզմն աշխատում էր հետևյալ կերպ: Ամերիկան չապահովված փողեր է տպում՝ բյուջետայիններին վճարելու, իր ծախսերը ֆինանսավորելու, դրսում նավթ գնելու համար... Հասկանալի է, որ սա բարձր ինֆլյացիայի էր հանգեցնելու:

ԱՄՆ պետքարտուղար Մարշալի պլանն այն էր, որպեսզի հարկերի օգնությամբ հասցնեն հավաքել չապահոված փողերը և մինչ ինֆլյացիան կսկսվի՝ այդ թղթերը «փոխարինաբար տալ» եվրոպացիներին՝ իսկական փողերի անվան տակ: Այսպիսով, կարելի է ծախսել ավելին, քան վաստակում ես և ապրել ուրիշների հաշվին: ԱՄՆ-ը հույս ուներ, որ «եվրադոլարները» երբեք հետ չեն վերադառնա և Եվրոպային դրանց դիմաց ոսկի վճարելու հարկ չի լինի: Բայց այն պատճառով, որ ԱՄՆ-ը եվրոպացիներին, այնուամենայնիվ, ոչ թե փող, այլ թուղթ էր արտահանել, 1950-ական թթ. Եվրոպայում այնպիսի ինֆլյացիա սկսվեց, որ այն անգամ Մեծ անվանեցին:

Սկզբում, քանի դեռ ԱՄՆ ֆինանսական համակարգը հաստատուն էր, իսկ դոլարը՝ հարաբերականորեն կայուն, արժեթղթերի շուկայում աճ էր նկատվում, հեջ-ֆոնդերը մնում էին ստվերում և ներդրողների ուշադրությանն առանձնապես չէին արժանանում: Սակայն մակրոտնտեսական իրադրության վատթարացման, արժութային շուկայում լարվածության, բաժնետոմսերի շուկայում անկայունության աճի պայմաններում մասնագետները վերադարձան հեջ-ֆոնդերի օգտագործման գաղափարին, որոնք ոչ միայն շահույթ էին երաշխավորում, այլ նաև նպաստում էին ներդրումային ռիսկի նվազեցմանը:

Ներկայումս կարելի է առանձնացնել հեջ-ֆոնդերի աշխատանքի հետևյալ կարևոր ասպեկտները [6].

- տրամադրում են սպեկուլյատիվ ներդրումներ և բնութագրվում են բարձր ռիսկայնությամբ, ներդրողը կարող է կորցնել իր միջոցների զգալի մասը,
- հեջ-ֆոնդերի փաստաթղթերը (ազդագրեր, ներդրումային ռազմավարություններ և այլն) իշխանական մարմինների՝ ո՛չ պետական, ո՛չ տեղական, ո՛չ հանրապետական, կողմից չեն դիտարկվում և ենթակա չեն նրանց հավանությանը,
- հեջ-ֆոնդը կարող է կարճատև պատմություն ունենալ (կամ ընդհանրապես չունենալ), և այն կարող է օգտագործել հիփոթետիկ կամ ֆորմալ գործունեության տվյալներ, որը կարող է չհամապատասխանել կառավարիչների ու խորհրդականների իրական գործողություններին, հետևաբար՝ դրան պետք է զգուշորեն մոտենալ. ներդրողները չպետք է հենվեն հեջ-ֆոնդերի գովազդային ազդագրերին,
- հեջ-ֆոնդերի կառավարիչները կամ խորհրդականները գործողությունների նկատմամբ լիակատար իշխանություն ունեն,
- հեջ-ֆոնդը կարող է չապահովել իր ներդրումների (ներառյալ ենթաֆոնդերը ֆոնդերի կառուցվածքում) թափանցիկությունը ներդրողների առջև, ինչը հնարավորություն չի տալիս ներդրողներին անցկացնել հեջ-ֆոնդերի սպեցիֆիկ ներդրումների մոնիթորինգ կամ իմանալ՝ արդյոք ենթաֆոնդի ներդրումները հեջ-ֆոնդի ռազմավարության մաս կազմո՞ւմ են, թե՞ ոչ և ինչպիսի՞ն է նրանց ռիսկի մակարդակը,
- հեջ-ֆոնդերին չեն ներկայացվում պարբերաբար անցկացվող վերագնահատումների կամ վերահաշվարկների մասին ներդրողներին կանոնավորապես տեղեկատվություն տրամադրելու պահանջներ, այլ կերպ ասած՝ ֆոնդերը պարտավոր չեն հրապարակել տեղեկատվություն իրենց ֆինանսական վիճակի մասին, բացի այդ՝ շուկաներում առևտրի որոշակի մեթոդները և ներդրումավորման ռազմավարությունները ֆոնդերի նոու-հաուն են, ուստի և այդ տեղեկատվությունը փակ է մնում:

Հեջ-ֆոնդերի այս առանձնահատկություններին ծանոթանալուց հետո ակամա այնպիսի զգացողություն է առաջանում, թե այս ամենը ծանոթ է, ինչ-որ տեղ եղել է, ինչ-որ տեղ մենք այդ մասին լսել կամ կարդացել ենք: Եվ հիշողությունների ոչ երկար փնտրտուքից հետո գիտակցությանդ մեջ հայտնվում են ամբակների գծով տեխնիկական տնօրենի ու լիազորի լուսավոր կերպարները:

Իսկապես, նույնն է, թե անմոռանալի «Պոզեր ու սմբակները», միայն թե համաշխարհային մասշտաբով, այլ ոչ թե առանձին վերցրած ք.Չեռնոմորս-

կում: Օ.Բենդերին շատ դուր կգար այն, որ հեջ-ֆոնդը կարող է օգտագործել հիփոթետիկ կամ ֆորմալ գործունեության մասին տվյալներ: Ի՞նչ կարող ես ասել: Միայն այն, որ ամերիկացիները կրկին, իրենց հատուկ ավանդական ձևով, յուրացրին ուրիշի հայտնագործությունը:

ԱՄՆ-ում ավելի քան 9 հազար հեջ-ֆոնդ կա *(Նկ. 1)*, որոնց միասնական ակտիվները կազմում են $1,8 տրլն (մոտ 1,5 անգամ ավելի 2007թ. Ռուսաստանի ՀՆԱ-ից) [1, 7]: Փորձագետները նշում են, որ վերջին մի քանի տարիների ընթացքում այդ ֆոնդերի ակտիվների ծավալն ամեն տարի ավելանում է միջինը $130-200 մլրդ-ով *(Նկ. 2)*: Ներկայումս իրենց ընդհանուր ակտիվներով հեջ-ֆոնդերը զիջում են փոխադարձ ներդրումային ֆոնդերին (մոտ $10 տրլն), ինչպես նաև բանկերին ու ապահովագրական ընկերություններին: Սակայն զարգացման տեմպերով հեջ-ֆոնդերը ԱՄՆ ֆինանսական սեկտորի *առավել արագ աճող* սեգմենտն են:

Նկ. 1



Նկ. 2



Հարկերը նվազագույնի հասցնելու համար ամերիկացիները հաճախ ստեղծում են օֆշորային հեջ-ֆոնդեր չհարկվող իրավասության գոտիներում: Նման առավել հայտնի գոտիներ են (մասնագիտացած են ներդրումային ֆոնդերի գրանցման ու սպասարկման մեջ) Կայմանյան կղզիները, բրիտանական Վիրգինյան կղզիները և նիդեռլանդական Անթիլները:

Հարկավոր է նշել մի շատ կարևոր մանրամասն. ամերիկյան հեջ-ֆոնդերը չեն ընկնում ԱՄՆ 1940թ. Ներդրումային ընկերությունների մասին օրենքի (որը պահանջում է հետևել կարգավորող ռեժիմին) և 1933թ. Արժեթղթերի մասին օրենքի տակ (որը պարտավորեցնում է ներդրումային ֆոնդերին գրանցվել ԱՄՆ արժեթղթերի ու բորսաների Հանձնաժողովում *(SEC):* Այսպիսով, արժեթղթերով գործառնությունների պարագայում կարգավորող ռեժիմին և այլ կանոնների հետևելու տեսակետից հեջ-ֆոնդերը շուկայի այլ մասնակիցների համեմատ ավելի ազատ դաշտում են գտնվում:

Շատ երկրներում նույնպես ուղղակիորեն տրված չեն հեջ-ֆոնդի իրավաբանական սահմանումները: Դրա համար էլ, լինելով մասնավոր ընկերություններ, դրանք խուսափում են ֆինանսական մարմինների ուղղակի կարգավորումից: Պետական անմիջական հսկողությունից դուրս գտնվելով՝ հեջ-ֆոնդերը սահմանափակ պատասխանատվություն ունեն ներդրողների հետ սեփական պայմանագրերում, ուստի կարող են ընտրել ավելի բարդ (հաճախ՝ ավելի ռիսկային) ներդրումային ռազմավարություններ, օրինակ՝ վաճառք առանց վճարի, ներդրումներ ֆյուչերսային, սվոփ և այլ շուկաներում:

Վերջին տարիներին հեջ-ֆոնդերի ակտիվությունը հանրային արժեթղթերի շուկաներում զգալիորեն մեծացել է: Ամերիկյան շուկայում բոլոր պարտատոմսերի 30%-ը վաճառվում է հեջ-ֆոնդերի միջոցով: Դրանք մասնակցում են նաև ԱՄՆ և Եվրոպայի ֆոնդային շուկաների 30% տրանզակցիաներին (գործարքներին): Դրանց միջոցով է կատարվում ներդրումային վարկանիշի դերիվատիվներով գործարքների մոտ 50%-ը, ինչպես նաև զարգացող շուկաների պարտատոմսերի սակարկությունների ծավալի ավելի քան 55%-ը: Հեջ-ֆոնդերը գերիշխում են նաև որոշ «բաց» շուկաներում, օրինակ՝ բարձրեկամտաբեր դերիվատիվների առևտրում: Ֆինանսական ճգնաժամերով հարուստ 2007 թվականին հեջ-ֆոնդերի ակտիվությունը կտրուկ բարձրացավ հումքի, առաջին հերթին՝ նավթի, մետաղների և հացահատիկի շուկաներում [1]:

Այս առումով անհրաժեշտ է մի ոչ մեծ շեղում կատարել: Վերջին ժամանակներս ԱՄՆ հիփոթեկային ճգնաժամի զարգացման և դրա՝ ֆինանսական գործունեության այլ ոլորտների վրա տարածվելու հետ կապված՝ շատ երկրներում ակտիվ գործողություններ են ձեռնարկվում այդ ճգնաժամի պատճառները պարզելու համար: Առաջին մեղավորներն արդեն հայտնի են. իբր ռիսկերը զննող վարկանիշային գործակալությունները: Որոշ վերլուծաբաններ երկ-

րորդ պատճառն առավել հաճախ համարում են ժամկետային շուկայի տարրերը՝ ֆյուչերսները, օպցիոնները և այլն:

Մեր կարծիքով՝ ամերիկյան հիփոթեկային ճգնաժամը վաղուց կանխորոշված էր, կարելի է ասել՝ այն ծրագրված էր: 2000թ. *S&P* վերլուծաբանները հիփոթեկային վարկատուների տվյալների հիման վրա տարօրինակ հետևություն արեցին այն մասին, որ կոմբինացված վարկի դեֆոլտը (երբ փոխառուն ի լրացումն հիփոթեկային վարկի վերցնում է երկրորդը՝ թողնելով նրա նախնական մուծումը) ավելի քիչ հավանական է, քան սովորական հիփոթեկային վարկի դեպքում: Ընդունված որոշումն ավելի ուշ նպաստեց բարձրռիսկային հիփոթեկային վարկերի շուկայի վերելքին մինչև $1,1-1,3 տրլն: Այստեղ չենք կարող մեկնաբանություն չանել. հետաքրքիր կլիներ տեսնել այդ խելացիներին, որ արել են այս հետևությունը, և նրանց, ովքեր հավատացել են դրան: Հետևելով նրանց տրամաբանությանը՝ այնուհետև կարելի է հաջորդաբար վերցնել 3-րդ, 4-րդ, 5-րդ և այսպես շարունակ վարկեր՝ սկզբնական մուծման ապահովմամբ: Եվ ընդամենը $10-100 հազարով գնել ԱՄՆ ողջ էկոնոմիկան, ընդ որում՝ առանց դեֆոլտի ռիսկի բարձրացման:

Միայն 2006թ. *S&P–ը* փոխեց կարծիքը, բայց արդեն ուշ էր:

Մեր կարծիքով՝ բանն այստեղ ժամկետային շուկան չէր (այսինքն՝ ֆինանսական քաղաքականության գործիքները չէին, որոնք, ինչպես և ցանկացած այլ գործիք, կարող են օգտակար կամ վնասակար լինել՝ նպատակից կախված), այլ հեջ-ֆոնդերի տիպի այն կազմակերպությունների փակ լինելը, որոնք կիրառում են այդ գործիքը:

Իրականում հեջ-ֆոնդերը «գաղտնի, խավարով պատված» ֆինանսական «սև անցքեր» են. դրանք չեն ենթարկվում կարգավորման պետության կողմից: Հեջ-ֆոնդերի գործերին չմիջամտելու տեսական հիմքն այն է, որ նրանց հաճախորդների բազան կազմված է այնպիսի ներդրողներից, որոնց անձնական կապիտալը գերազանցում է $1 մլն-ը և որոնց եկամուտները տարեկան ավելի քան $200 հազար են: Ենթադրվում է, որ նման մարդիկ բավական ֆինանսական հոտառություն պետք է ունենան՝ սեփական ներդրումները ինքնուրույն վերահսկելու համար: Ստանդարտ տոկոսավճար է համարվում 2%-ը՝ ներդրված կապիտալի 20% վերադարձի դեպքում:

Տարօրինակ է, չէ՞: Ֆինանսական կազմակերպությունների համար, որոնց ակտիվների ընդհանուր ծավալը համադրվում է ԱՄՆ որոշ ազգային ֆոնդային շուկաների կապիտալացման հետ, հարմար օրենք չի գտնվել: Այլ խոսքերով՝ հեջ-ֆոնդերը, որոնք ի վիճակի են՝ եթե չփլուզեն էլ, ապա գոնե էապես ձևախեղեն ցանկացած զարգացող երկրի (Հնդկաստան, Չինաստան, Ռուսաստան, Բրազիլիա) ֆոնդային շուկան և ապահովեն դրանց կազմակերպիչներին անհրաժեշտ ուղղությամբ զգալի կապիտալների վերաբաշխումը, ոչ

մեկի կողմից չեն կարգավորվում և ոչ մեկին որևէ տեղեկատվություն չեն ներկայացնում իրենց գործունեության մասին: Եվ դա տեղի է ունենում մի երկրում, որի ղեկավարները հանդես են գալիս շուկայական հարաբերությունների օգտին, բոլոր բարձր ամբիոններից խոսում են թափանցիկության ապահովման անհրաժեշտության, մոնիթորինգի ու միջազգային վերահսկողության իրականացման մասին: Հասկանալի է, որ օրենսդրության մեջ առկա թերությունները պատահական չեն կամ էլ բացթողումներ չեն անփույթ պաշտոնյաների կողմից և այլն, այլ հատուկ ստեղծված սողանցք են՝ նախատեսված *ապօրինի* միջոցներով ֆինանսական շուկաները կառավարելու համար: Եվ գրոշ (կամ սենթ) անգամ չարժե իդեալական թափանցիկությունը նրա մյուս սեգմենտներում, այն դեպքում, երբ նրա զգալի մասը, որն էլ միշտ լինելու է վճռորոշը ճգնաժամային իրավիճակներում, բացառապես անթափանց է:

Ուստի, զարմանալի չէ, որ հեջ-ֆոնդերը, հատկապես օֆշորայինները, վերջին տարիներին մի շարք երկրների կառավարությունների ու միջազգային ինստիտուտների սևեռուն ուշադրության առարկան են դարձել, որոնք պատեբազմ են հայտարարել «կեղտոտ փողերի» լվացմանը:

Բնականաբար, օֆշորային բոլոր հեջ-ֆոնդերը չէ, որ օգտագործվում են ֆինանսական մեքենայությունների համար, սակայն, ինչպես նշում են փորձագետները, օֆշորային աշխարհում տեղի ունեցող ինչ-որ բան, այնուամենայնիվ, անհանգստության տեղիք է տալիս:

Որպես օֆշորային տարածքների միջոցով կապիտալի հետ կապված կասկածելի գործարքների օրինակ՝ հաճախ բերվում է խաղաղօվկիանոսյան Նաուրու կղզին: Այն իր տարածքով (ընդամենը 21 կմ^2) գերազանցում է միայն Վատիկանին ու Մոնակոյին: Բնակիչների թիվը 12,3 հազար մարդ է: Փոխարենը՝ բանկային գաղտնիքի մասին կղզում գործող օրենքները 1998թ. (այս թվականի վերաբերյալ են առկա վերջին տվյալները) թույլ տվեցին օֆշորային բանկերի միջոցով «քաշել» ավելի քան $70 մլրդ-ի կապիտալ, որը կասկածելի ձևով դուրս էր բերվել Ռուսաստանից [8]:

Այսպիսով, հեջ-ֆոնդերն ավելի շուտ ոչ թե որակյալ ներդրումավորման, այլ ԱՄՆ-ին անհրաժեշտ ուղղություններով մեծ կապիտալների փոխանցման ու կենտրոնացման գործիքներ են:

Ֆոնդերի ազդեցության աճը ավելի ու ավելի հաճախ է նրանց գործունեության մեջ օրենսդրական սահմանափակումներ մտցնելու անհրաժեշտության մասին բանավեճերի առիթ հանդիսանում:

Իրենք՝ հեջ-ֆոնդերի կազմակերպիչներն էլ են հասկանում, որ ճիշտ չէ հենվել միայն մենեջմենթի արդյունավետության վրա: 2008թ. հունվարի վերջին լոնդոնյան առաջատար հեջ-ֆոնդերի մի խումբ (հայտնի են որպես *HFWG)* հայտարարեց հեջ-ֆոնդերի մենեջերների համար կամավոր կանոնների ցան-

կի ստեղծման մասին: Խմբի մեջ են մտնում Բրիտանիայի 14 խոշոր հեջ-ֆոնդեր, ներառյալ *Man Group-ը, GLG Partners-ը, Lansdowne Partners-ը, Marshall Wace-ը և Breva Howard-ը:* Սա փաստորեն ֆինանսների այս ճյուղում ինքնակարգավորում մտցնելու առաջին փորձն էր, որն ավանդաբար ազատ է համարվել ամեն տեսակ վերահսկողությունից:

Ինչպես հայտարարել է Անգլիայի Բանկի կառավարչի նախկին տեղակալ, *«HFWG* խմբի» ղեկավար Էնդրյու Լարջը, բրիտանական օրենսգիրքը կախված կլինի հեջ-ֆոնդերին ներդրողների ներկայացրած պահանջներից՝ «ենթարկվել պահանջներին կամ բացատրել հրաժարումը» սկզբունքին համապատասխան: Ճյուղի նոր ստանդարտները կանցնեն Ստանդարտների խորհրդի *(HFSB)* հսկողության տակ: Այն ֆոնդերի մենեջերները, որոնք կմտնեն խորհուրդ, կամ կենթարկվեն կանոններին, կամ կբացատրեն իրենց հրաժարումը: Բացի այդ, Բրիտանիայում տեղակայված հեջ-ֆոնդերից կպահանջվի գործողությունների և ներդրումային ռազմավարության, ստանձնած ռիսկերի ու բարդ ակտիվների գնահատման մեթոդների ավելի մեծ բացություն:

Կարևոր նորամուծություն է այն, որ կանոնները թույլ չեն տա փոխառություն ստացած բաժնետոմսերը բաժնետերերի ժողովներում քվեարկության համար օգտագործելու՝ մինչ օրս տարածում գտած գործելաոճ: Այդ գործելակերպը Բրիտանիայում և ԱՄՆ-ում միաձուլման և կլանման մի շարք գործարքների ժամանակ լուրջ քննադատության է ենթարկվել, քանի որ թույլ էր տալիս հեջ-ֆոնդերին ազդեցություն գործել ընկերություններում տեղի ունեցող գործընթացների վրա՝ առանց սեփական ներդրումների:

Ուշադիր կարդացեք նախորդ պարբերությունը: Ի՞նչ շուկայական տնտեսության մասին կարող է խոսք լինել միլիարդների հասնող գործարքների այս տեսակ իրականացման դեպքում: Արդեն միայն այս փաստը վկայում է այն, որ համաշխարհային տնտեսությունը լուրջ, գուցե արդեն անբուժելի հիվանդ է:

Բրիտանական ապահովագրողների ասոցիացիան (նրա շատ անդամներ հեջ-ֆոնդերի ներդրողներ են) հանդես է եկել լավատեսական հայտարարությամբ, թե նոր կանոնները «լավ սկիզբ» են, բայց ճյուղին՝ կանոնների գործողության մոնիթորինգի համար, մեծ թափանցիկություն կպահանջվի:

Նոր համակարգը ստանդարտների կոշտ կատարում չի ենթադրում. դրանք հեջ-ֆոնդերի նկատմամբ չգործադրելու որոշման համար որևէ պատժամիջոց չի կիրառվի: Այսպիսով, նոր կանոնները գործնականում անօգուտ են ստացվում: «Թեև սկզբում համակարգը կարող է նորմալ գործել, բավական կլինի մի դեպք, որպեսզի այն դադարի աշխատել: Եթե այս կամ այն ֆոնդը հայտարարում է կանոններին իր հավատարմության մասին, իսկ այնուհետև հրաժարվում է, ապա ստանդարտների համակարգի ողջ հեղինակությունը

հայտնվում է սպառնալիքի առջև»,- հեջ-ֆոնդերի ինքնակարգավորման նոր վարքականոնն այսպես է մեկնաբանել ճյուղի գծով *KPMG-ի* խորհրդական Թոմ Բրաունը:

Փորձագետները կարծում են, թե ֆոնդերի այս որոշումն առաջ է եկել հեջ-ֆոնդերի գործունեությունը պետական հսկողության տակ վերցնելու՝ քաղաքական գործիչների կողմից համախակիացած կոչերով պայմանավորված: Օրինակ, այդ մասին խոսել է Գերմանիայի ֆինանսների նախարար Փեեր Շտայնբրյուքը *G8-ի* անցյալ տարվա գագաթաժողովում: Գերմանիան, իսկ այնուհետև՝ նաև Ֆրանսիան հեջ-ֆոնդերը քննադատության հեղեղով պատեցին՝ դրանք անվանելով «ֆինանսների կովբոյներ», որոնց գործունեությունը որևէ կերպ չի կարգավորվում և հանգեցնում է անկանխատեսելի հետևանքների: 2007թ. աշնանը ԱՄՆ Ֆինանսների նախարարությունը հեջ-ֆոնդերի առաջատար ներդրողների և մենեջերների հատուկ խումբ ստեղծեց՝ ԱՄՆ տարածքում ճյուղի համար վարքականոն մշակելու համար:

2. Պետական ներդրումային (սուվերեն) ֆոնդեր

Ամենայն համոզվածությամբ իրենց ազդեցությամբ համաշխարհային տնտեսության «մութ կողմի» մեկ այլ օբյեկտ կարելի է անվանել պետական ներդրումային ֆոնդերը:

Ամբողջ աշխարհում պետական ներդրումային (սուվերեն) ֆոնդերի ակտիվները մոտավորապես կրկնակի գերազանցում են հեջ-ֆոնդերի միացյալ ակտիվները: 2012թ. դրանք $3,2 տրիլիոնից կարող են հասնել $5 տրիլիոնի, կարծում են *Deutsche Bank-ի* վերլուծաբանները, որ հրապարակել են այդ կառույցների գործունեության 11.09.2007թ. տեսությունը [9]: Սուվերեն ֆոնդերը դառնում են համաշխարհային ֆինանսական շուկաների խոշոր խաղացողներ:

Աշխարհի շատ տարածաշրջաններում, ներառյալ Ռուսաստանը, ԱՄՆ-ը, Չինաստանը, ԵՄ-ը, կա՛մ քննարկվում, կա՛մ արդեն ընդունվում են օրինագծեր, որոնք տարբեր ձևերով սահմանափակում են օտարերկրյա կառավարությունների կողմից վերահսկվող կորպորացիաների՝ տնտեսության ռազմավարական ճյուղերում ներդրումներ կատարելու հնարավորությունները: Սուվերեն ֆոնդերը հեջ-ֆոնդերից հետո քաղաքական գործիչների կողմից քննադատության ենթարկվող երկրորդ օբյեկտն են դարձել:

Ըստ որոշ գնահատականների՝ ներկայումս սուվերեն ֆոնդերի ակտիվները կազմում են համաշխարհային ֆոնդային շուկայի կապիտալացման մոտ 7 և համաշխարհային բանկային համակարգի ակտիվների մոտ 5%-ը [9, 10]:

Աղյուսակ 1

Երկիրը	Ֆոնդը	Կապիտա-լը, $մլրդ	Հիմնադրման տարեթիվը	Եկամուտների աղբյուրը
ԱՄԷ	Աբու Դաբիի ներդրումային գործակալություն	875	1976	Նավթ
Սինգապուր	Սինգապուրի կառավարական ներդրումային կորպորացիա	330	1981	Ոչ հումքային
Նորվեգիա	Նորվեգիայի կառավարական թոշակային ֆոնդ	350	1990	Նավթ
Սաուդյան Արաբիա	Մի քանի ֆոնդեր	300	Տ.չ.	Նավթ
Քուվեյթ	Քուվեյթի ներդրումային գործակալություն	250	1953	Նավթ
Չինաստան	Կենտրոնական Հուջինի ներդրումային ընկերություն	100*)	2003	Ոչ հումքային
Չինաստան	Չինաստանի ներդրումային ընկերություն	200	2007	Ոչ հումքային
Հոնկոնգ	Հոնկոնգի մոնետար գործակալության ներդրումային պորտֆել	140*)	1998	Ոչ հումքային
Ռուսաստան	Կայունացման ֆոնդ	158	2003	Նավթ
Սինգապուր	Temasek Holdings	159	1974	Ոչ հումքային
Ավստրալիա	Ապագայի կառավարական ֆոնդ	61	2004	Ոչ հումքային
Լիբիա	Պահուստային ֆոնդ	50*)	Տ.չ.	Նավթ
Կատար	Կատարի ներդրումային գործակալություն	40*)	2000	Նավթ
ԱՄՆ	Ալյասկայի մշտական պահուստային ֆոնդ	40*)	1976	Նավթ
Կանադա	CPP Investment Board	119		
Բրունեյ	Բրունեյի ներդրումային գործակալություն	85*)	1983	Նավթ
Իռլանդիա	Թոշակային պահուստների ազգային ֆոնդ	29*)	2001	Ոչ հումքային
Ալժիր	Պահուստային ֆոնդ	25*)	Տ.չ.	Նավթ
Հարավային Կորեա	Կորեայի ներդրումային կորպորացիա	20*)	2006	Ոչ հումքային
Մալայզիա	Khazanah	18*)	1993	Ոչ հումքային
Ղազախստան	Ղազախստանի ազգային ֆոնդ	18*)	2000	Նավթ, գազ, մետաղներ

**) Տվյալները՝ [11]:*

Համաշխարհային տնտեսության վրա ունեցած իրենց ազդեցությամբ սուվերեն ֆոնդերը էապես տարասեռ են: Դրանց շարքում են Նորվեգիայի, Իռլանդիայի, Հարավային Կորեայի ֆոնդերը, որոնց ռազմավարական նպատակները թափանցիկ են և իրականանալի, քանի որ դրանք համապատասխանում են ԱՄՆ ֆինանսական քաղաքականության ընթացքին:

Երկրորդ խմբում այն սուվերեն ֆոնդերն են, որոնք կողմնորոշված են դեպի համապատասխան պետությունների ազգային շահերը, բայց որոնք ներկայացնում կամ ապագայում կարող են մրցակցություն ներկայացնել ԱՄՆ ֆինանսական շահերին: Նման ֆոնդերը, որպես կանոն, վաղ թե ուշ խնդիրներ և դժվարություններ են ունենում նպատակներն իրականացնելիս: Օրինակը աշխարհում ամենախոշոր *Abu Dhabi Investment Authority* սուվերեն ֆոնդն է Արաբական Միացյալ Էմիրություններում: Այն արդեն հանդիպել է արևմտյան կարգավորողների հակազդեցությանը: Նրանց կողմից վերահսկվող ընկերություններին թույլ չտվեցին գնել ամերիկյան 6 նավահանգիստները և սկանդինավյան բորսայի բլոկփաթեթը:

Վերջապես, սուվերեն ֆոնդեր գոյություն ունեն այնպիսի երկրներում, ինչպիսին Ռուսաստանն է: Այդ ֆոնդերը ոչ միայն չեն ծառայում ազգային շահերին, այլև աղավաղում և ճնախեղում են իրենց երկրների տնտեսությունը: Ճիշտ այնպես, ինչպես դրանց ֆիզիկական անալոգները՝ աստղագիտական «սև անցքերը», որ խեղաթյուրում են տարածություն-ժամանակը և անդառնալիորեն կլանում են նյութն ու էներգիան:

Իսկապես, ԱՄՀ պահանջներին համապատասխան, որոնց չգիտես ինչու հետևում է Ռուսաստանը, ռուսաստանյան հումքային ընկերությունների ողջ հասույթը պետք է վաճառվի արժութային բորսայում: Հիմնական խաղացողն այստեղ Կենտրոնական բանկն է (ԿԲ): Սա առաջին տարօրինակությունն է (նման տարօրինակությունների դեռ շատ կհանդիպենք հետագա շարադրանքում)՝ սակարկություններին թույլատրել կազմակերպության, որը դրամ տպելու բացառիկ իրավունք ունի և դրանով հանդերձ գործն այնպես ներկայացնել, ասես արտարժույթի փոխարժեքն արդարացիորեն սահմանվում է շուկայի կողմից:

Բնական է, որ ԿԲ-ն այս հարցը լուծում է իրեն հատուկ ձևով. պարզապես տպում և շրջանառության մեջ է մտցնում լրացուցիչ ռուբլիներ, որոնց մի մասը որոշ ժամանակ անց վերադարձվում է Ֆիննախին հարկերի տեսքով: Բայց նոր տպագրված ռուբլիների մնացած մասը շարունակում է մնալ շրջանառության մեջ:

Բնական է, որ վերադարձված ռուբլիները նպատակահարմար է հանել շրջանառությունից, այլապես դրանք կհանգեցնեն լրացուցիչ ինֆլյացիայի: Ուստի դրանք փոխանցվում են Ֆիննախի հատուկ հաշվին և «նստում» են կայունացնող ֆոնդում՝ համարժեք արտահայտությունն ստանալով ԿԲ ոսկու-արտարժույթի պահուստներում: Այլ խոսքերով՝ այդ միջոցները ձևականորեն համարվում են ԿԲ պասիվներ և «լուծվում» են ոսկու-արտարժույթի պահուստների (ՈԱՊ) կազմում: Կայունացնող ֆոնդի ակտիվների մեծության դինամիկան ներկայացված է *Նկ. 3*-ում և *Աղյուսակ 2*-ում:

Նկ. 3



Աղբյուրը՝ Ֆինանսների նախարարություն

Աղյուսակ 2

Պարամետրի անվանումը	2008թ.	2009թ.	2010թ.
Պահուստային ֆոնդ, մլրդ ռուբ.	3848	4324	4997
Ազգային բարեկեցության ֆոնդ, մլրդ ռուբ.	851	1066	1027
Ֆոնդերի ընդհանուր ակտիվներ, մլրդ ռուբ.	4699	5390	6014
ՀՆԱ, մլրդ ռուբ.			
Նավթի միջին տարեկան կանխատեսելի գինը, $/ բարել	74	66	62

Աղբյուրը՝ ՌԴ տնտեսական զարգացման և առևտրի նախարարություն

2008 թվականից կայունացնող ֆոնդը բաժանվել է երկու ֆոնդերի՝ պահուստային և ազգային բարեկեցության:

Հոդվածը գրվելու պահին կայունացնող ֆոնդի այդ երկու «ժառանգորդներն» ունեին համապատասխանաբար՝ $125,4 և $32 մլրդ:

Այս ամենը՝ դեռ ոչինչ: Բայց ինչպես հայտնի է, ռուսաստանյան ՌԱՊ-երը տեղակայված են ԱՄՆ իբր հուսալի և ցածր տոկոսներով արժեթղթերում, որոնց տոկոսը զգալիորեն ցածր է ԱՄՆ դոլարի ինֆլյացիայի իրական տեմպից: Ուստի, արտաքին քաղաքական իրավիճակի ցանկացած ծավալման դեպքում այդ փողերն այլևս Ռուսաստան չեն վերադառնա:

Կայունացնող ֆոնդը դատապարտված է անշարժ մնալ. եթե այն օգտագործվի ներքին նպատակներով, ապա ինֆլյացիան Ռուսաստանի տնտեսությունում զգալիորեն կմեծանա: Դրա համար էլ մեզանում այդպիսի հրաշքներ

են տեղի ունենում. սուվերեն ֆոնդի իբր խոշոր ծավալների պարագայում առաջանում են լիկվիդայնության հետ կապված խնդիրներ, իսկ ռուսական ընկերություններն ու կազմակերպությունները պարտք են վերցնում ոչ թե իրենց երկրում, այլ արտերկրում:

Ռուսաստանյան կայունացնող ֆոնդի միջոցները (ավելի ճիշտ՝ դրանց արտարժույթի արտահայտությունը ՌԱՊ-ով) մինչ օրս ծախսվել են միայն արտաքին պարտքի մարման վրա կամ ձևականորեն տեղափոխվել են այլ ֆոնդեր *(Աղյուսակ 3):*

Աղյուսակ 3

Տրանշի ժամանակը	Ֆոնդի միջոցների օգտագործման ուղղությունը	Տրանշի ծավալը, մլրդ ռուբ.
Հունվար 2005թ.	ԱՄՀ պարտքի մարում	93,5
Հունիս 2005թ.	Փարիզի ակումբի անդամ երկրների պարտքի մի մասի մարում ժամկետից շուտ	430,1
Դեկտեմբեր 2005թ.	ՌԴ Կենսաթոշակային ֆոնդի դեֆիցիտի ծածկում	30
	1998-1999թթ. Ֆինանսխի վարկերի գծով Վնեշէկոնոմբանկին պարտքի մարում ժամկետից շուտ	123,8
Օգոստոս 2006թ.	Փարիզի ակումբի անդամ երկրների պարտքի մի մասի մարում ժամկետից շուտ	616,8
Նոյեմբեր 2007թ.	Գույքային մուծում Զարգացման բանկի կապիտալում	300

Աղբյուրը՝ Ֆիննախ

Բայց 2007թ. վերջին ռուս ֆինանսական ինտելեկտուալները ներդրումավորման նոր ուղղություն հորինեցին: Հղում կատարելով «մասնագիտական գերատեսչություններից մեկի աղբյուրին»՝ «Ինտերֆաքսը» հաղորդել է, որ «ՌԴ ԿԲ-ն որոշ ժամանակ առաջ մոտ $40 մլրդ է տեղակայել հիփոթեկային *Freddie Mac* և *Fannie Mae* գործակալություններում»: 2008թ. նախատեսվում է ներդրումներ կատարել զարգացման 15 ամերիկյան և եվրոպական ինստիտուտների պարտատոմսերում, այդ թվում՝ վերը նշված հիփոթեկային գործակալություններում, պահուստային ֆոնդի և ազգային բարեկեցության ֆոնդի միջոցների 15%-ը կամ ավելի քան $20 մլրդ [12]:

Այսինքն՝ այն ժամանակ, երբ արևմտյան բանկերն իրենց սնանկ են հայտարարում և ընդունում են ամերիկյան հիփոթեկում միջոցների ներդրման իրենց ռազմավարության սխալականությունը, Ռուսաստանը պատրաստ է

տասնյակ միլիարդավոր դոլարներ զոհել իրավիճակի կայունացման համար: Նկատի ունեցեք, $60 մլրդ-ը ֆինանսական այն միջոցների ($160 մլրդ) ավելի քան մեկ երրորդն է, որ հատկացնում է ԱՄՆ կառավարությունը հիփոթեկային ճգնաժամի բացասական հետևանքների վերացման ու շարքային ամերիկացիներին օգնելու համար: Ստացվում է, որ Ռուսաստանը նույնպես պետք է մասնակցի դրան՝ մոռանալով իր քաղաքացիների բազմաթիվ ու անհամեմատ ավելի լուրջ խնդիրների մասին:

Այս առնչությամբ նշենք ևս մի տարօրինակություն. դաշնային բյուջեի՝ տարեցտարի մշտական դարձող պրոֆիցիտն անընդհատ աճող հարկային բեռնվածության պարագայում *(Նկ. 4)*, որն աճում է ոչ միայն անվանական, այլև իրական արտահայտությամբ (այսինքն՝ ինֆլյացիայի շտկմամբ): Դա միայն մի բացատրություն կարող է ունենալ. կառավարությունում հստակ գիտակցում են, որ ռուսաստանյան սուվերեն ֆոնդի (սուվերեն ֆոնդերի) միջոցները երբեք տնտեսություն չեն վերադառնա:

Եվ ինչն առավել վրդովեցուցիչ է՝ ֆինանսական չինովնիկները բերում են պարզունակ փաստարկներ՝ ցանկանալով թաքցնել իրերի իսկական դրությունը:

Բայց ԿԲ տպագրած ոչ բոլոր ռուբլիներն է հաջողվում վերադարձնել հարկերի տեսքով. դրանց մի մասը շարունակում է շրջանառվել տնտեսությունում՝ թեժացնելով ինֆլյացիան:

Նկ. 4



Հենց ապրանքներով ու ծառայություններով չապահովագրված ռուբլու առկայությունն է բարձր ինֆլյացիայի հիմնական աղբյուրը, այլ ոչ թե չարամիտ չինացիները, ովքեր իրենց ողջ 1,5 միլիարդով հանկարծ սկսեցին կաթ խմել: Եվ ոչ էլ գյուղատնտեսական արտադրանքի ռուս վերագնողները. կարելի է մտածել, թե նրանք նախորդ տարիներին չեն եղել (այս մասին էին, իբրև

համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հիմնական պատճառի, գրում մի շարք լրատվամիջոցներ):

«Աղետի ծավալների» բացահայտման նպատակով գնահատենք ռուսաստանյան տնտեսության այդ «սև անցքի» հզորությունը:

2007թ. ռուսաստանյան ՌԱՊ հաշիվներին է փոխանցվել մոտ $160-170 մլրդ, այսինքն՝ Համախառն ներքին արտադրանքի մոտ 12-13%-ը: Այլ խոսքերով՝ ՌԴ յուրաքանչյուր քաղաքացի՝ ակտիվ տարիքի մարդիկ, երեխաներ, ծերեր, հաշմանդամներ, փաստորեն տուրք են վճարել ԱՄՆ-ին ընդհանուր եկամուտի մեկ ութերորդի չափով: Հենց տուրք, այլ ոչ թե հարկ, որովհետև հարկերը վերադարձվում են սոցիալական նշանակության ներդրումներով: Իսկ այս պարագայում տնտեսությունից ընդմիշտ դուրս են բերվում ակտիվներ:

Թաթար-մոնղոլական լծի ժամանակ Ռուսաստանի բնակիչները վճարում էին բոլոր եկամուտների մոտ տասներորդ մասը: Եվ դա հանգեցրեց տնտեսության խոր ու երկարատև անկման:

Հիմա ավելի շատ ենք վճարում: Ուստի, չպետք է զարմանալ այն տխուր իրավիճակից, որում իրականում հայտնվել է Ռուսաստանի տնտեսությունը 2008թ. սկզբին: Առանց չափազանցելու կարելի է ասել, որ արդի Ռուսաստանի հիմնական դժբախտությունները 90%-ով պայմանավորված են նրա տնտեսությունից ամեն տարի հարյուր միլիարդավոր դոլարների դուրսբերմամբ:

2008թ. սկզբին Ռուսաստանի և Թայվանի արժութային պահուստները կազմում են մոտ $0,5-ական տրիլիոն, Չինաստանինը՝ մոտ $1,5 տրիլիոն, Ճապոնիայինը՝ մոտ $1 տրիլիոն: Այս բոլոր փողերը փոխանցվել են ԱՄՆ երկարաժամկետ պարտատոմսերին: Ընդ որում՝ պնդվում է, որ այդ պարտատոմսերը հուսալի են, թեև ցածր տոկոսադրույքով:

Ցածր տոկոսադրույքի մասին հարցեր չկան. տոկոսադրույքն իսկապես ցածր է: Այնքան, որ նույնիսկ չի փակում իրական ինֆլյացիան ԱՄՆ-ում (ըստ ՀՆԱ դեֆլյատորի):

Իսկ ահա այդ պարտատոմսերի հուսալիության վերաբերյալ հարցեր կան, այն էլ՝ շատ: Բանն այն է, որ հուսալիության մակարդակները սահմանվում են վարկանիշային գործակալությունների կողմից: Վերջին ժամանակներս այդ կազմակերպությունները կառավարվում են ֆինանսական իշխանությունների կողմից: Դրա համար էլ հուսալիության հետ կապված հարցերն այստեղ բավական վիճահարույց են. 2007թ. հիփոթեկային ճգնաժամն ԱՄՆ-ում դրա վառ վկայությունն է: Բացի այդ, բացարձակապես ոչ մի երաշխիք չկա, որ ԱՄՆ-ի ու այն երկրի միջև հարաբերությունների սրման դեպքում, որն իր պահուստները ձևակերպում է դոլարով, այդ պահուստների վրա կալանք չի դրվի, և դրանք բոլորը պարզապես անհատույց չեն բռնագրավվի: ԱՄՆ ռազմական հզորության պարագայում, որն ընդունակ է միայնակ դիմակայել ողջ մնացյալ աշխարհին, այդ միջոցների վերադարձելիության հեռանկարի վրա կարելի է վստահաբար մի մեծ խաչ քաշել:

Նշանակում է՝ լավագույն պարագայում այդ ՈԱՊ-երը կարժեզրկվեն ավելի բարձր ինֆլյացիայով, իսկ վատագույն դեպքում՝ դրանք պարզապես կառզրավվեն: Բոլոր տարբերակներում տրիլիոնավոր դոլարներ դուրս կբերվեն շրջանառությունից, այսինքն՝ կստերիլիզացվեն:

Ինչպես հայտնի է ֆիզիկայից, սև անցքի մերձակայքում ժամանակը դանդաղում է: Երևում է՝ տնտեսության մեջ նույնպես համանման երևույթ գոյություն ունի. ի հաշիվ ներդրումների մակարդակի իջեցման նվազում են երկրի զարգացման տեմպերը՝ երկար ժամանակով կոնսերվացնելով բոլոր բացասական միտումները, օրինակ՝ կոռուպցիան, տնտեսության հումքային ուղղվածությունը, տեխնոլոգիական հետամնացությունը:

3. Պետկորպորացիաներ

Չնայած օգտագործվող ակտիվների մեծ ծավալներին ու դրանց բարձր արդյունավետությանն իրենց ստեղծողների համար, սուվերեն և հեջ-ֆոնդերն ինչ-որ իմաստով արդեն «խփված» խաղաթղթեր են ֆինանսական մեծ ստվերային խաղում: Դրանք արդեն բացահայտվել են, ընկել են կամ շուտով կընկնեն վերահսկողության տակ. շուտով դրանցից ստիպված կլինեն հրաժարվել: Դրա համար էլ հրատապ է եթե ոչ բովանդակային, ապա գոնե ձևի առումով նոր ստվերային կազմավորումների ստեղծումը: Իսկ եթե հրատապ է, ապա վաղ թե ուշ դրանք ստեղծվելու են:

Սակայն այսօր արդեն կարելի է կանխագուշակել նման ստվերային նոր կազմավորումների հիմնական գծերը: Իսկապես, հումքի հետազոտված պաշարների սպառման, աշխարհում էկոլոգիական և ջրային պրոբլեմների սրման, բնակչության աճի պայմաններում օբյեկտիվորեն ուժեղանում է պետության և միջազգային կազմակերպությունների պլանավորող ու կարգավորող դերը, կարևորվում է խիստ կենտրոնացված պլանավորման և սահմանափակ ռեսուրսների կառավարման նպատակահարմարությունը: Այս առնչությամբ, համաշխարհային տնտեսության «մութ նյութի» նոր ձևերը հարկադրված կլինեն ինտեգրվել պետական կառույցներին: Ընդ որում՝ տրամաբանական է թվում, որ առաջին հերթին նման կազմավորումներ պետք է առաջանան զարգացող երկրներում, որոնցում առավել սրված են սոցիալ-տնտեսական բոլոր հիմնական խնդիրները:

Հավանաբար, ներկա պահին մենք այդ նոր ստվերային ձևերի կազմավորման սկզբնական փուլի ականատեսն ենք: Ռուսաստանում դրանք ստացել են «պետկորպորացիաներ» հպարտ անվանումը: Ենթադրվում է, որ պետկորպորացիաները նախարարությունների նման մի բան են լինելու, բայց սովորական ֆինանսական մարմինների կողմից չվերահսկվող ֆինանսական միջոցների օգտագործման զգալիորեն ավելի ազատ սխեմաներով:

Սկզբնապես «պետկորպորացիաներ» հասկացության մեջ բոլորովին այլ իմաստ էր դրվում: Ենթադրվում էր, որ դրանք պետք է նախատեսված լինեն արտաքին շուկաներում հայրենական բիզնեսի պաշտպանության համար:

Ինկապես, մի շարք օբյեկտիվ պատճառներով Ռուսաստանում բազմաթիվ ապրանքների արտադրությունը կապված է աշխատանքի ու էներգիայի ավելի մեծ ծախսի հետ, քան Եվրոպայի ու Ասիայի շատ այլ երկրներում: Ուստի, համաշխարհային շուկայում ռուսական արտադրանքն ավելի պակաս մրցունակ կլինի, հատկապես եթե դրա ռուսական արտադրողները մրցակցեն նաև միմյանց միջև:

Սկզբում մտածում էին, որ պետկորպորացիաները կլինեն կառույցներ, որոնք կբացառեն ռուսական արտադրողների արտաքին մրցակցությունը և կնպաստեն ռուսական բիզնեսի զարգացմանը՝ որպես ինքնատիպ անցում տնտեսության՝ տարբեր պայմաններում գտնվող բնագավառների միջև. ռուսականի՝ մի կողմից և եվրոպականի կամ ասիականի՝ մյուս կողմից: Այսինքն՝ ենթադրվում էր ներկայիս Գազպրոմի կամ Ռոսօբորոնէքսպորտի բարելավված մի ինչ-որ տարբերակ: Բայց ռուսական ներքին շուկայում ապրանքարտադրողների միջև ուժեղ մրցակցային միջավայրի ստեղծման անհրաժեշտ պայմանի պարագայում: Դրա համար առաջարկվում էր ստեղծել ռազմավարական հումքի ու ապրանքների առնտրի հատուկ բորսա ռուբլով (ապրանքային հատված), արտարժույթով (արժութային հատված) և ածանցյալ ֆինանսական գործիքներով (ժամկետային շուկա): Դրանում կարող էին հսպառ վաճառվել արտահանվող ապրանքները և վաճառվել ներմուծվող հումքն ու ապրանքները: Պետկորպորացիաներին այս պարագայում հատկացվում էր ձեռք բերվող ծառայությունների ու արտաքին շուկաներում ռուսական արտադրանքի առաջմղման հայտերը ձևակերպողի դերը: Այլ կերպ ասած՝ պետկորպորացիաներին հատկացվում էր պլանային ու շուկայական տնտեսական մեխանիզմների առավելությունները համատեղողի կարևոր դերը:

Մոտ ժամանակներս Ռուսաստանում վերջնականապես կձևավորվեն մի քանի տասնյակ պետկորպորացիաներ *(Նկ. 5):*

Բայց մեր երկիրը, ցավոք, այնպես է կառուցված, որ նրանում օգտակար շատ մտահղացումներ իրենց հակադրությանը վերածվելու առանձնահատկությունն ունեն: Դրանից խուսափել չկարողացան նաև պետկորպորացիաները: Այժմ դրանք աստիճանաբար վերածվում են ինքնատիպ ներքին օֆշորների, վոտչինաների, որոնք վերահսկվում են բարձրագույն իշխանությանը մոտ կանգնած մարդկանց կողմից: Դրանցից շատերի նպատակներն ու խնդիրները հիմնականում դեկլարատիվ կամ ընդհանրապես ֆիկտիվ են: Իզուր չէ, որ լայն տարածում է ստացել «Եթե չգիտես ինչ անես, պետկորպորացիա ստեղծիր» ասացվածքը: Պատահական չէ, որ ռուսաստանյան պետկորպորացիաների մեծամասնությունը կազմավորվել է խորհրդարանական ու նախագահական ընտրություններից առաջ: Ամենայն հավանականությամբ, թաքնվելով սոցիալական բարձրարժեք նպատակների հետևում՝ հասարակական վերահսկողության տակ գտնվող ֆինանսական մեծ միջոցներ կհանվեն ու կտարվեն պետկորպորացիաներ:

Նկ. 5


ԷՆԵՐԳԵՏԻԿ ԿՈՐՊՈՐԱՑԻԱՆԵՐ
«Գազպրոմ» ԲԲԸ - 4693 մլրդ ռ.
«Ռոսնեֆթ» - 797 մլրդ ռ.
Ատոմէներգապրոմ
ԲԱՐՁՐՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՈՐՊՈՐԱՑԻԱՆԵՐ
Ռուստեխնոլոգիաներ
«Ռոսնանոտեխ» պետկորպորացիա 130 մլրդ ռ.
«Ռուսաերոնավիգացիա»
«Էներգիա» ՀՏԿ
Ռուսսպեցստալ
«Ստանկոիմպորտ»
Պետկորպորացիաներ
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԵՏԿՈՐՊՈՐԱՑԻԱՆԵՐ
«Տրանսնավթ»
«Մորֆլոտ» -130 մլրդ ռ.
Միավորված նավաշինական կորպորացիա
Միավորված ավիացիոն կորպորացիա
AirUnion
«Ռուսական ավտոմայրուղիներ»
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՊԵՏԿՈՐՊՈՐԱՑԻԱՆԵՐ
ԲԿՏ պետկորպորացիա 240 մլրդ ռ.
Պետական շինարարական կորպորացիա
«Օլիմպշին» պետկորպորացիա
ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ
Կայունացնող ֆոնդ (Պահուստային ֆոնդ, Ազգային բարեկեցության ֆոնդ)
Կենսաթոշակային ֆոնդ
ՎՏԲ
Զարգացման բանկ
Ավանդների ապահովագրման գործակալություն
Պետներդրումային ֆոնդ

Այսինքն՝ ձևավորվում է պետության կողմից հովանավորվող ստվերային տնտեսության նոր տեսակ, նոր «մութ նյութ»՝ հեջ-ֆոնդերի ավելի վատ տեսակն ու նմանակը:

Թվում էր, թե նման կառույցներ ստեղծելուց առաջ նպատակահարմար կլիներ օրենսդրորեն ամրագրել դրանց իրավունքներն ու պարտականությունները, փոխգործակցության պայմաններն արդեն ստեղծված համանման կառույցների, ֆինանսական համակարգի տարրերի ու իշխանության մարմինների հետ: Այլ կերպ ասած՝ անհրաժեշտ էր ընդունել համապատասխան դաշնային օրենքներ: Բայց ոչ մի նման բան տեղի չունեցավ: Պետական դուման յուրաքանչյուր նիստի շարունակում է քննարկել և ընդունել տասնյակ, եթե ոչ հարյուրավոր երկրորդական օրենքներ (մեղվաբուծության, սեռական փոքրամասնությունների, ավտոքաղաքացուհու, ռուսերենի մաքրության, Հաղթանակի դրոշի և այլնի մասին), այնինչ մինչ օրս չկան օրենքներ ընդերքի, նախագահի, կոռուպցիային հակազդելու, պետկորպորացիաների մասին օրենքներ: Ուստի, երկիրը շարունակում է ապրել հիմնականում ոչ թե օրենքներով, այլ հասկացողություններով:

Այս առնչությամբ, լավատեսները կարծում են, թե ռուսական նոր հայտնագործությունը՝ պետկորպորացիաները, ինչպես «Պոզերն ու կոտոշները», կգրավեն իրենց արժանի տեղը նաև այլ երկրներում, ապագա համաշխարհային ֆինանսական համակարգի մութ օբյեկտների ցանկում:

Հոռետեսների կարծիքներն ավելի լավ է տպագիր ձևով չներկայացնել:

4. Ճգնաժամեր ֆոնդային շուկաներում

Վերջին տարիներին ֆոնդային շուկաներում առավել հաճախ են ծագում ու զարգանում ճգնաժամային երևույթներ: Այդ շուկաների իրավիճակային տեխնիկական վերլուծությունների սիրահարները տեղի ունեցող քաոտիկ գործընթացներում փորձում են առանձնացնել մի քանի տասնամյակ առաջ հաստատված հայտնի օրինաչափությունները («Էլիոթի ալիքներ» և այլն): Բայց ամբողջական պատկեր ստանալ չի հաջողվում: Պատճառը պարզ է. այդ օրինաչափությունները հաստատվել են *իրական* ֆոնդային շուկայի համար, որը գործում է *իրական* տնտեսությունում, որտեղ չկա այն խեղաթյուրող «մութ նյութը»:

Եվ կրկին, զուգահեռներ անցկացնելով աստղաֆիզիկայի հետ՝ կարելի է ասել, որ ֆինանսական շուկաների ճգնաժամերը համաշխարհային տնտեսության «մութ էներգիան» են: Իսկ իրենք՝ շուկաները, «մութ նյութի» առկայության դետեկտորն են՝ նման տիեզերական ուժեղ ձգողական ալիքների դետեկտորներին, որ գալիս են խոշոր տիեզերական աղետների վայրից:

Ժամանակակից ֆոնդային շուկաները, ինչպես և 20-րդ դարի կեսերի շուկաները, նույնպես քաոտիկ են, բայց, ի տարբերություն իրական տնտեսու-

թյան, այդ քառսը լավ կազմակերպված է: Արդի պայմաններում ֆոնդային և արժութային շուկաները վերածվել են դոլարի զանգվածի ստերիլացման արդյունավետ միջոցի:

Երևույթի մասշտաբի գնահատման համար բերենք տվյալներ վերջին տարիների ճգնաժամային երևույթների խորության մասին *(Աղյուսակ 4, 5):*

2007թ. համաշխարհային ֆոնդային շուկայում առանձնացան ճգնաժամային երևույթների 3 շրջաններ՝ ձմռան-աշնան, ամռան, աշնան: Դրանցից յուրաքանչյուրին համապատասխանում է *Աղյուսակ 4-ի* երեք սյունակ: Սյունակներում նշված են հիմնական ֆոնդային ինդեքսների վերին և ստորին արժեքները ճգնաժամերի սկզբում և վերջում, ինչպես նաև ինդեքսների մեծությունների (%) փոփոխությունը:

Աղյուսակ 4

Ինդեքս	գարուն 2007		ինդեքսի մեծության փոփոխ.,%	ամառ 2007		ինդեքսի մեծության փոփոխ.,%	աշուն 2007		ինդեքսի մեծության փոփոխ.,%
	սկիզբ	վերջ		սկիզբ	վերջ		սկիզբ	վերջ	
	26.02	**5.03**		**23.07**	**16.08**		**1.11**	**26.11**	
DJIA	12632,3	12050,4	-4,6	13943,4	12845,78	- 7,87	13705,7	12743,4	- 7,02
NASDAQ 100	1830,6	1712,9	-6,43	2036,3	1846,09	-9,34	2219,2	1989,4	- 10,36
FTSE-100	6434,7	6058,7	-5,84	6624,4	5858,9	-11,56	6586,1	6180,5	- 6,16
NIKKEI-225	18215,4	16642,3	-8,64	17963,6	16148,49	-10,1	16870,4	15135,2	- 10,29
HANG SENG	20508	18664,9	-8,99	23365,6	20672,39	-11,57	31492,9	27626,6	- 12,28
PTC	1970,77	1737,71	-10,14	2091,26	1820,3	-12,96	2220,16	2177,07	- 1,94

2008թ. սկզբից բոլոր ֆոնդային շուկաներում նոր մասշտաբային անկում սկսվեց: Չի բացառվում, որ այս հոդվածի գրվելու պահին այն դեռ ավարտված չլինի, բայց առայժմ անկման նվազագույն կետը գրանցվել է 2008թ. փետրվարի 8-ին: Հիմնական ֆոնդային ինդեքսների մեծությունների փոփոխությունները ներկայացված են *Աղյուսակ 5-ում:*

Ինչպես երևում է *Աղյուսակ 4, 5-ից,* 2007թ. յուրաքանչյուր ճգնաժամում հիմնական ֆոնդային ինդեքսների մեծությունների նվազումը կազմել է 7-10%: 2008թ. անկման խորությունը զգալի է՝ 1,5-2 անգամ ավելի: Տպավորությունն այնպիսին է, որ բացասական հետևանքներն աճելու միտում ունեն:

Աղյուսակ 5

Ինդեքս	սկիզբ	վերջ	ինդեքսի մեծության փոփոխ.,%
DJIA	13395,4	12182,1	- 9,96
NASDAQ 100	2111,7	1773,7	- 19,06
FTSE-100	6461,2	5784	- 11,7
NIKKEI-225	15307,78	13017,2	- 17,6
HANG SENG	27370,6	23469,5	- 16,62
PTC	2290,51	1870,93	- 22,43

2007թ. սեպտեմբերի սկզբի դրությամբ համաշխարհային ֆոնդային շուկայի կապիտալացումը գնահատվում էր $170 տրլն: Ուստի, 2007թ. նոյեմբերին ընկերությունների կապիտալացման ընդհանուր կորուստները կազմել են մոտավորապես $10-12 տրլն: 2008թ. կապիտալացման կորուստները գնահատվում են $15-20 տրլն-ի մակարդակում (թեև որոշ փորձագետներ ավելի համեստ գնահատականներ են տալիս՝ $6, 7 տրլն): Այսինքն՝ ցանկացած պարագայում խոսքը վերաբերում է $10 տրլն կարգի մեծությանը:

Այդ գումարների մի մասը ներդրվել է կտրուկ թանկացած անշարժ գույքի, մյուս մասը՝ թանկարժեք մետաղների ու նավթի մեջ: Բայց այդ ակտիվների գների բարձրացումը չի ծածկում ֆոնդային շուկաների ընդհանուր կորուստները:

Ըստ գնահատումների՝ ակտիվների զգալի մասը (մոտավորապես 30-50%-ը) դուրս է բերվել ֆոնդային շուկայից ԱՄՆ Դաշնային պահուստային համակարգի հետ կապված զորշ ու մութ ֆինանսական կառույցների կողմից. բնական է, որ համաշխարհային արժույթի արտադրության ընդհանուր գերակշռության պայմաններում ԱՄՆ-ը ի վիճակի է կառավարել ճգնաժամերի մեծ մասը: Այլ կերպ ասած՝ ընդամենը մի ամսում (վերջին ճգնաժամային երևույթներին բնորոշ տևողություն) հաջողվում է շրջանառությունից դուրս բերել մոտ $3-5 տրլն: Համապատասխանաբար՝ $3-5 տրլն-ով նվազում են ԱՄՆ ֆինանսական համակարգին մնացյալ ողջ աշխարհի ունեցած պարտքային հավակնությունները: Հիշեցնենք, որ ամերիկյան պարտքի ընդհանուր մեծությունը ներկայումս գնահատվում է $40 տրլն: Այնպես որ, ևս նման 8-10 «ճգնաժամ», և 5 տարի անց ամերիկյան պարտքն ինքն իրեն «հետ կքաշվի»: Իսկ դուք ասում եք՝ «Էլիոթի ալիքներ»:

Բայց սա էլ դեռ ամենը չէ: Ֆոնդային շուկան իներցիա ունի: Ուստի, իր դիրքերը միանգամից չի վերականգնում, այլ 3-4 ամիս անց: Հենց այս պարբերականությունն է ի հայտ գալիս ֆոնդային ինդեքսների արդի դինամիկայում:

Դրա համար էլ ճգնաժամային երևույթների առկայության դեպքում դոլարի շրջանառության արագությունը ԱՄՆ-ից դուրս արհեստականորեն դանդաղեցվում է, ինչը նպաստում է դոլարային գների ավելացման տեմպերի նվազմանը և դանդաղեցնում է անվստահության աճը ամերիկյան արժույթի նկատմամբ:

Վերլուծաբանների մեծ մասը վստահ է, որ ֆոնդային շուկայում շոշափելի տատանումները մոտ ապագայում կշարունակվեն, իսկ իրավիճակն ամերիկյան շուկայում դեռ երկար կորոշի համաշխարհային հարթակների դինամիկան:

Եթե 2008թ. ԱՄՆ-ում կրկնվի հիփոթեկային շուկայի հետ կապված պատմությունը, որը տեղի ունեցավ 2007թ. օգոստոսին, ապա հաշվառման տոկոսադրույքների հետագա նվազումը անհնարին կդառնա կամ, ծայրահեղ դեպքում, կհայտնվի դժվարին կացության մեջ: Այդ պայմաններում դոլարը դատապարտվում է հետագա արժեզրկման: Հարցը միայն այն է, թե որքան երկար այն կարժեզրկվի՝ առանց լուրջ հետևանքների համաշխարհային ֆինանսական համակարգի և գլոբալ տնտեսության համար: Դոլարի արժեզրկմանը զուգընթաց՝ աշխարհում թափ կառնի ինֆլյացիան. հումքային բոլոր հիմնական ապրանքները արժևորված են ամերիկյան արժույթով և թանկանում են դրա էժանացման արդյունքում: Միևնույն ժամանակ, ամերիկացիներն օգտագործում են իրենց սիրած ինֆլյացիայի արտահանման եղանակը, երբ իրենց ներքին խնդիրների համար վճարում է մնացյալ աշխարհը:

Վերլուծելով ֆինանսական ճգնաժամերի հետևանքները՝ կարելի է առաջ քաշել 2 այլընտրանք.

- Համաշխարհային տնտեսությունն ընկղմվում է քաոսի վիճակի մեջ. տրամաբանական հարց է ծագում համաշխարհային շուկայական տնտեսության արդյունավետության և դրա գլոբալացման գործընթացի նպատակահարմարության մասին,
- այդ «քաոսն» իրականում ամենևին էլ քաոս չէ, այլ բոլորովին էլ ոչ վատ կազմակերպված միջոցառումների համակարգ. ստացվում է, որ միակ երկիրը, որը կարող է դա անել, ԱՄՆ-ն է. այլ երկրների ֆինանսական հնարավորությունները չեն բավականացնի, իրենց համար շահավետ ձևով վերախմբավորելով ակտիվների կառուցվածքը, մեկ ամսվա ընթացքում համաշխարհային ֆինանսական շուկան սկզբում տապալելու, իսկ այնուհետև՝ վերականգնելու համար:

Ստացվում է, որ ցանկացած պարագայում զարգացած երկրները չեն կարող հույսեր կապել համաշխարհային տնտեսական համակարգի հետ:

Այս առնչությամբ տեղին է մեջբերել *«Ведомости»* թերթի խմբագրությանը հասցեագրված նամակներից մեկում արտահայտված միտքը. «...ԱՄՆ-ը զանազան անզուգակշռությունները վերացնելիս ջրից չոր դուրս գալու հետա-

քրքիր հատկություն ունի: Տուժում են նրանց գործընկերները, ընդ որում՝ դա տեղի է ունենում անկախ անզուգակշռության բնույթից: Օրինակ, 1980-ականներին ԱՄՆ-ը զգալի առևտրային դեֆիցիտ ուներ Գերմանիայի ու Ճապոնիայի հետ: Այն վերացվեց, իսկ Գերմանիայում և Ճապոնիայում ռեցեսիա սկսվեց, ընդ որում՝ Ճապոնիայում՝ 15 տարով: 70-ական թթ. ԱՄՆ-ը վարկային անզուգակշռություն ուներ Լատինական Ամերիկայի հետ՝ հօգուտ իրեն: Դրա վերացումը հանգեցրեց 10-ամյա լճացման Լատինական Ամերիկայում: Այժմ ԱՄՆ-ը ջանադրաբար աշխատում է դուրս գալ հերթական անզուգակշռությունից: Այս հարցում ներկայիս «գործընկերը» Չինաստանն է» [13]:

Քանի որ ներկայումս մյուս երկրների համար ԱՄՀ-ի տիպի համաշխարհային ֆինանսական կառույցների օգնությունը հուսալը պատրանք է, ապա իրադարձությունների նշված զարգացման բնական հակազդեցությունը տարբեր երկրների և երկրների խմբերի ֆինանսական համակարգերի տարածաշրջանային մեկուսիության խորացումն է, այդ թվում և նոր տարածաշրջանային արժույթների՝ ոսկի յուանի, Ծոցի դինարի, ռուսական ռուբլու ներդրումը [14]:

Հետևություն

Եթե աստղերը վառվում են, նշանակում է՝ դա ինչ-որ մեկին պետք է: Եթե համաշխարհային տնտեսությունում և ֆինանսական համակարգում երկար ժամանակ գոյություն ունի նյութական արտադրության և բաշխման իրական համակարգը խեղաթյուրող «մութ նյութը», նշանակում է՝ նման աշխարհակարգը համապատասխանում է ոմանց նպատակներին ու շահերին:

Դժվար չէ հասկանալ, թե ում: Վերջին 20 տարիներին աշխարհում միայն մի երկիր կա, որն ի վիճակի է իր ազգային անվտանգության համար առանց լուրջ հետևանքների ձևախախտել ամբողջ աշխարհակարգը: Դա ԱՄՆ-ն է:

Եվ միանգամայն հասկանալի է, թե ինչու է նա դա անում. ամերիկյան դոլարի էքսպանսիայի համար: Փաստորեն, արդեն 1944-ից ԱՄՆ-ը տպում և աշխարհով մեկ տարածում է ապրանքներով և ծառայություններով չապահովված կանաչ թուղթ: Որ իսկապես այդպես է, փաստացի հաստատվել է ԱՄՆ նախագահ Ռ.Նիքսոնի կողմից, որը 1971թ. օգոստոսի 15-ին «կտրեց» ամերիկյան դոլարի և ոսկու կապը և դրանով իսկ շատ երկրների արժութային ռեզերվները վերածեց կանաչ թղթակույտի:

Բայց ավելորդ դոլարները պարբերաբար նպատակահարմար է դուրս բերել շրջանառությունից (ըստ ամերիկյան տերմինաբանության, որն ընդունված է նաև ռուսաստանյան ֆինանսիստների կողմից, ստերիլիզացնել), այլապես այդ արժույթի նկատմամբ վստահությունը կտրուկ կընկնի, այն կարժեզրկվի և ոչ մեկի կողմից չի ընդունվի:

Մյուս կողմից՝ դոլարի արժեզրկումը շահավետ է ԱՄՆ-ին, քանի որ դա

թույլ կտա լուծել այդ երկրի հսկայական պարտքի խնդիրը, որի մեծությունը, ըստ որոշ գնահատականների, մոտենում է $40 տրիլիոնի: Այսինքն՝ ԱՄՆ-ի առջև բարդ, եռանպատակ խնդիր է դրված. այնպես կազմակերպել իր արժույթի արժեզրկման գործընթացը (1-ին նպատակ), որ այն չդադարի օգտագործվել համաշխարհային ֆինանսական համակարգում (2-րդ նպատակ), իսկ աշխարհում շրջանառվող դոլարները չվերադառնան ամերիկյան տնտեսություն (3-րդ նպատակ): Դա թույլ կտա ԱՄՆ-ին էլի մի որոշ ժամանակ այլ երկրներից դուրս քաշել նյութական ռեսուրսներ՝ թղթի դիմաց:

Այս հիմնախնդիրը բոլորովին էլ հասարակ չէ և հատուկ գործիքների կիրառում է պահանջում. ֆինանսական, դիվանագիտական, ռազմական, ինչպես նաև դրանց համակցում: Իզուր չեն ասում. «Կարծում եք՝ Բուշի համար հե՞շտ է»: Զգացվում է, որ ամերիկյան նախագահին կարեկցողը գիտե՝ ինչի մասին է խոսում: Իզուր չէ, որ ինքն էլ, թիապարտ ստրուկի նման, «թիավարել» է 8 տարի:

Բանն այնտեղ հասավ, որ 2008թ. փետրվարի 10-ին անվտանգության հարցերով հրավիրված ամենամյա կոնֆերանսում ելույթ ունենալով՝ 1-ին փոխվարչապետ Սերգեյ Իվանովն իր զեկույցում հավաստիացրեց ներկաներին, որ Ռուսաստանը «չի ձգտում ամբողջությամբ գնել ողջ «Հին աշխարհը *իր* նավթադոլարներով» (ընդգծումը մերն է) [15]: Այսինքն՝ ռուսական կառավարությունը հարկադրված է արդարանալ, որ որոշ քայլեր է ձեռնարկել հումքի վաճառքի դիմաց ստացած դոլարով ու եվրոյով արևմտյան ակտիվներ ձեռք բերելու համար: Եթե իրերն իրենց անուններով կոչենք, ապա այդ նախադասությամբ, փաստորեն, ընդունվում է համաշխարհային տնտեսության հռչակվող գլոբալացման գործընթացի ավարտը և դրա իսկական դերը: Այդ նախադասությունը բնութագրում է նաև Ռուսաստանի կառավարության՝ կարևոր ռազմավարական որոշումներ ընդունելու ինքնուրույնության իրական աստիճանը:

Համաշխարհային տնտեսական հարթությունում ավելորդ դոլարային զանգվածի ստերիլիզացման համար ստեղծվում և տեղաբաշխվում է «մութ նյութը» (զարգացած շուկայական տնտեսությամբ երկրներում դրանք հեջ-ֆոնդերն են, կառավարվող վարչակարգեր ունեցող երկրներում՝ ԱՄՆ-ին ենթակա սուվերեն ֆոնդերը), պարբերաբար ծավալուն ճգնաժամեր են սարքվում ֆոնդային շուկաներում:

Աստղաֆիզիկայում գոյություն ունի նյութի կրիտիկական խտության հասկացությունը: Եթե իրի և էներգիայի իրական խտությունը ցածր լինի կրիտիկականից, ապա իրավիճակն, ի վերջո, կկայունանա: Բայց եթե նյութի խտությունը բարձր է լինում կրիտիկականից, ապա որոշ ժամանակ անց Տիեզերքը կսկսի անդառնալիորեն սեղմվել, և ամեն ինչ կավարտվի նոր Մեծ պայթյունով՝ գլոբալ աղետով:

Նման ինչ-որ մի բան էլ տեղի է ունենում համաշխարհային տնտեսությունում: Ընդ որում՝ գործընթացը կարծես արդեն անդառնալի տեսք է ընդունել. «մութ նյութի» քանակությունն արդեն գերազանցել է կրիտիկական մակարդակը: Սրա վկայությունն է ԱՄՆ արտաքին քաղաքականության կիրառած գործիքների ցանկի ընդլայնումը, որը, այլ երկրների թողտվությամբ, էլ ավելի անվիճարկելի է դառնում: Այլ գործիքների կիրառումը ցույց է տալիս, որ ավանդական սխեմաներն այլևս չեն գործում:

Ավելի նկատելի է դառնում գործընկեր-մրցակիցների համար լրացուցիչ հիմնախնդիրներ ստեղծելու ԱՄՆ ցանկությունը, հիմնախնդիրներ, որոնք կհեշտացնեին դոլարի տարածումն ու շրջանառությունն աշխարհով մեկ. պատերազմներն Իրաքում, Իրանի շուրջ լարվածության թեժացումը, հերոինի արտադրության համաշխարհային առաջատար դարձած (որի պատճառով թմրադեղից կախվածության մեջ է հայտնվել Եվրոպայի ու Ասիայի կեսը) Աֆղանստանի օկուպացիան: Եվ վերջապես, իրավիճակը Կոսովոյի ու Սերբիայի շուրջ, որը ռումբ է Եվրոպայի ու Ասիայի տասնյակ երկրների պետական կարգավորման տակ:

Միայն չափից ավելի միամիտ մարդը կարող է չտեսնել, որ ամերիկյան դոլարի հետ կապված հիմնախնդիրները՝ ածխաջրածինների և ուրանի նվազող պաշարների ֆոնին, ԱՄՆ արտաքին քաղաքականության ագրեսիվությունը նույն շղթայի օղակներն են: Մենք չենք ուզում վախեցնել որևէ մեկին, բայց, մեր կարծիքով, համաշխարհային տնտեսության և ֆինանսական համակարգի զարգացման արդի միտումները, ԱՄՆ ռազմական ներուժի կտրուկ աճի և միջազգային վերահսկողության գործուն համակարգի բացակայության ֆոնին, լի են նոր համաշխարհային պատերազմի վտանգով: Համենայնդեպս, նախորդ համաշխարհային պատերազմները շատ բանով պայմանավորված էին համաշխարհային ֆինանսական համակարգի թերություններով:

Պատերազմը կանխելու համար պահանջվում է ՄԱԿ և մի շարք այլ միջազգային կազմակերպությունների արդիականացում, քանի որ տնտեսական անվտանգության կարևոր հիմնախնդիրները ոչ թե առանձին երկրների կամ նույնիսկ տարածաշրջանների, այլ ընդհանրապես ամբողջ աշխարհի խնդիրն են:

Մենք հասկանում ենք, որ հիասթափեցնում ենք այն ընթերցողներին, ովքեր կցանկանային սույն հոդվածը կարդալով՝ հստակ հանձնարարականներ տեսնել իրենց կամ իրենց ընկերության համար: Բայց հիվանդությունը շատ լուրջ է և խիստ բարձիթողի վիճակում. նույնիսկ ողջ երկրի կամ անգամ երկրների խմբի ներուժը կարող է չբավականացնել այն լուծելու համար:

Փետրվար, 2008թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Кокшаров А.,* «На этот раз не подвели», М., «Эксперт» № 7(596), от 18-24 февраля 2008.
2. http://ru.wikipedia.org/wiki/%D0%A5%D0%B5%D0%B4%D0%B6-%D1%84%D0%BE%D0%BD%D0%B4
3. *Миронов Е.,* «Хедж-фонды: кошмар нашего времени или нормальные инвесторы?», М., Информационный бюллетень «Консультации на фондовом рынке», 2000.
4. «Летучие голландцы налоговых оффшоров», «Российская газета» № 453 от 30.03.2004.
5. *Мартыненко В.А.,* Хедж фонды – потенциальная опасность для развивающихся экономик, http://www.newforum.stockportal.ru/main/invest/world/hedge/hf_danger?print=yes
6. *Хмыз О.В.,* «Особенности работы хеджиевых фондов во время кризисов на формирующихся рынках», М., «Управление рисками» №1 2006, с. 47-54.
7. Онлайновый информационный портал HedgeCo.Net
8. «Хедж-фонды - корабли-призраки в «налоговых гаванях», http://www.k2kapital.com/analytics/investment_funds/detail.php?&BID=6&ID=93613&nav_page_6=1&to_date=23.11.2006
9. *Угодников К.,* «Нежелательные инвестиции», http://www.karavan.ru/Paper2007.nsf/Article/Itogi_2007_09_16_01_5905.html
10. «Коммерсантъ» № 165(3741), 12 сентября 2007.
11. Данные компаний Bloomberg, РИА РБК, 6 марта 2008.
12. Американская ипотека угрожает российским деньгам, http://www.pron.ru/readarticle.php?article_id=166
13. «Ведомости» № 29 (2051) от 18 февраля 2008.
14. http://www.polit.nnov.ru/2008/01/15/multigcconsens/
15. http://www.vesti.ru/doc.html?id=162307

ТЕМНАЯ МАТЕРИЯ МИРОВОЙ ЭКОНОМИКИ

Сергей Гриняев, Александр Фомин

Резюме

Если в мировой экономике и финансовой системе длительное время существует «темная материя», искажающая реальную систему материального производства и распределения, значит, такой мировой порядок соответствует чьим-то целям и интересам.

Нетрудно понять – чьим именно. Последние 20 лет в мире существует только одна страна, способная без серьезных последствий для своей национальной безопасности деформировать все мироустройство. Эта страна – США. И совершенно понятно, для чего она это делает – для экспансии американского доллара. Фактически, уже с 1944г. США печатают и распространяют по всему миру необеспеченную товарами и услугами зеленую бумагу. Но лишние доллары периодически целесообразно выводить из обращения, иначе произойдет резкая потеря доверия к этой валюте, она обесценится и не будет никем восприниматься. С другой стороны, обесценивание доллара выгодно для США, т.к. это позволит решить проблему огромного долга этой страны. Перед США стоит сложная трехцелевая задача – так организовать процесс обесценивания своей валюты (1-я цель), чтобы она не перестала использоваться в мировой финансовой системе (2-цель), а обращающиеся в мире доллары не вернулись в американскую экономику (3-я цель). Это позволит США еще некоторое время выкачивать из других стран материальные ресурсы в обмен на бумагу. Для стерилизации лишней долларовой массы по всему мировому экономическому пространству создается и распределяется «темная материя»: в странах с развитой рыночной экономикой – хедж-фонды, в странах с управляемыми режимами – подконтрольные США суверенные фонды, периодически устраиваются масштабные кризисы на фондовых рынках.

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՐԵՆԴԸ ԵՎ ԴՐԱ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Վարդան Աթոյան, Կարեն Բաբաջանյան

Հոդվածը ներկայացնում է բրենդի էությունը, քննարկվում են պետության բրենդի ձևավորման ընթացքում առաջ եկող հիմնախնդիրները, ինչպես նաև ներկայացվում է միջոցառումների համալիր, որի իրագործումը հնարավորություն է ընձեռում բարձրացնել պետության վարկանիշը: Այդ միջոցառումները և առաջարկությունները հիմնված են միջազգային առաջադեմ փորձի վրա, որոնք կիրառության դեպքում կարող են մեծապես օգտակար լինել Հայաստանի Հանրապետության դիրքավորման ռազմավարությունը մշակելիս: Հոդվածն անդրադառնում է նաև Հայաստանի Հանրապետության համար հույժ կարևոր այնպիսի խնդիրների, ինչպիսիք են պետության հեղինակությունը, երկրի ներդրումային գրավչությունը, զբոսաշրջության զարգացումը, արտահանվող ապրանքների որակը և արտերկրում դրանց իրացվելիության բարձրացմանն ուղղված միջոցառումների անցկացման անհրաժեշտությունը:

Պետության բրենդի ձևավորումը ռազմավարական նշանակություն ունեցող գործընթաց է ցանկացած պետության համար: Արտաքին տնտեսական քաղաքականության արդյունավետությունը և տնտեսական աճի դինամիկ զարգացումը մեծապես կախված է արտաքին շուկայում տվյալ երկրի առկա հեղինակությունից: Նախ և առաջ, փորձենք հակիրճ ներկայացնել, թե ինչ է բրենդը և ինչով է այն առանձնանում սովորական անվանումից:

Նշենք, որ բրենդ կարող է լինել ցանկացած անվանում, օրինակ՝ *«FedEX», «Porsche», «Marlboro»,* «Նյու Յորք», «Ճապոնիա», «Մոցարտ» և այլն: Այսինքն՝ ցանկացած անուն, անվանում, ապրանքանիշ, որը համապատասխան լսարանի մոտ զուգորդվում է մի շարք դրական հատկանիշներով: Այլ կերպ ասած՝ *բրենդը կարելի է սահմանել որպես հույզերի, զգացմունքների ամբողջություն:*

Եթե փորձենք սահմանազատել բրենդը և ապրանքանիշը, ապա պետք է ընդգծել, որ ապրանքանիշն իրավական կատեգորիա է, իսկ բրենդը ապրանքի, այսպես ասած՝ ինտելեկտուալ հատվածն է: Այն գոյություն ունի միայն սպառողների ենթագիտակցության մեջ: Հատկանշական է, որ որոշ երկրնե-

րում բրենդի արժեքը ներառվում է ընկերության հաշվապահական հաշվեկշռում՝ որպես նյութական ակտիվ (օրինակ՝ Մեծ Բրիտանիայում), որը հաճախ ավելի բարձր է գնահատվում, քան տվյալ կազմակերպության արտադրական ողջ կարողություններն իրար գումարած: Այսպես՝ *«Phillip Morris»* ընկերությունը ձեռք է բերել *«Kraft Food»* ապրանքանիշը $13 մլրդ-ով, որը 600%-ով ավելի է, քան նրա հաշվեկշռային արժեքը, *«Grand Metropolitan»* ընկերությունը գնել է «*Pillsbury»* ապրանքանիշը, որը $5,5 մլրդ-ով ավելի թանկ է, քան դրա սեփականատեր ընկերության արժեքը [1]:

Մեր կարծիքով, պետության բրենդի ձևավորմանը նպաստող քաղաքականությունը մշակելիս պետք է ուսումնասիրել մի քանի հանգամանք: Բերենք մի քանի օրինակ. այսպես՝ Փարիզ ասելով, նախ և առաջ, հասկանում ենք նորաձևություն, ռոմանտիզմ, Նյու Յորքի դեպքում՝ բիզնես, էներգիա, Վաշինգտոն՝ ուժ, հզորություն, Տոկիո՝ ժամանակակից, առաջավոր տեխնոլոգիա, Եգիպտոս՝ հին մշակույթ, Հռոմ՝ հիասքանչ դասական ճարտարապետություն, Ռիո դե Ժանեյրո՝ տոնախմբություն, Գերմանիա՝ հուսալիություն, ճշտապահություն և այլն:

Ներկայիս համաշխարհային համընդհանրացման գործընթացներում աշխարհի տարբեր պետություններ, քաղաքներ, ընկերություններ հաճախ բացահայտ, երբեմն՝ աներևույթ մրցակցում են միմյանց հետ՝ զբոսաշրջիկների, տեղական և արտասահմանյան ներդրողների, սպառողների ուշադրությունը գրավելու ու տնտեսության մեջ հավելյալ գումարներ ներգրավելու նպատակով: Այդ մրցապայքարում, մեր համոզմամբ, հաղթում են նրանք, ովքեր կարողանում են լավագույնս ճիշտ դիրքավորվել համաշխարհային շուկայում, այդ թվում՝ վարելով արդյունավետ տարածաշրջանային մարքեթինգային քաղաքականություն: Այդ տեսանկյունից չափազանց արժեքավոր է բրիտանացի գիտնական Սայմոն Անհոլտի և մարքեթինգային հետազոտությունների արդյունքների մշակմամբ զբաղվող ամերիկյան *«Global Market Insite» (GMI)* կազմակերպության իրականացրած ուսումնասիրությունը, որի արդյունքում նրանք փորձել են գնահատել 35 զարգացած և զարգացող պետությունների վարկանիշներ և գումարային տեսքով ներկայացնել դրանց բրենդի արժեքը: Այսպես, օրինակ՝ Ռուսաստանի բրենդը, այդ գնահատման համաձայն, արժե շուրջ $663 մլրդ [2]:

Վարկանիշը գնահատելու համար նրանք օգտագործել են 6 հիմնական ցուցիչներ.

- գրավչություն զբոսաշրջության տեսանկյունից,
- մարդկային կապիտալ,
- արտահանվող ապրանքների որակ,
- գրավչություն մշակութային առումով,

- կառավարության կողմից տարվող քաղաքականության արդարության աստիճանը,
- պետության՝ որպես բնակության հիմնական վայրի, գրավչությունը:

Հարցմանը մասնակցել է ավելի քան 25 հազար մարդ, որոնց միջոցով հետազոտողները կազմել են ազգային բրենդերի վարկանիշը, այնուհետև *«Brand Finance» (BF)* ընկերությունը յուրաքանչյուր բրենդին տվել է գումարային տեսք: Պետք է նշել, որ նրանց գնահատմամբ՝ յուրաքանչյուր պետության բրենդի արժեքը կազմում է տվյալ պետության ՀՆԱ-ի 2-10%-ը, իսկ տոկոսների միջև տարբերությունը մեկնաբանվում է երկրի ընդհանուր զարգացածության մակարդակով, սակայն վերջնական արժեքը ձևավորվում է ՀՆԱ-ի հինգ տարիների գումարով, որը հաշվարկվել է դրամական միջոցների ներկա արժեքով:

Չնայած այն հանգամանքին, որ գոյություն ունեն բրենդի գնահատման մի շարք մեթոդներ, այնուամենայնիվ, վերջինիս գնահատումը բավական աշխատատար և ժամանակատար գործընթաց է, որի արդյունքում, սակայն, լինում են որոշակի շեղումներ: Այդ մեթոդներն օգտագործվում են հիմնականում առևտրային ապրանքանիշների վարկանիշը գնահատելու համար, իսկ պետության բրենդի թե՛ վարկանիշային, թե՛ գումարային գնահատումը մեզանում նորություն է, և այն պետք է դառնա առանձնահատուկ ուսումնասիրության առարկա, սակայն, այնուամենայնիվ, պետք է նշել, որ, մեր դիտարկմամբ, պետության բրենդի արժեքի ձևավորման վրա մեծապես անդրադառնում է նաև տվյալ պետության տարածքում գործող ընկերությունների, կազմակերպությունների, ձեռնարկությունների բրենդերի արժեքի համագումարը:

Ստորև ներկայացված աղյուսակում արտացոլված է պետությունների բրենդերի առաջին տասնյակը՝ 2006թ. երրորդ եռամսյակի արդյունքներով [3].

1.	Մեծ Բրիտանիա
2.	Գերմանիա
3.	Իտալիա
4.	Կանադա
5.	Շվեյցարիա
6.	Ֆրանսիա
7.	Շվեդիա
8.	Ճապոնիա
9.	ԱՄՆ
10.	Ավստրալիա

Կազմակերպությունների միջև տեղի ունեցող մրցակցության և մարքեթինգային համալիր միջոցառումների հիմքում գործող օրինաչափությունները գրեթե նույնությամբ կիրառելի են պետության մարքեթինգային քաղաքականությունը մշակելիս: Ահա այս համատեքստում, մեր դիտարկմամբ, անհրաժեշտ է մշակել Հայաստանի Հանրապետության երկարաժամկետ մարքեթինգային ռազմավարության հայեցակարգ, որտեղ առանձին բաժին հատկացված կլինի բրենդինգին: Այս խնդրի կարևորությունը, արդիականությունը և կյանքի կոչելու հրատապությունն առավել ցայտուն արտահայտվում է անցումային տնտեսություն ունեցող երկրներում, որտեղ դեռ նոր ձևավորվում և կայացման ճանապարհին են գտնվում ազատ շուկայական տնտեսությանը բնորոշ ինստիտուտները:

Մեր համոզմամբ, Հայաստանի Հանրապետության բրենդի ձևավորմանն ուղղված քաղաքականությունը դրական ազդեցություն կունենա, նախ և առաջ, Հայաստանի Հանրապետության ներդրումային գրավչության բարձրացման և զբոսաշրջության զարգացման համար: Խնդրի հրատապությունը պայմանավորված է նաև նրանով, որ պետության բրենդի ձևավորմանն ուղղված հստակ համակարգված, մշակված պետական քաղաքականությունը չափազանց դրական է տվյալ պետության համար, մասնավորապես՝ միջազգային շուկայում ճիշտ դիրքավորման առումով:

Այսօր ցանկացած երկիր ներկայանում է իր լսելի և տեսանելի բաղկացուցիչներով, այդ թվում՝ զինանշան, դրոշ, օրհներգ, սակայն, ինչպես նշում է Մարտին Լինդստրոմը, բրենդը ձևավորվում է ոչ միայն մարդու լսողական և տեսողական զգայարանների միջոցով, այլ նաև՝ համային, հոտային և շոշափելիքի զգայարանների օգնությամբ:

Մարքեթինգի մասնագետները հիմնականում գործում են բրենդինգի երկտարածական աշխարհում և շատ հաճախ անտեսում են մարդու հինգ զգայարանների վրա ազդելու կարևորությունը: Չէ՞ որ մենք շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվությունը ստանում ենք մեր զգայարանների միջոցով: Այսօր գովազդի օգնությամբ հնարավոր է ազդել միայն լսողական և տեսողական զգայարանների վրա, սակայն մնացյալ զգայարանները մնում են չօգտագործված: Այսպես՝ աշխարհի բոլոր խոշոր քաղաքների մասնագիտացված վաճառակետերից անուշաբույր հոտ է բուրում: Այդ գործելաոճը որդեգրել են նաև այլ ոլորտներում մասնագիտացված ընկերությունները, մասնավորապես՝ ավտոմոբիլաշինության տիտաններ, ինչպիսիք են *«BMW»-ն, «Rolls-Royce»-ը, «VW»-ն, «Mercedes-benz»-ը,* ունեն իրենց ֆիրմային բույրը, որը բուրում է ավտոմեքենաների սրահներից, *«Singapore Airlines»* ընկերությունը դարձավ միակն իր տեսակի մեջ, որի ինքնաթիռների սրահներից բուրում է այդ կազմակերպության ֆիրմային բույրը: Ահա նմանատիպ միջոցառումնե-

րով է նաև պայմանավորված վերազգային բրենդերի հաջողությունը: Այս և այլ մարքեթինգային գործիքների կիրառությունը կարող է մեծապես ազդել թե´ Հայաստանի և թե´ Հայաստանն արտերկրում ներկայացնող ընկերությունների հաջողության վրա:

Աշխարհի զարգացած պետություններն ուժեղ են իրենց տնտեսվարող սուբյեկտներով: Առանց վերջիններիս կատարելագործման հնարավոր չէ պետության բրենդ ստեղծել: Օրինակ, շվեյցարական կազմակերպություններն առաջատար տեղեր են զբաղեցնում բարձրորակ ժամացույցների, դանակների, պանրի և շոկոլադի շուկաներում: Ամբողջ աշխարհին հայտնի են նաև շվեյցարական բանկային համակարգի հուսալիությունը և հաճախորդների սպասարկման բարձր մակարդակը: Այստեղ պետք է նշել, որ շվեյցարական բանկերն իրենց անհատական բրենդերի ձևավորմամբ սկսել են զբաղվել դեռևս XIXդ. կեսերից, որի ընթացքում առավելագույնս օգտագործել են կարմիր գույնը: Այսօր կարմիր և սպիտակ գույները դարձել են Շվեյցարիայի խորհրդանիշը, կարելի է ասել նաև` հոմանիշը, ինչը վկայում է, որ այս երկիրն ունի հստակ մշակված մարքեթինգային ռազմավարություն:

Բացի վերը նշվածներից, կան նաև պետությունների և քաղաքների ընդունված խորհրդանիշներ, կարգախոսներ, որոնք ճանաչելի են շատերին: Բերենք պետությունների կարգախոսների մի քանի օրինակ.

- ԱՄՆ – *American Dream* - Ամերիկյան երազանք,
- Մեծ Բրիտանիա - *Cool Britannia* - զով Բրիտանիա,
- Իտալիա - *Dolce Vita* – քաղցր կյանք,
- Գերմանիա - *Vorsprung durch Technik* – առաջընթաց տեխնոլոգիայի միջոցով,
- Շվեյցարիա - *Keeping Privacy* – անձնական գաղտնիքի պահպանություն:

Խոշոր, տնտեսապես հզոր և զարգացած երկրները վաղուց արդեն ստեղծել են ներքին ու արտաքին սպառման համար նախատեսված և իրենց պետությունը բնութագրող խորհրդանիշներ, կարգախոսներ, իսկ շատերն էլ, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետությունը, դեռ նոր են փորձում որոշ քայլեր կատարել այդ բնագավառում:

Այսօր մի շարք երկրներ պետության առաջմղման համար, մասնավորապես` գովազդային արշավի իրականացում կամ գովազդի ավանդական և ոչ ավանդական մեթոդների կիրառում, *ATL, BTL,* ծախսում են ահռելի գումարներ, որոնք սովորաբար բաշխվում են գովազդային գործակալությունների, խորհրդատվական ընկերությունների և հասարակության հետ կապերի համար պատասխանատու մասնագետների միջև: Այսպես` Սինգապուրը տարեկան ծախսում է շուրջ $60 մլն, Մալայզիան` $150 մլն, Լոնդոնը 2003-2004թթ. այդ նպատակների համար ծախսել է շուրջ $40 մլն [4]: Ռուսաստանն աշխար-

հում իր վարկանիշի բարելավման համար 2007թ. պետական բյուջեից ծախսել է շուրջ $5 մլն, նույն նպատակով ԱՄՆ-ը իր բյուջեից տարեկան ծախսում է շուրջ $1 մլրդ [5]:

Հատկանշական է, որ գովազդային ծախսերը չեն ենթադրում պետության բրենդի ձևավորում այն դեպքում, եթե բացակայում է գովազդի արդյունավետության գնահատման մեթոդներից որևիցե մեկը: Այսօր մարքեթինգային հետազոտությունները հուշում են, որ գովազդը դիրքերն աստիճանաբար զիջում է *PR-ին* ՝ հասարակության հետ կապերին, ընդ որում՝ չնայած ուսումնասիրություններից պարզ է դառնում, որ սպառողների ճնշող մեծամասնությունը չի հավատում գովազդին, սակայն, այնուամենայնիվ, այն առ այսօր շարունակում է մնալ տեղեկատվությունը սպառողին հասցնելու լավագույն մարքեթինգային գործիքներից մեկը: Ընդունելով այս իրողությունը՝ մի շարք հեղինակավոր մասնագետներ գտնում են, որ ժամանակակից տնտեսական աշխարհում գովազդի միջոցով բրենդ չեն ձևավորում, այն ձևավորվում է հասարակության հետ կապերի միջոցով, իսկ գովազդը կատարում է մեկ ուրիշ գործառույթ, այն է՝ արդեն իսկ ձևավորված բրենդի պահպանում:

Պետության բրենդի ձևավորման անհրաժեշտությունն առավել պատկերավոր ներկայացնելու համար պարզապես հիշենք, թե ինչպես են մարդիկ ցանկանում գնել գերմանական ավտոմեքենաներ, ճապոնական տեխնիկա, ֆրանսիական մոդայիկ հագուստ, չեխական գարեջուր, շվեյցարական ժամացույց և այլն: Այս համատեքստում նշենք Հայաստանին վերաբերող մի քանի դրական գործընթացներ, մասնավորապես՝

ա) աշխարհով մեկ հեռարձակվող *CNN* հեղինակավոր հեռուստաալիքով Հայաստանի մասին պատմող գովազդային հոլովակը, որը միտված է Հայաստանում զբոսաշրջության զարգացմանը և որը, բնականաբար, իր նպաստն ունեցավ Հայաստանի միջազգային ճանաչման և մեր պետության բրենդի ձևավորման գործում,

բ) վերջին տարիներին ավանդույթ են դարձել արտերկրում, մասնավորապես՝ Ռուսաստանում, Ֆրանսիայում անցկացվող մշակութային միջոցառումները՝ Հայաստանի օրեր, Հայաստանի տարի և այլն, որոնք նույնպես չափազանց դրական ազդեցություն են ունենում «Հայաստան» բրենդի ձևավորման համար,

գ) վերջին տարիներին «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի արդիականացմանն ուղղված աշխատանքները, մասնավորապես՝ կարելի է նշել ժամանման սրահի միջազգային չափանիշներին համապատասխանեցնելը: Սա նաև շատ կարևոր է այն առումով, որ զբոսաշրջիկը երկրի մասին առաջին տպավորությունը ստանում է հենց օդանավակայանում:

Այսօր, Հայաստանի Հանրապետությունն աշխարհին ներկայանալու խնդիր ունի և այս համատեքստում պետք է քննարկել, թե ինչով է այսօր հայտնի մեր հանրապետությունն արտերկրում, ինչպես և հատկապես ինչով պետք է ներկայանա աշխարհին, որպեսզի հնարավորություններ ստեղծվեն համաշխարհային շուկայում առավել արդյունավետ դիրքավորվելու և սպառողների ու ներդրողների համար գրավիչ լինելու նպատակով: Նշենք, որ նույնիսկ առանց խոր ուսումնասիրման կարող ենք փաստել, որ Հայաստանը և հայերին այսօր աշխարհում ճանաչում են առավելապես որպես ցեղասպանություն վերապրած, 1988թ. աղետալի երկրաշարժի ենթարկված և հարևան Ադրբեջանի հետ հակամարտության մեջ գտնվող պետություն: Այդ համատեքստում չափազանց դրական պետք է գնահատել 2001թ. Հայաստանում անցկացված միջոցառումների շարքը՝ նվիրված Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակին, որոնք, անկասկած, դրական անդրադարձան պետության վարկանիշի վրա:

Ցանկացած պետության վարկանիշը մեծապես պայմանավորված է նաև տվյալ երկրում զբոսաշրջության ոլորտի զարգացման մակարդակով, որի համար, բնականաբար, անհրաժեշտ են համապատասխան ենթակառուցվածքներ: Այս համատեքստում մեր գերխնդիրն է առավելագույնս բավարարել Հայաստան այցելող զբոսաշրջիկների պահանջմունքները, քանզի մեկ բավարարված զբոսաշրջիկը, վերադառնալով իր երկիր, իր հետ տանում է ստացած դրական տպավորությունները, ինչն իր ազդեցությունն է թողնում մեր պետության ընդհանուր վարկանիշի և զբոսաշրջության ոլորտի հետագա զարգացման վրա: Դրական վարկանիշի ձևավորմանը նպաստում են նաև սպորտի, մշակույթի, տնտեսական, գիտական և այլ ոլորտներում գրանցված հաջողությունները:

Մյուս կողմից՝ պետք է նշել, որ դրական վարկանիշի ձևավորումն ուղղակիորեն անդրադառնում է նաև տվյալ պետության սահմաններում արտադրվող ապրանքների գրավչության վրա, ինչն արտերկրում տվյալ երկրի ընկերություններին տալիս է մրցակցային առավելություն:

Մեր դիտարկմամբ, Հայաստանում պետական մակարդակով տարվող բրենդինգային քաղաքականությունը դրական ազդեցություն կունենա, նախ և առաջ, արտասահմանյան ներդրումների, զբոսաշրջության և Հայաստանում արտադրվող ու արտահանվող ապրանքատեսակների ծավալների մեծացման վրա: Այդ նպատակով կարևորում ենք Հայաստանում որևիցե գերատեսչության, օրինակ՝ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության կառուցվածքում ունենալ պետության բրենդինգային քաղաքականությամբ զբաղվող մարմին, որը և կմշակեր դրա ռազմավարությունը՝ որպես պետության մարքեթինգային քաղաքականության բաղադրիչ՝ կարճաժամկետ և եր-

կարաժամկետ կտրվածքով, համագործակցելով և օգտագործելով նաև մասնավոր սեփականատերերի հնարավորությունները: Այդ ռազմավարությունը պարտադիր պետք է ներառի սպառողի, ներդրողների հետ ուղիղ հաղորդակցության ժամանակակից մեթոդները, մասնավորապես՝

ա) տարածքային բրենդավորում՝ Հայաստանի, հանրապետության մարզերի, առանձին համայնքների առաջմղման համար պետք է ուսումնասիրել դրանց պատմական, մշակութային, տնտեսական ռեսուրսը, ներուժը, որի հիման վրա հնարավոր է կառուցել հանրապետության ընդհանուր զարգացման ծրագիրը,

բ) կրթական ռեսուրսի օգտագործում,

գ) ժամանակակից էլեկտրոնային միջոցների, մասնավորապես՝ համացանցի հնարավորությունների օգտագործում,

դ) Հայաստանի մասին պատմող գրքերի, զբոսաշրջիկների համար նախատեսված ճանապարհային քարտեզների տպագրում, տարածում,

ե) էվենթ-մարքեթինգի կիրառում, որը թույլ կտա ավելի կոնկրետ ընդգծել նպատակային լսարանը, ուշադրություն հրավիրել Հայաստանի և Հայաստանում արտադրվող ապրանքների վրա:

Այս աշխատանքներին, մեր համոզմամբ, պետք է ներգրավել թե՛ արտասահմանյան մասնագետների, ճանաչված ընկերությունների՝ այս ոլորտում նրանց փորձը և արհեստավարժությունը օգտագործելու համար, թե՛ հայաստանցի մասնագետների՝ որոնք ծանոթ են Հայաստանի առանձնահատկություններին: Ահա այդ համագործակցությունը, կարողությունները համատեղելը, վստահ ենք, պետք է դրական արդյունք տա:

Սեպտեմբեր, 2008թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Голова А.,* Что нам стоит бренд построить. Создание и строительство бренда, http://4p.net.ua.
2. www.bestbrand.by, www.nationbrandindex.com.
3. www.admarket.ru/library/regions/regions
4. *Фуколова Ю.,* www.sostav.ru.
5. *Коробков Дм.,* Ведомости, № 107 (1881), 14.06.2007, տե՛ս նաև www.bestbrand.by, www.nationbrandindex.com:
6. www.stasmarketing.com
7. *Пашутин С.Б.,* Как создать национальный бренд, Москва, 2007.
8. *Райс Эл и Лора,* Расцвет пиара и упадок рекламы, Ст. Петербург, 2007.

9. *Райс Джек Траут-Эл,* Позиционирование: битва за умы. Юбилейное издание, Ст. Петербург, 2007.
10. *Портер Майкл Е.,* Конкурентная стратегия, Методика анализа отраслей и конкурентов, Москва, 2006.
11. *Линдстром Мартин,* Чувство БРЕНДА. Роль пяти органов чувств в создании выдающихся брендов, М, 2006.
12. *Питерс Том,*Человек-Бренд, Москва, 2006.

БРЕНД СТРАНЫ И НЕОБХОДИМОСТЬ ЕГО СОЗДАНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Вардан Атоян, Карен Бабаджанян

Резюме

Сегодня потребители и инвесторы, принимая экономические решения, в большей степени опираются на имидж конкретного государства, конкретной страны. Исходя из этого, можно сделать вывод, что продукт покупается или по ценовому признаку, или по уровню доверия к бренду страны-производителя. Также очевидно, что туристы являются своего рода «разносчиками» знаний и информации о стране, важнейшими коммуникаторами имиджа людей, стран, продуктов, традиций и т.д.

В данном материале анализируется сущность бренда, излагается комплекс маркетинговых мер по выведению на международный рынок качественного товара, обеспечению популярности и повышению конкурентоспособности страны, а также предлагаются конкретные меры по созданию и формированию бренда страны на примере Армении.

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Արինա Իկիլիկյան, Արմեն Քինակցյան

Հոդվածում փորձ է արվել բացահայտել և ներկայացնել երիտասարդության վրա ժամանակակից տեղեկատվական հոսքերի ազդեցության օրինաչափությունները, պարզել երիտասարդության հետ դաստիարակչական աշխատանքի արդյունավետության վրա ազդող գործոնները, նախանշել այս բնագավառում առկա հիմնախնդիրների լուծման հիմնական ուղիները՝ Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության ապահովման համատեքստում:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված է, որ մեր պետությունում երաշխավորվում է տեղեկատվության միջոցների ազատությունը: Տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով, անկախ պետական սահմաններից՝ դիտվում է որպես խոսքի ազատության անբաժանելի մաս: Իսկ պետությունը պարտավոր է երաշխավորել տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող անկախ հանրային ռադիոյի և հեռուստատեսության առկայությունը և գործունեությունը [1]: Նշված ազատությունների լիարժեք իրագործումից է կախված տեղեկատվության միջոցների, այսպես կոչված, անվնաս արտադրանքի, այսինքն՝ այնպիսի տեղեկատվության արտադրման և իրացման հնարավորությունը, որը չի պարունակում սպառողների հոգեվիճակի և վարքագծի վրա բացասաբար ազդելու ունակ արհեստականորեն ներդրված տարրեր:

«Ներկա ժամանակներին բնորոշ է արտադրվող և սպառվող տեղեկույթի ծավալների կտրուկ աճը: Վերջին երեսուն տարում արտադրվել է ավելի շատ տեղեկույթ, քան մինչ այդ՝ հինգ հազար տարվա ընթացքում: Հաշվարկված է, որ *«The New-York Times»* թերթի մեկ օրինակն ավելի շատ տեղեկույթ է պարունակում, քան հասանելի էր 17-րդ դարում Անգլիայի բնակչին իր ողջ կյանքի ընթացքում»,- գրում է ուկրաինացի հայտնի գիտնական, տեղեկատվահոգեբանական հակամարտության հիմնահարցերի մասնագետ Գ.Գ. Պոչեպցովը:

Շատ գիտնականներ որպես հենց այդ փոփոխությունների արդյունք նշում են նոր՝ տեղեկատվական տեսակի հասարակության ձևավորումը, ոմանք էլ, ինչպես ամերիկացի Է.Թոֆլերը՝ քաղաքակրթության երրորդ ալիքի առաջացումը (առաջին երկուսը եղել են գյուղատնտեսականը և արդյունաբերականը) [2, с. 12-13; 3, 4]:

Ինչպես իրավացիորեն նկատում է ռուս գիտնական Ս.Ա. Ֆիլինը, «Տեղեկույթը քաղաքականության, տնտեսության, գիտության և տեխնիկայի մեջ ակտիվորեն կիրառվող ժամանակակից հզոր երկկողմանի զենք է (տեղեկատվություն-ապատեղեկատվություն)»: Տեղեկատվական տեխնոլոգիաները նախադրյալներ ստեղծեցին «համընդհանուր տեղեկատվական սպառնալիք», «տեղեկատվական զենք», «տեղեկատվական պատերազմ» հասկացությունների առաջացման համար» [5, с. 4-5]:

Ժամանակակից աշխարհը տիրապետում է տեղեկատվության լայնամասշտաբ միջոցների՝ ռադիո, հեռուստատեսություն, մամուլ, որոնման ու տեղեկատվության ստացման հսկայական հնարավորություններ ընձեռող, ոչ վաղ անցյալի հայտնագործությունը՝ ինտերնետ: Սակայն ժամանակակից մարդու կողմից իրականությունից ստացվող տեղեկույթը նկատելիորեն ավելի է լրացվում, իսկ երբեմն էլ ուղղակի փոխարինվում է այն տեղեկույթով, որը նրան առաջարկում են տեղեկատվության նշված միջոցները:

Եվ եթե նկատի ունենանք, որ զանգվածային լրատվության միջոցների արտադրանքից ամենաշատն օգտվում է հասարակության առավել ակտիվ մասը՝ երիտասարդությունը, ապա բնական հարց պետք է առաջանա. ի՞նչ ազդեցություն է ունենում երիտասարդ մարդկանց վրա իրենց սպառած տեղեկույթի զանգվածը, արդյո՞ք այն նպաստում է նրանց ընդհանուր զարգացմանը, կայուն, բարենպաստ հոգեվիճակի առաջացմանը, դրական որակների ձևավորմանը, գիտելիքների խորացմանը, թե՞ ոչ: Սակայն մյուս հիմնական սպառողների շարքում երիտասարդությունն առանձնահատուկ տեղ է զբաղեցնում նաև այլ պատճառով. իր սոցիալ-հոգեբանական բնութագրից ելնելով՝ հենց նա է առավել խոցելին զանազան տեղեկատվական հոսքերի ազդեցության տեսանկյունից և, որպես կանոն, հանդես է գալիս այն հիմնական թիրախի դերում, որին ուղղված է տեղեկատվահոգեբանական ներգործության ամբողջ հզորությունը[1]:

Երիտասարդությունը բոլոր ժամանակներում դիտարկվել է որպես հասարակության հիմնական ակտիվ շարժիչ ուժ, որը ոչ միայն ընդունակ է

[1] «Երիտասարդություն» տերմինով ընդունված է բնորոշել այն սոցիալ-ժողովրդագրական խումբը, որն առանձնացվում է տարիքային, սոցիալական վիճակի առանձնահատկությունների և տարբեր գործոններով պայմանավորված սոցիալ-հոգեբանական հատկությունների համակցության հիման վրա, որոնք, իրենց հերթին, պայմանավորված են հասարակական կարգով, մշակույթով, սոցիալացման ու տվյալ հասարակությունում դաստիարակության օրինաչափություններով: Երիտասարդության ժամանակակից տարիքային սահմաններն են 14-16-ից մինչև 25-30 տարեկանը [6, с. 827]:

մարդկային ռեսուրսներով ապահովել երկրի պաշտպանությունն ու անվտանգությունը, այլև հանդես գալ ազգի մտավոր, ժողովրդագրական և մշակութային ներուժի ձևավորման գլխավոր աղբյուրի դերում:

Երիտասարդական քաղաքականությունը Հայաստանի Հանրապետության ներքին քաղաքականության գերակա ուղղություններից է: Սակայն, ինչպես մեր համեմատաբար երիտասարդ պետության հասարակական և պետական կյանքի շատ բնագավառներում, այստեղ ևս պրոբլեմատիկ հարցերն ավելի շատ են, քան դրանց լուծման առկա հնարավորությունները: Այդ մասին ուղղակի կամ անուղղակի վկայում են այնպիսի փաստեր, ինչպիսին են երիտասարդության զբաղվածության հարցերի չկարգավորված լինելը, երիտասարդական քաղաքականության նյութաֆինանսական ապահովման անբավարարությունը, հասարակության ժողովրդագրական վիճակի զարգացման բացասական միտումները և այլն:

Կարելի է բերել բազմաթիվ օրինակներ, որոնք վկայում են երիտասարդության շրջանում սոցիալական աշխատանքի այս կամ այն ուղղության նկատմամբ անբավարար վերաբերմունքի մասին, սակայն մենք կանգ կառնենք առավել արդիական ոլորտներից մեկի՝ դաստիարակչական աշխատանքի վրա ու կփորձենք վերհանել և ուսումնասիրել, մասնավորապես, հայ երիտասարդության բարոյահոգեբանական վիճակի ձևավորման վրա ժամանակակից տեղեկատվական հոսքերի ազդեցության հիմնական գործոնները, բնույթը և հետևանքները: Եվ, նկատի առնելով սույն հիմնախնդրի նշանակությունն ու հրատապությունը, այն կքննարկենք Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման կարևորագույն ուղղություններից մեկի՝ տեղեկատվական անվտանգության համատեքստում:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության մեջ ընդհանուր գծերով նկարագրված են ազգային անվտանգության ներքին հիմնական սպառնալիքները: Ու չնայած նրան, որ այդ փաստաթղթում երիտասարդությունը չի դիտարկվում որպես դրանց առանձին օբյեկտ, այնուամենայնիվ, սոցիալական տեսանկյունից որոշ սպառնալիքներ ուղղակիորեն առնչվում են նրան: Որպես այդպիսին, մեր կարծիքով, կարելի է առանձնացնել հետևյալները.

- հասարակության բևեռացումը, մասնավորապես՝ սոցիալական արդարության պետական արդյունավետ երաշխիքների ոչ բավարար լինելը, աղքատության մակարդակը, սոցիալական ծառայությունների մատչելիության մակարդակը,
- յուրաքանչյուրի համար մասնագիտական կրթության ոչ լիարժեք մատչելիությունը, առողջ ապրելակերպի, ընտանիքի ավանդական դերի նկատմամբ վերաբերմունքի դաստիարակության դեռևս ոչ բավարար մակարդակը և ազգային ինքնության աղավաղումը,

- ցածր ծնելիությունը, հիվանդացության և մահացության դեռևս ոչ ցածր և կյանքի միջին տևողության ու որակի ոչ բավարար ցուցանիշները, չկառավարվող և անօրինական արտագաղթը, հատկապես կրթական, գիտական և մշակութային ներուժի արտահոսքը [7, էջ 66-68]:

Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինում որպես ռազմական անվտանգության ներքին սպառնալիք նշված է բարոյահոգեբանական և հայրենասիրական դաստիարակության անբավարարությունը, պետության նկատմամբ պատշաճ հարգանքի բացակայությունը, առողջ ապրելակերպի, ընտանիքի ավանդական դերի և ազգային ինքնության խեղաթյուրումը [8, էջ 66-67]:

Հարկ է նշել, որ տեղեկատվական անվտանգության՝ որպես ՀՀ ազգային անվտանգության բաղկացուցիչ տարրերից մեկի, ապահովման հիմնախնդիրները, չնայած ժամանակակից պայմաններում դրանց առանձնահատուկ կարևորությանը, մինչ օրս գիտական մակարդակով համարժեք ուշադրության չեն արժանացել: Եվ դա այն պարագայում, որ տարրալուծող, քայքայիչ բնույթի տեղեկույթի արտաքին և ներքին զանգվածների բացասական ազդեցությունը զգացվում է հայ հասարակության կենսագործունեության համարյա բոլոր բնագավառներում: Տեղեկատվական անվտանգության թեմատիկայով հետաքրքրվող հայրենական հեղինակներից շատերը շարունակում են այն դիտարկել հիմնականում տեղեկատվական ցանցերի անվտանգության ապահովման կամ, այլ կերպ ասած, «կիբեռանվտանգության» կամ «համակարգչային – տեխնիկական անվտանգության» համատեքստում: Մինչդեռ, տեղեկատվական անվտանգությունն առավել լայն հասկացություն է և ընդգրկում է տեղեկատվական հոսքերի քայքայիչ ազդեցությունից անձի, հասարակության և պետության պաշտպանության բոլոր ասպեկտները՝ ինչպես պետական-քաղաքական, այնպես էլ հոգևոր, մշակութային, հոգեբանական, տեխնիկական: Ընդ որում, ինչպես ցույց են տալիս մեր դիտարկումները, տվյալ հիմնախնդրով հետաքրքրվող բոլոր հեղինակները միակարծիք են այն հարցում, որ այդ հոսքերի բացասական ազդեցության տեսանկյունից առավել խոցելին հենց աճող սերունդն է, երիտասարդությունը:

Հախուռն տեղեկատվական հոսքերի առկայությունն այսօր իրողություն է, առանց որի անհնար է պատկերացնել ժամանակակից աշխարհի գոյությունը: Դրանց դրական և բացասական հետևանքներն իրենց վրա զգում են բոլոր նրանք, ովքեր համընթաց քայլում են ժամանակի հետ: Ցավոք, այդ հոսքերն առավել բացասական ազդեցություն են ունենում հենց երիտասարդ սերնդի վրա, քանի որ նրա ներկայացուցիչներն են գտնվում որպես անհատականություն կայանալու, սեփական աշխարհայացքի ու արժեքների որոշակի սանդղակի ձևավորման փուլում, ինչպես նաև ընտանիքի ու կրթօջախների կողմից

դաստիարակման ենթարկվելու ակտիվ գործընթացում: Սակայն ճիշտ չէր լինի դատել ժամանակակից տեղեկատվական հոսքերի ծավալների կտրուկ աճի մասին սոսկ դրանց բացասական ազդեցության տեսանկյունից: Այդ հոսքերը կրում են տեղեկույթ, այսինքն՝ այն, ինչից երկար տարիներ զրկված են եղել թեկուզ խորհրդային իշխանության դարաշրջանում ապրած մեր հայրենակիցների սերունդները: Ով, եթե ոչ նրանց հաջորդած սերունդների ներկայացուցիչները, ովքեր կյանք են մտել հետխորհրդային շրջանում, կարող են ըստ արժանվույն գնահատել ներկա ժամանակների այդօրինակ առավելությունը:

Բայց, այնուամենայնիվ, ի՞նչ են իրենց մեջ կրում ժամանակակից բուռն տեղեկատվական հոսքերը: Ի՞նչ որակի տեղեկույթ է հասնում սպառողին: Ի՞նչ արժեքներ է այն քարոզում և ձևավորում:

«Մաքուր» արտադրանքի մատչելիության ապահովումը վճռորոշ նշանակություն ունի հատկապես երիտասարդության սոցիալացման շրջանում, երբ երիտասարդները սկսում են յուրացնել վարքագծի ձևերը, սոցիալական նորմերը և արժեքները: «Մաքուր» արտադրանք ասելով՝ պետք է հասկանալ այն տեղեկույթը, որում բացակայում են դիտավորյալ ներդրված կազմալուծող, դրա իրական էությունը, նշանակությունը, երբեմն նույնիսկ ողջ բովանդակությունն աղավաղող խորհրդանիշները (սիմվոլները) կամ ձևակերպումները[1]:

Հետարդյունաբերական հասարակության զարգացման ներկա փուլը բնութագրվում է տեղեկատվական ոլորտի դերի կտրուկ աճով և աստիճանական անցումով որակապես նոր տիպի հասարակության, որն ընդունված է անվանել տեղեկատվական հասարակություն[2]: Տեղեկատվական ոլորտ ասելով՝ հասկացվում է տեղեկույթի, տեղեկատվական ենթակառուցվածքի, տեղեկույթի հայթայթմամբ, ձևավորմամբ, տարածմամբ և օգտագործմամբ զբաղվող սուբյեկտների, ինչպես նաև այդ ընթացքում ծագող հասարակական հարաբերությունների կարգավորման համակարգի ամբողջությունը: Տեղեկատվական ոլորտը, հանդիսանալով հասարակական կյանքի համակարգաստեղծ գործոն, ակտիվորեն ազդում է ազգային անվտանգության բոլոր բաղադրիչների վիճակի վրա: Այդ իսկ պատճառով պետք է արձանագրել, որ ազգային անվտանգության ապահովման ընդհանուր վիճակն ուղղակիորեն կախված է տեղեկատ-

[1] Սոցիալացումն անհատի կողմից տվյալ հասարակության պայմաններում հաջող կենսագործունեության համար անհրաժեշտ վարքագծի օրինակների, հոգեբանական մեխանիզմների, սոցիալական նորմերի և արժեքների յուրացման գործընթացն է: Ավանդաբար սոցիալացումը բաժանվում է վաղ (սկզբնական) շրջանի, որն ընդգրկում է մարդու կյանքի այնպիսի փուլեր, ինչպիսին են մանկությունը և պատանեկությունը, և հասուն (երկրորդային) շրջանի, որն ընդգրկում է հասուն տարիքը և ծերությունը: Այդ մասին առավել մանրամասն տե՛ս [9, с. 40-42]:

[2] Մեր համոզմամբ, զարգացող երկրների դեպքում, ի տարբերություն զարգացած երկրների, խոսքը պետք է գնա դեպի տեղեկատվական հասարակության մեխանիկական անցման, այլ ոչ թե դրա ձևավորման օրինաչափ գործընթացի մասին: Տե՛ս [10]:

վական անվտանգության ապահովման արդյունավետությունից[1]:

Փաստենք, որ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության բովանդակության վերլուծությունը բավարար պատկերացում չի տալիս տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում պետական քաղաքականության հիմնադրույթների մասին: Ռազմավարության՝ ներքին անվտանգության ապահովման հիմնական առաջնահերթություններին առնչվող հարցերին նվիրված բաժնում տեղեկատվական անվտանգության հետ ընդհանուր հայեցակարգային առնչություն ունեցող հարցերի վերաբերյալ սոսկ նշվում է, որ Հայաստանի Հանրապետությունը կարևորում է.

- ներգրավումը միջազգային տեղեկատվական դաշտին, Հայաստանի և Հայության մասին ճշմարտության արհեստավարժ ներկայացումը միջազգային հանրությանը, հակազդումը ապատեղեկատվությանն ու քարոզչությանը,
- համացանցում հայալեզու և Հայաստանին, հայագիտության բոլոր ճյուղերին ու հայությանն առնչվող բովանդակության անհրաժեշտ ծավալի և որակի, ինչպես նաև դրանց համաչափության ապահովումը [7, էջ 72-74]:

Հաշվի առնելով երկրի զարգացման արդի փուլում պետական քաղաքականության գերակայությունները՝ գտնում ենք, որ մոտ ապագայում անպայման պետք է մշակվի և ընդունվի Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգ (դոկտրին), որում կարտացոլվեն այն ելակետային դրույթները, որոնց վրա կխարսխվի պետության քաղաքականությունը տեղեկատվական ոլորտում (բառի ամենալայն իմաստով):

Տեղեկատվական անվտանգությունը դիտարկվում է որպես փոխկապակցված տարրերի համակարգ, որոնց շարքում իր նշանակությամբ և, միևնույն ժամանակ, խոցելիությամբ առանձնահատուկ տեղ է զբաղեցնում տեղեկատվական-հոգեբանական անվտանգությունը[2]:

Ներկայումս երիտասարդությունն ակամա վերածվել է տեղեկատվահոգեբանական ազդեցության գլխավոր թիրախի: Հայ հասարակության առաջ ծառացած սոցիալ-տնտեսական, քաղաքական, հոգևոր, մշակութային ժամանակակից հիմնախնդիրների քննարկման և լուծման ընթացքում ապակառուցողական բաղադրիչի անչափ մեծ ծավալը բացասաբար է ազդում երիտասարդության բարոյահոգեբանական վիճակի վրա, ծնում է անտարբերության

[1] Տեղեկատվական անվտանգություն ասելով՝ ընդունված է հասկանալ տեղեկատվական ոլորտում անձի, հասարակության և պետության փոխլրացնող շահերի ամբողջությամբ պայմանավորված ազգային շահերի պաշտպանվածության վիճակը: Տե՛ս [11, էջ 65; 12, с. 29; 13, с. 7]:

[2] Որպես տեղեկատվական անվտանգության այլ հիմնատարրեր կարելի է առանձնացնել հոգևոր-մշակութային անվտանգությունը, գաղտնի տեղեկատվության անվտանգությունը, կիբեռանվտանգությունը (համակարգչային-տեխնիկական անվտանգությունը):

զգացում, ստիպում մտածել իր զարգացման համար անհրաժեշտ պայմանների (ինչպիսին են, մասնավորապես, արժանապատիվ ու լավ վարձատրվող աշխատանք ապահովող որակյալ կրթությունը, ակտիվ, հագեցած հանգիստը, սպորտով զբաղվելու հնարավորությունը, ժամանցի կազմակերպումը) անիրագործելիության մասին:

Երիտասարդության այսպիսի ամորֆ վիճակը նրան օրինաչափորեն վերածում է, այսպես կոչված, նպատակային լսարանի:

Իմացաբանական (գնոսեոլոգիական) տեսանկյունից՝ տեղեկատվական անվտանգության համար ամենամեծ սպառնալիքը կեղծիքն է, ավելի կոնկրետ՝ կեղծիք պարունակող տեղեկույթը (ինֆորմացիան): Իսկ տեղեկատվական անվտանգությունը, պատկերավոր ասած, պատնեշ է կեղծ տեղեկույթի, ընդ որում՝ ցանկացած ձևով հաղորդվող կեղծ տեղեկույթի (բանավոր, գրավոր, գրաֆիկական, էլեկտրոնային, գեղարվեստական և այլն) դեմ:

Կարևոր է հաշվի առնել նաև, որ խոսքը վերաբերում է առհասարակ կեղծիք երևույթին: Կարող է թյուր կարծիք ձևավորվել, թե սեփական տեղեկատվական անվտանգությունն ապահովելու նպատակով թույլ տրված կեղծիքն ինչ-որ տեղ թույլատրելի է: Սակայն իրականում նման մոտեցումը կարող է առաջացնել բումերանգի էֆեկտ: Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների, տեղեկույթի փոխանցման լայն հնարավորությունների պայմաններում գրեթե անհնար է կեղծիքի միջոցով անվերջ թաքցնել այս կամ այն իրադարձության, փաստի բուն էությունը, նշանակությունը կամ դրանց առանձին տարրերի (բաղադրիչների) վերաբերյալ տեղեկույթը: Եթե սեփական տեղեկատվական դիրքերն ամրապնդելու նպատակով թույլ է տրվում կեղծիք, ապա առաջ է գալիս վտանգ, որ դա ժամանակի ընթացքում կբացահայտվի, ինչը, որպես կանոն, հղի է առավել վնասակար հետևանքներով: Հետևաբար, չեզոքացնել մի վտանգը՝ ծնելով մի այլ, հնարավոր է՝ ավելի մեծ վտանգ, տրամաբանորեն անիմաստ է:

Նկատենք, որ այս առումով մենք՝ հայերս, շատ ավելի նախընտրելի վիճակում ենք գտնվում, քան մեր որոշ, անբարյացակամորեն տրամադրված հարևանները: Ի տարբերություն նրանց՝ մենք կարիք չունենք ջանքեր գործադրելու պատմական ճշմարտությունը վերափոխված վիճակում համաշխարհային հանրությանը ներկայացնելու, երկրի ներսում, մասնավորապես՝ երիտասարդության շրջանում քարոզչական-դաստիարակչական աշխատանքների արդյունավետությունն ապահովելու նկատառումներով՝ պատմական փաստերը կամայականորեն մեկնաբանելու կամ կողմնակալ սրբագրումների ենթարկելու: Այսինքն՝ եթե նրանց գործը (ըստ իրենց) տեղեկատվական բազա «ստեղծելն» ու «մատուցելն» է, ապա մեր գործն ընդամենը եղած պատմական ճշմարտությունը պատշաճ ձևով ներկայացնելն է: Ահա այստեղ է, որ մեր

հասարակությունն ու պետությունը, նաև սփյուռքը մեծ անելիքներ ունեն:

Այս համատեքստում գտնում ենք, որ ներկայումս օրախնդիր հարց է դարձել սեփական տեղեկատվական ռեսուրսները համապատասխան «գույքագրման» ենթարկելը, ինչպես նաև քարոզչական-դաստիարակչական աշխատանքների որակն ու արդյունքները լրջորեն վերլուծելը: Տեղեկատվական անվտանգության ապահովման գործընթացում կիրառվող հնարավորությունները պետք է համարժեք լինեն գոյություն ունեցող (հաճախ թաքնված) սպառնալիքներին: Այդ իմաստով՝ երիտասարդության շրջանում իրականացվող քարոզչական-դաստիարակչական աշխատանքը ինքնանպատակ լինել չի կարող: Ցանկալի է, որ տարբեր լրատվամիջոցներով, հատկապես էլեկտրոնային, հաղորդվող տեղեկույթը ոչ թե պատրաստի կլիշեներ պարունակի, այլ ստիպի այդ տեղեկույթը սպառող երիտասարդին ինքնուրույն մտածել՝ աջակցելով նրա մեջ հայրենասիրական զգացմունքների, պետական մտածելակերպի և բարձր իրավագիտակցության ձևավորմանը:

Հոգեբանական գործողությունների և *PR-ի* համաշխարհային պրակտիկայի օրենքներից է այն, որ մարդու նկատմամբ առավել մեծ ազդեցություն կարելի է գործել՝ օգտագործելով նրա խմբային, մասնավորապես՝ տարիքային, այլ ոչ թե անհատական հատկանիշները: Զանգվածային լրատվամիջոցների աճող դերին զուգահեռ՝ նույնիսկ ծնունդ է առել նոր մասնագիտացում, որը ստացել է *spindoktor* (ուշադրություն շեղող, խուսանավում ապահովող) անվանումը, որի խնդիրն է փոխել երևույթի, գործընթացի մասին տեղեկույթի ընկալումը, սպառողի մոտ ձևավորել դրանց վերաբերյալ ցանկալի պատկերացում [2, с. 150, 182-185]:

Հաճախ լրագրողը և *spindoktor-ը* մրցում են միմյանց հետ, իսկ վատագույն դեպքում, ելնելով այսրոպեական նպատակահարմարությունից, լրագրողը փոխարինվում է *spindoktor-ով,* կամ նրանք հանդես են գալիս մեկ մարդու դեմքով, ինչը բացասաբար է ազդում տեղեկույթի որակի վրա, այսինքն՝ այն մատուցվում է լսարանին ոչ իր նախնական, այլ արհեստականորեն փոխակերպված տեսքով: Ընդ որում՝ սպառողը, որպես կանոն, չի էլ կասկածում, որ տեղի է ունեցել նման մեքենայություն: Դրանով ոչ միայն վտանգի տակ է դրվում տեղեկություններ ստանալու քաղաքացիների սահմանադրական իրավունքը, այլև ձևախեղվում է ճշմարտացի, վստահության արժանի տեղեկույթի հաղորդման ողջ գործընթացը, խեղաթյուրված պատկերացում է կազմվում դրա իմաստի ու էության մասին:

Նման հնարքները, որպես կանոն, կիրառվում են հասարակության առավել ակտիվ մասի նկատմամբ, ինչպիսին է, օրինակ, ուսանողությունը, որն առանձնապես ընկալունակ չէ տարբեր սոցիալական պայմանականությունների հանդեպ և, միևնույն ժամանակ, սոցիալական առումով մոտ է հասարակության մյուս շերտերին, նրանց հետ գտնվում է մշտական ակտիվ շփման մեջ:

Դաստիարակչական տեսակետից՝ վիրտուալ աշխարհի կողմից օբյեկտիվ իրականության աղավաղումը բացարձակապես անթույլատրելի է: Ելնելով հասարակական և պետական շահերից՝ պետք է լինի ճիշտ հակառակը: Վիրտուալ աշխարհը պետք է օգնի օբյեկտիվ իրականության մեջ դրական, առաջավոր երևույթների զարգացմանը և բարեփոխմանը, բացասականի նվազեցմանը: Հակառակ դեպքում, երբ այն օգտագործվում է որպես տեղեկատվահոգեբանական ազդեցության գործիք, հասարակությունը (կամ նվազագույնը՝ նրա մի մասը) կարող է ոչ միայն վերածվել դրա պատանդի, այլև անկարող լինել քայլեր ձեռնարկելու այդպիսի ազդեցության հետևանքները գոնե հետագայում չեզոքացնելու ուղղությամբ:

Տեղեկատվահոգեբանական (փսիխոտրոնային) զենքի կիրառման սկզբունքի հիմքը, ինչպես զուտ տեղեկատվական (բառի կիբեռնետիկական իմաստով) զենքի դեպքում, նախօրոք մշակված (ծածկագրված) տեղեկույթի հաղորդումն է, որն ունակ է հարուցելու ինքնամեկուսացման (նույնիսկ ինքնասահմանափակման կամ ինքնաոչնչացման) գործընթաց, կամ էլ ազդեցության կոնկրետ օբյեկտի մեջ առաջացնելու կենսագործունեության համակարգի խանգարում: Ի տարբերություն մյուս տարիքային խմբերի՝ երիտասարդությունն առավել ինտենսիվ է շփվում վիրտուալ պատկերի հետ: Դրանով իսկ նա առավել խոցելի է վերջինիս հնարավոր բացասական ազդեցության տեսակետից[1]:

Այսպիսով՝ տեղեկույթը, որն այսօր առաջարկվում է սպառողին, հիմքում չունի այն առողջացնող, օգտակար նշանակությունը, որն անհրաժեշտ է աճող սերնդին: Ասում են՝ երեխաները նման են ոչ այնքան իրենց ծնողներին, որքան իրենց ապրած դարաշրջանին: Տեխնոկրատիայի դարաշրջանում տեղեկատվությունը սպառվում է հսկայական զանգվածներով՝ չհանդիպելով ոչ արտաքին, և որ առավել վտանգավոր է երիտասարդ սերնդի համար՝ ոչ ներքին արգելքների: Եթե ավագ սերունդն արդեն ունի կյանքի ընթացքում ձևավորված, այսպես կոչված, ներքին գրաքննիչ, ապա աճող սերունդը դա դեռևս չունի: Տեղեկատվության ո՞ր աղբյուրներն են բավարարում հոգևոր սնունդ ստանալու երիտասարդության պահանջմունքին: Կա՞ն արդյոք այնպիսի աղբյուրներ, որոնք ունակ են դաստիարակել երիտասարդին որպես բարեպաշտ մարդ և օրինապահ քաղաքացի, ձևավորել նրա մեջ լավ ճաշակ, մշակել ներքին մշակույթ, արմատավորել բարոյական արժեքները: Կարծում ենք, որ շատ ընթերցողների (եթե ոչ մեծ մասի) մեջ կա այդ հարցի պատասխանը.

[1] Ուշագրավ է հետևյալ դեպքը. 1999թ. դեկտեմբերին ճապոնական քաղաքների և ավանների հիվանդանոցներ են դիմել 685 մարդ՝ էպիլեպսիայի ախտանիշներով: Պարզվել է, որ տարօրինակ համաճարակի պատճառ է դարձել մուլտսերիալը: Ականատեսների վկայությամբ՝ նրանք, ովքեր դիտել են այն, անսպասելիորեն ընկել են ջղաձգումների մեջ, շատերի մոտ կանգ է առել շնչառությունը: Տուժածները պատմել են, որ իրենք ցավեր են զգացել էկրանի կապույտ և կարմիր մի շարք բռնկումներից հետո: Մուլտֆիլմի նոր սերիան եթերից հանվել էր: Տե՛ս [14, с. 23, 24]:

այդպիսի աղբյուրներ կա՛մ չկան, կա՛մ դրանք չափազանց քիչ են:

Իսկ որքանո՞վ են գոյություն ունեցող աղբյուրները համապատասխանում վիրտուալ, օրինակ՝ հեռուստատեսային արտադրանքի երիտասարդ սպառողների պահանջմունքներին: Որպես կանոն, այդպիսի հաղորդումները հետաքրքիր են ավելի ավագ սերնդի՝ 30 և բարձր տարիք ունեցողների, համար: Ավելի երիտասարդների համար դրանք հետաքրքրություն չեն ներկայացնում ինչպես ձևով, այնպես էլ բովանդակությամբ: Ձևը նրանց չի բավարարում, քանզի չափից դուրս տաղտկալի է թվում և, հետևաբար, չի կարող գրավել պատանի հեռուստադիտողին, իսկ շատ հաճախ գործն ուղղակիորեն չի հասնում հաղորդման բուն բովանդակությանը խորամուխ լինելուն: Պատանիներին և աղջիկներին, որպես կանոն, գրավում են աշխարհիկ, զվարճալի բնույթի հաղորդումները, որոնք ոչ մի ներքին ջանք չեն պահանջում տեղեկույթն ընդունելու և «մարսելու» համար: Դրանք հաճախ շատ դիպուկ նմանեցվում են մաստակ ծամելուն[1]:

Ներկայացնենք մի ուշագրավ դրվագ ժամանակակից կյանքից. կին արվեստագետը մշակում է արվեստի մասին լուրջ, ակադեմիական մակարդակով հաղորդման նախագիծ և առաջարկում հեռարձակել այն հայրենական հեռուստաալիքներից մեկի եթերում: Սակայն նա ստանում է ժխտողական պատասխան հետևյալ հիմնավորմամբ. այսօր հեռուստատեսային արտադրանքը նույն կարկանդակն է, որը պետք է արագորեն սպառվի, այլապես ոչ մի իմաստ չկա դա թողարկելու: Այդպիսի հաղորդումն ապրիորի կունենա ցածր վարկանիշ և, հետևաբար, զրկված կլինի հովանավորներից ու համապատասխան ֆինանսավորումից… Ստացվում է փակ շրջան:

Ի՞նչ է առաջարկում ինտերնետը: Առանց չափազանցության՝ գրեթե ամեն ինչ: Ցանկացած թեմայով, ցանկացած ճաշակի տեղեկատվություն, որը հասանելի է յուրաքանչյուրին, ով գտնվում է վիրտուալ աշխարհի տիրույթներում: Թվում է, թե բացվել են անսահման հնարավորություններ: Բայց ի՞նչ է հիմնականում հետաքրքրում երիտասարդությանը: Եթե ոչ ուսումնառության ընթացքում պիտանի նյութեր՝ դասագրքեր, պատրաստի ռեֆերատներ, տեղեկագրեր, բառարաններ և այլ գրականություն, ապա հիմնականում դա երաժշտական արտադրանքն է կամ էլ բազմապիսի չաթերը, ծանոթության կայքերը, աշխարհիկ քրոնիկոնը, աստղագուշակները, աստղերի կյանքի մասին սկանդալային, ինչպես նաև ինտիմ թեմաներով նյութերը, բացահայտ պոռնոգրաֆիան և այլն:

[1] Հեռուստատեսության՝ որպես գիտակցությունը քայքայող տեխնոլոգիայի, դերը մանրամասն ուսումնասիրված է ռուս հայտնի քաղաքագետ Ս.Գ. Կարա-Մուրզայի՝ 2007թ. Մոսկվայում հրատարակված «Манипуляция сознанием» («Ձեռնածություն գիտակցության հետ») գրքում:

Զանգվածային արտադրանքի ևս մեկ տարածող է նորագույն ժամանակների հայտնագործություն բջջային հեռախոսը, որն իր առաջնային գործառույթից, այսինքն՝ կապի միջոց լինելուց բացի, լայն հնարավորություններ է ընձեռում նաև տեղեկույթի որոնման, ստացման և փոխանցման համար, ընդհուպ մինչև «համաշխարհային սարդոստայնին» միանալը:

Ռադիոն երիտասարդության շրջանում փոքր-ինչ զիջում է հեռուստատեսությանն ու ինտերնետին ժողովրդականություն վայելելու հարցում: Եվ, չնայած նրա առաջարկած համեմատաբար ավելի ընդգրկուն թեմատիկային ու նյութը մատուցելու մակարդակին, այնուամենայնիվ, ներկայումս ավելի շատ ծառայում է որպես կենցաղում, աշխատավայրում կամ փոխադրամիջոցով տեղաշարժվելիս որոշակի միջավայր ստեղծող գործոն:

Այսօր մամուլը ևս առանձնապես չի փայլում ճանաչողական, գիտահանրամատչելի նյութերի հրապարակման հարցում: Որքան էլ զարմանալի հնչի, դրա հիմնական պատճառներից մեկն այն է, որ չկա պահանջարկ: Իսկ դա նշանակում է, որ չկա նաև առաջարկ: Սակայն չպետք է անտեսել դրա հակառակ երևույթը. չկա առաջարկ՝ չի ձևավորվում պահանջարկը: Երիտասարդությունը ձեռք է բերում միայն ողորկափայլ հրատարակությունները, հիմա նաև՝ հայրենական արտադրության, որտեղ նկարագրված է տեղական և արտասահմանյան աստղերի, ինչպես նաև երիտասարդության մյուս կուռքերի «բարձր կյանքը», ընդ որում՝ հրապարակվող նյութի ընտրությունը հաճախ կատարվում է անկախ վերջինների իրական մասշտաբից և կոնկրետ քննարկվող ոլորտի հարստացման գործում ունեցած փաստացի ծառայություններից:

Այնուամենայնիվ, ի՞նչ են ավելի շատ իրենց մեջ կրում տեղեկատվության ժամանակակից աղբյուրները՝ վնա՞ս, թե՞ օգուտ: Միանշանակ պատասխան չկա: Բայց այն փաստը, որ զանգվածային գիտակցության, մասնավորապես՝ երիտասարդության գիտակցական և ենթագիտակցական մակարդակներում տեղի ունեցող գործընթացների վրա դրանց բացասական ազդեցությունն այս կամ այն չափով առկա է, կասկած չի հարուցում: Հիմքում դրանց արտադրանքը, որպես կանոն, երիտասարդների մեջ արմատավորում է այն համոզումը, որ այսօրվա սպառողական հասարակության մեջ գլխավորը փողն է, կարողությունը, հեշտ կյանք վարելու ունակությունը, և կարևոր չէ, թե ինչ միջոցներով է դա ձեռք բերվում: Այսօրվա շատ դեռահասների մեջ ձևավորվում է կարծիք, թե այդ ամենին հասնելու համար հատուկ ջանքեր գործադրել պետք չէ, ընդամենը պետք է շարժվել այլ, իհարկե՝ ոչ այնքան օրինական, բայց ավելի հեշտ ճանապարհով:

Գտնում ենք, որ բացի նրանից, որ մեր հասարակությունը և պետությունը գործուն միջոցներ պետք է ձեռնարկեն՝ փոխելու համար տվյալ իրավիճակը, անհրաժեշտ է նախ և առաջ կազմակերպել և իրականացնել դաստիարակ-

չական աշխատանքն այնպես, որ մինչև սպառողական պահանջմունքների բավարարումը (որն առավել մեծ մասշտաբներով տեղի է ունենում մոտավորապես 10-14 տարեկանում) ձևավորվի երիտասարդ սպառողի ընկալման չափանիշների նվազագույն ընդունելի մակարդակ, որն այնուհետև պետք է հետևողականորեն բարձրացվի: Այդ նպատակով՝ բավական է վեր հանել և ուսումնասիրել այն գործոնները, որոնք ազդում են նշված չափանիշների ձևավորման գործընթացի վրա և ապա համալիր միջոցառումներ իրականացնել վիճակը բարելավելու ուղղությամբ: Իհարկե, դա դյուրին գործ չէ, բայց, կարծում ենք, որ համապատասխան ատյանների կողմից այն նախաձեռնելու և որակյալ մասնագետների ներգրավման դեպքում լիովին իրագործելի է:

Այսպիսով՝ երիտասարդը պետք է որոշակիորեն պատրաստ լինի մեծածավալ ու հախուռն տեղեկատվական հոսքերի ընդունմանը: Եվ որպեսզի նա տվյալ արտադրանքը ստեղծողներից չսպասի չարաբաստիկ «կարկանդակներ», պետք է համտեսի «խոհարարական» արվեստի առավել գայթակղիչ նմուշներ և արդեն ինքը թելադրի իրեն առաջարկվող արտադրանքի որակը՝ մերժելով ցածրաճաշակը: Այս գործում առաջատար դեր պետք է ունենան հասարակական համապատասխան կառույցները, ուսումնական հաստատությունները, մշակութային կենտրոնները և, իհարկե, ամենազլխավորը՝ ընտանիքը: Հատկապես նրանից է կախված սոցիալացման նախնական շրջանում երիտասարդի՝ որպես ազատ, բարոյահոգեբանական պատշաճ նկարագրով անհատի, ձևավորման բարդ գործընթացի վերջնական արդյունքը:

Փաստ է նաև, որ տեղեկատվության անկանոն, ամորֆ, հաճախ քաոսային այն հոսքը, որը ժամանակակից երիտասարդությունը ստիպված է ստանալ և սպառել, մեծապես նպաստում է նրա մեջ ժխտողականության, սնապարծության, երբեմն նաև՝ ագրեսիայի մեծ ծավալի առաջացմանը: Եթե տարբեր տարիքային խմբերի երիտասարդների շրջանում մասնագիտական մակարդակով համապատասխան հետազոտություններ անցկացվեն հայրենական հեռուստաընկերությունների եթերում, օրինակ, գեղարվեստական հաղորդումների քանակական և որակական առանձնահատկությունների ազդեցությունը պարզելու ուղղությամբ, ապա ակնհայտ կդառնա դրանց հնարավոր բացասական ազդեցության պաշարը նրանց հոգեվիճակի, աշխարհայացքի և ճաշակի ձևավորման գործընթացում: Մեր կարծիքով՝ այդ ուղղությամբ հետազոտություններ անցկացնելու համար պետք է ձևավորվի տարբեր մասնագետներից կազմված թիմ, սակայն բոլոր դեպքերում դրա մեջ պարտադիր պետք է ընդգրկվեն սոցիոլոգներ, հոգեբաններ, մշակութաբաններ, իրավաբաններ, տեղեկատվական անվտանգության մասնագետներ:

Մեր հասարակության որոշակի հատվածի մեջ թյուր կարծիք է ձևավորվել, թե վերջին հաշվով հիշյալ հիմնախնդիրների առաջացումն արդյունք է

համաշխարհային տեղեկատվական տարածությանն ինտեգրվելու, ինչպես նաև մեր ազգայինի հետ անհամատեղելի արժեքների (նկատի ունենն արևմտյան) արմատավորման:

Չխորանալով սույն հարցի մանրամասն վերլուծության մեջ (դա առանձին հետազոտության առարկա է)՝ միայն նշենք, որ այնպիսի գլոբալ հարցերի ոչ միանշանակ ընկալումը, ինչպիսին են քաղաքակրթական ընտրության ճշմարտացիությունն ու օբյեկտիվությունը, համամարդկային և ազգային արժեքների ներդաշնակ հարաբերակցության հնարավորությունը, սեփական մշակույթը որպես համաշխարհային մշակույթի արժանի մաս պատշաճ ներկայացնելու կարողությունը, ուղղակիորեն ազդում է երիտասարդության հետ դաստիարակչական աշխատանքի ոլորտին առնչվող ռազմավարական նպատակները կյանքի կոչելու գործընթացի վրա:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության մեջ հստակ նշված են այդ հիմնարար ոլորտի գերակայությունները: Դրանք են՝

- համամարդկային և ազգային արժեքների, ազգային ավանդույթների, հոգևոր և մշակութային ժառանգության պահպանման և դրանց վերարտադրության ու զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը,
- մշակութային արժեքներին հաղորդակցվելու մատչելիության ապահովումը,
- հայ ժողովրդի հոգևոր-մշակութային ինքնությանն ու բարոյական արժեքներին սպառնացող երևույթների կանխարգելումը:

Այսպիսով՝ դժվար է գերագնահատել ներկա փուլում երիտասարդության հետ դաստիարակչական աշխատանքի մակարդակի բարձրացման դերը Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության վերոհիշյալ սպառնալիքների առաջացման պատճառների և գոյության պայմանների վերացման գործում:

Այսօր հասարակության մեջ նկատվում է միջանձնային կապերի թուլացման միտում: Այդ կապակցությամբ՝ տեղեկատվական հոսքերի դերն ավելի տեսանելի է դառնում: Իրենց հետաքրքրող հարցերին պատասխաններ ստանալու նպատակով՝ երիտասարդներն ավելի հաճախ դիմում են ոչ թե ավագ սերնդի ներկայացուցիչներին, այլ տեղեկատվության միջոցներին, օրինակ՝ ինտերնետին:

Կենսական կարևոր հարցերի վերաբերյալ «պատասխանները» (կամ տարատեսակ «հուշումները») երբեմն ստացվում են հեռուստա- և ռադիո եթերներից, որոնք հեղեղված են զանազան *«talk-show»*-ներով: Այս տեսանկյունից՝ անհրաժեշտ է ընդգծել, որ գործնականում ցանկացած հարցի քննարկումը

եթերում կարող է օգտակար, կառուցողական լինել միայն այն դեպքում, երբ այդ տեսակ հաղորդումների պատրաստման աշխատանքներին մասնակցում են ոչ միայն ժուռնալիստիկայի ու տվյալ հաղորդման թեմատիկային առնչվող մասնագիտությունների ներկայացուցիչներ, այլև սոցիոլոգիայի, հոգեբանության, տեղեկատվական անվտանգության բնագավառի արհեստավարժներ:

Ներկայումս կենդանի շփումը մասամբ փոխարինվում է վիրտուալ իրականության հետ շփմամբ, մասամբ վերածվում է տեղեկույթի զանգվածի միակողմանի կլանման՝ առանց հրատապություն ստացած հարցի, կոնկրետ հուզող փաստի կամ հիմնախնդրի կենդանի քննարկման: Միևնույն ժամանակ, ամենատարբեր վիրտուալ ֆորումների ընթացքում ծավալվող բանավեճերն ստացվում են առավել արդյունավետ և բազմակողմանի այն դեպքերում, երբ ապահովվում է դրանց մասնակիցների հնարավորինս լայն շրջանակ (ավելի լավ է, երբ դա ընդհանրապես չի սահմանափակվում), ինչպես նաև նրանց ինտերակտիվ շփումը:

Ընդհանրացնելով ասվածը՝ հարկ է նշել, որ մեր պետության տեղեկատվական անվտանգության ապահովման գործուն համակարգի ստեղծման ուղղությամբ միջոցառումներ մշակելիս, հաշվի առնելով երիտասարդության հետ տարվող դաստիարակչական աշխատանքի բովանդակության և որակի վրա ազդող բոլոր հնարավոր գործոնները, անհրաժեշտ է առանձնացնել այն առանցքային ոլորտները, որոնց վրա ժամանակակից տեղեկատվական հոսքերի ազդեցությունն առավել վտանգավոր է: Մեր կարծիքով՝ առաջին հերթին դրանց շարքին պետք է դասել՝

- երիտասարդության հոգեկան առողջությունը,
- համամարդկային և ազգային իրական արժեքների մասին նրա պատկերացումը,
- հոգևոր-մշակութային ինքնության մասին պատկերացումը,
- սեփական ժողովրդի պատմության մեջ ճակատագրական դեր խաղացած իրադարձությունների և փաստերի մասին երիտասարդության տեղեկացվածությունը:

Երիտասարդության կողմից կլանվող ժամանակակից տեղեկատվական հոսքերի ազդեցության բնույթի և աստիճանի հետ կապված հիմնահարցերի ուսումնասիրումը կխթանի այս բնագավառի գիտական հիմքերի մշակման գործընթացի խորացումը, նոր հեռանկարներ կբացի երիտասարդության հետ տարվող աշխատանքների կատարելագործման համար:

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է առանձնացնել Հայաստանի Հանրապետության երիտասարդության վրա ժամանակակից տեղեկատվական հոսքերի ազդեցության հետևյալ հիմնական գործոններն ու առանձնահատկությունները.

1. Թեև տեղեկատվության ցանկացած միջոցներով տեղեկություններ և գաղափարներ ստանալու ազատությունն ամրագրված է ՀՀ Սահմանադրության մեջ, իսկ պետությունն իր վրա է վերցրել տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող անկախ հանրային ռադիոյի և հեռուստատեսության առկայությունն ու գործունեությունը երաշխավորելու պարտականությունը, ժամանակակից հայ երիտասարդությունը, բազմաթիվ հանգամանքների բերումով, այդ թվում նաև՝ սոցիալական, ի վիճակի չէ լիարժեք օգտվել իր իրավունքներից: Նա փաստացի չի տիրապետում տեղեկատվության այն ծավալին, որն անհրաժեշտ է հասարակության և պետության ռազմավարական նպատակները հաջողությամբ կյանքի կոչելու համար (այլապես այդքան սուր չէին կանգնի երիտասարդական միգրացիայի, կրթություն ստանալու համար անհրաժեշտ մոտիվացիայի (նույնիսկ բուն ուսումնառության ընթացքում) բացակայության և այլ հիմնախնդիրները:
2. Երիտասարդության կողմից սպառվող ժամանակակից տեղեկատվական հոսքերի բացասական (ապակողմնորոշիչ) ազդեցության աստիճանը պարզելու հիմնախնդիրը բավարար չափով ուսումնասիրված չէ: Դա, իր հերթին, հնարավորություն չի տալիս մշակել այդպիսի ազդեցությունը բացառող երաշխիքների համակարգի ձևավորման կոնկրետ ուղիներ:
3. Քննարկված հարցերի բարեհաջող լուծման նպատակով՝ առաջնահերթ կարգով անհրաժեշտ է լուրջ ջանքեր գործադրել տեղեկատվական անվտանգության գծով մասնագետների պատրաստումը կազմակերպելու ուղղությամբ: Ընդ որում՝ վստահաբար կարելի է ասել, որ նրանց գիտելիքները պահանջված են լինելու հասարակական և պետական կյանքի ամենատարբեր բնագավառներում: Ակնհայտ է, սակայն, որ այս խնդրի լուծումը վեր է մեկ կամ նույնիսկ մի քանի պետական կառույցների ուժերից ու հնարավորություններից: Դա պահանջում է համալիր մոտեցում, որը, մեր կարծիքով, այսօրվա պայմաններում հնարավոր է ապահովել միայն ՀՀ կառավարության մակարդակով:

Հոկտեմբեր, 2008թ.

Աղբյուրներ և գրականություն

1. ՀՀ Սահմանադրություն՝ ընդունված 05.07.1995թ. (փոփոխություններով և լրացումներով առ 27.11.2005թ.), ՀՀ պաշտոնական տեղեկագիր, Հատուկ թողարկում, 05.02.2005թ.:
2. *Почепцов Г.Г.,* Психологические войны, Киев-Москва 2002.
3. *Toffler A. and H.* War and Anti-war. Survival at the Dawn of the 21 Century. London, 1995.
4. *Тоффлер Э.,* Третья волна, Москва, 1999.
5. *Филин С.А.,* Информационная безопасность, Москва, 2006.
6. Большой энциклопедический словарь, Москва, 1991.
7. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն. Հաստատված է ՀՀ նախագահի 07.02.2007թ. հրամանագրով, «Հայկական բանակ», Երևան, 2007:
8. Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին. Հաստատված է ՀՀ նախագահի 25.12.2007թ. հրամանագրով, «Հայկական բանակ», Երևան, 2007:
9. Социология молодежи. Под. ред. *В. Н. Кузнецова,* Москва, 2007.
10. *Քինակցյան Ա.Լ.,* «Տեղեկատվական հասարակության» անցնելու հեռանկարը և պետության իրավապահպան գործառույթը // Գլոբալացվող աշխարհը և հումանիտար կրթության ու գիտության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում. գիտական նստաշրջանի նյութերի հավաքածու, Երևան, 2007:
11. ՀՀ պետական տեղեկատվական միասնական համակարգի ձևավորման, ներդրման և զարգացման սկզբունքները. Հաստատված են ՀՀ կառավարության 16.03.1999թ. N152 որոշմամբ, ՀՀ պաշտոնական տեղեկագիր, N 7 (73) առ 23.03.1999թ.:
12. *Портыка Т.Л., Попов И.И.,* Информационная безопасность, Москва, 2007.
13. *Филин С.А.,* Информационная безопасность, Москва, 2006.
14. *Расторгуев С.П.,* Информационная война: проблемы и модели. Экзистенциальная математика, Москва, 2006г.
15. *Հարությունյան Գ.Ա.,* ՀՀ տեղեկատվական համակարգի զարգացման հիմնախնդիրները ազգային անվտանգության համատեքստում, Երևան, 2003; ՀՀ տեղեկատվական քաղաքականության խնդիրների մասին / «Գլոբուս» վերլուծական տեղեկագիր, N4, մարտ, Երևան, 2008; Հայության կազմակերպման և տեղեկատվական անվտանգության խնդիրների մասին // «Գլոբուս» վերլուծական տեղեկագիր, N1, մայիս, Երևան, 2008; Հայության կազմակերպման և տեղեկատվական անվտանգության խնդիրների մասին // «21-րդ ԴԱՐ» «Նորավանք» ԳԿՀ հանդես, N2 (20), Երևան, 2008:
16. *Քոչարյան Գ.,* Տեղեկատվական համակարգի զարգացման խնդիրները ազգային անվտանգության համատեքստում, Երևան, 2003:
17. *Беззубик К.В.,* Содержание и методика психосоциальной работы в системе социальной работы, Москва, 2008.
18. *Кара-Мурза С.Г.,* Манипуляция сознанием, Москва, 2007.
19. *Семененко В.А.,* Информационная безопасность. Учебное пособие, Москва, 2006.
20. *Ярочкин В.И.,* Информационная безопасность, Москва, 2006.

21. *Уфимцев Ю.С. (рук. авт. кол-ва),* Методика информационной безопасности, Москва, 2004.
22. *Тихонов В.А., Райх В.В.,* Информационная безопасность: концептуальные, правовые, организационные и технические аспекты, Москва, 2006.
23. *Калиниченко М.,* Проблемы скрытой передачи информации // Информационная безопасность, N1, февраль, Москва, 2008.

ВЛИЯНИЕ СОВРЕМЕННЫХ ИНФОРМАЦИОННЫХ ПОТОКОВ НА МОЛОДЕЖЬ

Арина Икиликян, Армен Кинакцян

Резюме

Статья носит научно-практический характер. Ее содержание относится к злободневной проблематике воспитательной работы с армянской молодежью в контексте ограждения ее от деструктивного воздействия современных информационных потоков, в огромном массиве которых нередко появляются умышленно насажденные элементы (символы, формулировки), способные вызвать процессы самоустранения и самоограничения, а также искаженное представление о патриотизме, моральных устоях общества и других фундаментальных понятиях. Указанная проблематика напрямую касается задач сферы обеспечения информационной безопасности Республики Армения. Рассматривая современные вопросы воспитания армянской молодежи в духе патриотизма, государственного мышления и высокого правосознания, авторы обращают внимание на то обстоятельство, что в своей совокупности современные информационные массивы, поглощаемые молодежью, в силу их не всегда положительного влияния на сознание и подсознание молодых людей не содействуют формированию информационной базы для успешного претворения в жизнь стратегических установок государства. На основе анализа основных тенденций развития информационной сферы Республики Армения выделены определяющие факторы и особенности влияния современных информационных потоков на молодежь, представлены некоторые конкретные предложения по развитию информационной сферы, совершенствованию воспитательной работы с молодежью, решению в ходе этого задач информационной безопасности.

ՎԻԼՍՈՆՅԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՆ

Լևոն Շիրինյան

«Ինչ որ արգելք կը հանդիսանայ մեր աշխարհի կորստեան,
այն ափ մը անշահախնդիր մարդիկ են, զորս ան կը պարունակէ»:
Վ.Վ.

Մինչ XX դարասկզբին երկու խմբավորումներ՝ Եռյակ միությունը և Անտանտն, արնաքամ էին լինում՝ 1-ին աշխարհամարտի ռազմաճակատներում արձանագրելով փոփոխական հաջողություններ, ԱՄՆ նախագահ Թոմաս Վուդրո Վիլսոնը *(Thomas Woodrow Wilson)* (1856.28.XII–1924.3.II) հանդես եկավ աշխարհի միջազգային-իրավական վերակազմավորման վիթխարի ծրագրով. Հին աշխարհի հակասությունները, հանուն նրա հիմնավոր ու տևական խաղաղության և ընդգրկուն անվտանգության, անհրաժեշտ էր լուծել նոր սկզբունքների հիմքի վրա ու աննախընթաց նախաձեռնություններով: Այդ մասին Վիլսոնն արտահայտվեց ԱՄՆ Սենատին հղած 1917թ. հունվարի 22-ի ուղերձում: Այնտեղ շարադրվեցին Վիլսոնի հիմնական պատկերացումները հետպատերազմյան աշխարհակառույցի վերաբերյալ, որը պետք է ցնցեր առկա աշխարհակարգի հիմքերը հիմնավորապես: Հոդվածում անդրադարձ է կատարվում աշխարհակարգի վիլսոնյան նախագծին և նրա նոր պրոյեկցիային՝ ասիական Թուրքիային:

1. Վիլսոնյան աշխարհակարգը

Եվրոպան XX դար թևակոխեց սուր հակասությունների թնջուկով: Եռյակ միությունը (Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Թուրքիա) Գերմանիայի գլխավորությամբ աշխարհի վերաբաժանման և համաշխարհային տիրապետության հայտ էր ներկայացրել՝ հակադրվելով Անգլիայի կողմից գլխավորվող Անտանտին (Անգլիա, Ֆրանսիա, Ռուսաստան, Ճապոնիա): Իրարհասկացողության լեզուն, դժբախտաբար, գտնվել էր պատերազմի սանձազերծման մեջ: Հին աշխարհին ընթանում էր պատմությունից իրեն քաջածանոթ արահետներով: Հակառակ «կայծակնային» *(բլիցկրիգ)* հաղթանակի ակնկալիքին, պատերազմն արագորեն ձեռք բերեց *տևական* ընթացք և *համաշխարհային* ընդգրկում: Պատերազմի հրձիգների վառած կրակին հրո ճարակ դարձավ քաղաքակիրթ աշխարհը, ինչպես և սպասելի էր՝ առաջին հերթին Հայաստանը:

Խոշոր տերություններից միայն ԱՄՆ-ն էր, որ Եվրոպայից հեռու և ապավինած «Մոնրոյի վարդապետությանը», ընդհուպ 1917թ. ապրիլի 6-ը, զերծ մնաց համաշխարհային սպանդից: Իսկ պատերազմի մեջ մտավ Անտանտի կողմից ոչ որպես «դաշնակից», այլ նրան «հարող» *(«to beat, to churn»)* երկիր, որպես դաշնակիցներին «զուգորդված (ասոցիացված) տերություն»:

Մեր հմայքն ու մեր հզորությունը, ազդարարում էր ԱՄՆ նախագահը, պետք է միացվեն մյուս ժողովուրդների հմայքին ու հզորությանը՝ ողջ աշխարհում խաղաղությունն ու արդարությունն ապահովելու համար: Դրա համար, ակնարկում է նախագահը, անհրաժեշտ է այն ապահովել ողջ մարդկության «կազմակերպված ուժի կողմից», որն է Ազգերի դաշնակցությունը: Ըստ Վիլսոնի, քաղաքական աշխարհը կանգնած է երկընտրանքի առաջ. այժմյան պատերազմն արդյո՞ք պատերազմ է արդար և կայուն խաղաղության համար, թե՞ պայքար է միայն հանուն տերությունների միջև նոր հավասարակշռության: Եթե դա պայքար է հանուն քաղաքական հավասարակշռության նոր համակարգի, ապա այդ դեպքում ո՞վ կարող է երաշխավորել համակարգի նոր հավասարակշռությունը: Եվրոպան կարող է կայուն լինել, երբ այն հանգիստ է: «Այդտեղ,- ասում է նախագահը,- պետք է ոչ թե հավասարակշռություն, այլ ուժերի ընդհանրություն, ոչ թե մրցակցություն, այլ ընդհանուր խաղաղություն»: Արդի աշխարհում «չպետք է լինի ուժերի հաշվեկշիռ, ազգերի մի հզոր խմբավորման հակադրություն մյուսին, այլ պետք է ձևավորվի ազգերի միասնական խումբ, որոնց ձեռքում պետք է լինի խնամակալությունն աշխարհի խաղաղության վրա»:

Վիլսոնի կարծիքով, հետպատերազմյան աշխարհը պետք չէ, որ ձևավորվի երկու խմբավորումներից որևէ մեկի հաղթանակի հիման վրա: Խաղաղությունը կլինի տևական *(«Peace Without Victory»),* ամուր, եթե կնքվի հավասարների միջև, որն ամբողջությամբ հիմնված կլինի հավասարության սկզբունքի և ընդհանուր բարօրությանը հավասար մասնակցության վրա: Ճշմարտության զգացումը, համաշխարհային արդարության զգացումն այնքան է անհրաժեշտ կայուն խաղաղության հաստատման համար, որքան անհրաժեշտ է «տարածական, ցեղային կամ ազգագրական բնույթի հրատապ հարցերի ճիշտ լուծումը»: Ազգերի հավասարությունը, որի վրա պետք է հանգչի կայուն խաղաղությունը, պետք է արտահայտվի նրանց իրավահավասարության մեջ: Իրավունքը պետք է հենվի բոլոր ազգերի ընդհանուր հզորության վրա, որոնց համաձայնությունից է կախված լինելու բոլոր ազգերի ընդհանուր հզորությունը, այլ ոչ թե նրանցից մեկի հզորությունից:

Իհարկե, դա չի նշանակում տարածքների և այլ պաշարների հավասարություն, և ընդհանրապես, բարիքների բաշխման հավասարություն, քանզի դրանք ժողովուրդների սովորական համաշխարհային զարգացման արդյունք

չեն եղել: «Սակայն,- գտնում է նախագահը,- ոչ ոք չի սպասում և չի էլ պահանջում ոչինչ, բացի իրավունքների հավաստությունից: Այժմ մարդկությունը ծարավ է գոյության ազատության և ոչ թե ուժերի հավասարության»: Կազմակերպված ժողովուրդների միջև չի կարող և չպետք է լինի կայուն խաղաղություն, որը չի բխում այն սկզբունքից, թե «կառավարությունն իր բոլոր արդարացի իրավասությունները փոխ է առնում միայն ժողովրդի կամքից, և ոչ մեկը իրավունք չունի ժողովուրդներին հանձնելու մի պետությունից մյուսին, կարծես թե նրանք իրեր լինեն»: Իսկ այն ժողովուրդների համար, որոնք ապրել են այլ հավատ դավանող և նույնիսկ նրանց նկատմամբ թշնամական նպատակներ հետապնդող ժողովուրդների իշխանության տակ, առաջիկայում պետք է ապահովվի գոյության, հավատի, արդյունաբերության և հասարակական զարգացման ազատություն:

Ուշադրության է արժանի նախագահ Մոնրոյի վարդապետության «վիլսոնյան» ընթերցումը, որը «վիլսոնյան աշխարհակարգի» հաստատման ճանապարհին խոչընդոտից վերածվում էր իր հակադրությանը: Վիլսոնն առաջարկում էր, որ բոլոր ազգերը «ընդհանուր համաձայնությամբ» ընդունեն այն, որպեսզի «ոչ մի ազգ չձգտի իր գերիշխանությունը տարածել ուրիշների վրա, այլ որպեսզի յուրաքանչյուր ժողովրդի հնարավորություն տրվի ազատ ինքնորոշվելու, ինչպես նաև իրավունք՝ հետևելու իր ընտրած զարգացման ուղուն՝ առանց արգելքների և առանց սպառնալիքի. թույլերին նույնպես, ինչպես որ ուժեղներին»:

Վիլսոնը միջազգային հարաբերությունների որակապես նոր համակարգի օգտին որոշակիությամբ արտահայտվում է Հռոմի պապ Բենեդիկտոս XV-ի խաղաղության առաջարկի պատասխան ուղերձում, 1917թ. օգոստոսի 29-ին: Դեմ լինելով պատերազմից հետո կայսրությունների տրոհմանը՝ Վիլսոնը միաժամանակ հռչակում է ժողովուրդների՝ «մեծ» ու «փոքր», ինքնակառավարման, անվտանգության ու աշխարհի գործերին իրավահավասար մասնակցության իրավունքը:

Այդուհանդերձ, զլոբալ մտածողության ճանապարհին և՛ տեսական-քաղաքական իմաստով, և՛ ընդհանուր ռազմավարության տեսանկյունից, և՛ գործնական քաղաքականության առումով վերափոխիչ նշանակություն ունեցան ԱՄՆ Սենատի միացյալ նիստում Վիլսոնի հռչակած «14 կետերը», որոնք, ըստ էության, նախատեսում էին հետպատերազմյան աշխարհակառույցի հաստատում՝ համապատասխան «ազատականության սկզբունքների և հակաիմպերիալիզմի» [1, с. 124]: Ուստին, միջազգային քաղաքականության տեսակետից Վիլսոնի պլանը ոչ այլ ինչ էր, եթե ոչ «դաշնակցային (ֆեդերալիստական) ծրագիր համաշխարհային մասշտաբով, միաժամանակ՝ համաշխարհային ազատականության ամենաավարտուն ծրագիրը» [2, с. 107]:

Գլոբալ նախագծի վեց կետերը [1-5, 14 կետեր; 1. բաց խաղաղ դաշնագրեր, 2. խաղաղ և պատերազմական ժամանակ լրիվ ազատություն առևտրական նավագնացությանը, 3. միջազգային առևտրին խանգարող խոչընդոտների վերացում, 4. զենքի կրճատումն ապահովող երաշխիքների հաստատում, 5. գաղութային հարցերի կարգավորում, 14. Ազգերի դաշնակցության ստեղծում] վերաբերում էին աշխարհակառույցի միջազգային իրավական վերակազմավորման գլխավոր տեսանկյուններին, իսկ ութը (6-13 կետեր)՝ հրատապ ու արմատական լուծում պահանջող, սակայն լոկալ (տեղական) հիմնախնդիրներին: Դրանով իսկ նախագահ Վիլսոնի ծրագիրը ձեռք էր բերում, հիրավի, «տիեզերական» ընդգրկում. արմատական փոփոխությունների գլխավոր ուղղությունները լրացվում էին ցնցումներից հոգեվարք ապրող աշխարհի տարածքային, ազգագրական, մշակութային-քաղաքակրթական անլուծելի թվացող կնճիռների հաղթահարումով: Հետպատերազմյան ռազմավարական աշխարհի առջև բացվում էին անվտանգ ու իրավահավասար զարգացման դռները:

Խաղաղության վեհաժողովին ԱՄՆ պատվիրակությանը հաջողվեց «Վիլսոնի վարդապետությունը» Դաշնակիցներին դիտել տալ որպես բանակցությունների հիմք: Նրանք ստացան գնդապետ Էդուարդ Հաուզի հանձնարարությամբ «Ուորլդ» թերթի խմբագիր Ֆրենկ Կոբի կողմից (Ուոլտեր Լիպմանի օգնությամբ) մշակված և նախագահի կողմից հաստատված 14 կետերի «պաշտոնական մեկնաբանությունները» (1918թ. օգոստոս)՝ որպես «խաղաղության պայմաններ»: Այստեղ ևս, աշխարհի լոկալ (արյունահոս) վերքեր էին դիտվում և հանուն աշխարհի խաղաղության ու քաղաքակրթության անվտանգության հրատապ լուծում պահանջում Ռուսաստանի (կետ 6), Բելգիայի ազատագրության (կետ 7), Գերմանիայի՝ Ֆրանսիայից բռնազավթած տարածքների, Էլզաս-Լոթարինգիայի վերադարձի (կետ 8), Իտալիայի սահմանների ուղղման (կետ 9), Ավստրո-Հունգարիայի ժողովուրդների ինքնավար զարգացման (կետ 10), Բալկանյան թերակղզու երկրների ու ժողովուրդների կյանքի կարգավորման (կետ 11), լեհական անկախ պետության ստեղծման (կետ 13) և, վերջապես, Օսմանյան կայսրության ճակատագրի և «թրքական ջրուղիների» (կետ 12) թնջուկները:

2. Մերձավոր Արևելքի վերակազմման վիլսոնյան ծրագիրը. Հայաստանը որպես անկյունաքար

Մեր հետաքրքրության կիզակետն, անշուշտ, կետ 12-ն է: Նախ՝ որովհետև թուրքական թնջուկը արնածոր էր, իսկ Օսմանյան կայսրությունը վերածվել էր պատմական անաքրոնիզմի՝ մահ ու ահաբեկչություն տարածելով աջ ու ձախ, երկրորդ՝ քրիստոնեական (արևմտյան) քաղաքակրթության հետ թյուրք-իսլամական ենթաքաղաքակրթության դիմաբախման դասական գոտի էր, և եր-

բորդ՝ հաղթական Անտանտի կրտսեր դաշնակից հռչակված Հայաստանի խնդիրը քննարկվում էր Օսմանյան կայսրության լուծարում-անդամահատման ենթատեքստում: Ուստի, ամբողջությամբ մեջ ենք բերում ճակատագրական 12 կետը, որն ասում էր. «Օսմանյան կայսրության թուրքական մասերը, իրենց ներկա կազմով, պետք է ստանան ապահովված և կայուն վեհապետություն, սակայն մյուս ազգությունները, որոնք այժմ գտնվում են թուրքերի իշխանության տակ, պետք է ստանան գոյության աներկբա երաշխիքներ և ինքնավար զարգացման բացարձակապես անխախտ պայմաններ: Դարդանելը պետք է մշտապես բաց լինի նավերի ազատ անցումի և բոլոր ազգերի առևտրի համար՝ միջազգային երաշխիքներով»: Իսկ մեկնաբանություններում, որոնք ամենաշատն էին արտացոլում «պաշտոնական ամերիկյան ծրագիրը», թուրքական բուն տարածք էր դիտվում Անատոլիան (նույնն է և Սևրի դաշնագրում). «Հայաստանին պետք է տրամադրվեր նավահանգիստ Միջերկրական ծովում որևէ տերության հովանավորությամբ»: Նշվում էր, որ դրան կհավակնի, հավանաբար, Ֆրանսիան, «սակայն հայերը կգերադասեին Անգլիային»:

Չէին անտեսված, ի դեպ, Օսմանյան կայսրության այլ ժողովուրդների՝ հույների, արաբների և այլն, իրավունքները, դրանով, կարծես թե, տուրք էր տրվում քաղաքակրթական ու պատմական անհրաժեշտության պահանջներին: Վիլսոնյան ծրագրով առաջարկվում էր խաղաղության դաշնագրում «ներգրել» «երաշխիքների ընդհանուր կոդեքս»՝ իմպերատիվ հատկանիշով: Պարտադրվում էր կնքվելիք դաշնագրում ապահովել փոքրամասնությունների իրավունքներն ու բաց դռների սկզբունքը, իսկ գլխավոր երկաթուղագծերը պետք է միջազգայնացվեին: Նեղուցներն ու Կ.Պոլիսը, թեկուզև անվանապես, կարող էին մնալ թուրքական, սակայն պետք է ենթարկվեին կոլեկտիվ կամ Ազգերի դաշնակցության իրավարար որևէ տերության «միջազգային վերահսկողության»:

Հայաստանի կենսական շահերն առկա էին նաև «ռուսական հարցի» (կետ 6) «կովկասյան» առաջարկներում՝ «հավանաբար» «որպես Թուրքական կայսրության պրոբլեմի մաս»: Սկզբունքային նշանակություն ուներ Բրեստ-Լիտովսկի դաշնագրի չեղյալ հայտարարման պահանջը՝ որպես «ակնհայտորեն սրիկայական պայմանագրի»[1]:

Հայտնի է, որ ամերիկյան պատվիրակությունը ներկայացավ Փարիզի խաղաղության վեհաժողով կատարելապես նախապատրաստված՝ ձեռքի տակ ունենալով բազմաթիվ տեղեկանքներ և փաստաթղթեր, խորհրդականների ու փորձագետների նշմարելի քանակ, պետքարտուղար Ռ.Լանսինգի կողմից մշակված հատուկ հրահանգ, որն, ըստ էության, պարունակում էր

[1] Այդուհանդերձ, «սրիկայական» այդ դաշնագրի տրամաբանության շրջանակում էլ տեղի ունեցավ Հայաստանի մասնատումը 1920թ. աշնանը, Քեմալ-Լենին տանդեմի կողմից:

բոլոր հիմնական հարցերի լուծման նախագծերը: ԱՄՆ ծրագիրն իր արտացոլումը գտավ նաև պետական դեպարտամենտի կողմից 1919թ. հունվարի 21-ին կազմված քարտեզներում: Այդ քարտեզներով, որոնք արտացոլում էին «Վիլսոնի վարդապետությունը», Օսմանյան կայսրությունը բաժանվում էր երեք պետության՝ 1) Թուրքիա, 2) Հայաստան, 3) Կ.Պոլիս: Թուրքական պետությունը պետք է ընդգրկեր ողջ Անատոլիան, արևելքից՝ Անտի-Տավրոսից մինչև Բուրսա քաղաքով անցնող գիծը՝ զուգահեռ Բոսֆոր և Դարդանել նեղուցներին: Նախատեսվում էր Թուրքիայի մայրաքաղաքը դարձնել Կոնիա քաղաքը [3, с. 294]: «Կ.Պոլսի» պետության մեջ պետք է մտնեին եվրոպական տարածքները՝ Բոսֆոր և Դարդանել նեղուցներով, Մարմարա ծովի ողջ ծովափը, ինչպես նաև Անատոլիայի արևմտյան մասերը՝ Բուրսա և Բանդրմա քաղաքներով: Պոլսական պետության կազմում հետագայում պետք է ընդգրկվեր, ըստ քարտեզի մեկնաբանությունների, ինչպես ամբողջ Արևելյան, այնպես էլ Արևմտյան Թրակիան (այն պետք է անցներ Բուլղարիային):

Լանսինգի հրահանգի համաձայն, Կ.Պոլիսն ու նեղուցները պետք է առանձնացվեին որպես առանձին պետություն՝ միջազգային վերահսկողության տակ, կամ Ազգերի դաշնակցության անունից տրվեին որևէ տերության՝ որպես ենթահոգատար տարածքի: Եվրոպայից թուրքերը պետք է վերաբնակեցվեին Անատոլիայում: Անատոլիայի մերձափնյա տարածքներում, որոնք բնակեցված էին հույներով, պետք է հաստատվեր միջազգային վերահսկողություն և դրվեին Հունաստանի տրամադրության տակ՝ որպես ենթահոգատար տարածք: Պաղեստինի, Միջագետքի և Արաբիայի համար հոգատար էր դիտվում Անգլիան, Սիրիայի համար՝ Ֆրանսիան: Հայաստանի, Կ.Պոլսի ու նեղուցների, Անատոլիայի հոգատար երկիրը չէր նշվում [4, pp. 172-175]:

1919թ. ամերիկյան կառավարությունը մանրակրկիտ քննության ենթարկեց Օսմանյան կայսրությունը (Քինգ-Քրեյնի հանձնաժողով, Հարբորդի առաքելություն և այլն)՝ նրա հանդեպ մանդատ հաստատելու նպատակահարմարության և հնարավորության հարցը պարզելու համար: Այսպիսով, 1919թ. ամռանն ու աշնանը հետազոտվեցին Սիրիան, Անատոլիան, Հայաստանը, Անդրկովկասը [5, 6]:

Ակնհայտ է, որ Վիլսոնի ծրագրերը հակասում էին եվրոպական գլխավոր դաշնակից երկրների՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի և Իտալիայի՝ Օսմանյան կայսրության տրոհման (գաղտնի) պայմանագրերին: Ուստին, նախագահը հաստատեց տվյալ պայմանագրերն անիրական համարող ամերիկյան դիվանագիտական թեզիսը [7, p. 231]: Եվ հանդես եկավ Միջին Արևելքի արմատական վերակազմման արմատական ու հեռատես ծրագրով:

Վիլսոնը հետևողական էր:

Ամերիկյան կողմի ճնշման տակ անգլիական պատվիրակությունը 1919թ.

մայիսի 13-ին «Երեքի խորհրդի» (Վ.Վիլսոն, Դ.Լլոյդ Ջորջ, Ժ.Կլեմանսո) քննարկմանը ներկայացրեց Օսմանյան կայսրության տրոհման սխեման, որը նախատեսում էր Միացյալ Նահանգներին հանձնել Հայաստանի, Կ.Պոլսի և նեղուցների (Բոսֆոր և Դարդանել), Մարմարա ծովի ու մերձափնյա ոչ մեծ տարածքի հոգատարությունը (մանդատը) [8, p. 622]: Միաժամանակ, սխեմայի մեջ առաջարկվում էր Անատոլիայի բաժանումը Ֆրանսիայի, Իտալիայի ու Հունաստանի միջև: Վիլսոնն իր պաշտոնական պատրաստակամությունը հայտնեց ԱՄՆ անունից ընդունել նեղուցների հետ միասին Կ.Պոլսի և Հայաստանի հոգատարությունը՝ ԱՄՆ Սենատի համաձայնությունը ստանալու պայմանով [8, p. 614]: Ընդսմին, նախագահը դեմ արտահայտվեց Անատոլիայի բաժանմանը:

Լլոյդ Ջորջի նոր առաջարկում, որը ներկայացվեց մայիսի 21-ին, «Երեքի խորհրդի» քննությանը, հաշվի առնվեցին ամերիկյան պահանջները՝ «թեթև հոգատարությունը» Անատոլիային և նույնիսկ «ժամանակավոր հոգատարությունը» ռուսական Հայաստանին, Ադրբեջանին և Կովկասի ամբողջ շրջանին ընդհուպ խնդրի լրիվ լուծում [8, pp. 770-771]: Այսպիսով, քաղաքակրթությունների այս խառնարանում հայ ժողովուրդը, թվում է, դուրս էր պրծնում թուրքական գեհենից և կարող էր, ի վերջո, վերականգնել իր հայրենիքը՝ աշխարհի առաջին քրիստոնյա պետությունը (301թ.), տնականորեն վայելելու ամերիկյան երիտասարդ ու կենսունակ ժողովրդավարության պաշտպանությունը: Սակայն ուրիշ էին եվրոպական մեծերի հաշիվները: Մասնավորապես, Ֆրանսիան պնդեց Անատոլիայի հանդեպ ֆրանսիական հոգատարության նախագծի վրա, չէր թաքցնում Կիլիկիայի հանդեպ իր երկրի բացառիկ հետաքրքրությունները:

Դեռևս 1919թ. մարտի 7-ին Լլոյդ Ջորջի հետ ոչ պաշտոնական հանդիպման ժամանակ նախագահ Վիլսոնի ընկեր ու հավատարմատար, գնդապետ Էդուարդ Հաուզը Հայաստանի ու Կ.Պոլսի հոգատարության հարցի առնչությամբ հայտնել էր, որ ԱՄՆ-ը պատրաստ է իր վրա վերցնել Անատոլիայի «հսկողությունը» [9, p. 228]: Իսկ 1919թ. մայիսի 20-ին «Չորսի խորհրդի» (Վուդրո Վիլսոն, Դեյվիդ Լլոյդ Ջորջ, Ժորժ Կլեմանսո, Վիտորիո Օռլանդո) նիստում նախագահ Վիլսոնը շարադրեց ԱՄՆ պլանները Հայաստանի վերաբերյալ: Նա հայտարարեց. քանի որ Ռուսաստանը ջախջախվել է, ապա փոխվում է 1916թ. պայմանագրերի հիմքը (Վիլսոնը նկատի ուներ Սայքս-Պիկո համաձայնագիրը-*Լ.Շ.)*, և դա թույլ է տալիս «Հայկական հարցը» դիտել ավելի լայն պլանով: Վիլսոնը պահանջում էր Հայաստանի կազմի մեջ ընդգրկել նաև Կիլիկիան, քանզի այլ կերպ «Հայաստանը կկտրվի Միջերկրական ծովից» [9, p. 9]:

Քաղաքակրթական առումով ողջախոհ և հեռանկարային դիրքորոշումը չէր կարող ոգևորել 1916թ. պայմանագրերը երկնած ֆրանսիական և անգլիական կողմերին: Սակայն Գերմանիայի հետ «խաղաղության պայմանագիրը» դեռևս չէր կնքված և, ըստ էության, վիլսոնյան տեսակետը մերժող գլխավոր

դաշնակիցները դեռևս պետք է հաշվի նստեին ամերիկյան դիրքորոշման հետ:

Ինչքան էլ տարօրինակ թվա, «14 կետերի» սեփական մեկնաբանությունն ունեին խոշոր եվրոպական տերությունների տարաձայնությունների ու խուլ հակասությունների վրա հավերժորեն դրեյֆող թուրքերը: Նկատի ունենալով կայսրությունները չտրոհելու վիլսոնյան տեսակետը՝ հայ կանանց և անհաշիվ որբերի դահիճ, «արևմտականացած» Հալիդե Էդիպը հանդես է գալիս Թուրքիայի նկատմամբ ամերիկյան հոգատարության օգտին [10, pp. 10-11]: Սույն ճիզվիտը այն հույսն է հայտնում, որ Վիլսոնի «14 կետերը» թույլ են տալիս հուսալ, թե «թուրքերին կթողնվեն այն հողերը, *որտեղ նրանք կազմում են անվիճելի մեծամասնություն»* (ընդգծումը՝ *Լ.Շ.),* ընդսմին նկատի ունենալով, որ այդ հողերը հենց վերջերս ցեղային մաքրագործման *(«épuration ethnique»)* հետևանքով ամայացած Հայաստանն են, ուստին դաշնակիցները չեն գնա «Հայաստանի ստեղծմանը Թուրքիայի արևելքում և հարավում» [9, p. 3]: Նշանակում է՝ կղառնան լուռ հանցակիցը թուրքական հանճարի ստեղծագործության՝ *ցեղասպանության* ակտի կիրառմանը որպես *Հայրենիք* և *Մշակույթ* կողոպտելու ու սեփականելու միջոցի: Սկսված էր, ինչպես և հասկանալի է, Մեծ ոճիրի արդյունքների իրացման և ուրացման շրջանը: Օրինակ, այսպես, «հայկական տարրից» 1915թ. մայիսին մաքրագործված հայկական Երզնկա քաղաքի կառավարական շենքի «սանդուղքներու վրա», Հարբորդի առաքելությունը դիմավորելիս (1919թ. սեպտեմբերի 23), «խոշոր գիրերով *«Viva L'Art. 12 des Principes de Wilson»* գրված լաթը կցուցադրվեր» [6, #3, էջ 130]:

Ուշագրավ է Կ.Պոլսի ամերիկյան կոմիսար Լ.Հեկի *(Lewis Heck)* 1919թ. հունվարի 4-ի հաղորդումը Ֆրանսիայում ամերիկյան դեսպանին առ այն, թե թուրքերը շատ են վախենում խաղաղության վեհաժողովում դաշնակից գլխավոր տերությունների, բացառությամբ ԱՄՆ-ի, իրենց հանդեպ սպասվելիք չափազանց խիստ վերաբերմունքից և ապավինում են բացառապես Վիլսոնին ու նրա «14 կետերին» [8, Vol. II, p. 282]: Անշուշտ, թուրքերը վախենալու հիմք ունեին. անդամահատման սեղանի վրա էր ոճիրների մեջ թաղված ենիչերիների բռնակալությունը, իսկ վերնախավ կոչված թուրք կառավարիչների, զինվորականների ու մտավորականների գլխին կախված էր Անտանտայի գլխավոր երկրների՝ Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի 1915թ. մայիսի 24-ի հայտարարության սպառնալիքը: Կոտորածների համար գլխավոր դաշնակից երկրները հրապարակավ անձնապես պատասխանատու էին հռչակում օսմանյան կառավարության բոլոր անդամներին և տեղական այն պաշտոնյաներին, որոնք մասնակցել էին ոճրագործություններին, գործողություններ, որոնք որակվել էին որպես *«ոճիր մարդկության և քաղաքակրթության դեմ»:* Պարզ է, որ թուրքերը նպատակ էին դրել օգտվել XX դարի խոշորագույն քաղաքական գործչի ահռելի հեղինակությունից, ապականել մեծ մարդասեր-քրիստոնյայի

անունն ու աշխարհի վերակազմման հուսատու ծրագիրը՝ բովանդակազրկելով այն սեփական մեկնաբանությամբ: Նրանք ամերիկյան հովանոցի տակ թաքնվելու նպատակով ստեղծում են, այսպես կոչված, «Ազգային կոնգրես» և համանման այլ կազմակերպություններ, որոնք, այդուհանդերձ, մեծ ազդեցություն չեն կարողանում ձեռք բերել: Սակայն այս կազմակերպությունների առկայությունը Վիլսոնին թույլ է տալիս ապացուցել, որ թուրքերը գերադասում են ամերիկյան հոգատարությունը: Այդպիսով, թերևս *«Վիլսոնի վարդապետությունը»,* իր ամբողջության մեջ, *բացում էր հակասություններից բզկտվող Մերձավոր ու Միջին Արևելքի առջև իրավահավասար, անվտանգ և ներդաշնակ զարգացման հեռանկար, ստեղծում էր քաղաքակրթությունների սինքրոն երկխոսության նախադեպ:* Իրոք որ «հարատև» խաղաղությունն այստեղ դառնում էր շոշափելի ներկայություն:

Բայց, սկսած 1919թ. երկրորդ կեսից, եվրոպական գլխավոր դաշնակից երկրները, երբ արդեն կնքված էր հաշտության դաշնագիրը Գերմանիայի հետ (28 հունիսի, Վերսալ), այլևս չվերադարձան մայիս-հունիսին քննարկված Թուրքիայի հանդեպ ամերիկյան հոգատարության նախագծին և վերցրին Կ.Պոլսի ու Անատոլիայի հանդեպ ամերիկյան հոգատարության *վերաքննության* հաստատուն ուղղություն: Այժմ խոսք կարող էր լինել միայն Հայաստանի հոգատարության մասին: Հայաստանն այսպես առանձնացվեց և, բնականաբար, մեկուսացվեց օսմանյան ընդհանուր թնջուկից, որն, ըստ էության, ամբողջության մեջ իրենով ծածկում էր Մերձավոր Արևելքը: Վատթարն այն էր, որ նույն շրջանում էր (1919թ. նոյեմբեր), որ ծայրակետին հասավ խզումը Վիլսոնի և հանրապետականների ղեկավարության միջև, երբ Սենատը հրաժարվեց վավերացնել Վերսալյան դաշնագիրն ու թույլ տալ Միացյալ Նահանգներին դառնալ Ազգերի դաշնակցության անդամ: (Վավերացման հասնելու երկրորդ փորձը, ձայների 2/3-ի գերազանցության պահանջով, անհաջողության մատնվեց 1920թ. մարտին) [11, c. 120]: Առաջիկայում տապալվելու էր, ներքին թե արտաքին ազդակների ճնշման տակ, վիլսոնյան խոյանքը դեպի համաշխարհային հզորության շողացող բարձունքներ, երևակայությունից զուրկ քաղքենուն անըմբռնելի էր մնալու նախագահի մտքի թռիչքը, որը, թերևս, սեփական անձի ներքին ծալքերի հակասությունների մեջ խճճված Զիգմունդ Ֆրոյդին առիթ էր տալու նախագահի անձը և մտային ոստյունները հետագայում տեղավորել «հոգեվերլուծության» (պսիխոանալիզ) կասկածելի եզրահանգումների շրջանակներում: Մինչդեռ Վիլսոնի մահից ինը տարի հետո ԱՄՆ նոր նախագահ Ֆրանկլին Դ.Ռուզվելտը «հպվելու» էր Վիլսոնի ժառանգությանը, ցավոք, առանց Թոմաս Վուդրո Վիլսոնի և առանց «Վիլսոնյան Հայաստանի»:

Վիլսոնը ձախողվեց:

Գլխավորը նրա ձախողման մեջ, նկատենք, այդուհանդերձ, եվրոպական

գլխավոր դաշնակից երկրների ռազմական գերազանցությունը չէր և ոչ էլ նույնիսկ նրանց բազմամիլիոն բանակների հզորությունը: Խարդավանքը «եվրոպական համանվագի» գործողության մեխանիզմի մեջ էր: Վիլսոնը և Լլոյդ Ջորջը 1918թ. հայտարարեցին. «ցարիզմի կործանումը արմատապես փոխեց արևելյան խնդիրը՝ «գլանակը» կանգնեց, պայթեց պատերազմից ու հեղափոխությունից… Ռուսական վտանգը վերացավ: Առաջին հետևությունը՝ Թուրքիան այլևս պետք չէ, Թուրքիան իր հերթին ենթակա է ոչնչացման» (Ե.Ա.Ադամով): Չքացավ «եվրոպական համանվագը»: 1919թ. հունվարի 30-ին եվրոպական տերությունները հանդիսավոր կերպով հայտարարեցին. Օսմանյան կայսրությունը դադարեցրեց իր գոյությունը: Իսկ Վիլսոնն ազդարարեց. «Անցյալին վերադարձ չկա»: Այդպես, սակայն, թվում էր միայն:

Մինչ Վիլսոնը ուժերի բարդ հարաբերակցության մեջ ուրվագծում էր «կայուն համաշխարհային հավասարակշռություն», կարդինալ Ռիշելիեի հայրենակից Կլեմանսոն մարտնչում էր «ուժերի նոր հաշվեկշռի» համար, մինչ Վիլսոնը պայքարում էր հանուն «միջազգայնորեն կազմակերպված աշխարհի», «իրավունքին ընդհանուր հավատարմության», Կլեմանսոն «իր առջև տեսնում էր միայն Ֆրանսիային», որի «նկատմամբ տածում էր նույն զգացմունքները, ինչ որ Պերիկլեսը Աթենքի. այն ամենը, ինչ որ գին ունի, ամփոփված է նրա մեջ, մնացածը ոչինչ չարժե…», որ «ուժի վրա հիմնված քաղաքականությունը անխուսափելի է» (Ջ.Մ. Քեյնս):

Փարիզի խաղաղության վեհաժողովում, գրում է Ջոն Մ. Քեյնսը, «համաշխարհային հարաբերությունների ապագա կառուցվածքի վերաբերյալ միմյանց միջև պայքարում էին երկու հակադիր պլաններ՝ Վիլսոնի *Տասնչորս կետերը* և Կլեմանսոյի *Կարթագենյան խաղաղությունը:* Սակայն միայն նրանցից մեկն է, որ իրականացման իրավունքն ուներ...» (ընդգծումը՝ *Լ.Շ.)* [12, c. 25]: Այն իր դաժանությամբ արտացոլվում էր թուրքական հարցի շուրջ ընթացող համաշխարհային դավերի շրջանակում՝ «վերսայլյան գործընթացի» գլխավոր խարդավանքներում: Եվ ժամանակի ընթացքում սկսեց գերակշռել «Կլեմանսոյի *Կարթագենյան խաղաղությունը».* Եվրոպան հակվեց «երջանիկ անցյալին», շրջվեց դեպի անցյալի «մեծ տիպարները», դեպի «եվրոպական համանվագ», որի ծնունդն էր համաշխարհային առաջին սպանդը և բոլոր ժամանակների Մեծ ոճիրը՝ Հայոց ցեղասպանությունը: Իսկ Թուրքիան առաջիկայում Արևմուտքի համար ձեռք էր բերելու ռազմավարական ավանդական նշանակությունը: Ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը դառնում էր *հմուտ բանաձև սեփական շահի տեսանկյունից ուժերի հավասարակշռությունը վերադասավորելու համար:*

Մինչ նախագահի հայրենիքում նրան սպասում էր դաժան և անզիջում պայքար խաղաղության դաշնագրի վավերացման, «ազգերի համաշխարհային

խորհրդարանի»՝ Ազգերի դաշնակցության ու Հայաստանի հոգատարության համար, Փարիզում իր վճռին էր սպասում «թուրքական թնջուկը»: Աշխարհի հզորները պետք է լուծեին՝ ա) Կ.Պոլսի և նեղուցների, բ) Օսմանյան կայսրության փոքրասիական տիրույթների, մասնավորապես՝ արևածոր Հայաստանի, գ) արաբական տարածքների՝ Պաղեստին, Սիրիա, Միջագետք, ճակատագրերը: Անգլիան ու Ֆրանսիան, անտեսելով ԱՄՆ-ին, արագացրին իրենց քայլերը Թուրքիան բաժանելու ուղղությամբ: Դեկտեմբերի 11-ին Լոնդոնում գումարվեց անգլո-ֆրանսիական համաժողովը, որտեղ քննվեցին մերձավորարևելյան նավթի, Կ.Պոլսի համատեղ գրավման, Անատոլիայում ազդեցության ոլորտների ձեռքբերման հարցերը: Իսկ 1920թ. փետրվարին, խաղաղության վեհաժողովի պաշտոնական փակումից (1920թ. հունվարի 21) անմիջապես հետո, Լոնդոնում տեղի ունեցավ անգլո-ֆրանս-իտալական համաժողովը (Լլոյդ Ջորջ, Միլերան, Նիտտի): ԱՄՆ-ից մասնակցում էր միայն դիտորդ: Այս անգամ թուրքական հարցի վերաբերյալ ընդունվեցին կոնկրետ որոշումներ, որոնք այնուհետև ընկան Սան Ռեմոյի (1920թ. ապրիլի 18-26) համաձայնության և Սևրի (1920թ. օգոստոսի 10) դաշնագրի հիմքում: Այստեղ արդեն պաշտոնապես մերժվեցին Թուրքիային վերաբերող ամերիկյան առաջարկները, բացառությամբ Հայաստանի հոգատարության: Նախատեսվում էր, առանց սահմանները նշելու, Հայաստանը ստեղծել Էրզրումի (Կարին), Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի (Բաղեշ) նահանգներում դեպի Սև ծով ելքով, որն իր չափերով արդեն շատ էր հեռու «Մեծ Հայաստանի» *(«Larger Armenia»)* վիլսոնյան նախագծից: Կիլիկիան դառնում էր Ֆրանսիայի «ազդեցության գոտի»:

Աշխարհում ռազմավարական հաշվեկշռի արմատական փոփոխության պայմաններում ԱՄՆ-ի համար «նախատեսվում» էր, մասնավորապես, Հայաստանի հոգատարության և նրա սահմանների որոշման հարցը: Նկատենք, որ ԱՄՆ-ի՝ որպես հոգատարակիր երկրի, վերաբերյալ առաջին հրապարակային խոսքը եղել էր դեռևս 1919թ. մարտի 7-ին, երբ Գերմանիայի զինաթափման հարցի քննարկման ընթացքում շոշափվել էր նաև Թուրքիայի հարցը: Լլոյդ Ջորջը Կլեմանսոյի ներկայությամբ նախագահ Վիլսոնի «անպաշտոն խորհրդական» գնդապետ Հաուզին հարց էր տվել. կարո՞ղ է ԱՄՆ-ը իր վրա վերցնել Օսմանյան կայսրության, հատկապես Կ.Պոլսի և Հայաստանի հոգատարությունը: Հաուզը պատասխանել էր, որ ԱՄՆ-ը պատրաստ է իր վրա վերցնել Կ.Պոլսի և Հայաստանի հոգատարությունը, որ ԱՄՆ-ը կարող է նույնիսկ իրականացնել Անատոլիայի «ընդհանուր հսկողությունը» [9, p. 288]:

Նախագահ Վիլսոնն իր հերթին, փետրվարի 26-ին, արտաքին գործերի սենատական հանձնաժողովի հետ կոնֆերանսում, երբ քննվում էր նաև Հայաստանի հոգատարության հարցը, Սպիտակ տանը հայտարարել էր. եթե ԱՄՆ-ը երբևէ հանձն առնի որևէ հոգատարություն Ազգերի դաշնակցու-

թյունից, ապա դա կլինի առաջին հերթին Հայաստանը [13, p. 54; 14, p. 26]: Եվ ահա, Սան Ռեմոյում ընդունված ռազմավարության համաձայն, Թուրքական պայմանագրի տեքստ պետք է մտցվեր հատուկ մի կետ, որը դաշնագիրը ստորագրած բոլոր կողմերին պարտավորեցնում էր կանխավ ընդունել այն սահմանները, որոնք պետք է «գծագրվեին» նախագահի կողմից օսմանյան նախկին նահանգների սահմաններում: Եվ դեռևս հոգատարության հարցը չլուծված, նախագահը, որպես յուրատեսակ պատասխան Դաշնակիցների գերագույն խորհրդի առաջարկի, ստեղծել էր հատուկ կոմիտե՝ գծելու համար ապագա («Սևրյան») Հայաստանի սահմանները: Որոշումը պետք է կայացվեր «բանականության սահմաններում»՝ հիմնված *ազգագրական* (էթնիկական), *աշխարհագրական, տնտեսական, ռազմավարական* և այլ նկատառումների վրա[1]: «Կոմիտեի այդ աշխատանքի մեջ էլ ստեղծվել է «Վիլսոնյան Հայաստանի» ուրվագիծը» [11, с. 119]:

1920թ. ապրիլի 25-ին Սան Ռեմոյի խորհրդաժողովը որոշում է դիմել նախագահ Վիլսոնին ԱՄՆ-ի կողմից Հայաստանի հոգատարությունը ստանձնելու առաջարկով, իսկ ձախողման դեպքում՝ հանդես գալ Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանազատման իրավարար (արբիտր) հիշյալ նահանգներում [15, p. 271]: Հայաստանի կառավարությունը ևս ԱՄՆ հոգատարության հաստատման ուղղությամբ լայնածավալ աշխատանք էր տանում: Ամերիկյան կողմի հետ նա Փարիզում պատրաստել էր ԱՄՆ-ՀՀ համաձայնագրի նախագիծ (1919թ. հուլիսի 18)՝ հոգատարության հարցի դրական լուծման դեպքում [16, էջ 32-34]: 1919թ. փետրվարի 4-ին Եվրոպա և ԱՄՆ էր գործուղվել, նույն առաքելությամբ, ՀՀ առաջին (նախկին) վարչապետ Հովհաննես Քաջազնունին:

1920թ. մայիսի 17-ին Վիլսոնը Փարիզում ԱՄՆ դեսպանի միջոցով Անտանտի Գերագույն խորհրդին հայտնում է իր համաձայնությունը՝ լինել ապագա Հայաստանի սահմանների իրավարարը (միջնորդ դատավոր - *Լ.Շ.)* [17, pp. 783, 793]: Եվ մայիսի 24-ին դիմում է ԱՄՆ Կոնգրեսին ուղերձով՝ Հայաստանի հոգատարությունն ընդունելու առաջարկով [13, p. 97]: Վիլսոնը նկատելով, որ Կոնգրեսի մեծամասնությունը հանդես է գալիս Հայաստանի հոգատարության դեմ՝ այն հիմնավորումով, թե ԱՄՆ-ը Հայաստանում չի կարող պահել 100 հազարանոց խոշոր բանակ, ինչպես գտնում էր Հարբորդի առաքելությունը, հարցնում է ռազմական փորձագիտական կարծիք՝ հոգատարությունն իրականացնելու մասին: Նոր հաշվարկով Հայաստանում ԱՄՆ հոգատարությունն իրականացնելու համար բավարար է դիտվում 27 հազար մարդը, պայմանով, որ երեք տարի հետո այն հասցվի մինչև 10 հազար մարդու: Սակայն այդ քայլը ևս հաջողություն չի բերում նախագահին:

[1] Նախագահ Վիլսոնի ընդունած սահմանները՝ Վաշինգտոնում ՀՀ դեսպան Գարո Փաստրմաճյանի կողմից ներկայացված և պաշտպանված գիծը, մոտավորապես նույնն էին, ինչ նախատեսել էր Փարիզի ազգային համագումարի (1919թ. փետրվարի 24-ապրիլի 22) *սահմանորոշ հանձնախումբը* (Տե՛ս *Փափազյան Վ.,* Իմ հուշերը, Կահիրե, 1957, հ. III, էջ 47):

3. Վիլսոնը Հայաստանի իրավարար

ԱՄՆ Սենատի արտաքին հարաբերությունների կոմիտեն 1920թ. մայիսի 27-ին պատրաստում է մի բանաձև, որով 4 դեմ, 11 կողմ ձայնով Կոնգրեսի երկու պալատներին էլ հանձնարարում է Հայաստանի հոգատարությունն ստանձնելու իրավունք չտալ գործադիր իշխանությանը: Որպես հանձնարարականի կատարում՝ Սենատը երկար վիճաբանությունից հետո, 23 դեմ, 52 կողմ ձայնով, հուլիսի 1-ին ընդունում է հանձնախմբի նախագահի (հանրապետական) Լաջի *(Henry Cabot Lodge)* բանաձևը, որը «հարգանքով կիրաժարվի նախագահին տալ իրավասություն՝ ընդունելու Հայաստանի հոգատարությունը»:

ԱՄՆ-ում այսպես տապալվում է Վուդրո Վիլսոնի «Հայաստանի հոգատարության» ռազմավարությունը: Այստեղ ևս, ի վերջո, հաղթում է «Կլեմանսոյի կարթագենյան խաղաղությունը»: Արևմուտքն անկասելիորեն մղվում է ուժերի հավասարակշռության նոր հարթություն: Հայ զինվորականության կողմից Կարսի ամրոցը «հաջողությամբ» Կարաբեքիրին հանձնելուց հետո անգլիական *«Daily Herald»-ը* 1920թ. նոյեմբերի 13-ի համարում գրում է. «Սկզբնապես պլանը ամփոփված էր Վրաստանն ու Հայաստանը Բաքուն գրավելու համար օգտագործելու մեջ: Սակայն Քեմալ փաշան իրեն ցույց տվեց ավելի ուժեղ, քան սպասում էին: Թուրքական բանակը մխրճվեց Հայաստանի սիրտը: *Դրանով վերջանում է հին քաղաքականությունը* (ընդգծումը՝ Լ.Շ.): Պարզ է, որ թույլ Հայաստանը չի կարող Բաքվից դուրս մղել կարմիրներին: Ո՞վ կանի դա: Ինչո՞ւ ոչ Քեմալը: Պետք է ճանաչել Քեմալին, նրան տալ փոխհատուցում... և նա կհամաձայնի վռնդել կարմիրներին Բաքվից» [18, с. 131]: Անշուշտ, Քեմալը կարմիրներին Բաքվից չվռնդեց և չէր էլ պատրաստվում վռնդել: Քեմալն էր 1920թ. ապրիլի 26-ին Լենինին առաջարկում իրար միջև բաժանել Հայաստանի հանրապետությունը (կարդա՝ Արևելյան Հայաստանը)՝ փոխարենը նվիրաբերելով Բաքուն: Իսկ Արևմուտքը Սևրին դավաճանելուց հետո և լքելով Հայաստանը, ըստ էության, կացնահարեց արևմտյան քաղաքակրթության *Առաջադիրքի* հիմքերը տեղում՝ բացելով վերջինիս անընդհատ (պերմանենտ) նահանջի ճանապարհին Առաջավոր Ասիայում և Միջին Արևելքում, ստեղծելով տարածաշրջանում քաղաքակրթությունների անհավասարակշռություն ու նրանց հավանական բախման անկանխատեսելի նախադեպ, հեռանկարի մեջ ցանելով ռազմավարական աղետի թունավոր սերմեր, ինչի մասին վերջին շրջանում հիշեցնում է Սամուել Հանթինգթոնը *(Samuel Huntington):* Այս առումով, սակայն, պարզվում է, Հանթինգթոնն առաջինը չէ: Հայաստանի հոգատարության հարցի քննարկման ժամանակ, 1920թ. հունիսի 1-ին Արքանզասից սենատոր Ջոզեֆ Ռոբինսոնն ասում էր. եթե Կոնգրեսը մերժի նախագահ Վիլսոնի առաջարկը, ապա *«քրիստոնեությունն իր արևելյան ճակատում կստանա ջախջախիչ հարված»:*

Թերևս, այս նկատառումով էր, որ Թոմաս Վուդրո Վիլսոնը, առաքյալի պայծառատեսությամբ, հավատալով Հայաստանի լուսե ապագային, Հայաստան-Միացյալ Նահանգներ անխզելի բարեկամությանը, միջազգային իրավունքի օրենսդրի արդարամտությամբ ու վստահ ամերիկյան ժողովրդի ժողովրդավար կամքին, կատարեց հանձն առած *իրավարարի (arbitrator)* պարտականությունը՝ սահմանափակված (այդուհանդերձ՝ հօգուտ Թուրքիայի) Վան, Բաղեշ (Բիթլիս), Կարին (Էրզրում), Տրապիզոն նահանգներով: Տեղին է նշել, որ իրավարարության բնույթով իրավարարի որոշումը կողմերն ընդունում են «ապրիորի, այն պարտադիր է նրանց համար և վավերացման կարիքը չունի» (Յու.Բարսեղով): Սևրի դաշնագրի ստորագրումը՝ կատարված աշխարհի ազգաբնակչության 66%-ը ներկայացնող 14 երկրների կողմից, ստեղծել էր միջազգային բազմակողմանի պարտավորություն՝ ընդունել իրավարարության պայմանները [19, էջ 63]: Ընդսմին, այդ կարգի պարտավորությունների վերանայումը «հնարավոր է միայն բոլոր կողմերի և հատկապես այն կողմի, որի օգտին կայացվել է իրավարարական որոշումը, համաձայնությամբ» (Յու.Բարսեղով), ինչը, բնականաբար, Սևրի դաշնագիրը ստորագրելուց հետո, մասնավորապես ՀՀ կողմից, տեղի չի ունեցել:

Վիլսոնը, մշակված ընթացակարգի համաձայն, իրավարարության առաջարկն ստանալուց յոթ ամիս հետո, իսկ հոշոտված Հայաստանի բռնի խորհրդայնացումից յոթ օր առաջ, 1920թ. նոյեմբերի 22-ին կայացրեց ու հռչակեց իրավարարական իր վճիռը, որը, ինչպես ամեն մի իրավարարական վճիռ, ծնել ու ծնում է «որոշակի իրավական հետևանքներ նրա մասնակիցների համար» [8, Vol. III, pp. 790-804]: Գլխավոր դաշնակից երկրները, երբ դիմում էին իրավարարության, տվյալ դեպքում ևս, անշուշտ, համաձայն էին, որ «իրավարարի կարգադրությունները, որքանով այն վերաբերում է իրենց, լինելու են վերջնական և, համապատասխանաբար, պայմանավորվեցին հարգել այդ իրավաձևավորող *(правооформляющий)* միջազգային համաձայնությունը» (Յու. Բարսեղով): Ընդսմին, նախագահ Վիլսոնի բացատրությամբ, իրավարարական վճիռը կայացվել է ամենահավաստի տեղեկատվության և «արդարության բարձրագույն շահերի գիտակցումով» [8, p. 796]:

Վիլսոնի վճիռը պետք է հրապարակվեր դեկտեմբերի 17-ին, սակայն անգլիական կողմը, որը որոշ տեղեկություններով քեմալականների հետ շփման ուղիներ էր որոնում դեռևս 1919թ. սեպտեմբերից և նրանց հետ գործարքի մեջ էր 1920թ. աշնանը, քաղաքական ճնշում էր գործադրում ամերիկյան կողմի վրա վճռի հրապարակումը կանխելու համար, իբր թե մինչև «որոշ նկատառումների» ներկայացում [20, с. 28]: Անգլիացիներին, սակայն, հաջողվեց միայն վճռի հրապարակումը որոշ ժամանակով հետաձգել: Վիլսոնի իրավարարական վճիռը հրապարակվեց 1921թ. հունվարի 22-ին,

Վաշինգտոնում՝ դրանով իսկ ընդգծելով վճռի *անշրջելիությունն* ու *անբեկանելիությունը* (Հայաստանն արդեն բռնությամբ խորհրդայնացվել էր), հայ ժողովրդի՝ իր հայրենիքի հանդեպ, միջազգայնորեն հռչակված սահմաններում, իրավունքի *անժամանցելիությունն* ու *վերանցականությունը (transcendental):*

Այսպիսով, ԱՄՆ 28-րդ նախագահ Թոմաս Վուդրո Վիլսոնը (դեմոկրատ, կալվինիստ), XX դարի բարոյապես անբասիր Աշխարհի քաղաքացին, անկաշառ և նյութապես անշահախնդիր բարեփոխիչը, խորունկ ու խստապահանջ կրոնասերը, գաղափարապաշտն ու քաղաքական իրապաշտը՝ պայծառ մտքով, կրքոտ, երբեմն անկոտրում մարտիկն այն բանի, ինչը համարում էր բարի գործ (Կլաուս Շվաբե), մեկնելով անվտանգ աշխարհակարգի ու քաղաքակրթության արմատական ու հեռագնա շահերից և իրավազիտակցության բարձր սկզբունքներից, անկողնում գամված վիճակում էլ (1919թ. հոկտեմբերի 2-ին ուղեղի արյունազեղման հետևանքով անդամալուծվել էր նախագահի աջ կողմը) մնաց հարազատ Հայաստան ստեղծելու իր տեսլականին, թերևս, որպես միակ և իրական հուշարձանը Հայաստանի կորուստների ու տառապանքների, հայ ժողովրդի՝ քաղաքակրթությանը մատուցած հազարամյա անգնահատելի ծառայությունների, Դաշնակիցների հաղթասեղանին բերած նշմարելի մարտական նպաստի:

Վիլսոնը կռահում էր պատմական հեռանկարը:

Կենսագիրը գրում է. թողնելով Սպիտակ տունը՝ նա հաճախ, նստած բուխարու դիմաց, Սուրբ գիրքը ձեռքին, հիշում էր Փարիզը, այն, թե ինչպես Կլեմանսոն ու Լլոյդ Ջորջը շողոքորթելով թախանձում էին իրեն: Մահվանից ոչ շատ առաջ նախկին նախագահն, ի խորոց սրտի, ասում էր, որ ինքը ցանկանում է ապրել մինչև այն պահը, երբ Գերմանիան վերջնականապես կջախջախի Ֆրանսիային [21, p. 354]:

Դեկտեմբեր, 2006թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Мальков В.Л.,* Вудро Вильсон и новая Россия, февраль 1917- март 1918г., «Новая и новейшая история», # 6, 1999.
2. *Ключников Ю.В.,* На великом историческом перепутии, Берлин, 1922.
3. *Кунина А.Е.,* Провал американских планов завоевания мирового господства в 1917-1920гг., Изд. 2-е, М., 1954.
4. *Lansing R.,* The Peace Negotiations. A Personal Narrative, London, 1921.
5. *Howard H. N.,* The King-Crane Commission. An American Inquire in the Middie East, Beirut 1963; «The King-Crane Riport on the Near East. A suppressed official document of the US government». Editor and Publisher, LV. #27 (December 2.1922), I-XVII; Papers relating to the Foreign Relations of the U.S. The Paris Peace Confereance, 1919, 13

vols. Vol. XII, pp. 747-848; Report of the American Military Mission to Armenia 16/X 1919. International Conciliation, June 1920, #151, pp. 275-312, Foreign Relations 1919, Vol. II, pp. 841-879.
6. *Խաչատրյան Հ.Հ.,* Ամերիկյան զինվորական առաքելությունը դեպի Հայաստան, «Հայրենիք», 1940, #1-3, 1941, #4-7:
7. *Howard H.N.,* The Partition of Turkey, a Diplomatic History 1913 – 1923, Oklahoma, 1931.
8. Papers Relating to the Foreign Relations of the U.S. The Paris Peace Conference, 1919, Vol. V.
9. *Lloyd George D.,* The Truth About the Peace Treaties, 2 vols., London, 1938, Vol. I.
10. *Halide ́Edib,* The Turkish Ordial. London, 1928.
11. *Ованнисян Р.,* США и Армения: мандат и границы, 1920г., Պատմա-բանասիրական հանդես, #2, 1995:
12. *Кейнс Дж.М.,* Экономические последствия Версальского мирного договора, М.-Л., 1924.
13. *Logan R. W.,* The Senate and the Versailles Mandate System, N. Y., 1945.
14. America as Mandatory for Armenia, N. Y., 1919.
15. *Batsell W. R.,* The United States and the System of Mandates. N. Y., 1925.
16. Բանբեր Հայաստանի արխիվների, #2, 1965:
17. Foreign relations of the U. S. 1920, Vol. III.
18. *Шпилькова В.И.,* Империалистическая политика США в отношении Турции. 1914-1920гг., М., 1960.
19. *Սահակյան Տ.Դ.,* Վուդրո Վիլսոն. մարդը և քաղաքագետը, Ե., 2006:
20. Бюллетень НКИД, 1921, #104.
21. *Lawrence D.,* The True Story of Woodrow Wilson. N.Y., 1924.

ВИЛЬСОНОВСКИЙ ПРОЕКТ И ТУРЦИЯ

Левон Шириням

Резюме

Европа вступила в XX век с целым клубком противоречий. Тройственный союз (Германия, Австро-Венгрия, Турция) во главе с Германией предъявил заявку на передел мира и мировое господство, противопоставив себя возглавляемой Англией Антанте (Англия, Франция, Россия, Япония). Язык взаимопонимания, к сожалению, был заглушен развязавшейся войной. Старый Свет двигался по давно известным ему из истории тропинкам. Вопреки ожиданиям «молниеносной победы» (*блицкрига*), война стремительно обрела *затяжной* характер и *мировой* масштаб. Одной из первых жертв войны, что вполне предсказуемо, стала Армения.

ՀԱԿԱԹՈՒՐՔԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՃԱԿԱՏ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՋԱՆՔԵՐԸ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՅԴ ՊԱՅՔԱՐԻՆ
(թուրքմեն ակ-կոյունլու և կարա-կոյունլու ցեղերի տիրապետության ժամանակաշրջանը - XV դար)

Արա Պապյան

XX դարի 90-ական թվականների սկզբին, Խորհրդային Միության փլուզման հետևանքով, պատմությունը վերստին ելավ զարգացման բնականոն ուղի: Շինծու գաղափարների պայքարը կրկին տեղը զիջեց պետական կերպավորում ստացած ազգային շահերի գոյամարտին: Նորից երևան եկան հարյուրամյակների կյանք ունեցող և մի քանի տասնամյակ քաղաքական նիրհի մեջ ընկած աշխարհաքաղաքական հակադրություններն ու համադրությունները:

Միջին Արևելքի արդի քաղաքականության մեջ նկատվող խորքային շատ երևույթներ, ըստ էության, արմատներով կապված են Հայաստանում թուրքմեն ակ-կոյունլու և կարա-կոյունլու ցեղերի տիրապետության և քաղաքական պայքարի, Օսմանյան կայսրության վերընթացի, Սեֆյան Իրանի կազմավորման, ինչպես նաև հարակից հարցերի հետ:

XV դարը վճռորոշ ժամանակահատված էր մեր տարածաշրջանում միջպետական քաղաքական և տնտեսական հարաբերությունների կազմավորման համար: Այս առումով, ներկայումս անհրաժեշտություն է դարձել ուսումնասիրել մեր տարածաշրջանում միջազգային հարաբերությունների զարգացման ընթացքը, առանձնակի ուշադրություն դարձնել դրանց ձևավորման ակունքներին, լուսաբանել անցյալի խորքից եկող միտումները, կանխատեսել հետագա զարգացման ուղին:

1. Կարա-կոյունլուների տիրապետությունը Հայաստանում (1400-1467թթ.)

XV դարը *«դառն և վշտալից»* ժամանակաշրջան էր հայ ժողովրդի համար: Հայաստանը դարձել էր *«արեամբ արբած, սուրն ի յարիւնսըն շաղախած»* վաչկատուն ցեղերի միջտոհմային պատերազմների թատերաբեմ [1, էջ 7, 2, էջ 278]:

Այդ դժնդակ ժամանակաշրջանը սկսվեց արևելքցի մեծագույն նվաճողներից մեկի՝ Լենկ Թեմուրի արշավանքներով: 1399-1403թթ. Լենկ Թեմուրը ձեռնարկեց իր երրորդ արշավանքը, որի ժամանակ գրավեց և ավարառության

ենթարկեց բազմաթիվ երկրներ, այդ թվում՝ Հայաստանը և Վրաստանը [3, էջ 30-31]. *«Իշխանն անօրէն, որդին կորստեան, որ յազգէ խորազմին՝ Թամուր-Լանկ անուանեալ, որ զաշխարհս Հայոց երիցս անգամ կործանեալ էր, եկն կրկին բազում եւ անթիւ զօրօք եւ էառ զաշխարհն Վրաց»* [1, էջ 5]: Այդ նույն ժամանակահատվածում, ընդլայնելով իր նվաճումները, նա առաջին անգամ բախվում է Հայաստանում և հարակից տարածքներում արդեն հաստատված թուրքմեն երկու ցեղերից մեկին՝ ակ-կոյունլուներին, և պարտության մատնում նրան[1]: Ռազմաքաղաքական թատերաբեմում Լենկ Թեմուրի ի հայտ գալը թուրքմենական ցեղախմբերի մեջ առաջ է բերում քաղաքական կողմնորոշման երկվություն՝ թուրքմենական ցեղերը հարկադրված էին ընտրություն կատարել. ըստ այդմ, ակ-կոյունլուներն իրենց հպատակությունն են հայտնում Լենկ Թեմուրին, իսկ նրանց ազգակից, սակայն ախոյան կարա-կոյունլուները հակվում են օսմանյան թուրքերի և ջալայիրյանների կողմը [4, с. 15]:

Ձևավորվում են քաղաքական նոր խմբավորումներ. Լենկ Թեմուրին աջակցելու պատրաստակամություն են հայտնում Բյուզանդիայի կայսր Մանուիլ II-ը (1391-1425թթ.) և ճենովացիները: Վճռորոշ ճակատամարտը տեղի է ունենում Անկարայի մոտ 1402թ. հուլիսի 28-ին [5, с. 30]: Լենկ Թեմուրն Անկարայի ճակատամարտում իր 800 հազարանոց բանակով [6, с. 163], գլխովին ջախջախելով օսմանյան 120 հազարանոց բանակը [7, с. 610], պարտության է մատնում սուլթան Բայազիդ I-ին (1389-1402թթ.) *«մականվանված Ըլդըրըմ, (Yildirim) (...) - կայծակ»* և գերում նրան [8, էջ 104, 9, p. 130; 10, с. 97]: Օսմանյան աստղը ժամանակավորապես մթագնում է հայաստանյան երկնակամարում:

Սակայն թեմուրյան տիրապետությունը տևական չի լինում, քանի որ Լենկ Թեմուրի մահից հետո (1405թ. փետրվարի 18-ին) նրա տարացեղ և բազմալեզու հսկայածավալ պետությունը սկսում է արագորեն տրոհվել [11, էջ 2035; 10, с. 99]: Նրա ժառանգների միջև ծայր են առնում գահակալական կռիվներ: Օգտվելով ներտոհմային երկպառակությունից՝ գլուխ են բարձրացնում կարա-կոյունլու և ակ-կոյունլու թուրքմենական ցեղերը:

[1] Թուրքմեն ակ-կոյունլու և կարա-կոյունլու ցեղախմբերի միջուկը հանդիսացող վաչկատունները Միջին Ասիայից Հայաստան, Ատրպատական և Հյուսիսային Միջագետք են թափանցել տակավին սելջուկյան արշավանքների օրերին՝ XI-XIIդդ. [*Еремеев Д.Е.,* Проникновение тюркменских племен в Малую Азию, Москва, 1964, с. 2; *Еремеев Д.Е.,* Этногенез турок, Москва, 1971, с. 5]. Նրանց առավել զանգվածային վերաբնակեցումը Հայաստան և հայաստանամերձ տարածքներ տեղի է ունեցել XIII դարում, երբ բազմաթիվ թուրքմենական ցեղեր, քշվելով Չինգիզ-խանի հորդաների կողմից, ապաստանեցին Իրանում, Անդրկովկասում և Հայաստանում [*Агаджанов С.Г.,* Очерки истории огузов и туркмен Средней Азии IX-XIIIвв., Ашхабад, 1969, с. 255]. Այս ցեղերի մեջ էին ակ-կոյունլու և կարա-կոյունլու ցեղախմբերը, որոնք էլ XIV-XVդդ. հաստատվեցին, համապատասխանաբար, Տիգրիսի վերին հոսանքներում և Վանա լճից արևելք [Ակ-կոյունլուներ, Հայկական սովետական հանրագիտարան, հ. I, Երևան, 1974, էջ 224]: Ակ-կոյունլու ցեղախմբում իշխում էր բայանդուրի [Фазлуллах ибн Рузбихан Хунджи, Тарих-и алам ара-йи Амини, Баку, 1987, с. 38-39] տոհմը, իսկ կարա-կոյունլու ցեղախմբում՝ բահարլու կամ բալանդուր տոհմը [*Woods J.,* The Aqqoyunlu Clan, Confederation, Empire, Minneapolis & Chicago, 1976, p. 38; *Петрушевский И.П.,* Государство Ак-коюнлу, Советская историческая энциклопедия, т.1, Москва, 1961, с. 306; The Turkmen Dynasties, p. 152 (The Cambridge History of Iran, volume 6 /ed. By Peter Jackson and Laurence Lockhart/, Cambridge, 1993)].

Նախ հաջողությունն ուղեկցում է կարա-կոյունլուներին, որոնք էլ իրենց ավելի քան կեսդարյա (1410-1467թթ.) տիրապետությունն են հաստատում Հայաստանում. *«յԱրարաթեան տանէն Հայոց՝ մինչ յԵրզնկայն, ի Մերդին, ի Բաղդատ, ի Սաւլթանիայ, եւ ի Գանձակ շահաստանն Թաւրէզ, եւ մինչ ի մեծ գետն Քուռ»* [1, էջ 380-381]: Այս նվաճումների հետևանքով կարա-կոյունլուներն արևմուտքից սահմանակից են դառնում իրենց հակառակորդ ակ-կոյունլուներին, և նրանց միջև բախումը դառնում է անխուսափելի [12, p. 26]: Մի քանի տասնամյակ թուրքմեն ցեղերի միջև փոփոխակի հաջողություններով տեղի են ունենում բազմաթիվ բախումներ և պատերազմներ:

Նման իրավիճակում, բնականաբար, նվաճողները զգում էին տերության բոլոր հպատակների, մասնավորապես՝ հայերի, աջակցության խիստ կարիքը: Օգտվելով ստեղծված իրավիճակից՝ *«խորամանկ և բազմահնար»* կաթողիկոս Զաքարիա Գ-ին (1434-1464թթ.) հաջողվում է կարա-կոյունլու Ջհանշահից հավանություն կորզել, *«անոր գերիշխանութեան տակ վերահաստատել Վասպուրականի հին թագաւորութիւնը»* [13, էջ 143]: 1465թ. Զաքարիա Գ-ի հորեղբորորդի Սմբատը Աղթամարում օծվում է հայոց թագավոր: Սմբատը հոր կողմից սերում էր Սեֆեդինյան տոհմից, մոր կողմից՝ Արծրունյաց: Հոր անունն էր Ամիր Գուրջիբեկ, մորը՝ Դունիա խաթուն: Ամուսնացած էր Բեկի խաթունի հետ, որից ունեցել էր որդի՝ Իսկանդեր, Գրիգորիս Աղթամարցու հայրը [13, էջ 144]:

Պատմական այս միջադեպը միանշանակորեն վկայում է, որ հայերը երբեք չէին կորցրել պետականության վերականգնման ձգտումը: Նրանք մշտապես արթուն են պահել քաղաքական ինքնուրույնության հույսը և հավատավորի նման հետևողականորեն գործել այդ ուղղությամբ: Օտարների քաղաքական հարաբերություններում նրանք ոչ միայն կատարողներ են եղել, այլև, քաղաքական հոլովույթի մեջ ընդգրկվածության շնորհիվ, սեփական ազգային շահը հետապնդողներ:

Երկու խոյադրոշ ցեղերի հակամարտությունը հասնում է հանգուցալուծման 1467թ. [14, с. 36]: Այդ տարվա նոյեմբերի 10/11-ին ակ-կոյունլու Ուզուն Հասանը հանկարծահաս հարվածով գլխովին ջախջախում է կարա-կոյունլուների ջոկատը. *«Ուզուն-Հասան զՋհանշէն կոտորեաց»* [15, էջ 260]: Նա գրավում է կարա-կոյունլուների բոլոր տիրույթները և գահանիստը տեղափոխում Թավրիզ. *«էառ աշխարհս եւն զթախթս Թաւրիզ եւ զփաթշահութիւն»* [15, էջ 314]:

Այսպիսով վերջ է դրվում կարա-կոյունլուների պետական և իշխանատոհմական գոյությանը: Ակ-կոյունլուները հաղթող են դուրս գալիս կարա-կոյունլուների դեմ տասնամյակներ տևած հակամարտությունից [16, էջ 377]: Նրանք ստեղծում են լայնածավալ մի տերություն, որում ընդգրկված էր ոչ միայն Հայաստանը, այլև Ատրպատականը, Իրանը և Իրաքը [17, с. 27]:

2. Աշխարհաքաղաքական իրավիճակը ակ-կոյունլուների տիրապետության նախօրեին

1467/68թթ. ռազմաքաղաքական իրադարձությունների հետևանքով Հայաստանում և հայաստանամերձ տարածքների վրա հաստատվում է ակ-կոյունլուների տիրապետությունը: Այս իրողությանը նախորդել էին մի շարք հույժ կարևոր իրադարձություններ, որոնք ի հայտ էին բերել միջազգային քաղաքականության վրա խորապես ազդող նոր գործոններ:

Օսմանյան թուրքերի[1] կողմից Կ.Պոլսի՝ միջազգային առևտրական կարևորագույն մայրուղիների հանգուցակետի ու խոշորագույն նավահանգստի, նվաճումը՝ *«՛ի 29. աւուր մայիսի, յերեքշաբաթի օր՛ ընդ արշալոյսն»,* շրջադարձային էր քաղաքակրթության պատմության համար [18, էջ 499]: Այն հարվածի տակ էր դրել եվրոպական ու ասիական մի շարք երկրների կենսական շահերը [19, с. 11]: Դրանով իսկ արմատապես նոր իրավիճակ էր ստեղծվել միջպետական հարաբերություններում: Թուրքերի կողմից Կ.Պոլսի նվաճումը *«պարտութիւնն էր Եվրոպայի»* [20, էջ 541] և *«մեծ անպատվություն էր բոլոր քրիստոնյա տիրակալների համար»* [21, с. 263], քանզի *«անհամար նշխար սրբոցն առ ոտս անաւրինաց կոխան եղեւ, եւ եկեղեցիքն՛ անաւրինաց եղեն բնակութիւն, եւ այլ բազում արհաւիրք եղեն»* [15, էջ 211] ու *«քրիստոնեությունը դարձավ գլխատված մարմին»* [9, p. 141]:

Կ.Պոլսի գրավումից հետո Մուհամեդ II-ը (1451-1481թթ.) ձեռնամուխ եղավ նորանոր տարածքներ նվաճելուն [22, с. 35]: *«Եւ այսպէս բարձին զթագաւորութիւնս եւ զտէրութիւնս բազում ազգաց եւ աշխարհաց. այսինք զՀայոց, զՎրաց, եւ զԱղուանից, եւ զՄարաց եւ զԱսորոց, եւ զԱրաբացւոց, ուստի էր օրինադիրն իւրեանց, եւ զԵգիպտացւոցն, եւ զՆուպեացն, եւ զՀոռմոց, եւ զՀոնաց, եւ զԲուլղարաց, եւ զՄազքթաց, եւ զԱփխազաց, եւ զՄակեդոնացւոց, եւ զՀիւսիսականաց, եւ զԹաթարաց, եւ զսակաւ ինչ զֆռանկաց, եւ զՊարսից, եւ ընդարձակեալ զթագաւորութիւն ինքեանք միայն տիրապետեցին»* [23, էջ 70]:

Թուրքական այս նվաճումները ահ ու սարսափ սփռեցին ողջ Եվրոպայում. *«կը խռովին եւրոպական տէրութիւնները»* [20, էջ 540]: «*Բոլորին թվում էր, թե ուր որ է թուրքերը կհայտնվեն Իտալիայում*» [24, с. 260]: Նմանօրինակ ըմբռնումը հեղաբեկիչ ազդեցություն ունեցավ համաքրիստոնեական քաղաքական

---

[1] Օսմանյան թուրքերի նախնիները հոծ խմբերով Փոքր Ասիա են թափանցել XI-XIIդդ. [Османская империя и страны Центральной, Восточной и Юго-восточной Европы в XV-XVIвв., Москва, 1984, с. 8]. Մոնղոլական արշավանքի հետևանքով ստեղծված ապակենտրոն իրավիճակում Փոքր Ասիայի կենտրոնական և արևմտյան մասերում առաջ են գալիս մի շարք բեյլիկներ՝ իշխանություններ: XIII-XIVդդ. այս բեյլիկներից մեկում իր տիրապետությունն է հաստատում Օսմանը (1258-1324թթ.), որի անունով էլ բեյլիկը սկսում է կոչվել օսմանյան: Օսմանյան բեյլիկը XIV-XVդդ. լայնատարած նվաճումներ է կատարում Ասիայում և Եվրոպայում: Կ.Պոլսի գրավումով (1453թ.) ամբողջանում է Օսմանյան կայսրությունում իշխանության կենտրոնացման փուլը [*Жуков К.А.,* Эгейские эмираты в XIV-XVвв., Москва, 1988, с. 144].

մտածողության վրա [25, p. 60]: Աստվածաշնչյան պատկերների վրա խարսխված Սուրբ երկրի ազատագրման գաղափարն աստիճանաբար տեղը սկսեց զիջել թուրքական վտանգին համատեղ դիմակայելու, թուրքերին Եվրոպայից դուրս մղելու և Կ.Պոլիսն ազատագրելու գաղափարին [26, c. 233, 27, p. 66].

11. Երուսաղէմ ես դու կըրկին,
մեծահամբաւ քաղաք Ստամպօլ,
Առ քեզ գայցեն ամենեքեան
ի տեսութիւն փառաց, Ստամպօլ [28, էջ 229]:

Նման դժվարագույն խնդրի իրագործումը պահանջում էր հակաթուրքական բոլոր ուժերի միասնությունը: Բյուզանդական կայսրերը, *«Տեսեալ զյաջողութիւն զինու Օսմանեանց, ահիւ մեծաւ տագնապէր՝ եթէ ընդ հուպ կալցին նոքա զԿոստանդնուպօլիս»,* տևական ժամանակ նախանձախնդրորեն հետամուտ էին հակաթուրքական միասնական զինակցության ստեղծմանը [29, էջ 633, 30, էջ 60]: Բյուզանդական կայսրերից ոմանք՝ Հովհաննես V-ը (1341-54թթ. և 1355-76թթ.) 1366 և 1369թթ., Հովհաննես VII-ը (1390-91թթ.) 1391թ., Մանուիլ II-ը (1391-1425թթ.) 1399-1403թթ., Հովհաննես VIII-ը (1425-48թթ.) 1437թ., թուրքական նվաճումներից անհանգստացած, անձամբ էին ուղևորվել Արևմուտք՝ համախմբելու և կազմակերպելու հակաթուրքական զինակցություն [31, c. 134]:

Թեև համահավաք ուժերով թուրքերին դիմադրելու և նրանց ստեղծած խոչընդոտները վերացնելու հարցն ուներ տնտեսական և քաղաքական միջուկ, այնուամենայնիվ, էական էր նաև կրոնական գործոնը: Թուրքական նվաճումներն ուղղակի հարված էին միասնական, կամ գոնե այդպիսին համարվող, քրիստոնեական եկեղեցու ազդեցության ոլորտին, քանզի Ֆլորենցիայի ունիայով[1] (1439-1472թթ.)[2] ուղղափառ ու կաթոլիկ եկեղեցիները միավորված էին Հռոմի պապի գերիշխանության ներքո [32, cc. 33-34]. *«Քահանայապետ ՚ի հռովմ եւգինէոս չորրորդ. որոյ ցանկացեալ ոչ միայն զազգն յունաց, այլեւ զամենայն եկեղեցիս քրիստոնէից ՚ի մի միաբանութեան վերածել, փոյթ կալաւ ժողով մեծ գումարել յիտալիա՝ կոչելով անդր եւ զարեւելեայս»* [33, էջ 80]:

Հայ իրականության մեջ համընդհանուր թշնամու դեմ միասնական պայքարի գաղափարը նույնպես գալիս էր դարերի խորքից [34]: Միջնադարյան Հայաստանում *«յառաջատես»* [35, էջ 85] տեսիլների, մարգարեությունների ու գուշակությունների տեսքով տարածուն և շրջուն էին այն տրամադրություն-

[1] Հայերի կողմից Ֆլորենցիայի եկեղեցաժողովին մասնակցելու համար ընտրված էին Կաֆայի առաջնորդ Սարգիս վարդապետը (պատվիրակության ղեկավար), Հովակիմ եպիսկոպոսը, Մարկոս վարդապետը, Թովմաս վարդապետը [*Չամչյանց Մ.,* Հայոց պատմություն, հ. Գ., Երևան, 1984, էջ 475: Ավելի հանգամանալից Ֆլորենցիայի ժողովի մասին տե՛ս *Եսայի Գոուզեան,* Փլորենտիոյ տիեզերական ժողովը, Բազմավէպ, 1939, թիւ 3-5, էջ 153-163; թիւ 11-12, էջ 295-300; 1940, թիւ 8-12, էջ 147 - 156]:

[2] 1439թ. Ֆլորենցիայում ստորագրված *«Միության կոնդակը» քաղաքական խորքից զուրկ չէր ու «հույները և նրանց կայսրը կարչում էին եկեղեցիների միությանը՝ ոչ թե կրոնական պահանջից դրդված, այլ թուրքերի դեմ Արևմուտքի օգնությունը ապահովելու հույսով»* [*Հովհաննիսյան Աշ.,* Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. Բ, Երևան, 1959, էջ 7-8]:

ներն ու ակնկալությունները, ըստ որոնց՝ *«յրումն (...) ժամանակի փրկութեան թորգոմեան ազգիս»* [36, էջ 56] կգան հավատակից քրիստոնյաները, որպեսզի.

963. Մաքրեն զաշխարհս բովանդակ,
յանհաւատից առնեն դատարկ,
964. Զմահմետական՝ ազգ հասարակ,
առնուն յաւար և յասպատակ... (...)
975. Տիրեն ամէն երկրի ծագաց,
եւ ընդհանուր կողմ աշխարհաց
976. Քրիստոնէից՝ հանուր ազգաց
փրկիչ լինին՝ յանօրինաց [37, էջ 129-130]:

Պետականազուրկ հայ ժողովրդի ծանր կացությունն էլ ավելի էր խորացրել հայերի հավատը հավատակիցների օգնությամբ ազատագրվելու գաղափարի նկատմամբ[1], և նրանք, *«ինչպես հոգիները քավարանում սպասում են Քրիստոսի գալստյան»* [38, էջ 18]:

Այսպիսով, թուրքերի կողմից Կ.Պոլսի նվաճումը (1453թ.) վերարժևորեց երուսաղեմակենտրոն արժեքների համակարգը՝ առաջ մղելով Կ.Պոլսի ազատագրման գաղափարը և համաքրիստոնեական քաղաքական մտածողության մեջ սկզբնավորեց նոր փուլ:

Ռազմաքաղաքական մյուս կարևոր իրադարձությունը, որն էապես փոխեց ուժերի հարաբերակցությունը և առավել կարևորեց ակ-կոյունլուների պետության դերը, ինչպես նաև նոր աստիճանի բարձրացրեց եվրոպական երկրների հետ այդ պետության համագործակցությունը, 1461թ. Տրապիզոնի կայսրության նվաճումն էր թուրքերի կողմից.

Երթայ ի Տրապիզուն
եւ զպետ նորա ձերբակալեալ [39, էջ 107]:

Թուրքական նվաճումներն, ըստ իտալացի ժամանակագիրների, *«սարսափ առաջ բերեցին օսմանյան աճող հզորության հանդեպ»* [39, էջ 162-163]: Թուրքական հարձակման ահագնացող վտանգը դարձել էր եվրոպական բազմաթիվ պետությունների քաղաքականությունը ձևավորող կարևորագույն գործոնը[2]:

---

[1] Հայերն իրենց էական դեր էին վերապահում համաքրիստոնեական պայքարում: Այդ մասին է վկայում Ռուբրուքը. *«Սկյութացիք հիւսիսային կողմից դուրս գալով՝ պիտի գային նուաճէին բոլոր երկիրը մինչեւ հարաւ, ինչպես նաեւ Կոստանդնուպօլիսը: Այս քաղաքի մէջ նոցա թագաւորը պիտի ընդունէր քրիստոնէութիւնը, եւ ապա ցոյց տար Երուսաղէմի փրանկներին թէ ինչպէս պիտի յաղթեն թաթարներին: Փրանկները Հայոց օգնութեամբ Մոնղոլներին յաղթելով՝ պիտի երթային իրենց դրօշակները կանգնէին Թաւրիզի պարիսպների վրայ, եւ անհաւատների կատարեալ դարձ գալուց յետոյ խորին խաղաղութիւնը պիտի թագաւորէր աշխարհի վրայ»* [Գատտէյրաս, Եւրոպայի ճանապարհորդները Հայաստանում ԺԲ դարուց մինչև ԺԷ, էջ 79// Փորձ, 1880, 10, էջ 74-91]:

[2] Նախընթաց ժամանակաշրջանից ահագնացող թուրքական վտանգի և դրան հակազդող դիվանագիտական քայլերի մասին տե՛ս *Фионова Н.А.,* Столкновения Венеции с турецкой опасностью в первой половине XIV века //Страны Средиземноморья в эпоху феодализма, Выпуск 2, Горький, 1975, сс. 89-107.

Այդ գործոնը XVդ. Եվրոպայի քաղաքականության մեջ պայմանավորեց երկու, գրեթե իրարամերժ, հոսանքների առաջացումը: Առաջին հոսանքին պատկանում էին այն երկրները, որոնք կամ որոնց շահերը ենթակա էին թուրքական անմիջական նվաճումների վտանգին: Սրանք թուրքերի դեմ պայքարի կողմնակիցներն էին: Այս երկրների թվին էին պատկանում Վենետիկի հանրապետությունը, Հռոմի կրոնական իշխանապետությունը՝ *«արևմտյան դիվանագիտության գլխավոր շտաբը»*, Ավստրիան, Հունգարիան, Իսպանիան, Նեապոլի թագավորությունը և այլն [40, с. 45, 41, с. 31]:

Երկրորդ հոսանքի մեջ ընդգրկված էին թուրքական սպառնալիքից հեռու երկրները՝ Անգլիան, Ֆրանսիան, Հոլանդիան և այլն: Սրանց համար թուրքական վտանգն էական չէր: Ավելին, թուրքական վտանգը, կլանելով Եվրոպայի հարավարևելյան և հարավային պետությունների ուժերն ու միջոցները, վտանգազերծ երկրներին հնարավորություն էր տալիս վտանգված երկրների հաշվին ուժեղացնել սեփական դիրքերը:

Համատեղ ուժերով թուրքերի նվաճումներին դիմակայելու հարցում եվրոպական աշխարհիկ պետություններից առավել գործունը և հետևողականը Վենետիկի հանրապետությունն էր և իտալական մի շարք այլ քաղաք-պետություններ [42, с. 79; 43, с. 24]: Դա պայմանավորված էր նախընթաց ժամանակաշրջանում ձևավորված քաղաքական և տնտեսական հարաբերություններով:

Առանձնապես ընդգրկուն էին նրանց տնտեսական կապերը[1], որոնք Արևելքում գերակայություն էին ձեռք բերել սկսած XII-XIIIդդ. [44, с. 264]: Իտալական երեք քաղաքներ՝ Ջենովան, Վենետիկը[2] և Ֆլորենցիան, ունեին Եվրոպայում ամենամեծ առևտրական տորմիղները [45, с. 36]: Նրանք արևելքից Եվրոպա էին ներմուծում մետաքսի մեծաքանակ հումք, որը մշակելով՝ արտահանում էին համաեվրոպական շուկա [46, с. 28-29; 47, с. 142]: Մետաքսի հումքի հիմնական մատակարարը Իրանն էր, հատկապես Ղարաբաղը և ղարաբաղամերձ տարածքը. *«Դաշտագետնէն մեծ գետ մը կ՛անցնի, որ Կուր /Chur/կը կոչուի (...) այս գետին մօտ, նոյն երկրին լաւագոյն մետաքսը կայ: Անհաւատները իրենց լեզուով Ղարաբաղ /Karawag/ կը կոչեն այս դաշտագետինը: Թէեւ հայկական հող է, սակայն անհաւատներու ձեռքին է»* [48, էջ 239]:

Իտալական քաղաք-պետություններից ամենագործունը Վենետիկն էր:

[1] Արևելքի հետ առևտրական հարաբերությունները կենսական նշանակություն ունեին Արևմուտքի համար: Միջնադարյան Եվրոպայում անասունի մորթը տեղի էր ունենում ուշ աշնանը, երբ կերի պակասի պատճառով անհնար էր դառնում մեծաքանակ նախիրների ձմեռումը: Միսը տակառների մեջ աղ էին դնում և ապխտելու համար օգտագործում էին մեծ քանակությամբ պղպեղ, կոճապղպեղ, հիլ, մեխակ, դարչին: Բոլոր այս համեմունքները հնարավոր էր ձեռք բերել միայն Արևելքում [*Магидович И.П., Магидович В.И.,* Очерки по истории географических открытий, т. I, Москва, 1982, с. 184; *Кулишер И.М.,* История экономического быта Западной Европы, т. 2, Москва-Ленинград, 1931, с. 21-22].

[2] Վենետիկի հանրապետությունն իր հզորության ժամանակաշրջանում՝ 14-րդ դարում, ուներ 3300 նավ և 36 հազար ծովային [*Steven E. Plaut,* The Middle East and the Venice Model of Development, p. 76. Mediterranian Quarterly, Summer, 1966, pp. 72-86].

Վենետիկցիները՝ այդ *«ամենամեծ և ամենաուժեղ առևտրական ազգը»* [49, p. 76], եվրոպացիներից առաջինն էին, որոնց Հռոմի պապի հատուկ կոնդակով արտոնված էր առևտուր անել մուսուլմանների հետ: Արևելքի հետ առևտուրը կենսական նշանակություն ուներ Վենետիկի համար, քանի որ առևտուրն էր Վենետիկի տնտեսության առաջատար և որոշիչ գործոնը [45, с. 32]:

Ըստ այսմ, Վենետիկի հանրապետությունը, աչքի առաջ ունենալով իր վտանգված շահերն արևելքում և թուրքական ներխուժման մշտառկա վտանգը, հանդես էր գալիս որպես հակաթուրքական զինակցության նախանձախնդիր: Վենետիկը միակ ծովային ուժն էր, որ ի զորու էր կասեցնել թուրքական ծավալապաշտությունը դեպի Եվրոպա:

Այսպիսով, թուրքական նվաճումների հետևանքով ի հայտ եկած ռազմաքաղաքական նոր իրավիճակն ու դրանով պայմանավորված տնտեսական հսկայական կորուստները, ինչպես նաև քրիստոնեական հոգևոր մարմնին հասցված չսպիացող վերքը դիվանագիտության մշտահոլով հարց դարձրին հակաթուրքական զինակցություն ստեղծելու գաղափարն ու դարերի համար նախանշեցին շատ երկրների արտաքին քաղաքականության մայրուղին:

Մյուս հանգամանքը, որն աշխարհաքաղաքական նոր իրավիճակ էր ստեղծել միջազգային հարաբերություններում և նախադրյալներ ստեղծել ուժերի վերադասավորման համար, ակ-կոյունլուների պետության դիրքերի ուժեղացումն էր և նրա միանշանակ հակաթուրքական դիրքորոշումը: Տրապիզոնի կայսրության անկումից հետո հակաթուրքական պայքարի կենտրոնն արևելքում տեղափոխվել էր ակ-կոյունլուների արքունիք[1]: Դա պայմանավորված էր մի քանի հանգամանքներով. ակ-կոյունլու զահակալ Ուզուն Հասանն իրեն, իրավացիորեն, համարում էր Տրապիզոնի կայսրերի[2] ժառանգորդը: Ակ-կոյունլուները առնվազն չորս սերունդ կոմնենոսների հետ սերտ ազգակցա-

[1] Ըմբռնելով Տրապիզոնի կայսրության հույժ կարևորությունն իր պետության համար՝ Ուզուն Հասանը մի վերջին անգամ փորձ էր արել թուրքերին հետ պահել Տրապիզոնը նվաճելուց: Նա մորը՝ Սառա խաթունին, դիվանագիտական առաքելությամբ ուղարկել էր Մուհամադ II-ի ռազմակայան, սակայն արդյունքի չէր հասել [*Петрушевский И.П.,* Государства Азербайджана в XV веке, с. 172 // Сборник статей по истории Азербайджана, вып. I, Баку, 1949, сс. 153-213].

[2] Տրապիզոնի կայսրությունը որպես անկախ պետություն հանդես է եկել 1204թ., ի հետևանք խաչակիրների կողմից Կ.Պոլսի գրավման: *«Ալէքսիոս կոմնենոս յամի տեառն 1204, ֆռէնկներն Ստամպօլ առնելէն ետեւ կայսր կոչվեցաւ Տրապիզոնի»* [*Բժշկեան Մ.,* Պատմութիւն Պոնտոսի որ է Սեաւ ծով, Վենետիկ, 1819, էջ 63:] Այն հիմնականում բնակեցված էր հայերով, հույներով և լազերով: Տրապիզոնի կայսրության առաջին գահակալն էր բյուզանդական կայսր Անդրոնիկոս I Կոմնենոսի (1183-1185թթ.) թոռը՝ Ալեքսիոս I-ը (1204-1222թթ.): Տրապիզոնի հունական տիրակալներն ունեին կայսեր կոչում, քանի որ բյուզանդական կայսրերի ազգակից ճյուղն էին. *«Անցյալ ժամանակներում այդ տեղի իշխանը կայսր տիտղոս է ունեցել, որովհետև նա Կ.Պոլսի կայսեր եղբայրն էր, և ինքն էլ պետք է որ կոչվեր կայսր, հետևաբար նրա բոլոր հաջորդները, /թեև նրանք կայսեր եղբայրներ չէին/, այսու ամենայնիվ ըստ սովորության ընդունցին, ավելի ճիշտ հափշտակեցին, այս կայսր տիտղոսը»* [Ուղեգրություն Ջոզեֆա Բարբարոյի (1471-1478թթ.), էջ 195 // *Հակոբյան Հովh.,* Ուղեգրություններ, h. Ա, Երևան, 1932, էջ 175-214]:

կան կապեր ունեին[1]:

Ավելի կարևոր ու որոշիչ էին տնտեսական շահերը: Դեպի Սև ծով ելք չունեցող ակ-կոյունլուների պետության համար Տրապիզոնը կարևորագույն նավահանգիստ էր ծառայում: Միևնույն ժամանակ, Տրապիզոնից Իրան և ավելի հեռուներ գնացող ճանապարհը, սկսած XIII դարից, կարևորագույնն էր եվրոպացիների համար [50, c.146]:

Ընդհանրապես, օսմանյան վերջին նվաճումներն անմիջական վտանգի էին ենթարկել շատ երկրների կենսական շահեր, քանի որ հավանական հարվածի տակ էին դրել տարածաշրջանով անցնող գրեթե բոլոր ուղիները, այդ թվում՝ Պարսից ծոցից սկիզբ առնող երկու հիմնական մայրուղիները՝ Պարսից ծոց - Բաղդադ - Մոսուլ – Հարպուրտ – Սեբաստիա, այնտեղից էլ Ցինոպ կամ Կ.Պոլիս; Հորմուզ - Սպահան – Համադան – Թավրիզ - Էրզրում – Տրապիզոն [51, p. 116]:

Այսպիսով, Կ.Պոլսի անկումը, Տրապիզոնի կայսրության կործանումն ու ակ-կոյունլուների պետության դիրքերի ամրապնդումը ստեղծեցին այն հիմքը, որի վրա հետագայում զարգանալու էր միջազգային հարաբերությունների մի զգալի մասը:

3. Ակ-կոյունլու Ուզուն Հասանի տիրապետությունը Հայաստանում (1468-1478թթ.)

1467/68թթ. կարա-կոյունլուներին ջախջախելուց հետո Ուզուն Հասանը ձեռնամուխ եղավ ներքին և արտաքին մի շարք կարևոր ձեռնարկումների: Ստեղծելով հսկայածավալ երկիր՝ Ուզուն Հասանն, այնուամենայնիվ, գիտակցում էր իր անզորությունն Օսմանյան կայսրության նկատմամբ, *«վախենալով, որ Օսմանի տան հսկա ուժը ժամանակի ընթացքում կարող է խորտակել պարսկական թագավորությունը»* [52, p. 154]: Այդ իսկ պատճառով նա դիվանագիտական լայն գործունեություն էր ծավալել՝ նպատակ ունենալով ստեղծել հակաթուրքական դաշինք: Նրա ջանքերը համարժեք արձագանք գտան Եվրոպայում: Սկսած Կ.Պոլսի անկումից՝ Հռոմի պապերը և շահագրգիռ եվրոպական երկրներն իրենց դիվանագիտական հարաբերություններում մշտապես տեղ էին հատկացնում Իրանին՝ որպես միևնույն շահերը հետամտող երկրի: Կ.Պոլսի գրավումից չորս ամիս հետո Նիկողայոս Ե պապը կոնդակով նոր խաչակրաց արշավանքի կոչ արեց *«թուրքաց սուլթանի, այդ երկրորդ Սենեքերիմի»* դեմ [53, էջ 28]: Նա բազմաթիվ նամակներ հղեց Եվրոպայի գահակալներին: Նրան հաջորդած Կալիքստուս III պապը դիվանագիտական կապեր է

[1] Այլադավանների և օտարների հետ ամուսնության երևույթն այնքան տարածված էր միջնադարյան Արևելքում, որ գիտության մեջ այն բնորոշվում է հատուկ տերմինով՝ *«քենոգամիա»* [*Еремеев Д.И.,* Этногенез турок, Москва, 1971, сс. 111-112].

հաստատում Ուզուն Հասանի հետ [27, p. 71]: Նիկողայոս V Հռոմի պապը (1447-1455թթ.) 1454թ. Լուդովիկո դը Բոլոնյային (Լուդովիկոս Բոլոնացուն) ուղարկել էր Իրան, Եթովպիա և Հնդկաստան՝ հակաօսմանյան պայքարում ստանալու այդ երկրների տիրակալների աջակցությունը [54, c. 35]: Նույն 1454թ. Վենետիկը Ղարամանիայի բեյլիկի (Խարամնի երկրի)[1] հետ հակաթուրքական դաշինք էր կնքել [27, p. 205]: 1455-1458թթ. Լուդովիկո դը Բոլոնյան նոր պապի՝ Կալիքստոս III-ի (1455-1458թթ.), հանձնարարությամբ եղել էր Եթովպիայում և Պարսկաստանում: 1458թ. Լուդովիկո դը Բոլոնյան երրորդ անգամ է ուղևորվում Արևելք՝ *«հույների, հայերի, մարոնիտների, բաբելոնցիների մոտ»* [54, c. 143], ինչպես նաև *«Ս. Երկիր, Ալեքսանդրիա, Վրաստան և Տրապիզոն»*՝ նպաստելու նրանց միջև դաշինքի կնքմանը [54, c. 143]: Հակաթուրքական զինակցության անդամների թվում էին նաև Փոքր Հայքի Բերդի բեկը, Խույթի և Սասունի ժողովրդապետությունները, որոնցից էլ որպես բանագնացներ Եվրոպա են մեկնում երկու պատվիրակներ՝ Հեթում և Ռուբեն անուններով [55, էջ 57]: Հունգարիայի և Գերմանիայի վրայով նրանք հասնում են Հռոմ, ապա անցնում են Ֆրանսիա և բանակցություններ վարում Կարլոս VII (1422-1461թթ.) թագավորի ու նրա որդի Լուդովիկոսի (1461-1483թթ.) հետ: Լուդովիկո դը Բոլոնյան մի շարք երկրների տիրակալներից ստանալով նամակներ՝ նրանց դեսպանների ուղեկցությամբ վերադառնում է Հռոմ: Նա այնտեղից դիվանագիտական առաքելությամբ մեկնում է Վենետիկ, Ֆլորենցիա, Միլան, Բուրգունդիա, Ֆլանդրիա և Ֆրանսիա:

Թուրքական նվաճումները և դրա հետևանքով առաջացած դիվանագիտական աշխույժ ձեռնարկումները ծայրահեղորեն լարեցին իրավիճակը և հանգեցրին վենետա-թուրքական պատերազմի (1463-1479թթ.) բռնկմանը: Չնայած Վենետիկի մեծաթիվ նավատորմին (մինչև 3.000 նավ), պատերազմում հաջողությունը թուրքերի կողմն էր: *«Ծնված լինելով պատերազմում և պատերազմի համար»*՝ Օսմանյան կայսրությունը, լինելով պատերազմի մեջ, գտնվում էր իր բնական վիճակում [56, c. 36]: Թուրքերը ոչ միայն հաջող պատերազմ են մղում արևմուտքում՝ գրավելով Էգեյան ծովի կղզիները, այլև պատերազմ սկսեցին արևելքում՝ ձեռնամուխ լինելով Ղարամանիայի նվաճմանը: Արևելքում թուրքերը սկսեցին անմիջականորեն սպառնալ ակ-կոյունլու պետությանը [57, էջ 394]:

Ընդհանուր թշնամու և միասնական շահերի առկայությունն ավելի աշխուժացրին ակ-կոյունլուների պետության և Վենետիկի հանրապետության

[1] Ղարամանիա (Կարամանիա կամ Լարանդա), պետություն Փոքր Ասիայում (1223-1472թթ.), Իկոնիայից հարավ-արևելք. *«սահմանորդ վիճակաց գաւառին Սելեւկիոյ՝ որ ՛ի ձախակողմեան ձորահովիտին Կալիկադնոսի, ՛ի հիւսիսոյ Չօմագ եւ Ալիպէկ լերանց, եւ յարեւմտից յառաջագոյն տեղագրեալ վիճակին Առակլեաց. ՛ի հիւսիսոյ եւ յարեւմտից սահմանս իւր անելով զայլս ՛ի գաւառաց Լիկայնիոյ, այսինքն Ղոնիոյ»* [*Ալիշան Ղ.*, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 292]:

դիվանագիտական փոխհարաբերությունները՝ նպատակ ունենալով այդ առանցի շուրջ ստեղծել պետությունների զինակցություն: Ուստի, 1464թ. Ուզուն Հասանը Վենետիկ է ուղարկում Մուհամադ փաշայի դեսպանությունը՝ հաղթանակի դեպքում Օսմանյան կայսրության որոշ տարածքներ խոստանալով Վենետիկին [58, էջ 15, 59, c. 9]:

Հայերը, որոնք մեծ մասնակցություն ունեին Տրապիզոնի առևտրում և վենետիկցիների հետ իրենց ձեռքում էին պահում իրանական առևտրի հիմնական մասը, բնականաբար, առաջիններից էին, որ ներքաշվեցին դիվանագիտական փոխայցերի ոլորտը և կարևոր դերակատարում ունեցան այդ ասպարեզում [60, c. 7]:

Հայերի մասնակցությամբ առաջին դեսպանագնացությունը, որի պատմությունն ավանդված է վավերագրերով, Խոջա Միրաքի գլխավորած դեսպանությունն էր՝ մեկնած Իրանից վենետիկցի դեսպան Լաձարո Քուիրինիի ուղեկցությամբ [61, էջ 105]: Խոջա Միրաքը *«հարուստ վաճառական էր բոլոր ապրանքների»* [62, էջ 213] *«ի մեծ քաղաքէն եւ յանուանի շահաստանէն Թաւրիզոյ, զաւակ բարի ծնողաց, ազգաւ հայ եւ հաւատով քրիստոնեայ»* [63, էջ 3], *«ի սմանէ (Ուզուն Հասան) եղեւ պատուեալ սուրբն Միրաք, որպէս ի նախասացեալ թագաւորացն»* [64, էջ 83]: Նրա դեսպանության մասին Կատերինո Ձենոն հետևյալն է գրում. *«Ուզուն Հասանի ուղարկած դեսպանները Վենետիկ հասան, որոնք էին Հաձի Մահմեդ (Azimamet), Մուրատ (Morat), Նիկոլո (Nicolo) և Քաֆարսա (Chefarsa), պատկառելի մարդիկ, որոնք մեծ հեղինակություն ունեին թագավորի* (Ուզուն Հասանի) *մոտ, և որոնք մեծ ընծաներ /բերելով/ իրենց տիրոջից, առաջարկում էին զինակցություն և պատվավոր դաշնակցություն կնքել Թուրքիայի և Սուլթանի* (Եգիպտոսի) *դեմ, պայմանով որ վենետիկցիները չթերանան իրենց նավատորմով հարձակվելու երկու իշխանությունների վրա»* [65, էջ 156]:

Ղևոնդ Ալիշանը Մուրատի փոխարեն գրում է Միրատ և նույնացնում Խոջա Միրաքի հետ. *«Սա* (Ուզուն Հասանը) *զգոյշ էր նոր դաշնակիցներէն՝ որք սկսան վախցնել, թէ օսմանեանք կու պատրաստվին իր երկիրը կոխելու, ուզեց կանոնավոր եւ հաստատ բարեկամութիւն եւ օգնականութիւն հաստատել, եւ սկսաւ իր կողմէն դեսպան խաւրել ի Վենետիկ* (1464-1468թթ.), *նախ մէկ երկու պարսիկ, յետոյ աւելի յաջողելու համար ուզեց Հռովմայ ս. քահանայապետի այլ խաւրել. եւ բանիս հարմարագոյն համարեց քրիստոնեայ մի, հայ մի: Այս երկու դեսպանութեանց միանգամայն կատարող հայն՝ կոչուէր Միրատ, իր հաւատարիմ սպասավոր կամ պաշտոնեայն. թուղթն գրուց ի Սուլտանայ ուր էր այն ատեն արքայական աթոռ Բէկին* (Ուզուն Հասան) *յ՛ 2 օգոստ. 1469 տարվոյ: Միրատայ անունն կրնար Մուրատ ըլլալ, բայց հավանագոյն է որ ըլլայ Միրաք»* [66, էջ 185-186]:

Միրաքի (Մուրատի, Միրաթի) դեսպանությունը Իրանից Վենետիկ է մեկնում 1469թ. և 1470թ. մարտի 7-ին ընդունելության է արժանանում Վենետիկի դոժի կողմից, ներկայացնում է Ուզուն Հասանի նամակները, իտալերեն թարգմանությամբ հանդերձ [66, էջ 186]: Դրանում, իմիջիայլոց, գրված է. *«Ձեր ներկայութեան կը ղրկեն այս նուիրակը եւ հաւատարիմ ծառան, որ Միրաթ կը կոչվի, ազգով հայ: Լրիվ վստահեցէք այն ամեն բանին, որ մեր անունով բերանացիորեն պիտի հաղորդեն ձեզի»* [61, էջ 106]:

Վենետիկցիները *«ընդունեցին առաջարկը և հայտարարեցին, թե միշտ լավ բարեկամներ են եղել թագավորի* (Ուզուն Հասանի) *հետ, և վստահեցրին նրան, թե այս պատերազմը ավելի հաճելի պիտի լինի իրենց, քան ուրիշ պատերազմները, որ իրենք մղել են»* [65, էջ 156]:

Ժամանած դեսպաններից երեքը, այդ թվում և Խոջա Միրաքը, Վենետիկից անցնում են Հռոմ՝ պապի, ապա Նեապոլի թագավորի մոտ, համոզելու համար, որ այս իշխանությունները *«միանան դաշնակցությանը»* [67, էջ 40]: Նրանցից երկուսը շարունակում են ճանապարհը և, ամենայն հավանականությամբ, այցելում նաև Լեհաստան: Մինչ այդ *«դիվանագիտական գործերով Լեհաստանից Պարսկաստան էր այցելել Հակոբ անունով մի լվովցի հայ»* [68, էջ 200]: Ի պատասխան այս այցի, լեհական մի այլ դեսպանախումբ 1472թ. ժամանում է Ուզուն Հասանի արքունիք:

Այդ ժամանակ Լեհաստանի արքա Կազիմիր Յագելոնի քաղաքական խորհրդատուն էր փորձառու դիվանագետ Ֆիլիպ Կալիմախ Բուոնակորսին (Բուոնակորզին)[1]՝ լեհական գրականության մեջ հակաթուրքական ավանդությունների սկզբնավորողը[2]: Լեհական քաղաքական կյանքի վրա նրա ազդեցությունն այնքան մեծ էր, որ Ուզուն Հասանն էական հույսեր էր կապել Լեհաստանը հակաթուրքական զինակցության մեջ ներգրավելու խնդրի հետ: Մինչև իսկ նա 1474թ. հատուկ դեսպանությամբ պատրաստակամություն էր հայտնել իր ավագ դստերը կնության տալ Յագելոնի որդիներից մեկին և որպես օժիտ խոստանում էր նվաճվելիք Բյուզանդական կայսրության տարածքը, քանի որ աղջկա մայրը՝ Դեսպինա Խաթուն-Կատերինեն, Տրապիզոնի կայսեր դուստրն էր, հետևաբար Բյուզանդական կայսրության ժառանգորդը: Սա-

---

[1] Կալիմախը առաջիններից մեկը ձևակերպեց Լեհաստանի՝ որպես համայն քրիստոնեության պաշտպանի, գաղափարը: Իրանի ներգրավումով Օսմանյան կայսրությունը օղակող հակաթուրքական դաշինքի ստեղծման հարցը նա քննարկման ենթարկեց De his que a Venetis tentata sunt Persis ac Tartaris contra Turcos movendis աշխատության մեջ, իսկ թուրքերի դեմ անմիջական ռազմական գործողությունների հարցը՝ Oratio de bello Turcis inferendo գրքում [*Гейштор А.,* История на службе Юго-восточной политики Речи Посполитой в XV и XVIвв., с. 31 (Россия, Польша и Причерноморье в XV-XVIIIвв., Москва, 1979, сс. 29-39)].

[2] Հետագայում հակաթուրքական տրամադրությունները լեհական գրականության մեջ զարգացրել են Էրազմ Ցիոլեկը, Ս.Օրժեխովսկին, Սեբաստիան Մարշևսկին, Յակուբ Պշիլուսկին, Բարտոշ Պապրոցկին, Քշիշտոֆ Վարշևիցկին, Յուզեֆ Վարշևիցկին, Պյոտր Գրաբովսկին և այլք [*Базыльев Л.,* Польско-турецкие дипломатические связи в XVI веке, сс. 14-15 (Россия, Польша и Причерноморье в XV-XVIIIвв., Москва, 1979, сс. 12-28)].

կայն Ուզուն Հասանի հույսերը չարդարացան: Լեհաստանի արտաքին քաղաքականությունը հիմնականում ուղղված էր Մոսկովյան պետության դեմ, և նշյալ երկու հակամարտ պետություններն էլ շահագրգռված էին ուժերի զուգակշռի պահպանմամբ: Այս իսկ պատճառով հաջողություն չունեցան նաև Հռոմի քայլերը՝ Իվան III-ի (1462-1505թթ.) և բյուզանդական կայսերական տոհմի շառավիղ Սոֆյա (Զոյա) Պալեոլոգոսի ամուսնությամբ (12 նոյեմբերի 1472թ.) [69, c. 166] Մոսկովյան պետությանը հակաթուրքական զինակցության մեջ ներքաշելու գործում [70, c. 165]: Այդ ժամանակ ստեղծվել էր այնպիսի քաղաքական իրադրություն, որ Մոսկովյան պետության համար Օսմանյան կայսրության հետ հարաբերությունների որևէ բարդացում բնավ ցանկալի չէր:

Լեհաստանից Միրաքը 1474թ. հունիսին անցնում է Ղրիմ, Կաֆայից մեկնում Թինա (Ազով), որոշ ժամանակ անց վերադառնում Թավրիզ: Միրաքի դեսպանության այցից հետո[1] Վենետիկի սենատը 1471թ. սեպտեմբերի 10-ի հրամանով Կատերինե Զենոյին նշանակում է հանրապետության դեսպան Ուզուն Հասանի արքունիքում [58, էջ 130]. *«Ծերակույտը հարմար դատեց ընտրելու մի դեսպան, որ բնակի Ուզուն Հասանի (Ussun Cassano) թագավորի արքունիքում, և որ նա պատրաստ լինի հասարակաց հարձակողականը և պաշտպանողականը, և նույնպես ներկայացնի հանրապետության մեծությունն ու պատիվը: Հետևաբար, նախ Պ. Ֆրանչեսկո Միքելե (Francesco Michele) ընտրվեց, որ մերժեց, հետո ծերակուտականներն ընտրեցին Ջիակոմո դա Մեցոն (Giacomo da Mezo), որ նույնպես չէր կամենում ընդունել այս պարտականությունը: Վերջապես, 1471 տարում, ընտրվեց Պ. Կատերինո Զենո, որ սիրով ընդունեց ճանապարհորդությունը, մղված միայն սուրբ հավատքի եռանդով»* [65, p. 157]. *«Միրաքայ իմացուց՝ որ իրեն փոխարեն Դուքսն ալ դեսպան կու խաւրէ (զԿատերինոյ Ծենոյ), եւ անոր բերանով ամեն բան կու ծանուցանէ: Բայց վախենալով ալ որ ճամբան փորձանաց չհանդիպի, պարսկերեն պատասխան մ՝այլ գրել տուաւ եւ յանձնեց առ Միրաք՝ որ տանի ի տիրոջ»* [66, էջ 188]:

Այս ընտրության հարցում էական դեր էր խաղացել Զենոյի ազգակցական կապն Ուզուն Հասանի կնոջ հետ [58, էջ 16]: Կատերինո Զենոն Դամասկոսում Վենետիկի հյուպատոս Դրագոն Զենոյի որդին էր և ամուսինը Կատերինեի քրոջ աղջկա՝ Վիոլենտի *(Violente)* [65, էջ 154]: Զենոյի դեսպանությունն ուներ քաղաքական նպատակ. *«որպեսզի, եթե չէին կարող ոտքի հանել Արևմուտքի վեհապետներին՝ պատերազմելու հասարակաց թշնամու (թուրքերի) դեմ, որ անկուշտ իր ուժի փառքից ձգտում էր (տիրել) աշխարհի կայսրության, գոնե կարողանան առնվազն համոզել Արևելքի վեհապետներին»* [65, էջ 155]: Վենետիկի

[1] Հավանական է, որ նույն Միրաքը 1483թ. Մոսկվա է ժամանում վրաց Ալեքսանդր թագավորի դեսպանության կազմում [*Ոսկանյան Վ.Կ.,* Հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման սկզբնավորման պատմությունից (XV-XVIIIդդ. սկիզբ), էջ 20 (Հոդվածների ժողովածու, XVI-XVIII դարերի հայ ազատագրական շարժումները և հայ գաղթավայրերը, Երևան, 1989, էջ 17-52)]:

կառավարությունն իր կողմից որպես օժանդակություն առաջարկում էր *«հարյուր ցռկանավ (galley) և ավելի շատ մեծ ու փոքր նավեր»* [65, էջ 158]:

Այս հանձնարարություններով Զենոն մեկնում է Վենետիկից, մի քանի ամսից հասնում Հռոդոս, մտնում Ղարամանիա և շատ դժվարությամբ հասնում Պարսկաստան: Զենոն *«ուրախությամբ և պատվով»* [65, էջ 160] է ընդունվում Ուզուն Հասանի արքունիքում *«որպես դեսպան այնքան նշանավոր ու հզոր մի հանրապետության, որ իր նոր զինակիցն ու դաշնակիցն էր»* [65, էջ 160]: Բանակցությունների շնորհիվ 1472թ. գարնանը Թավրիզում մի շարք պետությունների միջև կնքվում է ռազմական դաշինք: Հակաթուրքական զինակցությանը մասնակցում էին նաև Հռոմի պապը, Նեապոլը, Հունգարիան, Ալբանիան, Հռոդոսը, Կիպրոսը, Բուրգունդիան և Կարամանիան [71, с. 36]:

Կատերինո Զենոյի դեսպանագնացության արդյունավետ ելքը շատ բանով պայմանավորված էր թագուհու աջակցությամբ. *«Նա (թագուհին) խոստացավ (ի գործ դնել) իր ամբողջ ազդեցությունը, և բարեկամություն ցույց տվավ մեր նշանավոր կառավարության (իմա՝ Վենետիկի) վերաբերմամբ: Եվ իրապես այս թագուհին պրն. Կատերինոյի միջոցով գործիք դարձավ համոզելու համար Ուզուն Հասանին՝ պատերազմ հայտարարելու համար Թուրքին (Սուլթանի) դեմ: (...) Այս Դեսպինան ամենից կրոնասեր կինն էր աշխարհում, միշտ լավ քրիստոնյա մնացած*[1]*, և ամեն օր հունական արարողությամբ պատարագ էր մատուցում, որին նա ջերմեռանդորեն ներկա էր գտնվում»* [65, էջ 161]:

1472թ. հակաօսմանյան զինակցության համատեղ ծրագրի համաձայն ակ-կոյունլուները նույն թվականին պատերազմ են սկսում թուրքերի դեմ: Ուզուն Հասանը որդուն՝ սուլթան Խալիլին, նշանակելով Շիրազի կառավարիչ, ինքը շարժվում է Օսմանյան կայսրության դեմ.

Իսկ Հասան-բէկ արի արքայն
Զթաղթըն տըւեալ՝ զՇիրազ այն,
Յորդին իւր՝ Խալիլ սուլթան՝
Պահել զկողմանս Արեւելեան:
Եւ դարձաւ ինքն յԱսորեստան [15, էջ 336]:

Պատերազմը նախապես ընթանում է ակ-կոյունլուների առավելությամբ [72, p. 412]: Ուզուն Հասանի բանակը գրավում է Տարոնի (Մուշի) բերդը, Դերջանի և Երզնկայի վրայով մտնում Թոխատ քաղաքը: Սակայն հենց այստեղ էլ պատերազմի նախնական հաջողություններին հաջորդեցին ծանր պարտությունները: 1472թ. սեպտեմբերին Կոնիայի մոտ՝ Բեհիսար վայրում, Ուզուն Հասանը ջախջախիչ պարտություն կրեց թուրքերից և կորցրեց որդիներից

[1] Դեսպինա խաթունը թաղված է Դիարբեքիրի Ս.Գևորգ եկեղեցում. *«Այս եկեղեցումն է նաև Դեսպինա (Despinacaton) խաթունի գերեզմանը, Տրապիզոնի թագավորի աղջիկը, Կալո Եանի (Caloianni) անունով»* [Մի վաճառականի ճանապարհորդությունը Պարսկաստանում, էջ 290, *Հակոբյան Հ.,* Ուղեգրություններ, էջ 286-330]:

երեքին [73, էջ 213]: Սակայն մինչնիսկ այս ծանր պարտությունը չկարողացավ ստիպել Ուզուն Հասանին դադարեցնել պայքարը: Նա կրկին փորձեց ապավինել դաշնակիցների աջակցությանը: Ասիայում դաշնակից պետություն չունենալով և ռազմականապես Օսմանյան կայսրությունից ավելի թույլ լինելով՝ Ուզուն Հասանը հարկադրված էր ապավինել Եվրոպային. *«Այս պարտությունից հետո (Կոնիա, 1472թ.) Հասան բեյ թագավորը մի դեսպան ուղարկեց Վենետիկ համոզելու համար, որ պատերազմեն թուրքի դեմ, քանի որ անձամբ իր դեմ է գալիս: Եվ բացի սրանից նրանցից խնդրեց հրետանի, որ քիչ ժամանակ հետո իրենց նավերով ուղարկեց Կիպրոս»* [74, էջ 256]:

Վենետիկի հանրապետությունը շատ արագ արձագանքեց Ուզուն Հասանի խնդրանքին: Հանրապետության սենատի 1473թ. փետրվարի 10-ի որոշմամբ Ջոզեֆա Բարբարոն դեսպան է նշանակվում Իրանում [58, էջ 16]: *«Պարսկաստանի դեսպան ընտրեցին Պ. Ջոզեֆա Բարբարոյին և բազմաթիվ նվերներով նրան ուղարկեցին թագավորին (իմա՝ Ուզուն Հասանին)»* [65, էջ 162]: Ջոզեֆա Բարբարոն հմուտ դիվանագետ էր՝ 1436-1451թթ. դեսպան էր եղել Մոսկովյան պետությունում [58, էջ 17]: Ռազմական օգնությունը՝ *«հրետանի, որոշ թվով ռումբեր, նետարձակներ, հրացան՝ վառոդով, և ուրիշ զանազան տեսակի երկաթեղեններ, չորս հազար դուկատ արժողությամբ»* [74, էջ 256], *«վեց մեծ պաշարման թնդանոթ, հրահատներ (arquebuses) և մեծ թվով դաշտային հրանոթներ, վառոդ, և պատերազմական այլ ռազմանյութեր, վեց թնդանոթաձիգ, հարյուր հրացանակիր և հրետանու այլ վարժ մարդիկ»* [65, էջ 162-163], *«հրամանատարությամբ չորս կոմիսարների և մեկ կառավարչի, Թոմաս-Իմոլա անունով»* [65, էջ 176], Վենետիկից ուղարկվում է երկու մեծ և փոքր նավերով: Բարբարոն իր հետ ուներ նաև *«ծովում և ցամաքում ռազմական գործողությունների քարտեզներ, որոնց նպատակն էր Փոքր Ասիայի ազատագրումը»* [58, էջ 16]:

Պատերազմը նոր թափով վերսկսվեց 1473թ. գարնանը: Ուզուն Հասանը, *«Հայոց ՋԻԲ (1473) ամի (…) ասպատակեց ի Քրդստան, էառ զԲաղէշ եւ զԽլաթ եւ զՄուշ եւ զԲռհտանք, եւ բազում արեան հեղութիւն արարել գնաց յաշխարհն Հոռոմաց եւ ազգի չարութիւն հասոյց ի հետ ազգին տաճկաց»* [15, p. 344]:

Թշնամի բանակների միջև առաջին ճակատամարտը, որը տեղի ունեցավ Եփրատի ափին՝ Մալաթիայի մոտ, ավարտվեց Ուզուն Հասանի հաղթանակով [72, p. 412]: Սակայն պատերազմի նախնական տասնօրյա հաջողություններին հաջորդեցին ծանր պարտությունները [58, էջ 17-18]: Մինչ Բարբարոյի գլխավորած տորմիղը գտնվում էր դեպի Կիպրոս նավարկության մեջ, Ուզուն Հասանի «ճակատագրի գավաթը շրջվեց» և նրա բանակը Դերջանի դաշտում (12 օգոստոսի 1473թ.) պարտություն կրեց, որով էլ վճռվեց պատերազմի ընդհանուր ելքը [72, p. 412]:

Օսմանյան սուլթան Մուհամադ Բ Ֆաթիհը (1451-1481թթ.) *«եղ անձամբ (…) ընդէմ պարսից ութսուն հազար զօրօք (…) էանց յառաջ, եւ ՚ի դիմի հարաւ ճակատու ուզուն հասանայ. եւ յետ բազում կոտորածի՝ որ եղեւ յերկոցունց կողմանց՝ ի պարտուի մատնեցաւ ուզուն հասան արքայ պարսից, եւ աճապարեաց ի փախուստ»* [18, էջ 510]: Սակայն Ուզուն Հասանը մտադիր չէր զենքը վայր դնել: Վենետիկի դոժին 1473թ. հոկտեմբերի 16-ին գրած նամակով նա պարտությունը պատճառաբանում էր հրազենի բացակայությամբ և հավաստիացնում, որ ապագայում էլ է պատերազմելու թուրքերի դեմ [58, էջ 18]: Նամակը Վենետիկ էր բերել Կատերինո Զենոն, որն այս անգամ հանդես էր գալիս որպես Պարսկաստանի բանագնաց [9, էջ 141-142]. *«Եվ որովհետև մեծագույն հույսը դրել էր քրիստոնյա իշխանների վրա, և որովհետև նա տեսնում էր, որ ինքը և նրանք միևնույն շահն ունեին, նա ուղարկեց Պ. Կատերինոյին՝ նամակներ տալով նրան ուղղված Եվրոպայի բոլոր թագավորներին, նրանցից օգնություն խնդրելու, պնդելով այն վտանգի մասին, որ երկու կողմերն էլ ունեին, և թե ինք զենք էր վերցրած Օսմանցիների դեմ, գլխավորապես մեր (Վենետիկի) հանրապետության և ուրիշ քրիստոնյա պետությունների դրդմամբ»* [65, էջ 167]:

Կատերինո Զենոն Վրաստանի վրայով անցնում է Սև ծովի հյուսիսային ափերը. *«շատ հոգնություններ կրելուց և շատ վտանգներ անցկացնելուց հետո, գնաց Լեհաստան և գտավ, որ Կազեմիր թագավորը* (իմա՝ Կազեմիր Դ 1447-1492թթ.) *կատաղի կռիվ էր մղում Հունգարիայի թագավորի դեմ»* [65, էջ 171]: Լեհաստանի արքայի արքունիքում նա հանդիպեց Վենետիկի դեսպան *«Պաոլո Օգնիպենեին (Paolo Ognibene), որ գնում էր Ուզուն Հասանի մոտ, որպես նվիրակ մեր կառավարության կողմից, և նրան նամակներ տվավ ուղղված թագավորին* /իմա՝ Ուզուն Հասանին/ *լի քաջալերանքով ու տաք խոսքերով (...) միևնույն կերպով գրեց Վրաստանի (Gorgora) թագավորին և Մենգրելիայի թագավոր Մելիքոյին (Melico), և Օգնիբենեին ողջերթ մաղթելուց հետո, մեկնեց դեպի Հունգարիա»* [65, էջ 172]:

1474թ. ապրիլին Հունգարիայում պատվով ընդունվում է Մատթեաս Կորվինուս (1458-1490թթ.) թագավորի կողմից, որը, անսալով Կատերինո Զենոյի հորդորներին, *«խոստացավ երբեք չլքել այնպիսի մի թագավորի, որ այնքան արժանի էր (օժանդակություն գտնելու) քրիստոնյա աշխարհից»* [65, էջ 173]:

Կատերինո Զենոն, մեկնելով Հունգարիայից, ժամանում է Վենետիկ, ուր *«ընդունվեց ամբողջ ազնվականության և ժողովրդի կողմից մեծ ցնծությամբ»* [65, էջ 173]: Ծերակույտը Կատերինո Զենոյի ունկնդրությունից հետո *«ընտրեց չորս դեսպաններ Պապին և Նապոլիի թագավորին, և նրանց հետ ուղարկեց Պ. Կատերինոյին որպես Պարսկաստանի թագավորի դեսպան, որ մյուսներից առաջնություն պետք է ունենար: Նրանք ծերակույտի կողմից ուղարկվեցին օգոստոսի 22-ին, հազար չորս հարյուր յոթանասուն չորս*

թվին» [65, էջ 173]: *«Եվ այս դեսպանների մեկնումից առաջ նրանք գրեցին Պ. Ջոզեֆա Բարբարոյին, որ Կիպրոսում էր»* [65, էջ 174]: Չնայած Կատերինո Զենոյի գործադրած ջանքերին և եվրոպական գահակալների հավաստիացումներին՝ թուրքերի դեմ համատեղ զինակցության կենսագործումից ոչինչ չստացվեց՝ *«իշխանների մեջ այդ ժամանակ տիրող դառն երկպառակության պատճառով»* [65, էջ 173]:

Ոչ մի արդյունք չունեցավ նաև Ամբրոսիո Կոնտարինիի դեսպանությունը՝ 13 փետրվարի 1474թ. - 16 ապրիլի 1477թ.: Հիշատակելի է, որ այս դեսպանությունը Կաֆայից մինչև Լոռի ուղեկցել էր իրեն որպես Ուզուն Հասանի դեսպան ներկայացնող մի հայ, իսկ ճանապարհի մի այլ հատվածում՝ ոմն հայ քահանա [65, էջ 77]: Ամբրոսիո Կոնտարինին Ջոզեֆո Բարբարոյի հետ Ուզուն Հասանի կողմից Սպահանում տեսակցության է արժանանում 1474թ. նոյեմբերի 4-ին [65, էջ 83]: Երկրորդ անգամ Ամբրոսիո Կոնտարինին Ուզուն Հասանի հետ պաշտոնական տեսակցություն է ունենում 1475թ. մայիսի 31-ին [75, էջ 239]:

Եվրոպայի հակաթուրքական ուժերի հետ դիվանագիտական աշխույժ հարաբերություններով հանդերձ Ուզուն Հասանը ծանր պարտությունից հետո նախընտրելի էր համարում խաղաղությունը Օսմանյան կայսրության հետ, քանի որ եվրոպացիների խոստումներին չէին հաջորդում իրական ռազմաքաղաքական քայլեր: Այս կապակցությամբ Ուզուն Հասանը մի առիթով ասել է Վենետիկի դեսպան Ամբրոսիո Կոնտարինիին. *«Ասեք ձեր ղեկավարներին (...) թող նրանք իրենց կողմից կատարեն իրենց /հանձն առած/ պարտականությունը, ինչպես ես անում եմ իմը»* [76, էջ 23]: Ուզուն Հասանը մինչև իսկ փորձ էր արել Ղադի Այլասքյարի դեսպանության միջոցով հաշտություն կնքել Օսմանյան կայսրության հետ, սակայն հաջողություն չէր ունեցել: Փորձ էր արել անգամ խնամիական կապեր հաստատել օսմանյան տիրակալների հետ և դարձյալ ապարդյուն: Ուզուն Հասանն իր նախկին քաղաքականությունը շարունակում էր ավելի շատ քաղաքական այլընտրանքի բացակայությունից ելնելով, քան որևէ իրական օգնության ակնկալիքով: Այդ իսկ պատճառով էլ Լուդովիկո դը Բոլոնյայի *«երկար ճառը (...) թվում էր, թե շատ քիչ ազդեցություն գործեց Շահի վրա»* [75, էջ 239]:

Կյանքի վերջին տարիներին, խուսափելով մեծ ընդհարումներից, Ուզուն Հասանն իր մայրամուտն անցկացրեց ասպատակությունների ու ավարառությունների մեջ. *«/ՌԴԾ/ՀՁ (1476) թւին Հասան բէկին զնաց զՎրաստուն, թալանէց ու անթիւ անձինք կոտորէց և գերի արար»* [77, էջ 194]:

Վրաստանում էլ Ուզուն Հասանը վիրավորվում է, վերադառնում և 1478թ. հունվարի 5-ին մահանում. *«Չարաչար մահուամբ սատակեցաւ, որպէս մանկակոտորն Հերովթէս անիծեալն»* [15, էջ 425]: Ուզուն Հասանի մահվամբ ակ-կոյունլուների հզորությունը թևակոխում է անկման փուլ:

4. Ակ-կոյունլուների տիրապետության անկումը Հայաստանում (1478 - 1501թթ.)

Ուզուն Հասանի մահից հետո նրա որդիների միջև ծայր առան գահակալական կռիվներ, որոնք ավելի քան երկու տասնամյակ Եվրոպային զրկեցին արևելյան դաշնակցից: Ուժերի հարաբերակցությունն էապես փոխվեց, և Վենետիկը հարկադրված էր 1479թ. Մուհամեդ II-ի հետ հաշտություն կնքել [27, p. 206-207]: 1483թ. զինադադար կնքեց Հունգարիան, 1484թ.՝ Մոլդավիան, 1489թ.՝ Լեհաստանը և Լիտվական պետությունը [78, c. 172]: Լեհաստանը նույնպես փորձում էր հարաբերությունները կարգավորել Օսմանյան կայսրության կամ նրա դաշնակիցների հետ: 1482թ. Ղրիմ է այցելում և տեղի խանի հետ բանակցություններ վարում Լեհաստանի դեսպան հայազգի Բոգդանը [79, էջ 28]:

Ուզուն Հասանին հաջորդեց անդրանիկ որդին՝ Խալիլը, որի դեմ վեց ամիս հետո ապստամբեց մյուս եղբայրը՝ Յաղուբը. *«Զկնի ուզուն հասանայ թագաւորեաց ՛ի վերա պարսից ՛ի դավրէժ որդի նորա խալիլ պէյ, ամիսս 6 ապա եաղուպ պէյ»* [18, էջ 510]:

Խոյի մոտ 1478թ. հուլիսի 15-ին տեղի ունեցած ճակատամարտում Խալիլը զոհվեց, և գահն անցավ Յաղուբին: Սակայն երկպառակություններից ուժասպառ երկիրն անշեղորեն գնում էր դեպի կործանում. *«Բազումք մահ խնդրեն անձանց իւրեանց ի բազմանալոյ անօրէնութեան»* [64, էջ 98]: Յաղուբը վաղաժամ վախճան ունեցավ. *«ՋԽ (1491) դեղով մեռաւ Աղուպ փաթշահ»* և երկիրը վերջնականապես զահավիժեց երկպառակության անդունդը [80, էջ 393]: Յաղուբին հաջորդած ակ-կոյունլու տիրակալները քաղաքական տարբեր խմբակցությունների կամակատարներն էին և ունեցան վաղանցիկ կառավարում:

XVI դարի սեմին ակ-կոյունլուների տրոհված և երկպառակությունից թուլացած պետությունն այլևս անկարող էր դիմակայել Սեֆյան ազգատոհմի հարաճուն հզորությանը: Ստեղծվել էին բոլոր նախադրյալները նոր՝ Սեֆյան հարստության հաղթանակի և գահակալության համար:

XV դ. վերջին և XVI դ. սկզբին սեֆյանները քաղաքական ասպարեզից դուրս մղեցին ակ-կոյունլու տիրակալներին, և Իսմայիլ I-ը (1502-1524թթ.) դարձավ նոր՝ Սեֆյան արքայատան, հիմնադիրը:

Սեպտեմբեր, 2008թ.

Աղբյուրներ և գրականություն

1. ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն առաջին (1401-1450թթ.), կազմեց Լ.Ս. Խաչիկյան, Երևան, 1955:
2. Պատմութիւն արշաւանաց և ասպատակութեանց զօրայ Լանկ-Թամուրի, ի Գրիգորէ Խլաթեցւոյ // Հայոց հին և միջնադարյան բանաստեղծության քրեստոմատիա, Երևան, 1979:

3. *Խաչիկյան Լ.Ս.,* Հայաստանի քաղաքական վիճակը և սոցիալ-տնտեսական հարաբերությունները XIV-XV դարերում // Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Երևան, 1972:
4. *Петрушевский И.П.,* Кара-коюнлу государство, Советская историческая энциклопедия, т. 7, Москва, 1965.
5. Битвы мировой истории – Словарь, Москва, 1993.
6. Кондотьер в войнах Монголии и Волгу (1394-1427) // Каспийский транзит, т. I, Москва, 1996.
7. *Успенский Ф.И.,* История Византийской империи, Москва, 1997.
8. Ուղեգրություն Ռույ Գոնզալեց դի Կլավիխոյի (1403-1406թթ.) // Հակոբյան Հովհ., Ուղեգրություններ, հ. Ա, Երևան, 1932, էջ 65-146:
9. *Sykes P.*, A History of Persia, v. II, London, 1921.
10. *Шараф-хан ибн Шамсаддун Бидлиси,* Шараф-наме, т. II (перевод, предисловие, примечание и приложение Е.И. Васильевой), Москва, 1976.
11. *Օրմանյան Մ.,* Ազգապատում, մասն Բ, Կ. Պոլիս, 1914:
12. Stevans R., The Land of Great Sopy, London, 1962.
13. *Ակինյան Ն.,* Ազատութեան շարժումը ԺԵ-ԺԶ դարուն հայոց մէջ // Հանդէս ամսօրեայ, թիւ 1-12, 1917/18թթ.:
14. *Ибрагимов Дж.,* Феодальные государства на территории Азербайджана XV века, Баку, 1962.
15. ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն երկրորդ (1451-1480թթ.), կազմեց Լ.Ս. Խաչիկյան, Երևան, 1958:
16. *Սրուանձտեանց Գ.,* Թորոս Աղբար, մասն Բ, Կ.Պոլիս, 1884:
17. *Эфендиев О.А.,* Образование Азербайджанского государства Сефевудов в начале XVI века, Баку, 1961.
18. *Չամչյանց Մ.,* Հայոց պատմություն, հ. Գ., Երևան, 1984:
19. *Магидович И.П., Магидович В.И.,* Очерки по истории географических открытий, т. II, Москва, 1983.
20. *Սավալանյանց Տ.,* Պատմութիւն Երուսաղեմի, Երուսաղեմ, 1931, հ. 1:
21. Филипп де Коммин, Мемуары, Москва, 1986.
22. Османская империя и страны Центральной, Восточной и Юго-Восточной Европы в XV-XVIвв, Москва, 1984.
23. Մեծն Վարդան Բաղիշեցի //Մանր մատենագիրք ԺԵ-ԺԹ դար, Դիվան Հայոց պատմութեան, գիրք Ժ, Թիֆլիս, 1912, էջ 69-82:
24. *Макьявелли Николо,* История Флоренции, Москва, 1987.
25. *Stavrianos L.S,* The Balkans since 1453, New York, 1966.
26. *Райт Дж. К.,* Географические представления в эпоху крестовых походов, Москва, 1988.
27. *Dorothy M. Vaughan,* Europe and the Turk, A Pattern of Alliance 1300-1700, Liverpool, 1954.
28. *Առաքել Բաղիշեցի,* Ողբ մայրաքաղաքին Ստամպօլու // Առաքել Բաղիշեցի, Քննական բնագրեր, Երևան, 1971:
29. *Փափազյանց Ի.,* Պատմութիւն եկեղեցիական հաւաքեալ յարժանահաւատ մատենագրաց, աշխատասիրութեամբ տեառն Իգնատիոսի վրդ. Փափազեանց Տարօնոյ Արքեպիսկոպոսի ի Մխիթարեան ուխտէն, Վէնետիկ, 1848:
30. *Ջաղացպանյան Ե.Դ.,* Բյուզանդիան կործանման նախօրեին // Պատմաբանասիրական հանդես, 1988, #2:

31. *Медведев И.П.,* К вопросу о принципах византийской дипломатии накануне падения нмперии [Византийский временник, 33, Москва, 1972, сс. 129-139].
32. *Гасратян М.А., Орешкова С.Ф., Петросян Ю.А.,* Очерки истории Турции, Москва, 1983.
33. *Պալճեան Ա.,* Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի հայս եւ միութիւն նոցա ընդ հռոմէական եկեղեցւոյ ի փլորենտեան սինհոդոսի, Վիէննա, 1878:
34. *Հովհաննիսյան Աշ.,* Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. I, Երևան, 1957:
35. Պատմութիւն Լանկ-Թամուրայ եւ յաջորդաց իւրոց արարեալ Թովմա վարդապետի Մեծոբեցւոյ, Փարիզ, 1860:
36. Թովմա Մեծոփեցի, Թովմա Մեծոփեցու յիշատակարանը, հրատարակեց իւր յառաջաբանով Կարապետ Կոստանեանց, Թիֆլիս, 1892:
37. *Ներսես Շնորհալի,* Ողբ Եդեսիոյ, Երևան, 1973:
38. Ուղեգրություն Ուիլյամ Ռուբրուքի (1253-1255թթ.) // Հակոբյան Հովհ., Ուղեգրություններ, հ. Ա, Երևան, 1932, էջ 1-33:
39. *Երեմիա Քեօմիւրճեան,* Պատմութիւն համառօտ ԴՃ տարւոյ օսմանցոց թագաւորացն, Երևան, 1982:
40. После Марко Поло, Путешествия западных чужеземцев в страны трех Индий (перевод с латинского и староитальянского языков, введение и примечания Я.М. Света), Москва, 1968.
41. *Арш Г.Л., Виноградов В.Н., Достян И.С., Наумов Е.П.,* Балканы в международной жизни Европы /XV-начало XX века // Вопросы истории, 1981, 4, сс. 30-42.
42. *Шахмалиев Э.,* Франко-венецианское торговое соперничество на Переднем Востоке первой половины XVI века // Ученные записки АзГУ, 1957, 5, сс. 79-85.
43. *Базылев Л.,* Польско-турецкие дипломатические связи в XVI веке // Сборник статей - Россия, Польша и Причерноморье в XV-XVIII вв., Москва, 1979, сс. 12-28.
44. *Райт Дж. К.,* Географические Представления в эпоху крестовых походов, Москва, 1988 // Տե՛ս *Соколов Н.П.,* Образование Венецианской колониальной империи, Саратов, 1963, стр. 409-445; *Соколов Н.П.,* Торговые взаимоотношения Венеции и Киликийской Армении в XII-XIV вв., Горький, 1973, стр. 5-24.
45. *Рутенбург В.И.,* Италия и Европа накануне нового времени, Ленинград, 1974.
46. *Канделоро Джорджо,* История современной Италии, Москва, 1958.
47. *Кулишер И.М.,* История экономического быта Западной Европы, т. 2, Москва-Ленинград, 1931.
48. Շիլթպերկէր, Յովհաննէս Շիլթպերկէրի ուղեւորութիւնը ի Հայաստան (թարգմ. Հ. Ֆոկոլեան), էջ 239; Բազմավէպ, 1959, թիւ 11-12, էջ 239-247:
49. *Plaut Steven E.,* The Middle East and the Venice Model of Development // Mediterranean Quarterly, Summer, 1996, pp. 72-86.
50. *Гордлевский В.А.,* Государство Сельджукидов в Малой Азии // Гордлевсий В.А., Избранные сочинения, т. I, Москва, 1960, сс. 31-321.
51. *Yale William,* The Near East, New York, 1958.
52. *Mazzaouni M.,* The Origins of the Safawids, Wiesbaden, 1972.
53. Լեո, Հայոց պատմություն, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 1, Երևան, 1969:
54. *Карпов С.П.,* Трапезундская империя и западно-европейские государства в 13 - 15 вв., Москва, 1981.
55. *Տոմաշեկ Վ.,* Սասուն և Տիգրիսի աղբերաց սահմանները, մասն Ա, Վիեննա, 1896:
56. *Миллер А.Ф.,* Мустафа паша Байрактар, Москва-Ленинград, 1947.
57. Ասիայի և Աֆրիկայի երկրների միջին դարերի պատմություն, Երևան, 1973 :

58. Ասնադ-ե մարբութ բե ռավաբեթ-ե թարիխ-ի Իրան վա Ջոմհուրի-յե Վենեզ ազ դորե-յե իլխանան թա ասրե սեֆնի (Իրանի և Վենետիկի հանրապետության պատմական կապերին վերաբերող փաստաթղթեր՝ սկսած իլխանությունների ժամանակաշրջանից մինչև սեֆյաններ) /աշխատասիրությամբ Իրաջ Անվարիի և Ղոդրաթուլլահ Ռոշանիի/, Թեհրան, 1352/1973 [պարսկերեն]:
59. *Зонненшталь-Пискорский А.А.,* Международные торговые договоры Персии, Москва, 1931.
60. *Абидова М.,* Государство Ак-коюнлу в Иране во второй половине 15-ого века, Автореферат дисс. на соискание уч. степени кандидата ист. наук, Ленинград, 1953.
61. Ջեքիյան Լ. Խոջա Սաֆար՝ շահ Աբասի դեսպան Վենետիկի մեջ, Պատմա-բանասիրական հանդես, 1983, #1:
62. Ուղեգրություն Ջոզեֆա Բարբարոյի (1471-1478թթ.) // Հակոբյան Հովհ., Ուղեգրություններ, հ. Ա, Երևան, 1932, էջ 175-214:
63. *Աճառյան Հ., Մանանդյան Հ.,* Հայոց նոր վկաները, հ. Բ, Վաղարշապատ, 1902 (Վկայաբանության ռուսերեն թարգմանությունն առկա է հետևյալ գրքում՝ Армянские жития и мученичество (Перевод с древнеармянского, вступительные статьи и примечания - Тер-Даврян К.С., Ереван, 1994, стр. 399-405).
64. ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն երրորդ (1481-1500թթ.), կազմեց Լ.Ս. Խաչիկյան, Երևան, 1967:
65. Ուղեգրություն Կատերինո Ջենոյի (1471-1474թթ.) // Հակոբյան Հովհ., Ուղեգրություններ, հ. Ա, Երևան, 1932, էջ 153-174:
66. *Ալիշան Ղ.,* Հայ-Վենետ կամ յարընչութիւնք հայոց և վենետաց ի ԺԳ-Դ և ԺԵ-Զ դարս, Վենետիկ, Ս. Ղազար, 1896:
67. *Կյուլպենկյան Ռ.Վ.,* Հայաստանի և Փորթուկալի հարաբերությունները սկիզբեն մինչև միջին դարերու վերջը, Երևան, 1986:
68. *Աբրահամյան Ա.,* Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. Ա, Երևան, 1964:
69. *Борисов Н.С.,* Русская церковь в политической борьбе XIV-XV веков, Москва, 1986.
70. *Греков И.Б.,* Очерки по истории международных отношений Восточной Европы XIV-XVI вв. Москва, 1963.
71. *Махмудов Я.М.,* К вопросу о взаимоотношениях государств Ак-коюнлу и Сефевидов с европейскими странами- вторая половина XV-начало XVII века // Известия АН АзССР, 1987, 3.
72. *Browne E. G.,* A History of Persian Literature under Tartar Domination (A.D. 1265-1502), Cambridge, 1920.
73. *Այվազովսկի Գ.,* Պատմութիւն Օսմանեան Պետութեան, հ. Ա, Վենետիկ, 1841:
74. Ուղեգրություն Ջիովան Մարիա Անջիոլելլոյի // Հակոբյան Հովհ., Ուղեգրություններ, հ. Ա, Երևան, 1932, էջ 255-285:
75. Ուղեգրություն Ամբրոսիո Կոնտարինիի (1473-1477թթ.) // Հակոբյան Հովհ., Ուղեգրություններ, հ. Ա, Երևան, 1932, էջ 215-254:
76. *Զուլալյան Մ.Կ.,* Հայ ժողովրդի XIII-XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, գիրք Ա, Երևան, 1990:
77. Հակոբ Հիսուսիին վերագրված ժամանակագրությունը (XV, XVIIդդ.), էջ 194 // Մանր ժամանակագրություններ XIII-XVIIIդդ., հ. Ա, կազմեց Վ. Հակոբյանը, Երևան, 1951, էջ 189 – 200:
78. *Хорошкевич А.Л.,* Русское государство в системе международных отношений, Москва, 1980.

79. *Ոսկանյան Վ.Կ.,* Հայերը Մոսկվայում XV-XVII դարերում // Պատմա-բանասիրական հանդես, 1971, #1, էջ 25-40:
80. Ժամանակագրական մանր հատվածներ // Մանր ժամանակագրություններ, h. Ա, Երևան, 1951, էջ 387-401:

ДИПЛОМАТИЧЕСКИЕ УСИЛИЯ ПО СОЗДАНИЮ ЕДИНОЙ АНТИТУРЕЦКОЙ КОАЛИЦИИ И УЧАСТИЕ АРМЯН В ЭТОЙ БОРЬБЕ

(эпоха правления туркменских племен ак-коюнлу и кара-коюнлу – XV век)

Ара Папян

Резюме

Туркменские кочевые племена ак-коюнлу и кара-коюнлу (от ак – белый, кара – черный и коюн – баран, овца) переселились в Армению, Атропатену и в северную Месопотамию в конце XIII века. В течение XIV-XV веков они вели ожесточенную и непримиримую борьбу за полный контроль над регионом. Противостояние обострялось тем, что каждый из племенных союзов был вовлечен в сферу влияния противоборствующих стран, среди которых эти племена искали союзников. Это противостояние характеризовалось периодическими вспышками ожесточенных боевых действий.

Захват в 1453г. турками-османами Константинополя и падение в 1461г. Трапезундской империи коренным образом изменили международные отношения и оставили глубокий след на политическом мышлении христиан. Идея освобождения Святой Земли постепенно уступила место идее противостояния туркам, освобождения Константинополя и восточных христиан. Эта новая идея требовала объединения всех антитурецких сил как на Западе, так и на Востоке.

Новая геополитическая ситуация поставила под удар также торговые интересы ряда стран и группировок. Армяне, державшие в своих руках основную часть торговли между Западом и Востоком, быстро втянулись в сферу дипломатии и играли важную роль в попытках создания антитурецкой коалиции. Однако эти усилия были малоэффективными и к началу XVI века туркменские племена полностью уступили политическую арену Османской империи и Сефевидскому Ирану.

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԸ ՀՐԵՈՒԹՅԱՆԸ. ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ, ԳՈՐԾԸՆԹԱՑԸ, ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ

Հարություն Մարության

Հոդվածում, համացանցային տվյալների հիմամբ, անդրադարձ է արված Երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդող տարիներին Հոլոքոստի զոհերին Գերմանիայի և մի շարք այլ պետությունների ու կազմակերպությունների իրականացրած ֆինանսական փոխհատուցումներին, դրանց ձևավորմանը և ընթացքին: Փոխհատուցումները հրեությանը՝ տարաբնույթ ձևերով, շարունակում են վճարվել մինչ օրս, ինչը, մասնավորապես, ցույց է տրված հավելվածում բերված Գերմանիային ուղղված հրեական նյութական պահանջների կոնֆերանսի («Պահանջների կոնֆերանս») 2005թ. իրականացրած ֆինանսական գործունեության հաշվեկշիռն արտացոլող նյութերի օրինակով: Արվում են որոշ հետևություններ իրեից փորձը հայոց պահանջատիրության համատեքստում կիրառելու համար:

I

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին նացիոնալ-սոցիալիզմի գաղափարախոսությամբ առաջնորդվող ֆաշիստական Գերմանիայի կողմից իրականացվեց շուրջ 6 մլն եվրոպական հրեաների ցեղասպանությունը, որը պատմության մեջ մտավ Հոլոքոստ (ողջակիզում, եբրայերեն Հա-Շոա) անվամբ: Պատերազմի ավարտին հաջորդեց Գերմանիայի օկուպացումը հաղթող տերությունների կողմից, կայացան մի շարք կոնֆերանսներ, ուր ի թիվս հետպատերազմյան Եվրոպային առնչվող բազմաթիվ վճիռների, կայացվեցին որոշումներ Գերմանիայի կողմից վճարվելիք ռազմատուգանքների ձևերի ու չափերի շուրջ:

Մինչև Իսրայել պետության ձևավորումը գերմանական կողմից փոխհատուցումների վճարման հարցը բարձրացվել է 1945թ. սեպտեմբերին չորս օկուպացիոն տերություններին Հրեական գործակալության *(Jewish Agency)*[1] կողմից նրա նախագահ Խաիմ Վեյցմանի *(Chaim Weizmann)* (որը 1935-1946թթ.

[1] Մանրամասն տե՛ս http://www.jewishagency.org/

նաև Համաշխարհային սիոնիստական կազմակերպության – *World Zionist Organization*[1] նախագահն էր) հղած հուշագրում, որտեղ պահանջ էր դրվում ընդգրկել այդ հարցը ռազմատուգանքի շուրջ Գերմանիայի հետ տարվող բանակցությունների օրակարգում: Երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդող առաջին տարիներին, երբ դեռ խիստ թարմ էր Հոլոքոստի հիշողությունը և հրեաները չէին ցանկանում որևէ շփում ունենալ գերմանացիների հետ, Իսրայելի արտաքին գործերի նախարար Մ.Շարեթի՝ 1951թ. սկզբին Գերմանիային ուղղված պահանջը՝ փոխհատուցել (շուրջ $1,5 մլրդ-ի չափով) նացիստական հետապնդումներից փրկված կես միլիոն հրեաների Իսրայելում վերաբնակեցման հետ կապված ծախսերը, կրկին հղված էր ԱՄՆ-ին, ԽՍՀՄ-ին, Մեծ Բրիտանիային և Ֆրանսիային: Նշված գումարի չափը ձևավորվել էր այն հաշվարկից, որ մեկ ներգաղթողի լիարժեք ինտեգրմանն (աբսորբցիա) ուղղված գործունեությունն արժե $3000: Հաշվվել էր նաև, որ $6 մլրդ արժողությամբ հրեական սեփականություն է թալանվել նացիստների կողմից, բայց նաև շեշտվում էր, որ գերմանացիները երբեք չեն կարողանա նյութական փոխհատուցում տալ իրենց այն արարքների համար, որոնց զոհ գնացին միլիոնավոր հրեաներ[2]:

ԽՍՀՄ-ն ընդհանրապես անպատասխան թողեց Մ.Շարեթի պահանջը, իսկ արևմտյան տերություններն այն վերահասցեագրեցին Գերմանիայի դաշնային հանրապետության կառավարությանը: Վերջինիս ֆեդերալ կանցլեր Կոնրադ Ադենաուերի 1951թ. սեպտեմբերին արած պաշտոնական հայտարարության մեջ, որը պատգամավորները լսում էին հոտնկայս և որն արժանացավ խորհրդարանի պատգամավորական բոլոր խմբերի հավանությանը, ասվում էր, որ Գերմանիան պատրաստ է վճարել փոխհատուցումներ նացիստական հանցագործությունների համար[3]: Սակայն հրեական ժողովրդի ներկայացուցիչներին ուղղված Ադենաուերի կոչին՝ ԳՖՀ կառավարության հետ այս հարցի շուրջ բանակցություններ սկսելու մասին, Իսրայելի կառավարությունը սկզբում նույնիսկ չարձագանքեց: Ճիշտ է, ի պատասխան այդ կոչին ընդամենը մեկ ամիս անց, 1951թ. հոկտեմբերին, Նաում Գոլդմանը, որը Հրեական գործակալության համանախագահն էր և Հրեական համաշխարհային կոնգրեսի *(World Jewish Congress)* նախագահը, Նյու Յորքում կազմակերպեց Արևմուտքի երկրներում գործող 23 հրեական ազգային և միջազգային կազմակերպությունների հավաքը: Վերջինիս մասնակիցները պարզորոշ հասկանալ տվե-

[1] Մանրամասն տե՛ս http://www.jewishagency.org/JewishAgency/English/Home/Jewish+Agency+Resources/JAFI+WZO+Rel ated+Sites/WZO/, նաև http://www.jewishvirtuallibrary.org/jsource/Zionism/wzo.html և այլն:

[2] Մանրամասն տե՛ս http://www.claimscon.org/

[3] Մանրամասն տե՛ս http://www.claimscon.org/?url=history Հրեաներին վերաբերող հատվածն ամբողջությամբ տե՛ս *Ian S. Lustick, Negotiating Truth: The Holocaust, Lehavdel, and al-Nakba*. http://arts.mcgill.ca/mepp/new_prrn/res earch/papers/lustick.htm

ցին, որ խոսակցությունը կարող է գնալ միայն նյութական փոխհատուցումների շուրջ, ու այդպիսով հանդիպման արդյունքում ստեղծված կազմակերպությունը կոչվեց Գերմանիային ուղղված հրեական նյութական պահանջների կոնֆերանս կամ կրճատ՝ «Պահանջների կոնֆերանս» *(The Conference on Jewish Material Claims Against Germany – the Claims Conference):* Այս նոր կոնֆերանսի Տնօրենների խորհուրդը բաղկացած էր հիմնադիր կազմակերպություններից յուրաքանչյուրի կողմից գործուղված երկուական անդամներից: Ինչպես նշված է նրանց հայտարարության մեջ, «Պահանջների կոնֆերանսը» խնդիր ունի բանակցել գերմանական կառավարության հետ ու ստեղծել Գերմանիայի կողմից Հոլոքոստի միջոցով անհատ հրեա մարդկանց և հրեա ժողովրդին պատճառած նյութական վնասների փոխհատուցումների ծրագիր»:

1951թ. դեկտեմբերին Ն.Գոլդմանը Կ.Ադենաուերի հետ Լոնդոնում կայացած հանդիպման ժամանակ հասավ պայմանավորվածության, որ Մ.Շարեթի ներկայացրած գումարը դառնալու է բանակցությունների առարկա: Սակայն կողմերի վերաբերմունքը բանակցություններին տարբեր էր:

Արևմտյան Գերմանիան՝ որպես Երրորդ ռեյխի փաստացի իրավահաջորդ, հրեաներին վճարվելիք փոխհատուցումների շուրջ տարվող բանակցությունների մեջ տեսնում էր կարևորագույն քայլ նացիստական անցյալի հաղթահարման ուղղությամբ և մտադիր էր նման կերպ գոնե մասամբ քավել գերմանական ժողովրդի մեղքը: Ըստ կողմերի միջև կնքված համաձայնագրի, գումարները վճարվում էին Իսրայելին որպես փոխհատուցում Հոլոքոստի տարիներին հրեաների ստրկական աշխատանքի և նրանց նկատմամբ կիրառված հալածանքի, հետապնդումների, ինչպես նաև հրեական սեփականության դիմաց, որը գողացվել, թալանվել էր նացիստների կողմից: Միևնույն ժամանակ, Իսրայելում և աշխարհի այլ երկրներում գերմանացիների հետ որևէ բանակցություն վարելու հնարավորության, առավել ևս վարման հարցը առաջ բերեց բողոքի մեծ ալիք: Դրանում հրեաները տեսնում էին վիրավորանք՝ ուղղված նացիստական ցեղասպանության զոհերի հիշատակին և աջակցություն մարդասպանների ռեաբիլիտացիային[1]: Ավելի պրագմատիկ էր Իսրայելի վարչապետ Դ. Բեն-Հուրիոնի *(Ben-Gurion)* դիրքորոշումը, որը մի քանի ամիս տևող տատանումներից հետո գերմանական փոխհատուցումների հարցը 1952թ. հունվարին դրեց Իսրայելի Կնեսետի օրակարգում: Իր որոշումը նա փաստարկում էր նրանով, որ չի կարելի թույլ տալ ոճրագործներին մնալ իրենց զոհերի ժառանգներ, և որ հրեական պետությունն իրավասու է Երրորդ ռեյխի իրավահաջորդներից պահանջելու միջոցներ, որոնք անհրաժեշտ էին թեթևացնել աբսորբցիայի գործընթացը նրանց համար, ովքեր փրկվել էին նացիստական ցեղասպանությունից: Ընդ որում՝ իսրայելական ղեկավարը նշում

[1] Հմմտ. *Илья Гирин,* Vae victis или унижение? http://berkovich-zametki.com/2007/Zametki/Nomer3/Girin1. htm:

էր, որ խոսքը բացառապես թալանված հրեական գույքի արժեքի փոխհատուցման, այլ ոչ թե «արյան դիմաց վճարվող փողերի» մասին է, և որ նյութական պահանջները չեն վերաբերում պատմա-բարոյական խնդիրներին, որոնք հավերժ կմնան չվճարված: Եռօրյա բուռն քննարկումների արդյունքում, որոնք արտացոլում էին հրեական հասարակության մեջ այս հարցի շուրջ առկա սուր տարաձայնությունները, Բեն-Հուրիոնի առաջարկը, որը ենթադրում էր (չնայած բացեիբաց այդ մասին չասվեց և ոչ մի խոսք) Արևմտյան Գերմանիայի հետ ուղղակի բանակցություններ վարելու համաձայնություն, ընդունվեց Կնեսետի կողմից ձայների 61 կողմ, 50 դեմ հարաբերակցությամբ:

Գերմանական փոխհատուցումների մասին բանակցությունները կայացան 1952թ. մարտ-սեպտեմբեր ամիսներին: Դրանց արդյունքում 1952թ. սեպտեմբերի 10-ին Լյուքսեմբուրգում Կ.Ադենաուերի, Մ.Շոմետի և Ն.Գոլդմանի միջև կնքվեց համաձայնություն (պատմության մեջ հայտնի է իբրև «Լյուքսեմբուրգյան համաձայնություն»)[1], ըստ որի Արևմտյան Գերմանիան պարտավորվեց 12-14 տարիների ընթացքում վճարել $845 մլն կամ 3 մլրդ մարկ (հրեական կողմը պահանջեց, որպեսզի $500 մլն-ը պարտավորվի վճարել Արևելյան Գերմանիան, սակայն մինչև Գերմանիայի վերամիավորումը, այդ պահանջը մնաց անպատասխան), որոնցից $110 մլն-ը նախատեսվում էր Գերմանիային ուղղված հրեական նյութական պահանջների մշտապես գործող կոնֆերանսին, ինչպես նաև ուղղակի փոխհատուցումների վճարումներ ընտրված անհատներին: Գերմանիան մեկանգամյա փոխհատուցում էր վճարում 275 հազար վերապրողների: Այսօր նրանց թիվը կազմում է 120 հազ. մարդ:

Արաբական երկրները սպառնում էին բոյկոտ հայտարարել Արևմտյան Գերմանիային, եթե այդ համաձայնությունը վավերացվեր Բունդեսթագի կողմից: Սակայն այդ սպառնալիքը հետաձգեց համապատասխան որոշման ընդունումը ընդամենը կես տարով, և այն ուժի մեջ մտավ 1953թ. մարտի 27-ին: Գերմանական խորհրդարանը 1953թ. սեպտեմբերին ընդունեց հատուկ օրենք գերմանական փոխհատուցումների մասին, որը հետագայում մի քանի անգամ ճշտվեց ու լրացվեց: Իսրայելի կառավարությունն այդ գումարները ներդրեց երկրի ենթակառուցվածքների զարգացման մեջ, դրանք մեծ դեր ունեցան նոր պետության տնտեսության հիմնադրման և զարգացման համար: Գումարներն օգտագործվում էին տնտեսության հիմնարար ճյուղերի՝ գյուղատնտեսության, արդյունաբերության, տրանսպորտի և էլեկտրական ցանցերի զարգացման համար: Ծրագրի իրականացումը հանձնարարվեց հատուկ ստեղծված Գերմանական փոխհատուցումների պետական ընկերությանը: Ծրագրի շրջանակներում ԳՖՀ-ից Իսրայել էին փոխանցվում նաև անհրաժեշտ ապրանքներ ու ծառայություններ՝ ուղղված գլխավորապես գյուղատնտեսության մեքե-

[1] Մանրամասն տե՛ս http://www.claimscon.org/index.asp?url=history2 Տե՛ս նաև *Илья Гирин,* նշվ. աշխ.:

նայացմանը, արդյունաբերության գիտատար ճյուղերի զարգացմանը և առևտրական նավատորմիղի ստեղծմանը: Լյուքսեմբուրգյան համաձայնության (1953-65) գործողության ժամանակահատվածում, որը կետառկետ իրականացվեց ԳՖՀ-ի կողմից, գերմանական փոխհատուցումների հաշվին իրականացված մատակարարումները կազմեցին Իսրայելի ամենամյա ներմուծումների 12-20%-ը:

Գերմանիային ուղղված հրեական նյութական պահանջների մշտապես գործող կոնֆերանսը լյուքսեմբուրգյան համաձայնությամբ իրեն տրամադրված միջոցները (ԳՖՀ կառավարությունը 110 մլն-ին ավելացրեց $16 մլն դոլար) գլխավորապես օգտագործեց նացիստական ցեղասպանությունից փրկված և Իսրայելից դուրս՝ եվրոպական բազմաթիվ երկրներում բնակվող Հոլոքոստը վերապրողներին օգնելու նպատակով: (Փակագծերում նկատենք, որ Ծրագրի իրագործման ընթացքում բացարձակապես ոչինչ չհասավ Խորհրդային Միությունում և նրա արևելաեվրոպական դաշնակից երկրներում բնակվող հրեաներին, որոնք պակաս չէին տուժել նացիստական հետապնդումներից:) Այդ միջոցներից Կոնֆերանսը վճարեց շուրջ 50 հազ. հրեաների հայրենադարձության, համակենտրոնացման ճամբարների բազմահազար նախկին բանտարկյալներին տրամադրվող բուժօգնության, շուրջ 200 հազ. մարդկանց անհատական փոխհատուցման պահանջների բավարարմանն ուղղված իրավաբանական օգնության կազմակերպման համար, նացիստական օկուպացիայի ենթարկված եվրոպական երկրներում հրեական համայնքային կյանքի վերակենդանացմանն ուղղված ծախսերը և այլն: Սրան զուգահեռ՝ իրականացվում էին խոշոր կրթական և մշակութային ծրագրեր, ինչպես, օրինակ, նացիզմի զոհերի բազմահազար ընտանիքների երեխաներն ապահովվում էին կրթաթոշակներով, 18 երկրներում հիմնվեցին 150 հրեական ուսումնական հաստատություններ, 13 լեզուներով հրատարակվեցին Հոլոքոստը վերապրած հեղինակների շուրջ 400 ստեղծագործություններ և այլն: Այդ նույն աղբյուրից զգալի չափով ֆինանսավորվեցին նաև Յադ Վաշեմում և այլուր տարվող Հոլոքոստին նվիրված գիտական ուսումնասիրությունները, սկզբնական կապիտալ առանձնացվեց 1965թ.՝ Նյու Յորքում հիմնելու համար հրեական մշակույթի հուշային ֆոնդ և այլն:

1952թ. մարտին ԳՖՀ-ն վերցրեց նաև հրեա անհատներից պատերազմի ընթացքում թալանված, բռնագրավված գույքի վերադարձման պարտավորությունը, որն օրենսդրական ձևակերպումներ ստացավ 1953թ., ապա պարբերաբար լրացումներ ունեցավ 1956-1963թթ. ընթացքում և վերջնականապես ձևակերպվեց 1965թ. (Արևմտագերմանական փոխհատուցման օրենքներ - *West German Indemnification Laws (BEG)*[1]: Համաձայն այդ օրենքների, անհատական

[1] Մանրամասն տե՛ս http://www.claimscon.org/index.asp?url=germany/BEG

փոխհատուցումներ վճարվեցին Իսրայելում և աշխարհի տարբեր երկրներում բնակվող հարյուր հազարավոր հրեաների, իսկ ԳՖՀ ծախսերն այդ նպատակով հաշվվում էին միլիարդավոր գերմանական մարկեր: Անհատական փոխհատուցումները (չնայած և հրեական պաշտոնական մոտեցումների մեջ ոչինչ չի փոխվել) առ այսօր վճարվում են ոչ միայն ունեցվածքի, այլ նաև կյանքի կորստյան (զոհերի ժառանգներին), առողջությանը պատճառած վնասի, ազատության կորստի և նույնիսկ մասնագիտական ու տնտեսական առաջընթացին խոչընդոտելու համար:

1952թ. սեպտեմբերին Իսրայելի կառավարությունը պաշտոնապես հայտարարեց, որ իր ներկայացուցիչների ստորագրությունը գերմանական փոխհատուցումների համաձայնության ներքո բնավ չի նշանակում, թե իրենք հաշտվում են գերմանական ժողովրդի հետ կամ ճանաչում են որևիցե գերմանական պետության գոյությունը: Սակայն միջպետական հարաբերությունների մակարդակում նման դիրքորոշման մնալն այն բանից հետո, երբ Իսրայելը գնաց շփումների ԳՖՀ-ի հետ փոխհատուցումների հարցում, բավական դժվար էր: Տնտեսական կապերի առկայությունը, դրանց խորացումը, ինչպես նաև միջազգային իրադրությունը բերեցին նրան, որ 1965թ. երկու պետությունների միջև հաստատվեցին դիվանագիտական կապեր:

II

1990-ական թթ. հրեաները սկսեցին պահանջներ ներկայացնել Արևելյան Եվրոպայում իրենցից խլված-թալանված սեփականության դիմաց: Բազմաթիվ խմբեր սկսեցին հետազոտել, թե ինչ է պատահել այն գումարներին, որոնք պահ են տրվել շվեյցարական բանկերին Շվեյցարիայից դուրս բնակվող հրեաների կողմից, որոնք հետագայում սպանվել են Հոլոքոստի տարիներին: Ի լրումն՝ առանձին կազմակերպություններ, որոնցից շատերը հիմնավորված էին հենց Գերմանիայում, սկսեցին ճնշման ենթարկվել վերապրողների խմբերի կողմից՝ իրենց բռնի կատարած աշխատանքի գումարները փոխհատուցելու պահանջով: Դրանց թվում էին *Deutsche Bank AG, Siemens AG, Bayerische Motoren Werke AG (BMW), Volkswagen AG, Adam Opel GmbH-ն:* Ի պատասխան, 1999թ. սկզբին գերմանական կառավարությունը հայտարարեց այդ ընկերություններից վերցրած գումարներով դրամական ֆոնդի ստեղծման մասին՝ օգնելու համար Հոլոքոստը վերապրածներին: Նման մի ֆոնդ ստեղծվեց նաև Շվեյցարիայում, ապա և Հունգարիայում, որոնց նպատակն էր փոխհատուցել Հոլոքոստի զոհերին և նրանց ժառանգներին:

1990-ական թթ. վերջերին տեղի ունեցան քննարկումներ ապահովագրական այն ընկերություններում, որոնք ապահովագրել էին հրեաներին պատերազմից առաջ և որոնք հետագայում սպանվեցին նացիստների կողմից: Այդ

ընկերությունների թվում էին *Alliance-ը, AXA-ն, Assicurazioni Generali-ն Zürich Financial Services Group-ը, Winterhur-ը, Baloise Insurance Group-ը:* Յաղ Վաշեմի հետազոտությունների շնորհիվ ճշտվում էին Հոլոքոստի զոհերի մասին տեղեկությունները, իսկ ԱՄՆ նախկին պետքարտուղար Լոուրենս Իգլբերգերի *(Lawrence Eagleburger)* նախագահությամբ ստեղծված միջազգային հանձնաժողովը փորձում էր ճշտել ապահովագրված, ապա և Հոլոքոստի տարիներին զոհված մարդկանց անունները: Ստեղծվեց Համաշխարհային իրեական փոխհատուցման կազմակերպություն, որը պետք է համակարգեր այս ջանքերը: Որպես իրեական ծագմամբ ԱՄՆ քաղաքացիների շահերի ներկայացուցիչ, ԱՄՆ Արտաքին փոխհատուցումների պահանջի լուծման հանձնաժողովը *(US Foreign Claims Settlement Commission)*[1] 1998 և 1999թթ. գերմանական կառավարության հետ հասավ համաձայնության համապատասխան վճարումներով փոխհատուցելու համար Հոլոքոստի այն զոհերին, որոնք ներգաղթել էին ԱՄՆ պատերազմից հետո:

III

Ինչպես վերը նշել էինք, դեռևս 1952թ. տարվող բանակցությունների ժամանակ Արևմտյան Գերմանիան սկզբունքորեն ճանաչեց իր պարտավորությունները՝ փոխհատուցումներ վճարելու Հոլոքոստը վերապրողներին: Մինչդեռ Արևելյան Գերմանիան, չնայած Պահանջների կոնֆերանսի բազմաթիվ ջանքերի, վճռականորեն մերժում էր վերցնել որևիցե նման պարտավորություն: 1990թ., երբ Արևմտյան և Արևելյան Գերմանիաները բանակցում էին իրենց միավորման համաձայնության շուրջ, Պահանջների կոնֆերանսը հարց բարձրացրեց, որպեսզի միավորված Գերմանիան կատարի իր պարտավորությունները և փոխհատուցումներ վճարի Հոլոքոստի այն վերապրողներին, որոնք մինչ այդ ստացել էին փոխհատուցում կամ շատ քիչ չափով, կամ ընդհանրապես չէին ստացել:

ԱՄՆ կառավարության ակտիվ օժանդակության շնորհիվ, Պահանջների կոնֆերանսը ինտենսիվ բանակցություններ սկսեց Գերմանիայի կառավարության հետ: Արդյունքում՝ 1990թ. հոկտեմբերի 3-ի Գերմանիայի վերամիավորման պայմանագրի իրագործման համաձայնագրի 2-րդ հոդվածում *(Article 2 of the Implementation Agreement to the German Unification Treaty of October 3, 1990)*[2] ձևակերպվեց հետագայում վճարվելիք փոխհատուցումների մասին խոստում, որը հնչում է հետևյալ կերպ. «Դաշնային կառավարությունը պատրաստ է, ի շարունակություն ԳՖՀ քաղաքականության, համաձայնության գալ Պահանջների կոնֆերանսի հետ՝ հատկացնելու լրացուցիչ ֆոնդեր վճարումներ կատարելու համար այն զրկանքների դիմաց, որ կրել են հետապնդում-

[1] Մանրամասն տե՛ս http://www.usdoj.gov/fcsc/holocaustclaims.htm
[2] Մանրամասն տե՛ս http://www.claimscon.org/?url=article2/overview%206

ների ենթարկվածներից նրանք, ովքեր մինչև այժմ, համաձայն ԳՖՀ օրենսդրությամբ ընդունված որոշումների, կամ բնավ չեն ստացել, կամ ստացել են նվազագույն փոխհատուցումներ»:

Այս համաձայնությունը, որը հայտնի է իբրև Ֆոնդի հոդված 2 *(Article 2 Fund),* հետևանք էր ընդհանուր առմամբ ավելի քան 16 ամիս շարունակվող դժվարին բանակցությունների: Այս հոդվածի հիմամբ փոխհատուցումներն իրականացվում են ամենամյա €270 վճարումների ձևով, որի չափն աճել է 2003թ. վարված բանակցություններից հետո: Պահանջների կոնֆերանսը կառավարում է ֆոնդը՝ համաձայն գերմանական կառավարության սահմանած ձևի:

Արդ, որո՞նք են Ֆոնդի հոդված 2-ի հիմնական արդյունքները: Արդեն 1990-ական թթ. կեսերին այդ հոդվածի կիրառման շնորհիվ թեթևացան համապատասխան ցուցակներում ընդգրկվելուն ուղղված պոտենցիալ պահանջատերերին ներկայացվող պահանջները *(eligibility criteria),* ինչի շնորհիվ լրացուցիչ 25 հազ. մարդ սկսեցին թոշակներ ստանալ: Մինչ այդ բանակցությունները, հոդված 2-ը տարածվում էր միայն այն վերապրողների վրա, ովքեր բավարարում էին ֆոնդի կողմից առաջ քաշվող բոլոր չափանիշներին, այդ թվում և այն կետին, որ լրացուցիչ գումարներ ստանալու իրավունք ունեն նրանք, ում անհատական եկամուտները չեն գերազանցում տարեկան $16.000-ը, կամ այն ամուսնական զույգերը, ում եկամուտները չեն գերազանցում տարեկան $21.000-ը: Այս սահմանափակումները բավական ազատականացվեցին, երբ Պահանջների կոնֆերանսը 70 տարեկան և ավելի մեծահասակների համար, ովքեր համապատասխանում էին ֆոնդի մյուս չափանիշներին, պահանջեց եկամուտների գումարները հաշվարկելուց բացառել սոցիալական ապահովության համար կատարվող վճարումները:

2000-2004թթ., շնորհիվ Պահանջների կոնֆերանսի կողմից տարվող բանակցությունների, տարեցտարի ընդլայնվեցին ամենամյա լրավճարներ ստանալու իրավունք ունեցող անձանց *(eligible applicants)* ցուցակները՝ ի հաշիվ այն հրեաների, ովքեր բանտարկված են եղել հատուկ ավստրիական, ինչպես նաև նախկինում որպես այդպիսին չճանաչված ռումինական, հունգարական, բուլղարական ճամբարներում, կամ աշխատել են Հարավսլավիայում գտնվող պղնձահանքերում, կամ հունգարացիների համար Ուկրաինական ռազմաճակատում գործող աշխատանքային գումարտակներում, կամ Ռումինիայում գործող աշխատանքային գումարտակներում և այլն: 2004թ. ձեռք բերվեց համաձայնություն, որպեսզի փոխհատուցումներ տրվեն պատերազմի տարիներին Բուլղարիայում բնակվող 18 տարեկանը լրացած այն հրեաներին, ովքեր ստիպված էին ունենալ կեղծ ինքնություն կամ այլ կեղծ փաստաթղթեր և բնակվում էին ոչ լեգալ, ինչպես նաև համապատասխանում էին մի շարք այլ ցուցանիշների: 2005թ. գերմանական կառավարությունը համաձայնվեց Հոլո-

քսուտը վերապրածների ցուցակում ընդգրկել այն անձանց, ովքեր ամենաքիչը վեց ամիս ներկալված էին Հունգարիայում, Թունիսում, Մարոկոյում և Ալժիրում գործող աշխատանքային ճամբարներում և համապատասխանում էին ցուցակում ընդգրկվելու համար անհրաժեշտ դիտվող մի շարք այլ ցուցանիշների: 2006թ. Պահանջների կոնֆերանսը բանակցում էր, որպեսզի ցանկում ընդգրկվեն նաև թունիսյան ներկալված անձանց համար նախատեսված երեք ճամբարներում մնացող հրեաներին, որոնք համապատասխանում էին անհրաժեշտ դիտվող մի շարք այլ ցուցանիշների:

IV

1998թ. Պահանջների կոնֆերանսը Գերմանական կառավարության հետ բանակցությունների արդյունքում ձեռք բերեց համաձայնություն, ըստ որի հիմնադրվեց Կենտրոնական և Արևելաեվրոպական հիմնադրամ *(Central and Eastern European Fund - CEEF)*[1], որը պետք է փոխհատուցումներ վճարեր Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, նաև նախկին ԽՍՀՄ այն հրեա բնակչությանը, որոնք ենթարկվել էին հալածանքների նացիստների կողմից: Նախատեսվում էր փոխհատուցումներ ստանալու իրավունք ունեցողներին վճարել ամսական 250 գերմանական մարկ: 1999թ. հունվարի 1-ից գերմանական կառավարությունը որոշեց նշված հիմնադրամին չորս տարի անընդմեջ հատկացնել 50-ական մլն գերմանական մարկ: Պահանջների կոնֆերանսը հաշվարկեց, որ շուրջ 18 հազ. վերապրողներ կօգտվեն այդ հիմնադրամից, բայց առ այսօր բանակցում է, որպեսզի ազատականացվեն իրավունքների տրամադրման ցուցանիշները: Ներկայումս վճարումները կազմում են ամսական €135 այն երկրների բնակիչների համար, որոնք Եվրամիության անդամ չեն և 2006-ից ի վեր (կրկին Պահանջների կոնֆերանսի բանակցությունների արդյունքում) ամսական €175 Եվրամիության նորանդամ երկրների (Չեխիա, Էստոնիա, Լատվիա, Լիտվա, Հունգարիա, Լեհաստան, Սլովակիա, Սլովենիա) համապատասխան կատեգորիայի քաղաքացիների համար: Պահանջների կոնֆերանսը շարունակում է բանակցությունները՝ ավելացնելու համար վճարների գումարների չափը:

V

Վերը հիշված Արևմտագերմանական փոխհատուցման օրենքների *(BEG)* պայմանները ենթադրում էին, որ ուղղակի փոխհատուցումների վճարումները սահմանափակվում էին նախկին գերմանական քաղաքացիների, փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց համար: Նաև նշեցինք, որ

[1] Մանրամասն տե՛ս http://www.claimscon.org/?url=ceef/overview

խորհրդային բլոկի երկրներում բնակվող Հոլոքոստը վերապրողները ոչ մի փոխհատուցում չէին ստացել: ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի միջև լարվածության մեղմացման ժամանակաշրջանում բազմաթիվ վերապրողներ՝ փախստականի կարգավիճակով, արտագաղթեցին Արևմուտք: Սակայն նրանք շարունակում էին դուրս մնալ գերմանական փոխհատուցման ծրագրերից, քանի որ, ըստ Արևմտագերմանական փոխհատուցման օրենքների, փոխհատուցումներ ստանալու իրավունք ունեցող անձանց ցուցակների կազմման վերջնաժամկետը սահմանված էր 1965-ը:

1975-ից Պահանջների կոնֆերանսը սկսեց բանակցությունների նոր փուլ՝ ուղղված խորհրդային ճամբարի երկրներից փախստականների փոխհատուցումներ ստանալու իրավունքի հաստատմանը՝ այդպիսով երկարացնելով վերոնշյալ ցուցակների կազմման վերջնաժամկետը: Վերջապես, 1980թ. ԳՖՀ-ն ստեղծեց «Զրկանքների [ենթարկվածների] հիմնադրամը» *(Hardship Fund)*[1]՝ 400 մլն գերմանական մարկ գումարով: Նախատեսվում էր, որ այդ գումարներով Հոլոքոստը վերապրողներից յուրաքանչյուրին կտրվեն մեկանգամյա վճարումներ 5000 գերմանական մարկի (ներկայում՝ €2556) չափով, որից 5%-ի չափով գումար առանձնացվելու էր դրամաշնորհների համար: Գերմանական կառավարությունը ստեղծեց այս հիմնադրամն այն պայմանով, որ Պահանջների կոնֆերանսը (և ոչ գերմանական կառավարությունը) կիրականացնի հիմնադրամի տնօրինումը և վճարների տրամադրումը: Հաշվարկված է, որ Հոլոքոստի շուրջ 80 հազ. վերապրողներ կօգտվեն այս հիմնադրամի վճարումներից: ԽՍՀՄ փլուզումից հետո ավելի շատ Հոլոքոստ վերապրողներ արտագաղթեցին Արևմուտք: Համապատասխան բանակցություններից հետո Պահանջների կոնֆերանսը հասավ նրան, որ մինչև 1992թ. վերջը գերմանական կառավարությունը «Զրկանքների ենթարկվածների հիմնադրամին» լրացուցիչ տրամադրեց ևս 135 մլն գերմանական մարկ, ինչպես նաև 10 մլն գերմանական մարկ՝ կառուցվածքային բնույթ ունեցող դրամաշնորհների համար Իսրայել պետությանը:

«Զրկանքների ենթարկվածների հիմնադրամը» այսօր ևս շարունակում է ֆինանսական օժանդակություն տրամադրել նացիստական հալածանքների բազմաթիվ տարիքավոր զոհերի: Նկատվում է, որ նացիզմի այն զոհերը, որոնք որոշակի արևմտյան երկրների քաղաքացիներ էին հալածանքների տարիներին և այն ժամանակներում, երբ ձեռք էին բերվում համաձայնություններ այդ երկրների և Գերմանիայի միջև, ներկայում չեն ստանում որևիցե վճարում «Զրկանքների ենթարկվածների հիմնադրամից»: Գերմանական կառավարությունը ներկայում չի նախատեսում վճարումներ իրականացնել նման տիպի մարդկանց համար, ինչը, թերևս, գործունեության նոր դաշտ է բացում Պահանջների կոնֆերանսի համար:

[1] Մանրամասն տե՛ս http://www.claimscon.org/?url=hardship/overview

VI

Գերմանիային ուղղված հրեական նյութական պահանջների մշտապես գործող մարմին՝ Պահանջների կոնֆերանսը գործում է ավելի քան կես դար: Առ այսօր էլ նրա գործունեության նպատակները նույնն են. ապահովել Հոլոքոստը վերապրողների և Հոլոքոստի զոհերի ժառանգների համար դրամական փոխհատուցումների ձևով իրականացվող վճարումները և խլվածի վերականգնումը *(restitution):* 1951թ. ի վեր Պահանջների կոնֆերանսը, համագործակցելով Իսրայել պետության հետ, բանակցել է և կազմակերպել վճարումների իրականացում Գերմանիայի, Ավստրիայի, այլ երկրների ինչպես կառավարությունների, այնպես էլ արտադրության առանձին ոլորտների կողմից, հետ է բերել չպահանջված գերմանական-հրեական սեփականությունը և ֆոնդավորել ծրագրեր՝ օժանդակելու համար նացիզմի կարիքավոր հրեա զոհերին:

Այս ընթացքում, որպես արդյունք Պահանջների կոնֆերանսի աշխատանքի, 75 երկրներում բնակվող ավելի քան 500 հազ. Հոլոքոստը վերապրողներ ստացել են փոխհատուցման վճարներ: Այդ վճարումների գումարը կազմել է ավելի քան $60 մլրդ: Պահանջների կոնֆերանսը տրամադրել է շուրջ $1 մլրդ այն կազմակերպություններին, որոնք զբաղվում են Հոլոքոստը վերապրողների սոցիալական պահանջների բավարարման հարցերով և ներգրավված են Շոային նվիրված հետազոտություններում, նրա մասին դասավանդելուն և փաստաթղթերի ուսումնասիրությանը: Կոնֆերանսը նաև գումարներ է տրամադրել՝ վերականգնելու գերմանացիների կողմից ոչնչացված հրեական համայնքները և կազմակերպությունները:

Առ այսօր Պահանջների կոնֆերանսը շարունակում է գործել[1]: Մասնավորապես, շարունակվում են բանակցությունները Գերմանիայի և Ավստրիայի, ինչպես նաև առանձին արդյունաբերական կազմակերպությունների ու բանկերի ներկայացուցիչների հետ: Պահանջների կոնֆերանսը շարունակում է կառավարել փոխհատուցման ծրագրերը և բաշխել վճարումները, նաև նացիստական հետապնդումների ենթարկված հրեաների ժառանգների երիտասարդ սերնդին օժանդակում է կազմակերպություններին տրվող դրամաշնորհների միջոցով, որոնք ձևավորվում են նախկին Արևելյան Գերմանիայում գտնվող հրեական չպահանջված սեփականության վաճառքի գումարներից:

[1] Մանրամասն տե՛ս http://www.claimscon.org/index.asp?url=news Տե՛ս նաև, օրինակ, ”Holocaust '2nd Generation' Seeks German Reparations” (17 հուլիսի 2007թ.) նյութը. http://archive.newsmax.com/archives/ic/2007/7/17/120230.shtml, ինչպես նաև *Anshel Pfeffer*, ”Israel seeks fresh Holocaust reparations deal with Germany”. http://www.haaretz.com/hasen/spages/922252.html Տե՛ս նաև 2007թ. նոյեմբերի 22-ին «Ասոշիեյթիդ պրես» գործակալության տարածած հաղորդագրությունը. “Germany Tells Israel: No More Holocaust Reparations”. http://www.foxnews.com/story/0,2933,312579,00.html

VII

Որոշ հետևություններ, որոնք կարող են օգտակար լինել նաև հայոց պահանջատիրության տեսանկյունից.

ա) ցեղասպանության պատճառած նյութական կորուստների համար փոխհատուցումների պահանջների ներկայացման և ստացման հարցը գործընթաց է, որը կարող է տևել տասնյակ տարիներ: Հրեաների պարագայում այն շարունակվում է ավելի քան 55 տարի,

բ) ցեղասպանության պատճառած նյութական կորուստների փոխհատուցումը ոչ մի կապ չունի «արյան գնի» հետ, որը ենթակա չէ վճարման: Փոխհատուցման փաստը չի նշանակում ցեղասպանությունն իրականացրած գաղափարախոսությունը կրող ժողովրդի ներկայացուցիչների ներում ցեղասպանությունը վերապրողների կամ ցեղասպանության ենթարկված ժողովրդի կողմից: Երկու կողմերը կարող են ունենալ նորմալ միջպետական հարաբերություններ, միևնույն ժամանակ, նման հարաբերությունների առկայությունը կամ բացակայությունը չի կարող խոչընդոտ դիտվել փոխհատուցման գործընթացի ձևավորման համար:

Ցեղասպանության հարցերին նվիրված վերլուծական, քարոզչական աշխատանքներում առավելապես շեշտվում է ցեղասպանությունն իրականացրած կողմին առաջնորդող գաղափարախոսության պահը, քան թե ցեղասպանությունն իրականացրած կողմի էթնիկ պատկանելության գործոնը,

գ) ցեղասպանության պատճառած նյութական կորուստների նյութական փոխհատուցումների դրսևորումները տարաբնույթ են: Դրանք կարող են լինել ինչպես դրամական ուղղակի և անուղղակի փոխհատուցումներ վերապրողներին ու զոհերի ժառանգներին (թե՛ միանվագ, թե՛ տարիներ ու տասնամյակներ շարունակվող), այնպես էլ նյութական փոխհատուցումներ (դրամի, ենթակառուցվածքների, դրամաշնորհների տրամադրման և այլ ձևերով) ցեղասպանության ենթարկված ժողովրդի իրավահաջորդը հանդիսացող պետական միավորմանը,

դ) ցեղասպանության պատճառած նյութական կորուստների համար փոխհատուցումների պահանջների ներկայացման, ստացման ու բաշխման գործի իրականացման համար լավագույն ձևը միջազգային ոչ կառավարական կազմակերպության ստեղծումն է, որը կաշկանդված չէ շահառու հանդիսացող պետության օրենքներով: Այդ մարմինը նաև հետազոտական-իրավական գործունեություն իրականացնող կառույց է, այն պետությունից ստանում է որոշակի իրավասություններ և գործում է դրանց շրջանակներում՝ միաժամանակ ներկայացնելով ցեղասպանության ենթարկված ժողովրդի աշխարհով մեկ սփռված ժառանգների շահերը,

ե) ցեղասպանության զոհեր դիտվում են ոչ միայն ցեղասպանության

իրականացման տարիներին զոհվածները, այլև նրանք, ովքեր՝ (1) իրենց բնակության վայրերից ենթարկվել են բռնի տեղահանման, (2) տարհանվել են համակենտրոնացման ճամբարներ, (3) բռնի աշխատել են հանքերում, աշխատանքային զումարտակներում և այլուր, (4) ենթարկվել են որոշակի բարոյական կամ այլ բնույթի զրկանքների, հալածանքների, (5) հնարավորություն չեն ունեցել ստանալ համապատասխան կրթություն, զուրկ են եղել մասնագիտական աճի հնարավորություններից և այլն,

գ) Գերմանիային ուղղված հրեական նյութական պահանջների մշտապես գործող մարմնի՝ «Պահանջների կոնֆերանսի» գործունեության փորձը կարոտ է շարունակական ուսումնասիրության:

Ապրիլ, 2008թ.

ФИНАНСОВЫЕ ВОЗМЕЩЕНИЯ ГЕРМАНИИ ЕВРЕЙСТВУ: ФОРМИРОВАНИЕ, ПРОЦЕСС, СОВРЕМЕННОЕ СОСТОЯНИЕ

Арутюн Марутян

Резюме

В статье сделана попытка отобразить формирование и процесс финансовых возмещений Германии и некоторых других государств и организаций жертвам Холокоста и их наследникам в последовавшие после Второй мировой войне годы. Возмещения еврейству продолжаются вплоть до настоящего времени, что, в частности, показано в приложении на примере материалов, отображающих баланс финансовой деятельности Конференции материальных требований еврейства к Германии за 2005г. Делаются некоторые выводы о возможностях применения еврейского опыта в контексте армянских требований к Турции.

Հավելված

Պահանջների կոնֆերանսի 2005թ. ֆինանսական հաշվետվության ընդհանրական պատկեր (գումարները կլորացված են)[1]

Աղյուսակ 1

2005թ. ֆինանսական տարվա եկամուտները

Ուղղակի փոխհատուցումները վերապրողներին[I]	$368 մլն	50.6%
Սեփականությանն առնչվող եկամուտները[II]	$169 մլն	23.3%
Սոցիալական ապահովմանն ուղղված ծրագրերի իրագործում[III]	$49 մլն	6.7%
Վարչական ծախսերի փոխհատուցումներ[IV]	$15 մլն	2.0%
Տեխնիկական ծառայությունների իրագործման առնչությամբ արված ծախսերի փոխհատուցումներ[V]	$8 մլն	1.2%
Այլ[VI]	$20 մլն	2.8%
Հաշվեկշիռ	$629 մլն	
Շվեյցարական բանկերի համաձայնության կողմից բանկերում հաշիվ ունեցողներին ու ժառանգորդների վճարումների համար տրամադրվող միջոցներ[VII]	$80 մլն	11%
ICHEIC[2]*-ի* կողմից ապահովագրական վկայագրեր ունեցողներին ու նրանց ժառանգորդների վճարումների համար տրամադրվող միջոցներ[VIII]	$17 մլն	2.4%
Ստացված միջոցների ընդհանուր գումարը	$726 մլն	

I. Վերապրողներին վճարվող ուղղակի փոխհատուցումները ձևավորվում են եկամուտների երեք հիմնական աղբյուրներից.

ա) Գերմանական կառավարությունը տրամադրում է ֆինանսավորում Ֆոնդի հոդված 2-ի *(Article 2 Fund)*, Զրկանքների ենթարկվածների *(Hardship Fund)* և Կենտրոնական ու Արևելաեվրոպական *(Central and Eastern European Fund)* հիմնադրամների համար: Անհատ վերապրողներին կատարվող վճարումները բավարարելուն ուղղված այս ֆինանսավորումն իրականացվում է գերմանական կառավարության կողմից առաջ քաշված հատուկ պահանջների *(specific criteria)* բավարարման դեպքում,

[1] Հավելվածում տեղ գտած նյութերը վերցված են http://www.claimscon.org/forms/Financial_Sum mary_05.pdf հասցեում տեղադրված "Summary of Financial Statements Year Ended December 31, 2005" փաստաթղթից: 2006 ֆինանսական տարվա արդյունքներն ամփոփված են հետևյալ համացանցային հասցեում. http:// www.claimscon.org/forms/Financial_Summary_06.pdf

[2] *ICHEIC*–ը The International Commission on Holocaust Era Insurance Claims կազմակերպության անվան հապավումն է: Կազմակերպության մասին մանրամասն տե՛ս http://www.icheic.org/ 1998թ. ստեղծված կազմակերպության գործունեության արդյունքում մինչև 2007թ. ընկած ժամանակահատվածում $306.24 մլն է հատկացվել ավելի քան 48 հազար հայտատուների: Մանրամասն տե՛ս http://www.ichei c.org/pdf/stats-19mar07.pdf

բ) Գերմանական հիմնադրամը *(German Foundation)* ստեղծված է 2000թ. օգոստոսին և գործում է գերմանական օրենսդրության հենքով: Ըստ այդ օրենքների, «Պահանջների կոնֆերանսն» է ընտրված այն կազմակերպությունը, որն իրականացնելու է վճարումների բաշխումն այն հրեա անձանց, ովքեր ժամանակին ընդգրկված էին ստրկական և ստիպմամբ իրականացվող աշխատանքներում, ինչպես նաև բժշկական փորձարկումներում ներգրավված անձանց ու նրանց ժառանգներին: Այս անձինք պետք է համապատասխանեն գերմանական օրենսդրությամբ կարգավորվող և Գերմանական հիմնադրամով հաստատված հատուկ պահանջներին,

գ) «Շվեյցարական բանկերի համաձայնության» *(The Swiss Banks Settlement)*[1] ստեղծման մասին փաստաթուղթը ստորագրվել է 1999թ. հունվարին մի խումբ շվեյցարական բանկերի կողմից, որոնք այս կամ այն կերպ առնչակցություն ունեին նացիզմի ժամանակաշրջանում բանկերի և այլ միավորումների գործողություններին: Գումարների տրամադրման ու բաժանման մասին որոշումն ընդունվել է դատարանի կողմից 2000թ. նոյեմբերին, ըստ որի Պահանջների կոնֆերանսն է տնօրինելու Փախստականների և առաջին աստիճանի ստրկական աշխատանքի *(Refugee and Slave Labor Class I)* խմբի մեջ մտնող անհատ վերապրողներին իրականացվող փոխհատուցումների բաշխումը համաձայն դատարանի կողմից մշակված ցուցանիշների:

Բոլոր այս դրամական միջոցներն ուղղակիորեն փոխանցվում են իրավասու անհատ վերապրողներին:

II. Սեփականությանն առնչվող եկամուտները *(Income Regarding Property)* վերաբերում են այն դրամական միջոցներին, որոնք ստեղծված են Պահանջների կոնֆերանսի իրավահաջորդ կազմակերպության *(Successor Organization)* կողմից նախկին Արևելյան Գերմանիայում չպահանջված *(unclaimed)* հրեական սեփականության վերադարձի և վաճառքի կամ դրանց դիմաց փոխհատուցումների ստացման միջոցով: Այն ներառում է դրամական միջոցներ, ստեղծված. ա) նախնական իրավական վիճակի վերականգնման շնորհիվ գոյացած սեփականության վաճառքից կամ դրա համար վճարված փոխհատուցումներից, բ) հատուկ դեպքերից, գ) վարձավճարներից, ձևավորված Իրավահաջորդ կազմակերպության սեփականությունը մինչև դրա վաճառքը վարձով տալուց:

III. Սոցիալական ապահովմանն ուղղված ծրագրերի իրագործումը վերաբերում է այն գումարներին, որոնք Պահանջների կոնֆերանսը ստացել էր սոցիալական ապահովման դրամաշնորհների ֆինանսավորման համար Շվեյցարական բանկերի համաձայնության թալանված միջոցների խմբից *(Swiss Banks Settlement Looted Assets Class)*, գերմանական կառավարությունից և հունգարական *Gold Train Settlement-ից:*

IV. Վարչական ծախսերի փոխհատուցումները վերաբերում են այն գումարներին, որոնք Պահանջների կոնֆերանսը ստանում է բազմաթիվ աղբյուրներից իբրև փոխհատուցում իրականացված վարչական ծախսերի:

[1] Մանրամասն տե՛ս http://www.claimscon.org/index.asp?url=allocations/swiss

V. Տեխնիկական ծառայությունների իրագործման առնչությամբ արված ծախսերի փոխհատուցումները վերաբերում են այն ծախսերին, որոնք հետևել են Պահանջների կոնֆերանսի փոխհատուցումների ստացման մի քանի կոնկրետ ծրագրերի գործողություններին:

VI. «Այլը» գլխավորապես բաղկացած է ներդրումների և ունեցվածքի վարձակալության շնորհիվ ձևավորված եկամուտներից:

VII. Շվեյցարական բանկերի համաձայնության կողմից բանկերում հաշիվ ունեցողների ու նրանց ժառանգների վճարումների համար տրամադրվող ֆինանսավորումը վերաբերում է այն դրամական միջոցներին, որոնք շնորհված են պահանջատերերին դատարանի կողմից Շվեյցարական բանկերի համաձայնության դեպոզիտ դրված միջոցների խմբից: Այս ծրագրի շրջանակներում Պահանջների կոնֆերանսը տեխնիկական օժանդակություն է ցուցաբերում պահանջների բավարարմանն ուղղված դատական գործընթացների իրականացմանը: Միջոցները բաշխվել են Պահանջների կոնֆերանսի կողմից 2005թ.:

VIII. *ICHEIC-ի (The International Commission on Holocaust Era Insurance Claims)* դրամական միջոցները նախատեսված են ապահովագրության վկայական ունեցողներին և նրանց ժառանգներին իրականացվող վճարումներ կատարելու համար և վերաբերում են Հոլոքոստի ժամանակաշրջանի ապահովագրական պահանջների հանձնաժողովից անհատ պահանջատերերին իրականացվող հումանիտար վճարումներին: Պահանջների կոնֆերանսը տրամադրում է տեխնիկական աջակցություն պահանջների ներկայացմանն ու ստացմանն ուղեկցող [դատական] գործընթացների համար: Այս դրամական միջոցները բաշխվել են Պահանջների կոնֆերանսի կողմից 2005թ.:

Աղյուսակ 2

2005թ. ֆինանսական տարվա ծախսերը

Վերապրողներին վճարվող ուղղակի փոխհատուցումներ[I]	$361 մլն	56.8%
Սեփականության ժառանգներ - Գուդվիլ հիմնադրամ[II]	$17 մլն	2.7%
Բաշխումներ[III]	$126 մլն	19.6%
Վարչակազմ[IV]	$22 մլն	3.4%
Տեխնիկական ծառայությունների իրականացում[V]	$8 մլն	1.3%
Այլ[VI]	$6 մլն	0.9%
Ընդամենը	$539 մլն	
Շվեյցարական բանկերի համաձայնության կողմից բանկերում հաշիվ ունեցողների ու նրանց ժառանգների համար կատարվող վճարումներ[VII]	$80 մլն	12.6%
ICHEIC-ի վճարումներն ապահովագրության վկայականներ ունեցողներին ու նրանց ժառանգներին[VIII]	$17 մլն	2.7%
Բաշխված միջոցների ընդհանուր գումարը	$636 մլն	

I. 2005թ. անհատ վերապրողներին հատկացվող վճարումները փոխհատուցման ծրագրերի համար կազմում էին մոտավորապես $361 մլն (56.8%): Որոշ սահմանափակ դեպքերում, ժառանգները նույնպես ստացել են փոխհատուցումներ: Վճարումները կատարվել են ներքոբերյալ հիմնադրամների կամ ծրագրերի խողովակներով.

ա) Ֆոնդի հոդված 2: Կարիքի մեջ ապրող Հոլոքոստը վերապրողներին (ոչ Արևելյան Եվրոպայում կամ նախկին ԽՍՀՄ-ում) վճարվող ամենամյա թոշակներ - 2005թ. վճարվել է $216 մլն (34%):

բ) Զրկանքների ենթարկվածների հիմնադրամ *(Hardship Fund):* Մեկանգամյա վճարումներ նացիստական հալածանքների ենթարկված այն հրեա զոհերին, որոնք չէին ստացել փոխհատուցումներ ըստ Արևմտագերմանական փոխհատուցման օրենքի *(German Federal Indemnification Law)* և ովքեր տառապել են առողջությանը հասցված վնասներից - 2005թ. վճարվել է $25 մլն (4%):

գ) Կենտրոնական և Արևելաեվրոպական հիմնադրամ: Ամենամյա թոշակներ Արևելյան Եվրոպայում և նախկին ԽՍՀՄ հանրապետություններում բնակվող Հոլոքոստը վերապրողներին - 2005թ. վճարվել է $34 մլն (5.3%):

դ) Գերմանական ֆոնդի ծրագիր նախկինում ստրկական և ստիպմամբ աշխատանք կատարողների համար: Մեկանգամյա վճարումներ գերմանական կառավարությունից և արդյունաբերությունից ստրկական և ստիպմամբ աշխատանք կատարող հրեաներին - 2005թ. վճարվել է $72 մլն (11.3%):

ե) Շվեյցարական բանկերի համաձայնության կողմից կատարվող վճարումների ծրագիր առաջին աստիճանի ստրկական աշխատանքի դիմաց: Մեկանգամյա վճարումներ նախկինում ստրկական և ստիպմամբ աշխատանք կատարողներին որպես փոխհատուցում նացիստների՝ ստրկական աշխատանքից ստացվող շահույթների (որոնք փոխանցվել էին շվեյցարական բանկերով) դիմաց - 2005թ. վճարվել է $6 մլն (0.9%):

զ) Շվեյցարական բանկերի համաձայնության կողմից կատարվող վճարումների ծրագիր փախստականների դասի համար: Մեկանգամյա վճարումներ հրեա այն

փախստականներին, որոնք փախել էին Շվեյցարիա՝ խույս տալու համար նացիստական հետապնդումներից և որոնք հետ էին վերադարձվել սահմանին, վտարվել էին երկրից (Շվեյցարիայից) կամ ում նկատմամբ վատ էին վերաբերվել Շվեյցարիայում մնալու ժամանակ - 2005թ. վճարվել է $109 հազ.:

է) Ծրագիր նախկինում ստրկական և ստիպմամբ աշխատանք կատարողների համար՝ լրացուցիչ վճարումներ: Ավստրիական կառավարությունից ստացված միջոցներից կատարված մեկանգամյա վճարումներ իրեն նախկին աշխատողների համար - 2005թ. վճարվել է $1 մլն (0.2%):

II. Գուդվիլ հիմնադրամը *(Goodwill Fund*՝ թարգմանաբար «Բարի կամքի հիմնադրամ»)[1] ստեղծվել է այն իրեն սեփականատերերին կամ նրանց ժառանգներին վճարելու համար միջոցներ տնտեսելու նպատակով, որոնք ժամանակին՝ մինչև գերմանական կառավարության դրած ժամկետը, ըստ գերմանական օրենքների չէին լրացրել համապատասխան պահանջները (դիմումները):

Այս գումարը այն միջոցներն են, որոնք առանձնացվել էին նման պարտավորությունները բավարարելու նպատակով: Գուդվիլ հիմնադրամի իրականացրած $17 մլն ծախսերը 2005թ. համար մաս են կազմում մոտավորապես $56 մլն հայտերի, որոնք հաստատված էին վճարելու համար 2005թ., այսինքն՝ 2005թ. Գուդվիլ հիմնադրամը պակաս է վճարել $39 մլն:

III. 2005թ. Պահանջների կոնֆերանսը բաշխեց մոտավորապես $127 մլն 39 երկրներում: Հաշվված չպահանջարկված գումարները, բաշխված գումարը կազմեցին մոտավորապես $126 մլն (19.6%): Այդ թվում.

ա) $84 մլն-ը բաշխվեց Պահանջների կոնֆերանսի իրավահաջորդ կազմակերպության կողմից, որը զբաղվում է Արևելյան Գերմանիայում գտնվող չպահանջարկված հրեական սեփականության հետբերմամբ ու վաճառքով: Հաշվված չպահանջարկված գումարները, բաշխված գումարը կազմեցին $82 մլն: Այս բաշխումների 80%-ը նացիստական հալածանքների զոհ մեծահասակ, կարիքավոր հրեաների սոցիալական խնամքի ծրագրերի համար էր: Ծրագրերն ընդգրկում էին խնամքի տրամադրում տնային պայմաններում, շտապ օժանդակության դրամաշնորհների և մթերային ծանրոցների տրամադրում, բժշկական սարքավորումների ձեռքբերում, հիվանդների խնամքի իրականացում, օժանդակության տրամադրում մեծահասակների համար նախատեսվող ցերեկային կենտրոններին և այլն: Մնացած գումարները ծախսվում էին Հոլոքոստի ուսումնասիրության գործին օժանդակության, կրթության և փաստաթղթերի ստեղծման գործի համար:

Պահանջների կոնֆերանսը 2005թ. իրականացրեց նաև հետևյալ դրամական բաշխումները՝ ուղղված նացիզմի հրեա ազգության կարիքավոր զոհերի սոցիալական ապահովմանը,

բ) *ICHEIC* հումանիտար օժանդակության ծրագրից $22 մլն-ի վերաբաշխում 32 երկրներում իրականացվող ծրագրերին,

գ) գերմանական կառավարությունից՝ բանակցությունների արդյունքում ստաց-

[1] Մանրամասն տե՛ս http://www.claimscon.org/index.asp?url=goodwill_main

ված $11 մլն-ի վերաբաշխում 17 երկրներում իրականացվող ծրագրերին,

դ) Շվեյցարական բանկերի համաձայնության թալանված միջոցների խմբից $5 մլն-ի վերաբաշխում 26 երկրներում իրականացվող ծրագրերին,

ե) հունգարական *Gold Train Settlement-ից* $4 մլն-ի վերաբաշխում Հունգարիայում նացիստական հետապնդումների զոհերին:

IV. Վարչակազմ. Պահանջների կոնֆերանսի ծրագրերի վարչական ծախսերի նշանակալի մասը փոխհատուցվել է տարբեր աղբյուրներից:

V. Տեխնիկական ծառայությունների իրականացումը վերաբերում է այն ծախսերին, որ կրել է Պահանջների կոնֆերանսը *ICHEIC-ին* տեխնիկական օժանդակություն տրամադրելու (որոնք գերազանցապես վերաբերում էին ապահովագրական պահանջների մեջ համապատասխան ճշգրտումներ կատարելու անհրաժեշտությանը) և դատարանին՝ Շվեյցարական բանկերի համաձայնության հետ ունեցած խնդիրների (որոնք գերազանցապես վերաբերում էին «քնած» հաշիվներին) առիթով:

VI. «Այլը» գերազանցապես ձևավորված է վերադարձված սեփականության կառավարման, ինչպես նաև ընդհանրապես սեփականության վերադարձման ծրագրերի ուղղությամբ արվող ծախսերից:

VII. Շվեյցարական բանկերի համաձայնության կողմից բանկերում հաշիվ ունեցողների ու նրանց ժառանգորդների վճարումների համար տրամադրվող ֆինանսավորումը վերաբերում է այն դրամական միջոցներին, որոնք շնորհված են պահանջատերերին դատարանի կողմից Շվեյցարական բանկերի համաձայնության դեպոզիտ դրված միջոցների խմբից: Այս ծրագրի շրջանակներում Պահանջների կոնֆերանսը տեխնիկական օժանդակություն է ցուցաբերում պահանջների բավարարմանն ուղղված դատական գործընթացների իրականացմանը: Միջոցները բաշխվել են Պահանջների կոնֆերանսի կողմից 2005թ.: Այս բաշխումներն արտացոլված չեն Պահանջների կոնֆերանսի 2005թ. գործունեության հաշվեկշռում:

VIII. Ապահովագրության վկայականներ ունեցողներին և նրանց ժառանգներին տրամադրվող *ICHEIC-ի* դրամական միջոցները վերաբերում են Հոլոքոստի ժամանակաշրջանի ապահովագրական պահանջների հանձնաժողովից անհատ պահանջատերերին իրականացվող հումանիտար վճարումներին: Պահանջների կոնֆերանսը տրամադրում է տեխնիկական աջակցություն պահանջների ներկայացմանն ու ստացմանն ուղեկցող [դատական] գործընթացների համար: Այս վճարումներն արտացոլված չեն Պահանջների կոնֆերանսի 2005թ. գործունեության հաշվեկշռում:

Աղյուսակ 3

2005թ. պասիվները և ակտիվները

Գուղվիլ հիմնադրամի հատկացումներ[I]	$253 մլն	28.1%
Գուղվիլ հիմնադրամի և այլ նպատակների համար նախանշված միջոցներ[II]	$47 մլն	5.2%
Վճարման ենթակա դրամաշնորհներ[III]	$238 մլն	26.5%
Ծրագրերի համար նախանշված միջոցներ[IV]	$38 մլն	4.2%
Երկարատև կարիքների բավարարմանն ուղղված միջոցներ[V]	$275 մլն	30.6%
Պայմանագրային պարտավորությունների համար նախանշված միջոցներ[VI]	$20 մլն	2.2%
Այլ[VII]	$29 մլն	3.2%
Ընդամենը	$900 մլն	

I. Գուղվիլ հիմնադրամը ստեղծվել է այն հրեա սեփականատերերին կամ նրանց ժառանգներին վճարելու համար միջոցներ տնտեսելու նպատակով, որոնք ժամանակին՝ մինչև գերմանական կառավարության դրած ժամկետը, չէին լրացրել համապատասխան պահանջները (դիմումները) և այդպիսով այլևս, համաձայն գերմանական օրենքների, իրավունք չունեին ստանալ եկամուտներ:

II. 2005թ. Գուղվիլ հիմնադրամի և այլ նպատակների համար նախանշված միջոցները նախատեսվում են Գուղվիլ հիմնադրամին ներկայացված այն հայտերի համար, որոնց հաստատման գործընթացը դեռևս ավարտված չէ: Այն ներառում է այն հայտերը, որոնց կամ պահանջվող փաստաթղթային ձևակերպումները դեռևս ներկայացված չեն, կամ էլ հայտերի օրինականության առթիվ վերջնական որոշումը դեռ չի կայացվել:

III. Վճարման ենթակա դրամաշնորհները վերաբերում են այն միջոցներին, որոնք առ 2005թ. դեկտեմբերի 31-ը արդեն իսկ բաշխվել են, սակայն դեռևս չեն բաժանվել: Սրանք այն դրամաշնորհների ու ծրագրերի համար են, որոնք իրենց բնույթով իրականացվում են տարեցտարի կամ էլ թե չէ հիմնարար են, ուստի և ավարտին հասցնելու համար ժամանակ է պահանջվում: Պահանջների կոնֆերանսը, համաձայն իր հոգաբարձուական պարտավորությունների, կազմակերպություններին գումարներ է բաց թողնում միայն այն պարագայում, երբ ներկայացվում են համապատասխան հաշվարկներ և հաշվետվություններ: Այս կետը ներառում է դրամաշնորհներ, որոնք տրվում են Գերմանական հիմնադրամի միջոցներից, *ICHEIC-ից* և Շվեյցարական բանկերի համաձայնությունից, ինչպես նաև Պահանջների կոնֆերանսի իրավահաջորդ կազմակերպությունից: Այն ներառում է նաև անհատական փոխհատուցման ծրագրերի մեջ մտնող արդեն իսկ որոշակիացված իրավասու անձանց համար վճարման ենթակա միջոցներ, որոնց գումարները ստացվել են 2005թ. վերջին՝ բաշխվելու համար 2006թ.:

IV. Ծրագրերի համար հայտարարված այս կետը վերաբերում է այն միջոցներին, որոնք ենթակա են բաշխման 2006թ. ընթացքում սոցիալական ապահովության ծրագրերի (ինչպես, օրինակ, տնային պայմաններում իրականացվող խնամք կամ գործերի վարում, շտապ օժանդակության դրամաշնորհների և մթերային ծանրոցների տրամադրում, բժշկական սարքավորումների ձեռքբերում, հիվանդների խնամատարություն, մեծահասակների համար նախատեսվող ցերեկային կենտրոնների օժանդակություն, և այլն), ինչպես նաև այլ ծրագրերի համար, ինչպես նկարագրված է ամենամյա հաշվետվության մեջ:

V. 2000թ. Տնօրենների խորհուրդը նախանշեց որոշակի եկամուտներ՝ հիմնելու համար նացիստական հալածանքների իրեա զոհերի երկարատև օժանդակությանը և Հոլոքոստից բխող այլ պահանջների բավարարմանն ուղղված հիմնադրամ, երբ Պահանջների կոնֆերանսի գործունեությունից ստացվող եկամուտները նշանակալիորեն կպակասեն: Այս որոշումը հենված էր Պլանավորող կոմիտեի տրամադրած խորհրդատվությանը, որը գտավ, որ սպասվում է, որ գալիք տարիներին նշանակալի չափով նացիզմի զոհեր ապրելու են աղքատ պայմաններում: Մանրամասները ներառված են տարեկան հաշվետվության մեջ, ինչպես նաև Պլանավորող կոմիտեի հաշվետվության մեջ, որը հասանելի է Պահանջների կոնֆերանսի վերկայքում:

VI. Պայմանագրային պարտավորությունների համար նախանշված միջոցները ձևավորված են 2005թ. ստացված այն գումարներից, որոնք նախատեսված են վճարվելու անհատական փոխհատուցումների ծրագրերի շրջանակներում 2006թ., արդեն իսկ որոշակիացված անհատներին:

VII. «Այլը» ձևավորված է գլխավորապես ավելացած ծախսերից, այսինքն՝ 2005թ. համար նախատեսված այն ծախսերից, որոնք վճարվելու էին 2006թ. (մոտավորապես $14 մլն) և այն գումարներից, որոնք նախանշված են ապագա ծախքերի համար, այսինքն՝ միջոցներ, որոնք նախատեսված են որպես ծախսեր, որոնք տեղ են գտնելու 2006թ. և հետագա տարիներին (մոտավորապես $7 մլն):

ԱԴՐԲԵՋԱՆԵՐԵՆԻ ԱՅԲՈՒԲԵՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳԾԵՐ

Լիլիթ Մովսիսյան

Ադրբեջաներեն լեզվի, ինչպես նաև ադրբեջաներենի այբուբենի պատմության վերաբերյալ առկա մի շարք մոտեցումները հաճախ էականորեն տարբերվում են միմյանցից: Այնուամենայնիվ, ակնհայտ է, որ ադրբեջանցի գիտնականները համակարծիք են մի հարցում. նրանք իրենց լեզվին են վերագրում հնագույն քաղաքակրթություններում գոյություն ունեցած գրերը: Նշենք, որ միայն 20-րդ դարում ադրբեջանցիները մի քանի անգամ այբուբեն են փոխել՝ 1920-ական թթ. արաբականից անցել են լատինականի, 1930-ական թթ. վերջին լատինականից՝ կիրիլականի, այնուհետև, 1991թ., կրկին կիրիլական այբուբենից անցել են լատինականի: Վերջին փոփոխությունը տեղի ունեցավ 1991թ. Ադրբեջանի անկախացումից հետո, և մինչ օրս Ադրբեջանում շարունակվում են քննարկումներն այբուբենի շուրջ: Նշենք նաև, որ բոլոր փոփոխությունների հիմքում ակնհայտորեն ընկած են եղել նաև քաղաքական գործոնները և աշխարհաքաղաքական կողմնորոշումները:

Անհնար է թերագնահատել գրի դերը մարդկային մտքի զարգացման մեջ: Այբուբենը մարդկության ամենամեծ ձեռքբերումներից է: *Alphabet* բառը ծագել է լատիներեն *Alphabetum* բառից, որը գալիս է հին հունարեն *Alphabetos* բառից՝ հունական այբուբենի առաջին երկու՝ «ալֆա» և «բետա» տառերից: Այբուբենները հզոր և տեսանելի կամուրջ են անցյալի և ներկայի միջև:

Պատմական իրադարձությունները, կրոնը և քաղաքականությունը կարևոր դեր են խաղում այբուբենների վերջնական ձևավորման մեջ: Անգլիացի գիտնական, նշանավոր «Այբուբեն» մենագրության հեղինակ Դ.Դիրինգերը հաստատում է այն փաստը, որ «գրի առաջացումով մարդը ձեռք է բերել երկարակեցություն»: Ասվածի վկայությունն են հազարամյա անցյալ ունեցող ազգերի հնամյա, անմահ այբուբենները, ինչպես, օրինակ, Մեսրոպյան հայատառ այբուբենը: Սակայն կան ժողովուրդներ, որոնք իրենց կազմավորման սկզբնական փուլում, փորձելով աշխարհին ներկայանալ որպես հին ժողովուրդ, կեղծ պատկերացում են ստեղծում իրենց այբուբենների հնամենի ծագման մասին: Վերջինի վկայությունն ադրբեջանցիների ջանքերն են՝ միտումնավոր խեղաթյուրելու պատմությունը և ներկայացնելու սեփական գրերը որպես վաղ պատմական անցյալի խոսուն ապացույց:

Պատմական տարբեր ժամանակահատվածներում թյուրքական ժողովուրդներն օգտվել են տարբեր լեզուների այբուբեններից [1, с. 19]: Վաղ միջնադարյան գրավոր աղբյուրները վկայում են թյուրքական գրի գոյության մասին, որը ստեղծվել էր մ.թ. 6-րդ դարում, հոների համար, Առանի եպիսկոպոս Կարդոստի կողմից (ավելորդ չենք համարում նշել, որ Առանը Մեծ Հայքի պատմական Արցախ և Ուտիք նահանգների տարածքն է- *Լ.Մ.):* Ըստ Ն.Պիգուլևսկայայի՝ շատ հավանական է, որ վերոնշյալ գիրը եղել է սողդական կամ մանիքեական [2, с. 76]: Սիրիական տարեգրության հեղինակ Զաքարիան հաղորդում է, որ 5-6-րդ դարերում Առանից հյուսիս ապրում էին թյուրքական ցեղեր՝ հոները, բուլղարները, սավիրները, խազարները, բարսիլները և այլն: Խազարների պատմության ուսումնասիրությամբ զբաղվող Մ.Ի. Արտամոնովը նշում է, որ այս թյուրքերը ոչ միայն եղել են Անդրկովկասի ժողովուրդների հարևանները, այլև հետագայում մասնակցել են ադրբեջանցիների էթնոգենեզին: Մինչդեռ, ժամանակակից ադրբեջանական գիտությունը պնդում է, որ հնագույն սեպագիր, սիրիական և արամեական գրերի, ռունական և, իհարկե, արաբական գրերի կրողը եղել է հենց ինքը՝ դեռևս չկազմավորված ադրբեջանական էթնոսը: Այսպես, Բաքվի ձեռագիր մատյանների ինստիտուտում ներկայացված են ադրբեջանցիների կիրառած հնագույն գրերը: Օրինակ, մ.թ. 4-րդ դարի սկզբներին «Հյուսիսային Ադրբեջանի» (ներկայիս Ադրբեջանի Հանրապետության տարածքի) բնակիչները կիրառել են աղվանից գիրը, իսկ 4-8-րդ դարերում՝ ռունական գիրը [3]: Ն.Պիգուլևսկայան նշում է. «Կասկած չկա, որ լեզուն հոների լեզուն է, իսկ ինչ վերաբերում է գրին, նշաններին, ապա կարելի է միայն գուշակել»: Ո՞րն է այս շփոթության պատճառը: Հոներն իրենց նվաճողական ընթացքը կատարել են սողդերով բնակեցված տարածքում, որտեղ էլ հենց կարող էին ծանոթանալ նրանց գրին: Այնուամենայնիվ, հարց է ծագում: Նախ, եթե 5-6-րդ դարերում Առանի հարևանությամբ ապրող հոները ծանոթ էին սողդերի գրին, ապա դժվար թե նոր գրի կարիք ունենային: Երկրորդ՝ 6-րդ դարի 30-40-ական թթ. նկատվում էր իրենց՝ աղվանների կողմից 5-րդ դարի առաջին քառորդում ստեղծված աղվանական հնչյունական գրի ծաղկում: Ավելորդ չենք համարում նշել, որ ըստ որոշ պատմական աղբյուրների՝ աղվանից գրի հեղինակը Մեսրոպ Մաշտոցն է: Սակայն մի բան ակնհայտ է. ադրբեջանցիները փորձում են ցույց տալ և ապացուցել, որ աղվաններն իրենց նախնիներն են՝ դրանով իսկ օրինականացնելով իրենց զբաղեցրած տարածքը պատմական հայրենիք դարձնելու հիմնահարցը: Մինչդեռ անհերքելի է, որ պատմական աղվանից ժողովրդի և ներկայիս ադրբեջանցիների միջև տարածքային ընդհանրություններից բացի *այլ անմիջական, հիմնավոր կապ, թերևս, չկա:* Այստեղ պարզապես խոսքը տարածքի մասին է. այն է՝ Աղվանքի տարածքի մի մասը համընկնում է ներկայիս Ադրբեջանի տարածքի հետ:

Իրականում հին թյուրքական լեզվի ծնունդն ունեցել է շատ ավելի երկար

նախապատմություն, քան թվում է գրի ստեղծման և մեզ հասած ռունական հուշարձանների համաժամանակյա լինելու մասին տարածված վարկածից [4, с. 21]: Ըստ մեկ այլ աղբյուրի՝ 5-7-րդ դարերում, սեփական գրերի բացակայության հետևանքով, գրեթե 300 տարի տևած աղվանից այբուբենի կիրառումից հետո գործածվել է արաբական այբուբենը, և ադրբեջանցիների նախնիները երկար ժամանակ՝ մինչև լատինական գրին անցնելը (20-րդ դար), կիրառել են հենց այս այբուբենը [5, с. 27]: Ըստ էության, վերը նշված բոլոր գրերն այս կամ այն չափով կիրառել են գրեթե բոլոր թյուրքական ցեղերը: Այս կամ այն գրավոր հուշարձանը վերագրել որևէ կոնկրետ ժամանակակից թյուրքական ժողովրդի՝ հաճախ հանդիպող երևույթ է: Այսպես, օրինակ. օրհոնաենիսեյան հուշարձանը երբեմն հիշատակվում է որպես թուրքերենի, երբեմն էլ՝ ադրբեջաներենի գրավոր հուշարձան: Մինչդեռ նշենք, որ 7-8-րդ դարերում թուրքերեն և առավել ևս ադրբեջաներեն լեզուների ձևավորված լինելու մասին, ըստ էության, խոսելն անիմաստ է: Ավելորդ չենք համարում կրկին նշել, որ ադրբեջաներենն իր այսօրվա տեսքով ձևավորվել է միայն Խորհրդային Միության շրջանում (խոսքը նախ և առաջ վերաբերում է բառապաշարին և քերականությանը):

Արաբական նվաճումներից հետո մի քանի դար շարունակ նվաճված տարածքներում արաբերենը եղել է միակ գրավոր պետական լեզուն: Ադրբեջանցիներից բացի, ԽՍՀՄ-ում ապրող մահմեդական-թյուրքախոս ժողովուրդներից ուզբեկները, թուրքմենները, թաթարները, բաշկիրները, ղրղզները և այլք ևս կիրառել են արաբական այբուբենը: Բազմաթիվ գիտնականների կարծիքով՝ արաբական գիրը թյուրքական լեզուների համար թերի է և չի համապատասխանում այդ լեզուների կառուցվածքին: Այնուամենայնիվ, մինչև 20-րդ դարն այդ այբուբենը շարունակել է կիրառվել:

Արաբական գրից հրաժարվելու առաջին փորձերը 1860-70-ական թթ. Արևելյան Անդրկովկասում եղել են երեք գործիչների՝ Մանիֆ փաշայի, Մալքոմ խանի և, իհարկե, ադրբեջանցի լուսավորիչ Ախունզադեի կողմից: Այս երեքի նպատակը մահմեդական հասարակության արևմտականացումն էր: Ըստ Ախունզադեի՝ մահմեդական աշխարհի հետամնացության հիմնական պատճառներից մեկն ընկած էր կրոնական համակարգի հիմքում, որն էլ հիմնված էր արաբական այբուբենի վրա [6]: Քանի որ առաջարկվող բարեփոխումները և՛ Ստամբուլի, և՛ Թեհրանի կողմից ընդունվեցին որպես քաղաքական և հակաիսլամական, ուստի մերժվեցին: Դա զարմանալի չէ. արաբական գիրը Ղուրանի գիրն է համարվում, և, բնականաբար, արաբական այբուբենի փոփոխման գաղափարը դրական չէր համարվում: Ուստի նոր այբուբենի հարցը մնաց որպես սոսկ գաղափար:

1878թ. Ախունզադեի մահից հետո որոշ ժամանակ «այբուբենի արդիականացման» գաղափարը մոռացվեց, համենայնդեպս գոնե պաշտոնական շրջանակներում: 1917թ. հեղափոխությունից և ցարական կարգերի տապալու-

մից հետո ներկայիս Ադրբեջանի տարածքում ստեղծվեց անկախ հանրապետություն, որը գոյություն ունեցավ 1918-1920թթ.: Այդ ընթացքում մուսավաթական կառավարությունն իր պաշտոնական թղթակցությունը շարունակում էր արաբական այբուբենով: Այնուամենայնիվ, մուսավաթական Ադրբեջանում այբուբենի հարցը կրկին բարձրացավ, սակայն կառավարությունը բավարար ժամանակ, հնարավորություն և կամք չունեցավ լուծելու այբուբենի հետ կապված բարդ խնդիրը:

Խորհրդային իշխանությունների հաստատման առաջին իսկ տարիներին սկսեց քննարկվել այբուբենի հարցը: Մտավորականները հիմնականում բաժանված էին երկու խմբի: Առաջին խումբն առաջարկում էր արաբական այբուբենում որոշ ճշտումներ մտցնել և այն նորացնել, իսկ երկրորդն առաջարկում էր ընդհանրապես չկիրառել արաբական այբուբենը և դրա փոխարեն գործածել լատինական տառատեսակի վրա հիմնված նոր այբուբեն [7]: Երկար քննարկումներից հետո լատինատառ այբուբենի կողմնակիցները շահեկան դիրք գրավեցին: 1921թ. խորհրդային իշխանությունները ստեղծեցին «Նոր այբբենական կոմիտեն»: Հաջորդ տարվա հուլիսի 22-ին Ադրբեջանի ժողկոմը որոշում ընդունեց արաբական այբուբենի փոխարեն կիրառել լատինականը: Այսպես, օրինակ. «Նոր ուղի» *("Yeni Yol")* թերթը բացառապես տպագրվում էր լատինատառ: 1923թ. հոկտեմբերի 20-ին Ադրբեջանի ժողկոմատի դեկրետի հիման վրա կայացվեց որոշում լատինական և արաբական այբուբենների համատեղ կիրառման մասին [6]: Լատինական այբուբենի կողմնակիցները ցանկանում էին մի այբուբեն, որն ավելի դյուրին կդարձներ գրագիտության հարցը և ճշգրտորեն կարտացոլեր ադրբեջաներենի հնչյունական համակարգը:

1920-ական թթ. արաբական այբուբենից լատինականի անցումը ուժեղ և անթաքույց հակազդեցության չհանդիպեց: Այս գործընթացում նկատվում էր պայքար կրոնի դեմ: Իսլամական-թյուրքական հանրապետություններում փակվում էին մզկիթները, կրոնական ծեսերն արգելվում էին: Նաև այս համատեքստում էր պայքար տարվում արաբական այբուբենի դեմ:

Լատինական այբուբենի տարածումն ավելի լավ պատկերացնելու համար ծանոթանանք Խորհրդային Միության Առաջին թյուրքագիտական կոնգրեսի բովանդակությանը: Այս շրջանում մի շարք գիտնականներ սկսում են քննարկումներ՝ կապված լատինական այբուբենի ընդունման հետ: Խորհրդային Միության մի շարք քաղաքներում՝ Մոսկվայում, Տաշքենդում, Օրենբուրգում և այլուր մտավորականների մեծ մասը կողմնակից էր լատինական այբուբենին: Խորհրդային Միության համար այբուբենի լատինականացումը նշանակում էր մահմեդական բնակչության հեռացում իրենց թյուրքական արմատներից և արտաքին ազդեցության կանխում [8]: 1926թ. Բաքուն հյուրընկալեց Առաջին թյուրքագիտական կոնգրեսին, որտեղ հանդիպեցին Թուր-

քիայի և ԽՍՀՄ-ի թյուրքախոս հանրապետությունների ներկայացուցիչները: Հրավիրվածների թվում էին նաև Ռուսաստանի ներսում ապրող այլ թյուրքախոս ժողովուրդների ներկայացուցիչները: Գլխավոր հարցը հետևյալն էր. բարեփոխել արաբական գիրը, որպեսզի այն ավելի ամբողջական ձևով արտահայտի թյուրքական լեզուների հնչյունաբանությունը, կամ ընդունել բոլորովին նոր գիր՝ փոփոխված լատինական գիր: Արդյո՞ք կարելի է ունենալ միասնական այբուբեն: Թեժ բանավեճերը շարունակվեցին 8 օր՝ փետրվարի 26-ից մինչև մարտի 5-ը: Թյուրքագիտական կոնգրեսին մասնակցում էին այնպիսի խոշոր արևելագետներ, ինչպիսիք էին Վ.Վ.Բարթոլդը, Ա.Բ.Կոժմակին, Ս.Ե.Մալովը, Ա.Ա.Միլերը, Ա.Ն.Սամոյլովիչը, թուրք գիտնականներից Մ.Ֆ.Քյոփրյուզադեն, Ալի Բեյ Հուսեյինզադեն, Բաքվում Թուրքիայի հյուպատոսը, գերմանացի գիտնականներից Տ.Մենտսելը և այլք: Բանավեճի որոշ փաստարկներ հիմնված էին գիտական և լեզվագիտական գիտելիքների վրա, որոշներն այդքան էլ հիմնավորված չէին: Մասնակիցներից ոմանք, ինչպես, օրինակ, թաթարների և ղազախների ներկայացուցիչները, դեմ էին լատինական այբուբենին [8]: Թուրքիայի ներկայացուցիչները ձեռնպահ էին: Սակայն Կոնգրեսը որոշեց, որ այդ հարցի իրականացումը յուրաքանչյուր ազգի խնդիրն է: Միաժամանակ թուրքական այբուբենի կենտրոնական կոմիտեն մեծ ջանքեր էր գործադրում՝ հիմնականում զբաղվելով լատինական տառատեսակի հիման վրա նոր թուրքական այբուբենների միասնական մոդել ստեղծելու հարցով: Այստեղ ակնհայտ երևում էր պանթուրքիստական գաղափարախոսության արտացոլումը այբուբենի համար ընթացող պայքարում: Մշակվեցին մի շարք նախագծեր, որոնց մի մասը հարում էր մաքուր լատինատառ այբուբենին, իսկ մյուս մասը՝ լատինատառ և ռուսատառ այբուբենների խառը ձևին:

Թվում էր, թե 1922-1938թթ. շարժումը լատինական այբուբենի համար ձախողվեց: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ այն հաղթանակեց ավելի քան 50 տարի անց. 1991թ. անկախ Ադրբեջանում ընդունվեց լատինական այբուբենը:

Վերադառնանք Առաջին թյուրքագիտական կոնգրեսին և ներկայացնենք որոշ մեջբերումներ դրա մասնակիցներից ոմանց կարծիքներից: Այսպես, օրինակ, Պեսկովն իր ելույթում թյուրքական ժողովուրդներին անվանեց հետամնաց, անգրագետ և հավելեց, որ իրենք պետք է ավելի շատ ուշադրություն դարձնեն իրենց թյուրք «եղբայրներին» և նրանց համար ստեղծեն միասնական այբուբեն: Իսկ ահա Յակովլևը նշեց. «Այբուբենի բարեփոխման նախագծեր իրականացնելիս մենք պետք է հաշվի առնենք յուրաքանչյուր ազգի սոցիալական և մշակութային պայմանները: Ինչքան բարձր լինի գրագիտության մակարդակը, այնքան ավելի դժվար կլինի բարեփոխումներ իրականացնել: Ուստի, Ադրբեջանում նման բարեփոխում իրականացնելը բավական դյուրին

է: Նախ և առաջ, ամբողջ երկրում գրագիտության մակարդակը բարձր չէ, երկրորդ՝ պրոլետարիատը կենտրոնացած է Բաքվում» [8]: Փաստորեն, կարող ենք արձանագրել, որ ժամանակի խոշոր գիտնականները ևս ընդունում էին, որ դեռևս չկազմավորված Ադրբեջանի ադրբեջանախոս բնակչությունը չափազանց հետամնաց է եղել և ոչ տառաճանաչ: Հետևաբար, նմանատիպ բարեփոխման իմաստը նույնիսկ հասու չէր կարող լինել բնակչության լայն շրջանակներին: Լատինական այբուբենի կողմնակիցներն առաջարկում էին մի շարք սկզբունքներ նոր գրի համար. նշանները պետք է լինեն միայն լատինական կամ ստեղծվեն լատինական տառերից, պետք է խուսափել ռուսական տառերից, խուսափել տարբերակիչ նշաններից, երկհնչյուններից, ձայնավորի երկարությունը կամ բաղաձայնի կոշտությունը ցույց տվող նշաններից և այլն:

Բուռն քննարկումներից հետո, 1927թ. մարտի 1-ին, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշման համաձայն՝ Աղամալօղլուի ղեկավարությամբ ստեղծվեց «Նոր թյուրքական այբուբենի Խորհրդային Միության կոմիտեն»: 1928թ. նոյեմբերի 1-ին կոմիտեի կողմից ստեղծվեց թուրքերենին համապատասխան նոր այբուբեն: Կոմիտեի ընդհանուր ժողովներում նոր այբուբենի հետ կապված մի քանի այլ հարցեր ևս լուծվեցին: Օրինակ, մեծատառերի ընդունումը, այբուբենի տառերի հերթականությունը, ուղղագրությունը և այլն [6]: 1928-29թթ. ուսումնական տարվանից սկսած՝ լատինական այբուբենի կիրառումը բոլոր դպրոցներում դարձավ պարտադիր: 1929թ. հունվարի 1-ին ողջ գործավարությունը, հրատարակչությունները պաշտոնապես անցնում են նոր այբուբենի: 1929թ. խորհրդային իշխանությունն արգելում է արաբական գիրը և սկսում գրքերի այրման, ոչնչացման արշավ Միջին Ասիայի թյուրքախոս հանրապետությունների քաղաքներում և գյուղերում: Հենց 1928թ. հանրապետական Թուրքիան ավանդական արաբական այբուբենը փոխարինեց լատինականով: Հիմնական դրդապատճառներն էին մատչելիությունը, արևմտականացումը, կենտրոնացումը: Նույն տարում լատինական այբուբենն ընդունվեց ԽՍՀՄ բոլոր թյուրքական հանրապետություններում: Այս ընթացքում այբուբենը բավականաչափ հեշտացրեց հաղորդակցությունը և նպաստեց ԽՍՀՄ թյուրքական ժողովուրդների մշակույթների սերտացմանը:

Արդեն 1932թ. բոլոր թյուրքական այբուբենները միավորող նոր այբուբենի պարզեցված և ճշգրտված տարբերակը պատրաստ էր: Նոր այբուբենն ուներ 33 տառ: Մինչև ռուսատառ այբուբենի ընդունումը այս այբուբենը շարունակեց կիրառվել 11 տարի:

1930-ական թթ. վերջերին Ստալինը, թյուրքախոս ազգերի միավորման վտանգը կանխելու նպատակով, լատինական այբուբենի քաղաքականությունը չեղյալ հայտարարեց և բոլոր թյուրքական ժողովուրդներին պարտադրեց ընդունել կիրիլական տառերը: Նշենք նաև, որ այդ լեզուներում կային որոշ

հնչյուններ, որոնք բացակայում էին ռուսաց լեզվում:

Ադրբեջանի խորհրդային ղեկավարության և Մինիստրների խորհրդի 1939թ. հուլիսի 11-ի որոշմամբ 1940թ. հուլիսի 1-ից այբուբենը լատինականից անցավ կիրիլականի: 1939թ. պաշտոնական *"Литература"* հանդեսը գրեց, որ «լատինական գիրը չի ապահովում բոլոր անհրաժեշտ պայմանները մեծ ռուսական ժողովուրդների մշակույթի՝ մյուս ժողովուրդների մերձակցության համար» [7]:

Որոշումն այնքան անսպասելի էր, որ միայն Ադրբեջանում որոշ տառեր հետագայում մի քանի անգամ փոփոխության ենթարկվեցին: Այդ ժամանակ ռուսական տառատեսակում առկա բոլոր տառերն ընդունվեցին նույնությամբ: 1940թ. հրատարակված ադրբեջաներենի գրավոր ուղեցույցում անդրադարձ է կատարվում այդ թերի կողմին: Գիտնականները գտնում էին, որ *я, ю, е* երկհնչյունները խեղաթյուրում են ադրբեջաներենի ուսուցումը [9, s. 34]: Քննարկումների արդյունքում երկհնչյունները դուրս բերվեցին, փոխարենը կիրառության մեջ մտան ադրբեջաներենին բնորոշ այլ տառեր՝ այդ նպատակով օգտվելով կիրիլական և լատինական այբուբենների տառերից՝ մեկ տառ-մեկ հնչյուն սկզբունքով:

Ըստ էության, կիրիլիցայի անցնելն ուներ երկու հիմնական նպատակ. մեկուսացնել ԽՍՀՄ թյուրքախոս ժողովուրդներին մյուս թյուրքալեզու ժողովուրդներից և ռուսական տառերի տարածում ու ընդհանրապես ռուսականացում:

1985թ. վերակառուցման քաղաքականության հռչակումից հետո ադրբեջանական մամուլում լույս տեսան բազմաթիվ հոդվածներ, որտեղ քննադատվում էր կիրիլական այբուբենի գաղութատիրական բնույթը՝ արտահայտելով նախկին՝ արաբական այբուբենը վերականգնելու կարծիքներ: Այսպես, 1970-1980-ական թթ. մի խումբ ադրբեջանցի մտավորականներ, այդ թվում՝ Անվար Մամադխանլին, Այդըն Մամեդովը, Աքրամ Այլիսլին, Վագիֆ Ջաբրայիլզադեն և այլք, ժամանակ առ ժամանակ բարձրացնում էին լատինական այբուբենի անցնելու հարցը [10]: Լատինական, արաբական և կիրիլական այբուբենների հետ մեկտեղ նույնիսկ քննարկվում էր հնագույն ռունական գրի կիրառման հարցը՝ փորձելով ցույց տալ իրենց ազգի հնագույն արմատներ ունենալը: Քննարկումներն աստիճանաբար ընդլայնում են իրենց աշխարհագրական սահմանները, հասնում մինչև Թուրքիա և Իրան ու շուտով ձեռք բերում քաղաքական նշանակություն:

Եթե լատինական այբուբենը եկել էր խորհրդանշելու արևմտամետություն, աշխարհիկություն և թուրքամետություն, ապա արաբական գիրը ոչ այնքան հստակ ձևով ասոցացվում էր Իրանի Իսլամական Հանրապետության հետ: Կողմերից յուրաքանչյուրը կիրառում էր տարբեր մեթոդներ իրենց տեսակետները հիմնավորելու համար: Իրանը սկսում է մեծացնել Ադրբեջանի

բնակչության համար հասանելի հրապարակումների թիվը: Թուրքիան, իր հերթին, ակտիվորեն կազմակերպում էր լեզվագիտական սեմինարներ և խորհրդաժողովներ թուրքական այբուբենի մասին: Դրանցից առանձնացնենք Թուրքական պատմագիտական և Թուրքական լեզվագիտական ընկերություն-ների կողմից կազմակերպված «Թյուրքական ազգերի ընդհանուր այբուբենը» միջոցառումը, որը տեղի ունեցավ Անկարայում 1990թ.:

Որոշ գործիչներ փաստում էին, որ լատինական այբուբենը կարող է դառնալ կախվածության պատճառ այլ աշխարհաքաղաքական միավորներից, ավելի որոշակի՝ Թուրքիայից, Եվրոպայից և ընդհանրապես Արևմուտքից: Իսկ որոշ կրոնական գործիչներ շեշտը դնում էին արաբական գրի՝ «Իսլամի գիր» լինելու հանգամանքի վրա: Մի խոսքով՝ այբուբենի «մեծ խաղում» հաղթեց Թուրքիան: Սակայն ադրբեջանցիների ընդունած լատինական այբուբենը բուն թուրքական գրի հետ ամբողջովին չէր համընկնում: Ադրբեջանական գրում կային երեք տառեր, որոնք բացակայում էին թուրքականում. *X, ə* և *Q:* Այսպես, 1991թ. դեկտեմբերի 25-ին Ադրբեջանի Հանրապետության Գերագույն խորհուր-դը որոշում է ընդունում Ադրբեջանի Հանրապետության «Ադրբեջանական այբուբենի լատինական գրի վերականգնման մասին» օրենքի կիրառման կարգի մասին: Որոշման առաջին կետի համաձայն՝ լատինական գրի վրա հիմնված ադրբեջանական այբուբենը բաղկացած է 32 տառից և ունի հետևյալ տեսքը.

Aa, Bb, Cc, Çç, Dd, Ee, Əə, Ff, Gg, Ğğ, Hh, Xx, İi, Iı, Jj, Kk, Qq, Ll,
Mm, Nn, Oo, Öö, Pr, Rr, Ss, Şş, Tt, Uu, Üü, Vv, Yy, Zz.

Նույն որոշման մեջ նշվում էին նաև մի շարք այլ անհրաժեշտ միջոցառումներ. 1992թ. սկսած՝ Ադրբեջանի բոլոր միջնակարգ դպրոցներում աստիճանաբար դասերն անցկացնել միայն լատինական այբուբենով տպագրված դասագրքե-րով, ստեղծել բոլոր անհրաժեշտ միջոցները քաղաքացիներին լատինական այբուբենը սովորեցնելու համար, կազմակերպել դասընթացներ համապետա-կան մակարդակով, բոլոր հանրապետական թերթերի և ամսագրերի, գեղար-վեստական, գիտական գրական-տեխնիկական, հասարակական-քաղաքա-կան և այլ գրականության հրատարակում լատինական տառերով [11]: Կիրի-լականից լատինականի անցումը բավական դանդաղ է եղել: Դպրոցականներն իրենց առաջին այբբենարանները ստացան 1992թ. սեպտեմբերին: Ավելի ուշ, նույն տարում, Քարիմովի *«Alifba»* այբբենարանը լույս տեսավ Թուրքիայում և բերվեց Ադրբեջան: Այսուհետ նոր լույս տեսնող դասագրքերը լատինական էին: 1990-ական թթ. կեսերին լատինական այբուբենին անցնելու գործընթա-ցում շոշափելի աշխուժացում նկատվեց: Որոշ թերթեր՝ *«Xalq qəzeti», «Azərbaycan»* և այլն սկսեցին տպագրվել լատինականով: Այժմ նշենք որոշ գործոններ, որոնք հեշտացնում էին լատինական գրի կիրառման ընթացքը.

- Երկրում համակարգիչների կիրառման տարածումը
- Անգլերեն սովորելու խանդավառությունն ու ձգտումը: Նոր լատինական գրի վրա հիմնված այբուբենը հեշտացնում էր անգլերենի ուսուցումը
- Պաշտոնական փաստաթղթերում լատինական այբուբենի կիրառումը
- Ադրբեջանի քաղաքացիների՝ Արևմուտքին ինտեգրվելու ցանկությունը
- Այն միտքը, որ նոր այբուբենն ամենավստահելի միջոցն է ամբողջ աշխարհում ապրող ադրբեջանցիներին և, իհարկե, թյուրքախոս ժողովուրդներին միավորելու համար
- Թերթերում և ցուցանակներում լատինատառ վերնագրերի հայտնվելը
- Ավագ սերնդի աջակցությունը, որը դպրոցում լատինական տառերով էր սովորել և այլն:

1995թ. Սահմանադրության ընդունմամբ ադրբեջաներենին վերադարձվեց պետական լեզվի կարգավիճակը: Ադրբեջանի Հանրապետության նախագահ Հեյդար Ալիևի օգոստոսի 1-ի հրամանագրով բոլոր թերթերը, ողջ գովազդային արտադրությունը պետք է անցնեին լատինական տառատեսակի: «Պետական լեզվի կիրառման կատարելագործման մասին» 2001թ. հունիսի 18-ի հրամանագրով մեկուկես ամսվա ընթացքում նախատեսվում էր ավարտին հասցնել լատինական այբուբենին անցնելու գործընթացը: 2004թ. հունվարի 12-ին նախագահ Իլհամ Ալիևը, շարունակելով իր հոր՝ Հ.Ալիևի սկսած գործը, ստորագրում է հրամանագիր՝ «Ադրբեջաներենի լատինական տառատեսակով զանգվածային հրապարակումների գործունեության մասին» [12]:

Շատ սերունդներ սովորել էին կիրիլական տառերով, և այժմ բավական դժվար էր սովորել նոր տառեր, նոր ուղղագրություն և նոր արտասանություն: Այս խնդիրն արդիական է մինչ օրս: Ճիշտ է, այսօր Ադրբեջանում ողջ գործավարությունը կատարվում է բացառապես լատինական այբուբենով: Բոլոր պաշտոնական ինտերնետային կայքերը լատինական տառերով են, ոչ պաշտոնական կայքերի մեծամասնությունը նույնպես լատինականի է անցել: Այս գործընթացը մինչ օրս շարունակվում է, բայց կարելի է արձանագրել, որ լատինականացման խնդիրը հիմնականում կատարված է: Հարկ է նշել, սակայն, որ ավագ սերունդը շարունակում է կիրառել կիրիլական տառերը, հատկապես՝ ոչ պաշտոնական գրագրության մեջ: Չպետք է մոռանալ նաև այն մեծաքանակ գրքերի մասին, որոնք հրատարակվել էին խորհրդային շրջանում: Այսօրվա Ադրբեջանի գիտությունը, գրականությունը, կրթական համակարգը և մամուլն իրենց գոյությամբ պարտական են խորհրդային շրջանում ստեղծված ժառանգությանը: Նշենք նաև, որ ադրբեջաներեն լեզուն իր այսօրվա տեսքով հենց Խորհրդային Միության շնորհիվ է ներկայանում աշխարհին:

Նորագույն շրջանում շարունակվում է գրքերի վերատպումը լատինա-

կան այբուբենով, ինչն, իհարկե, կապված է պահելի ծախսերի հետ: Մինչ օրս Ադրբեջանում մեծ տեղ է հատկացվում լեզվական խնդրին: Լեզու, որը 21-րդ դարում դեռ ձևավորվում է, լեզու, որը «մտածում» է իր տեղի մասին աշխարհի մյուս լեզուների շարքում: Ամեն դեպքում, այս ողջ գործընթացը ցույց է տալիս ադրբեջանցիների ցանկությունը՝ ընդգրկվել միջազգային, հատկապես՝ արևմտյան հանրության մեջ և, մասնավորապես, ավելի մերձեցնել կապերը եղբայրական Թուրքիայի հետ:

Փետրվար, 2008թ.

Աղբյուրներ և գրականություն

1. Итоги, проблемы и задачи тюркского языкознания // Советская тюркология, N6, Баку, 1982.
2. *Гукасян В.Л.,* Об одной древнетюркской письменности // Советская тюркология, N5, Баку, 1981.
3. Azərbaycan Respublikası, Tarix, www.mfa.gov.az
4. *Баскаков Н.А.,* Тюркские языки, М., 1960.
5. *Демирчизаде А.М.,* О периодизации истории азербайджанского литературного языка, М., 1971.
6. *Abulfazi Bahadori,* “Islam- the first political reason for changing the alphabet”, www.azeri.org/Azeri/az_english/13_folder/13_articles/13_alpha_az.html
7. *Farida Sadikova & Marjan Abadi,* “Where’s Azeri?”, 2000, From Azerbaijan International www.azeri.org/Azeri/az_english/81_folder/81_articles/81_storenames.html
8. Debates at the First Turkology Congress hosted by Baku in 1926, “Arabic or Latin?”, 2000, From Azerbaijan International, www.azeri.org/Azeri/az_english/81_folder/81_articles/81_turkology_congress.html
9. *Abdullayev E.Z.,* “Azerbaycan alfabesi tarihindən”, Ankara, 1996.
10. *İsmayil Kazımov,* Azərbaycan dilinin tarixi, Ən qədim dövrlərdən 13 əsrə qədər, (Məqalə).
11. Постановление Национального совета Верховного совета Азербайджанской Республики о порядке введения в действие закона Азербайджанской Республики «О восстановлении азербайджанского алфавита с латинской графикой».
12. Указ от 18 июня 2001 г. "Об усовершенствовании применения государственного языка "http://news.aif.ru - "Пресс-центр АиФ".
13. *Աճառյան Հ.,* Լիակատար քերականություն հայոց լեզվի, Ե., 1965:
14. Հայաստանի հարակից երկրների պատմություն, Ուսումնական ձեռնարկ, Ե., 1992:
15. Ադրբեջաներեն-հայերեն բառարան, Ե., 1987:
16. Հայ-ադրբեջաներեն բառարան, Ե., 1978:
17. *Баскаков Н.А.,* Введение в изучение тюркских языков, М., 1969.

18. Вопросы исторического развития лексики тюркских языков, М., 1960.
19. *Гукасян В., Асланов В.,* Исследования по истории азербайджанского языка дописьменного периода, Баку, 1986.
20. Структура и история тюркских языков, М., 1971.
21. *Firidun Khalilov & Jala Garibova,* “Historical Precedence”,1997, From Azerbaijan International, www.azeri.org/Azeri/az_english/52_folder/52_articles/ 52_alphabet.html
22. Azerbaijani language, www.britannica.com/nations/Azerbaijan.
23. The Constitution of the Azerbaijan Republic.
24. *Farid Alakbarov,* “Early writings in Azerbaijan”, www.azerb.com
25. *Abdullayev E.Z.,* Türk dillerinin tarihsel gelişme sorunları, Ankara, 1996.
26. *Kazımov C.,* Etnik tarixmizə və dilimizə yeni baxış, (Məqalə) Bakı, 2003.
27. *Kazımov C.,* Azəri dili, (Məqalə), Bakı 2004.
28. Ümumi məlumat, www.mfa.gov.az

КОНТУРЫ ИСТОРИИ АЗЕРБАЙДЖАНСКОГО АЛФАВИТА

Лилит Мовсисян

Резюме

Об истории азербайджанского алфавита имеется ряд теорий, которые часто существенно отличаются друг от друга. В разные исторические периоды тюркские народы пользовались несколькими алфавитами. Отметим, что только в 20-ом веке азербайджанцы не раз меняли алфавит. В частности, в конце 1920-х гг. в Советском Азербайджане приняли латинскую графику, в 1939г. азербайджанцы перешли на кирилицу, а в 1991г., после обретения независимости, Азербайджан вернулся к латинскому алфавиту. В основе всех перечисленных изменений алфавита явно лежали и геополитические факторы и силы.

Հուշագիր հեղինակին

«21-րդ ԴԱՐ» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ, որոնցում առաջնային են ՀՀ հիմնախնդիրների վերաբերյալ թեմաները: «21-րդ ԴԱՐ» հանդեսի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «21-րդ ԴԱՐ» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր (2 օրինակ) և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Sylfaen*», «*Arial LatArm*» (հայերեն) և «*Sylfaen*», «*Times New Roman*» (ռուսերեն, անգլերեն) տառատեսակներով, 11 տառաչափով (ֆոնտով):
2. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, ունենա լուսանցքներ, ձախից՝ 1.0սմ, աջից՝ 3.0սմ, վերևից ու ներքևից՝ 2.5սմ: Տողերի միջև բացվածքը՝ 1.5: Հոդվածը պետք է ունենա համառոտագիր և ամփոփագիր: Ամփոփագիրը ներկայացվում է բնագրից տարբեր լեզուներով:
3. Հոդվածում օգտագործված աղբյուրների և գրականության հղումները բերվում են քառակուսի փակագծերում՝ միացյալ և հաջորդական համարակալումով, այդ համարի կողքին նշելով հղված էջ(եր)ը, եթե հղման աղբյուրը մեկից ավելի անգամ է օգտագործվում ամբողջ հոդվածում: Էջը պետք է նշել աղբյուրի բնագրի լեզվով՝ էջ (հայերեն), с. (ռուսերեն), p. (անգլերեն, ֆրանսերեն կամ այլ լեզվով աղբյուրներ). օրինակ՝ [1], [2, с. 11-12]: Հոդվածի վերջում, «Աղբյուրներ և գրականություն» բաժնում, նույն հաջորդականությամբ բերվում է գրականության ցանկը, 10 տառաչափով, բնագրի լեզվով, օրինակ՝

   1. *Шарипова Р.,* Панисламизм сегодня: идеология и практика Лиги Исламского Мира, М., 1986.
   2. *Մարգարյան Ա.*, Երկրի մրցակցային ռազմավարությունը տնտեսական անվտանգության համատեքստում, «21-րդ դար», # 1, 2003, էջ 5:
   3. *Yasha Lange*, Media in the CIS, Center for Civil Society International, Amsterdam, 1997, from http://www.internews.ras.ru/books/media, Sept. 28, 1998.
   4. http://www.oecd.org/dsti/sti, March 1, 2001.

4. Հայկական, լատինական և կյուրեղյան տառերից տարբեր աղբյուրների դեպքում հղումները կատարել լատինական այբուբենով՝ փակագծերում տալով թարգմանությունը և լեզուն. օրինակ՝ *Al-Arman fi Lubnan* (Հայերը Լիբանանում, արաբ.):

Խմբագրական խորհուրդ

«21-ՐԴ ԴԱՐ ՆՈՐԱՎԱՆՔ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ» ՀԱՆԴԵՍ
Խմբագրական խորհուրդ

Հայաստանի Հանրապետություն, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ 21dar@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Հանձնված է տպարան 14.11.2008թ.
Հիմնադիր՝ «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ

Թուղթը՝ կավճապատ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 15 մամուլ: Տպաքանակը՝ 300:
Տառատեսակը՝ Sylfaen
Վկայականը՝ 01Մ 000234
Տպագրվել է «Գասպրինտ» ՍՊԸ տպարանում